

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (98)

2024 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Ղիլբանյան - ի.գ.դ.

Գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

Գլխավոր խմբագրի տեղակալ

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Գևորգ Ղանիելյան - ի.գ.դ.

Նիկոլայ Ստոյկո - ի.գ.դ. (ՌԴ)

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Անդրեյ Տրեբկով - ի.գ.թ. (ՌԴ)

Գուրգեն Պետրոսյան – ի.գ.դ. (ԳԴՀ)

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Անահիտ Մանասյան – ի.գ.թ.

Աննա Մաթևոսյան – ի.գ.դ. (Ֆրանսիա)

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb)

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համաձայն
չլինելով հեղինակների
տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Ղախիչ՝ 77771

Տպագրական 10 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 100

<https://doi.org/10.46991/SL/2024.98>

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ь Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (98)
2024 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Арутюн Хачикян - д.ю.н.

Геворг Даниелян - д.ю.н.

Николай Стойко – д.ю.н. (РФ)

Артур Вагаршян - д.ю.н.

Андрей Требков – к.ю.н. (РФ)

Гурген Петросян - д.ю.н. (ФРГ)

Тарон Симонян - к.ю.н.

Анаит Манасян – к.ю.н.

Анна Матевосян - д.ю.н. (Франция)

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: <http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb>

<https://doi.org/10.46991/SL/2024.98>

10 усл. печ. л.
Тираж: 100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ – THEORY OF STATE AND LAW – ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА

Svetlana Kirakosyan

SOME CHARACTERISTICS OF PROTECTION OF GENE MODIFIED THROUGH
GENETIC ENGINEERING 5

Հասմիկ Լեյլոյան

ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՎԵՐԱՑԱԿԱՆ)
ԻՐԱՎԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 13

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ – PUBLIC LAW – ПУБЛИЧНОЕ ПРАВО

Աննա Հարությունյան

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 23

Հասմիկ Հակոբյան

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 33

Տաթևիկ Սիրադեղյան

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ԴԻՄԵՆՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 44

ՄԱՆՍԱԿՈՐ ԻՐԱՎՈՒՆՔ – PRIVATE LAW – ЧАСТНОЕ ПРАВО

Տիգրան Մարկոսյան, Նարե Պարոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 58

Նաիրա Արտաշեսյան

ՓՈԽՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԵՐԸ 71

ՂԱՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ – JUDICIAL LAW – СУДЕБНОЕ ПРАВО

Հենրիկ Խունդկարյան

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԵՃԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ
ՊԱՐԱԳԱՅՈՒՄ 80

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ – CRIMINAL LAW AND CRIMINOLOGY – УГОЛОВНОЕ ПРАВО И КРИМИНОЛОГИЯ

Ժենյա Ստեփանյան

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 89

Melik Melikyan

CURRENT DEVELOPMENTS OF LEGAL REGULATIONS ON CRIME PROVOCATION IN RA CRIMINAL CODE	100
---	-----

Հովհաննես Հովհաննիսյան

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՄՈՎԻՆ ՀՐԱԺԱՐԿԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՆՑԱԿԻՑՆԵՐԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ	110
---	-----

Hayk Avetyan

THE CORRELATION BETWEEN THE TIME OF COMMITTING THE CRIME AND THE MOMENT OF THE END (COMPLETION) OF THE CRIME	122
---	-----

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ – INTERNATIONAL LAW – МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО**Ֆիլիանա Բելլոյան**

ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԻ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ	134
--	-----

Արմեն Մեղոյան

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ. ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	146
--	-----

SOME CHARACTERISTICS OF PROTECTION OF GENE MODIFIED THROUGH GENETIC ENGINEERING

Svetlana Kirakosyan

Ph.D. student at the YSU Chair of History

and Theory of State and Law

svetlana.kirakosyan@ysu.am

ORCID: 0000-0002-8862-1228

INTRODUCTION

This article is dedicated to several features of the protection of genes modified through genetic engineering, particularly to the legal issues in intellectual property. Recent scientific findings in the field of gene engineering caused many concerns and debates not only among scientists but also among the general public. Taking into account the achievements registered in the field of biotechnology and the ongoing studies in scientific circles, as well as the new problems that have emerged, to predict the future course of developments in this field and give their legal assessment, it is necessary to have a clear idea of what modern genetic engineering is, in which directions science is developing and what possible ethical, legal and epistemological problems this development can bring.

Developments in new biological technologies, including recombinant DNA and cell fusion and monoclonal antibody technology, have raised several social and ethical questions and also give rise to problems in the field of intellectual property. The protection of genetic engineering research and its results in intellectual property continues to be the focus of discussion. Currently, the main issue discussed among lawyers is what kind of rights arise to the results of genetic activity and who has the right to possess and manage the information, processes, and results obtained during the research. These raise complex and controversial issues within intellectual property law and patent law¹. According to the general approach, scientists performing genetic interventions should have rights to the results of scientific activities, and these rights should be protected by intellectual property law. In the framework of this work, using interdisciplinary methods of state and legal theory, as well as comparative law and formal-logical methods, we tried to answer the mentioned questions by studying the international judicial practice and legislation related to the protection of genes, including genetically modified genes, also referring to different forms of life and to the issues of patenting human genes.

Patent features of genetically modified genes

By bypassing narrow professional discussions about the content of genetic engineering², we should note that from a functional point of view, the essence of this

¹ See Dworkin G., Should There Be Property Rights in Genes? *Philosophical Transactions: Biological Sciences*, Vol. 352, No. 1357, Human Genetics: Uncertainties and the Financial Implications Ahead (Aug. 29, 1997), pp. 1077-1086 (10 pages) Published by: Royal Society, p. 1079 (https://www.jstor.org/stable/56522?seq=2#metadata_info_tab_contents, 29.07.2024)

² See Berg P., Baltimore D., Boyer H. W., Cohen S. N., Davis R. W., Hogness D. S., Nathans D., Roblin R., Watson J. D., Weissman S., Zinder N. D.- Potential Biohazards of Recombinant DNA Molecules; Source: *Science, New Series*, Vol. 185, No. 4148 (Jul. 26, 1974), p. 303 Published by: American Association for the Advancement of Science, *Science* (Stable URL: <https://www.jstor.org/stable/1738673>, 29.07.2024)

technology is the artificial construction of active genetic structures and hereditarily modified organisms. In other words, the essence of genetic engineering is the purposeful construction of special hybrid molecules outside a living organism (as it is commonly called: "in vitro"; translated from Latin means "in glass") with their subsequent introduction into a living organism¹. Moreover, hybrid molecules (recombinant DNA) become an integral part of the genetic apparatus of the given organism. As a result, the hereditary program of the organism changes: genetic, and therefore, biochemical and physiological characteristics are transmitted to it².

We should note that the concept of "gene patenting", despite some impreciseness in content, is quite widespread and is used to describe patent applications for products and processes related to genes or genetic information. From the beginning, we should clarify that it is impossible to patent a gene as it exists in nature, as it is a naturally occurring gene in the human body or tissues. The mentioned circumstance is discussed in detail, especially in American judicial practice³, where the main discussion is carried out from the point of view of the possibility and differences of patenting living organisms and inanimate natural elements. American jurisprudence has long treated biological inventions as unpatentable products of nature, but that theory had two huge exceptions for natural products; "isolated" and "purified" from their natural environment⁴.

Molecular biology and intellectual property policy in this field changed significantly after a series of events in the 1980s. Namely, the discovery of recombinant DNA technology, the public sale of shares of Genetech; one of the first biotechnology companies, which led to increased interest in biotechnology and the flow of investment in the field, as well as the passage of the Bayh-Dole Act (officially known as the Amendment to the Patent and Trademark Act⁵) in the United States that provided many benefits to universities, small businesses and nonprofit research organizations, and eventually the US Supreme Court decision in "Diamond v. Chakrabarty" case⁶, which was of great importance in the development of patent law in this field.

In the "Diamond v. Chakrabarty" case, one of the main exceptions to patent law was formulated and interpreted. That is, manifestations and products of nature are not protected. As a general rule, laws of nature, natural/physical phenomena, and abstract

¹ See Saltzman W. M.; Frontiers of Biomedical Engineering, Open Yale courses. The course was recorded in Spring 2008, (<https://www.youtube.com/watch?v=WXGL2Kracgs>, 29.07.2024)

² See Гончаренко Г. Г. Основы генетической инженерии. Методическое пособие /Отв.ред. Л.В. Хотылева.— Гомель: УО «ГГУ им. Ф.Скорины», 2003. — 118 с., pp. 44-46 (<https://core.ac.uk/download/pdf/75998736.pdf>, 29.07.2024)

³ See Holman C. M., Gene Patents under Fire: Weighing the Costs and Benefits, book chapter in Biotechnology and software patent law: a comparative review on new developments, edited by Emanuela Arezzo and Gustavo Ghidini, Edward Elgar Publishing (2011), p. 267 (https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=1710150, 29.07.2024)

⁴ See Parke-Davis & Co. v. H. K. Mulford Co., 189 F. 95 (1911), April 28, 1911 · United States Circuit Court for the Southern District of New York, 189 F. 95 (Parke-Davis & Co. v. H. K. Mulford Co., 189 F. 95 (1911) | Caselaw Access Project, 29.07.2024)

⁵ See Bayh-Dole Act, formerly known as the Patent and Trademark Act Amendments, Federal law enacted in 1980 ([https://drexel.edu/research/innovation/technology-commercialization/bayh-dole-](https://drexel.edu/research/innovation/technology-commercialization/bayh-dole-act/#~:text=The%20Bayh%2DDole%20Act%2C%20formerly,research%20programs%20within%20their%20organizations.)

[act/#~:text=The%20Bayh%2DDole%20Act%2C%20formerly,research%20programs%20within%20their%20organizations.](https://drexel.edu/research/innovation/technology-commercialization/bayh-dole-act/#~:text=The%20Bayh%2DDole%20Act%2C%20formerly,research%20programs%20within%20their%20organizations.) 29.07.2024)

⁶ Sherkow J. S., Greely H. T., The History of Patenting Genetic Material. Annual Review of Genetics, Vol. 49:161-182 (Volume publication date November 2015), First published online as a Review in Advance on October 6, 2015, p. 2 (https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2325679, 29.07.2024)

ideas are not protected by patent law¹. At the same time, however, US jurisprudence lacked a clear distinction between laws of nature, natural products, and natural/physical phenomena², and one of the court's interpretations of the challenged bacterial properties as "natural phenomena" can apply to all of these concepts³.

As for abstract ideas, there is no clear position regarding this exception in US jurisprudence. According to the general approach, ideas that can be interpreted so broadly as to include natural principles, as well as ideas that involve exclusively mental processes are considered abstract. As a result, in the conditions of lack of clarity and uncertainty of the mentioned exceptions, a patent within the same case can be rejected based on being a product of nature or an abstract idea, as well as a combination of both grounds.

The European Patent Office is guided by the exceptions defined by the European Patent Convention⁴. The Convention, like the American common law, from the list of patentable objects excludes inventions, scientific theories, mathematical methods, artistic works, schemes, rules and techniques for performing mental operations, games, or business, as well as computer programs, representations of information⁵.

National legislation also provides exceptions to the protection of inventions. Of the defined exceptions, the distinction between scientific discovery and invention is most important. This distinction was an essential part of the judicial act discussed above. In this case, the main distinguishing feature of the mentioned concepts is that the discovery implies the revelation of a phenomenon existing in nature without interventions and changes. The invention suggests a new, qualitative change. Therefore, objects naturally found in nature cannot be the object of patenting. At the same time, Article 12, Part 4 of the Patent Law⁶ of The RA states that biological matter that has been isolated from its natural environment or produced by a technical process may be the subject of an invention, even if it previously existed in nature. It should be noted that this regulation is highly controversial and causes an internal contradiction, since biological matter separated from its natural environment also receives protection, which, in the sense of part 5 of the same article, is considered any material containing genetic information and reproducing independently or in a biological system.

To better understand the essence of the problem, we can also consider another well-known case in American judicial practice: the decision of the US Supreme Court

¹ See *Mayo Collaborative Servs. v. Prometheus Labs., Inc.* - 566 U.S. 66, 132 S. Ct. 1289 (2012) The Supreme Court of the United States (<https://supreme.justia.com/cases/federal/us/566/66/>, 29.07.2024)

² See Burk D. L., *The Curious Incident of the Supreme Court in Myriad Genetics*. Legal Studies Research Paper Series No. 2014-29, University of California, Irvine ~ School of Law The paper, pp. 510-516 (https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2407094, 29.07.2024)

³ See *Funk Bros. Seed Co. v. Kalo Inoculant Co.*, 333 U.S. 127, 130 (1948). US Supreme Court (*Funk Brothers Seed Co. v. Kalo Inoculant Co.*: 333 U.S. 127 (1948): Justia US Supreme Court Center, 29.07.2024)

⁴ See The European Patent Convention, abbreviated as EPC, signed in Munich in October 1973 (<https://treaties.un.org/doc/Publication/UNTS/Volume%201065/volume-1065-I-16208-English.pdf> 29.07.2024)

⁵ See Burk D. L., *The Curious Incident of the Supreme Court in Myriad Genetics*. Legal Studies Research Paper Series No. 2014-29, University of California, Irvine ~ School of Law The paper, pp. 510-516 (https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2407094, 29.07.2024)

⁶ See Patent law of The Republic of Armenia. adopted on March 3, 2021, entered into force on July 1, 2021, source: Unified website 2021.03.22-2021.04.04 Official publication date 03.31.2021,

in the "Association For Molecular Pathology Et Al. V. Myriad Genetics, Inc." case. In this case, the court ruled that naturally occurring genes are not patentable¹. The decision addressed a specific legal theory called "object patentability" or simply "patentability". In this decision the court discussed the patent claim for two types of human genes. The first includes "isolated genomic DNA": DNA particles of various sizes extracted from the surrounding genome. The second type is the requirement for "complementary DNA (cDNA)", which is created artificially and does not occur naturally. The court confirmed that genomic DNA is not patentable even if it is "isolated and purified" from the surrounding chromosome, while the latter case is patentable. The court's decision focused on whether the two types of DNA exist in nature. Because in the first case, the court viewed genomic DNA as simply a little segment detached from a longer chromosome, the court concluded that it was more of a "product of nature" than a "product of human ingenuity." As for the second type of DNA, it does not exist in nature. Even if its nucleotide sequence is "given by nature", laboratory methods in the transcription of RNA unquestionably create a new product when the complementary DNA is formed, so the latter is patentable unless other theories preclude its protection². This position is thoroughly acceptable to us. Otherwise, the foundations of intellectual property rights are also undermined, making the protection of the processes and results implemented in the field of genetic engineering illogical because the essential component, the result of human intellectual creativity, is missing.

The mentioned judicial acts formed the entire legal policy and logic of this field, becoming a benchmark for theoretical discussions not only in the United States but also in many other countries. As a result, if we discuss the current domestic regulation with the mentioned logic, we will notice that it does not derive from the essence of gene patenting and genetic engineering because biological material, including genes, is protected simply on the basis that they are separated from their natural environment. Therefore, to preserve the entire logic of patenting and to avoid further problems, it is necessary to exclude the protection of any object in its natural state as an invention.

Patentability of different life forms

Along with the general developments presented above, one of the crucial issues discussed in the late 20th century was the question of patentability of various forms of life, which implied that they should comply with the basic principles of patent law regarding innovation, utility, and non-obviousness.

In 1980, The United States Supreme Court decision³ established that the ordinary patent can also be granted for inventions involving living organisms because the problem should be discussed not in the framework of "living organism and inanimate

¹ See Association For Molecular Pathology Et Al. V. Myriad Genetics, Inc., Et Al. No. 12–398. Argued April 15, 2013—Decided June 13, 2013, Supreme Court of The United States (Assoc. for Molecular Pathology v. Myriad Genetics, Inc. :: 569 U.S. 576 (2013) :: Justia US Supreme Court Center, 29.07.2024)

² See Sherkow J. S., Greely H. T., The History of Patenting Genetic Material. Annual Review of Genetics, Vol. 49:161-182 (Volume publication date November 2015), First published online as a Review in Advance on October 6, 2015, p. 1569 (https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2325679, 29.07.2024)

³ See Diamond v. Chakrabarty, 447 U.S. 303 (1980) No. 79-136 Argued March 17, 1980 Decided June 16, 1980 Supreme Court of The United States (<https://supreme.justia.com/cases/federal/us/447/303/>, 29.07.2024)

element of nature" phenomena but in the context of distinguishing "creation of nature and the result of human activity" phenomena¹.

The decision and the controversy surrounding the patenting of a genetically modified organism called the "Harvard Oncomouse"² led to widespread public debate and raised many practical³ and theoretical issues, including utilitarian and John Locke's ideas on the origins of property rights for gene patenting⁴.

We believe that although within the framework of John Locke's theory, the origin of intellectual property right to an object created as a result of the combination of mental activity and physical nature is justified from a natural-legal point of view, in the case of the created object being a living organism, the issue is controversial. Guided by biocentric approaches and agreeing with the Nobel Peace Prize laureate, renowned biocentrist Albert Schweitzer's view that all organisms are naturally endowed with definite internal characteristics that are useful to them, which deserve respect and protection⁵, we find it most acceptable to us the Canadian courts' position that higher forms of life are not patentable. However, we are also not in favor of biocentrist egalitarianism, according to which all organisms have equal moral importance, so patents on plants and microbes are more acceptable than patents on animals.

Turning to the patentability of human genes, it is worth noting that for some critics of the modern model, DNA does not meet the legal criteria for patentability because it is more closely related to discovery than invention. Others believe that DNA sequences are not ordinary chemical compounds but chains of information, that the genome should be viewed as a vast database, and that its data should be accessible to all⁶. According to the genocentric approach, patenting human genes is not ethically acceptable because it does not consider the vital role genes play in determining human nature. Proponents of this approach argue that the gene encapsulates human nature, and no individual or organization can have control over human genetic material. This point of view, however, we believe, unreasonably combines genetic identity and human personality, perceiving a person only as a set of genes.

Bearing in mind that patents have traditionally had an economic function that predetermines the material value of the patented object, opponents of patenting,

¹ See Wright B. D., Plant Genetic Engineering and Intellectual Property Protection. University of California. Division of Agriculture and Natural Resources p. 1-2 (<https://anrcatalog.ucanr.edu/pdf/8186.pdf>, 29.07.2024)

² See Bioethics and Patent Law: The Case of the Oncomouse. June 2006. WIPO MAGAZINE (Bioethics and Patent Law: The Case of the Oncomouse (wipo.int), 29.07.2024)

³ See Genetic Inventions, Intellectual Property Rights And Licensing Practices. Evidence And Policies. Organisation For Economic Co-Operation And Development (OECD) 2002, pp. 10-12 (<https://www.oecd-ilibrary.org/docserver/9789264034730-en.pdf?expires=1722221223&id=id&accname=guest&checksum=66895250B3B636915A05CD1D5FC408C2>, 29.07.2024)

⁴ See Meyer J. M., Rights to Life? On Nature, Property and Biotechnology. Government and Politics, Humboldt State University, The Journal of Political Philosophy; Volume 8, Number 2, 2000, pp., 159-162

⁵ See Hettinger N., Patenting Life: Biotechnology and Intellectual Property, Intellectual Property, and Environmental Ethics. 22 B.C. Envtl. Aff. L. Rev. 267 (1995), Boston College Environmental Affairs Law Review, pp. 285-286,

⁶ See Genetic Inventions, Intellectual Property Rights And Licensing Practices. Evidence And Policies. Organisation For Economic Co-Operation And Development (OECD) 2002, pp. 10-12 (<https://www.oecd-ilibrary.org/docserver/9789264034730-en.pdf?expires=1722221223&id=id&accname=guest&checksum=66895250B3B636915A05CD1D5FC408C2>, 29.07.2024)

guided by neo-Kantian ideas, also argue that humans have an intrinsic value that cannot be quantified from an economic perspective. Therefore, seeing people as commodities with commercial value disrupts the idea of what a person is and turns all human life into a commodity.

Many authors also argue that patenting human genes is ethically impermissible since the human genome constitutes the universal heritage of all mankind. According to the arguments presented, genetic sequence information, which is the result of the human evolutionary process, should not belong to a single patent holder but to all of humanity¹.

Conclusion

We consider it necessary to point out that the arguments, including the reasoning about the creation of new forms of slavery, presented by the opponents of human gene patenting are not valid because, in this case, the patent does not imply the provision of any kind of rights to a human being, but the researcher is allowed to prevent other persons from conducting similar research outside of the human organism. The argument that patenting a human gene is patenting "life" is also refuted by the same logic because DNA is not a living being but a chemical compound that carries genetic information. Of course, a patent does not grant anyone a right to a gene that is considered the common heritage of mankind. As we have already noticed above, the isolation of a gene only from its natural environment does not imply the provision of any right to it. Rights also do not arise when the researcher simply discovers previously unknown but always existing features of the gene because, in that case, it is more about discovery and not invention. To counter the stated position it is necessary to emphasize once again the leading function of patents, which implies the establishment of a monopoly over a patentable invention for a certain period. Therefore, the fact that genes will become a patentable object does not mean that research in this field will stop. As a result, the research will continue, and the authors will not gain the necessary and sufficient protection for the discoveries made². Therefore, in the conditions when genes will be obtained in compliance with the rules of medical ethics (this implies obtaining genes with the consent of a person), will be taken out of their natural environment and will receive new features that do not exist in the natural state, then if other conditions do not contradict, they may be subject to patenting as an invention.

Abstract

Development in new biological technologies, including the latest advances in genetic engineering, have raised several social and ethical issues and created problems in the field of intellectual property. Within the framework of the article, the author discussed the features of genetic engineering from a legal, ethical, and philosophical point of view, presented the content of the latter and its connection with the law, and presented the possible consequences of experiments in this field, revealed the substance of gene licensing. In particular, the author discussed the problems of patenting living organisms and human genes.

¹See Constand S., Patently a Problem? Human Gene Patenting and its Ethical and Practical Implications, Legal Studies Research Paper No. 13/75 October 2013, Sydney Law School, pp. 12-15

² See Dworkin G., Should There Be Property Rights in Genes? Philosophical Transactions: Biological Sciences, Vol. 352, No. 1357, Human Genetics: Uncertainties and the Financial Implications Ahead (Aug. 29, 1997), pp. 1077-1086 (10 pages) Published by: Royal Society, p. 1079 (https://www.jstor.org/stable/56522?seq=2#metadata_info_tab_contents, 29.07.2024)

As a result of the study, the author presented her position regarding the possibility of patenting genes, including genes modified through genetic engineering, living organisms, as well as human genes, and the possible scope of rights and rights holders arising over them, outlining the scope of legal regulation of the field.

Keywords: *genetic engineering; intellectual property; patent for invention; gene patenting; genetically modified gene; patentability; living organism patent; human gene patent.*

ԳԵՆԵՏԻԿ ԻՆՃԵՆԵՐԻԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ ՓՈՓՈԽՎԱԾ ԳԵՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սվետլանա Կիրակոսյան

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության
ու պատմության ամբիոնի ասպիրանտ
svetlana.kirakosyan@ysu.am
ORCID: 0000-0002-8862-1228

Համառոտագիր

Կենսաբանական նոր տեխնոլոգիաների զարգացումը՝ ներառյալ գենային ինժեներիայի ոլորտում արված վերջին ձեռքբերումները, բարձրացրել են սոցիալական և էթիկական մի շարք հարցեր և ստեղծել խնդիրներ նաև մտավոր սեփականության ոլորտում: Հոդվածի շրջանակներում հեղինակը քննարկել է գենային ինժեներիայի առանձնահատկությունները իրավական, էթիկական և փիլիսոփայական տեսանկյունից, ներկայացրել վերջինիս բովանդակությունը և կապը օրենքի հետ, այս ոլորտում իրականացվող գիտական փորձարկումների հնարավոր հետևանքները և բացահայտել գեների արտոնագրման էությունը: Մասնավորապես՝ հեղինակը քննարկել է կենդանի օրգանիզմների և մարդկային գեների արտոնագրման հիմնախնդիրները:

Հետազոտության արդյունքում հեղինակը ներկայացրել է իր դիրքորոշումը գեների, այդ թվում՝ գենային ինժեներիայի միջոցով փոփոխված գեների, կենդանի օրգանիզմների, ինչպես նաև մարդկային գեների արտոնագրման հնարավորության և դրանց նկատմամբ ծագող իրավունքների և իրավատերերի հնարավոր շրջանակի վերաբերյալ՝ ուրվագծելով ոլորտի իրավակարգավորման շրջանակը:

Բանալի բառեր – *գենետիկ ինժեներիա; մտավոր սեփականություն; գյուտի համար տրվող արտոնագիր; գեների արտոնագրում; գենետիկ ինժեներիայի միջոցով փոփոխված գեն; արտոնագրառունակություն; կենդանի օրգանիզմի արտոնագրում; մարդկային գեների արտոնագրում:*

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ЗАЩИТЫ ГЕНОВ, МОДИФИЦИРОВАННЫХ С ПОМОЩЬЮ ГЕНЕТИЧЕСКОЙ ИНЖЕНЕРИИ

Светлана Киракосян

*Аспирант кафедры теории и истории
государства и права ЕГУ
svetlana.kirakosyan@ysu.am
ORCID: 0000-0002-8862-1228*

Абстракт

Развитие новых биологических технологий, включая новейшие достижения в области генетической инженерии, поднимая ряд социальных и моральных вопросов, создало также проблемы в области интеллектуальной собственности.

В рамках статьи автор, обсуждая особенности генетической инженерии с правовой, этической и философской точки зрения, представил содержание последней и ее связь с правом, а также возможные последствия экспериментов в данной области, одновременно раскрывая содержание патентирования генов. В работе более подробно обсуждены проблемы патентирования живых организмов и человеческих генов.

В результате проведенного исследования автор изложил свою позицию относительно возможности патентирования генов, в том числе модифицированных с помощью генетической инженерии, живых организмов, а также человеческих генов и возникающих над ними возможных прав и круга их правообладателей, обозначая возможную сферу правового регулирования данной отрасли.

Ключевые слова – *генетическая инженерия; интеллектуальная собственность; патент на изобретение; патентирование гена; ген, модифицированный с помощью генетической инженерии; патентоспособность; патентирование живого организма; патентирование человеческих генов.*

ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՎԵՐԱՑԱԿԱՆ) ԻՐԱՎԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հասնիկ Լեյոյան

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու
պատմության ամբիոնի ասպիրանտ,
«Վիվա Արմենիա» ՓԲԸ տեղանքի տեղակայման
պայմանագրերի կառավարման ավագ մասնագետ
hasmik.leyloyan@ysu.am
Orcid ID: 0000-0001-7849-9591

Ներածություն

«Իրավական հնարավորություն» և «իրավական իրականություն» իրավափիլիսոփայական հասկացություններն իրենց առանձնահատուկ դրսևորումներն են ստանում իրավունքի ընդհանուր տեսության համար առանցքային հանդիսացող «իրավասուբյեկտություն» ու նրա բաղկացուցիչ հանդիսացող «իրավագործունակություն» և «իրավունակություն» կատեգորիաների գործող կառուցակարգերում: Սույն հոդվածի նպատակն է բացահայտել տվյալ դրսևորումները և վերլուծել նշված կառուցակարգերում իրավական հնարավորության առանձին տեսակները, մասնավորապես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորությունը՝ «իրավասուբյեկտություն» հասկացության հիմքում դնելով «հնարավորություն» իրավափիլիսոփայական կատեգորիան:

Այս մոտեցմամբ, առանձին - առանձին կոդիտարկվեն իրավունակությունը և իրավագործունակությունը՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություններ, սուբյեկտիվ իրավունքերը՝ որպես իրական իրավական հնարավորություններ, ինչպես նաև կվերլուծվեն նշված կատեգորիաների փոխհարաբերության առումները, հիմնական տարբերությունները և տարբերակման անհրաժեշտությունը: Հոդվածում նաև հատուկ անդրադարձ կկատարվի իրավունքի սուբյեկտ հանդիսացող իրավաբանական անձանց իրավունակության (կամ իրավասուբյեկտության)՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության հիմնահարցին:

Վերոգրյալի դիտարկումը և քննությունը ունեն գործնական և մեթոդաբանական կարևոր նշանակություն, քանի որ վերլուծության ընթացքում վեր են հանվում այն իրավական նախադրյալները, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում խորապես ըմբռնել իրավունքի և օրենքի արդյունավետ կենսագործման կառուցակարգերը:

1. «Իրավասուբյեկտություն» հասկացության բացահայտումը ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության համատեքստում.

Պատահական չէ, որ «հնարավորություն» կատեգորիայի միջոցով սովորաբար բնորոշվում են «իրավասուբյեկտություն», «իրավունակություն», «իրավագործունակություն», «սուբյեկտիվ իրավունք», «լիազորություն» և այլ համանման իրավաբանական եզրույթները: Միաժամանակ, իրավասուբյեկտությունը (կամ իրավագործունակությունը) իրավաբանական գրականության մեջ բնորոշվում է որպես իրավունքի սուբյեկտների համար իրավունքի նորմով նախատեսված ընդունակություն լինել իրավահարաբերության մասնակից և ունենալ (կամ իր գործողություններ

րով ձեռք բերել) սուբյեկտիվ իրավունքներ և կրել պարտականություններ¹: Օրինակ՝ տեսաբան Ս.Ս. Ալեքսենը գրում է. «Իրավասուբյեկտությունը անձի (քաղաքացու, քաղաքացիների խմբերի, պետության և նրա մարմինների) ընդունակությունն է լինել իրավունքի սուբյեկտ, այսինքն՝ իրավահարաբերությունների մասնակից ու սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների կրող: Այն ներառում է ինչպես անձի՝ իրավունքներ և պարտականություններ ունենալու, այնպես էլ դրանք ինքնուրույն իրացնելու ընդունակությունը»²:

Անձի կամ իրավունքի սուբյեկտի համար իրավունքի նորմով նախատեսված ընդունակությունը, մեր համոզմամբ, նույնանում է «հնարավորություն» եզրույթի հետ, քանի որ այստեղ ընդունակությունը կամ նույն ինքը՝ հնարավորությունը, անհատի ֆիզիկական և հոգեբանական կենսունակությունն է, որը թույլ է տալիս իրեն կատարել իրավական նշանակալի գործողություններ, այլ կերպ ասած՝ ունենալ հնարավորություն դրանք կատարելու: Եվ ամենևին պատահական չէ, որ Վ.Ս. Ներսիսյանցը իրավասուբյեկտությունը դիտարկելիս այն բնորոշում է որպես իրավունքի սուբյեկտ լինելու և պարտականություններ կրելու անձի վերացական հնարավորություն³: Մեկ այլ տեսաբան՝ Օ.Վ. Պավլիշինը, անդրադառնալով «իրավասուբյեկտություն» կատեգորիային, տեղին նկատում է. «Այս կատեգորիան արտացոլում է մարդու և իրավունքի կապը, ինչպես նաև մասնավոր հնարավորությունների բովանդակությունը, որոնք ապահովում են օրենքի՝ նորմատիվ ձևով այդ կապի ամրագրումը: Իսկ հնարավորություններն ինքնին որոշվում են իրավասուբյեկտության և հասարակական զարգացման կարիքների ու օրինաչափությունների (իրավական իրականության) կապով»⁴: Իրավաբանական գրականության մեջ հանդիպում ենք նաև այնպիսի ձևակերպման, համաձայն որի իրավասուբյեկտությունը «օրինական անցաթուղթ» է կամ պետական թույլտվություն, որի շնորհիվ անձը ստանում է հնարավորություն մտնել համապատասխան իրավահարաբերությունների մեջ⁵:

Իրավունակության դեպքում նույնպես մենք կիսում ենք այն տեսաբանների կարծիքները (օրինակ՝ Օ.Ա. Կրասավչիկով, Է.Ա. Ֆլեյշից, Ն.Վ. Ուշանովա), որոնք տվյալ հասկացության ներքո հասկանում են իրավունքի սուբյեկտի՝ պետության կողմից ճանաչված ընդհանուր (վերացական) իրավական հնարավորությունը՝ ունենալու իրավունքի նորմերով նախատեսված իրավունքներ և պարտականություններ, լինել դրանց կրողը⁶:

Անդրադառնալով ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություններին՝ նշենք, որ ըստ իրավական երևույթների, ձևավորման և իրականացման աստիճանի կամ, ըստ որոշ տեսաբանների (մասնավորապես՝ Ա.Վ. Վիսսարովի), իրա-

¹ Տե՛ս **Վաղաշյան Ա. Գ.**, Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություններ, ԵՊՀ. – Երևան: Հեղինակային հրատարակություն, 2011, էջ 259:

² **Алексеев С. С.**, Механизм правового регулирования в социалистическом государстве. М.: Юрид. лит-ра, 1966, էջ 145:

³ Տե՛ս **Нерсисянц В. С.**, Общая теория права и государства: учебник. М.: Норма, 2010, էջ 509 - 510:

⁴ **Павлышин О. В.**, Природа правосубъектности в контексте семиотических исследований права // Проблемы правосубъектности: современные интерпретации: материалы международной научно-практической конференции. Самара: Самарская гуманитарная академия, 2010, вып. 8., էջ 13:

⁵ Տե՛ս **Василенко А. И., Максимов М. В., Чистяков Н. М.**, Теория государства и права: учебное пособие. М.: Книжный мир, 2007, էջ 196:

⁶ Տե՛ս **Флейшиц Е. А.**, Соотношение правоспособности и субъективных прав // Вопросы общей теории советского права. М., 1960, էջ 257 - 258; **Красавчиков О. А.**, Социальное содержание правоспособности советских граждан // Правоведение. 1960, № 1, էջ 23; **Ушанова Н. В.**, «Правосубъектность как сочетание возможности и действительности», Правовая политика и правовая жизнь, № 1, Саратов - Москва, 2009, էջ 170:

վունքում իրական իրավական հնարավորության զարգացման փուլերի¹ իրավական հանրավորությունները դասակարգվում են ընդհանուր (վերացական), մասնավոր, ինչպես նաև փաստացի իրավական հնարավորությունների: «Ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության պարագայում անհրաժեշտ իրավական նախադրյալների ծավալը չի բավարարում, որ այն վերածվի իրականության, մինչդեռ իրական իրավական հնարավորության դեպքում դրա համար առկա են բոլոր անհրաժեշտ իրավական նախադրյալները»²:

1.2 Իրավունակությունը՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություն:

Ն.Վ. Ուշանովայի համոզմամբ՝ իրավունակությունը՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություն, չունի ինքնուրույն նշանակություն, այն չի ապահովում որևէ իրական, փաստացի օգուտ, այլ միայն թույլ է տալիս ունենալ օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ, լինել դրանց կրողը, այսինքն՝ հանդես է գալիս որպես իրավունքի իրացման անհրաժեշտ նախապայման³: Սրան հակառակ՝ սուբյեկտիվ իրավունքները, որոնք կրում են բացառապես իրավունակությամբ օժտված իրավունքի սուբյեկտները, վերջիններիս համար դառնում են իրական իրավական հնարավորություններ՝ իրացնել իրենց իրավունքները և դրանով իսկ բավարարել իրենց շահերը⁴: Այս կառուցակարգում իրավունակությունը և սուբյեկտիվ իրավունքները հանդես են գալիս որպես իրավական հնարավորություններ, որոնք հաջորդաբար փոխարինում են միմյանց: Այլ կերպ ասած՝ դրանք իրավական հնարավորության զարգացման տարբեր փուլեր են, որտեղ սուբյեկտիվ իրավունքը երկրորդ փուլն է, որն առաջացել է առաջին փուլի՝ իրավունակության կենսագործման արդյունքում: Նմանօրինակ մոտեցման կողմնակից է նաև Է.Ա. Ֆլեյշիցը, ով գտնում է, որ իրավունակությունը փուլ առ փուլ վերածվում է մասնավոր սուբյեկտիվ իրավունքների⁵:

Վերոգրյալի համատեքստում հետաքրքրական և տարածված է նաև Ծ.Ա. Յամպոլսկայի մոտեցումը, համաձայն որի՝ անհատի սուբյեկտիվ իրավունքն իր զարգացման ընթացքում անցնում է երեք փուլ. «1) սուբյեկտիվ իրավունքի պոտենցիալ վիճակի իրավունակության փուլ, 2) ինքնին սուբյեկտիվ իրավունքի, իրավական կարգավիճակի առաջացման փուլ, 3) մասնավոր իրավահարաբերություններում սուբյեկտիվ իրավունքի կենսագործման փուլ»⁶: Մեր կարծիքով՝ արդարացի են բոլոր այն մոտեցումները, որոնցում իրավունակությունը դիտարկվում է որպես քաղաքացու կամ անձի հնարավորություն (ընդունակություն) ունենալու օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ, և միանշանակ սխալական է իրավունակությունը դիտարկել որպես ինքնին որոշակի իրավունքների համակցություն: Սա բացատրվում է նրանով, որ ինքնին իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքներում, իսկ իրավունակությունը պայման է դրանց իրացման համար: Մեր այս մոտեցումը հաստատում է նաև տեսաբան Ն.Ի. Մատուզովը. «Չի

¹ Տե՛ս **Виссаров А. В.**, Возможность в праве: Классификация // Вопросы теории и истории государства и права. – 2013. – УДК 340.12(470), էջ 83:

² Տե՛ս **Լեյդյան Հ. Ա.**, «Իրավական հնարավորությունների տեսակները և դրանց առանձնահատկությունները», <https://doi.org/10.46991/S&L/2023.95.005>, «Պետություն և իրավունք» թիվ 1 (95), ԵՊՀ, Երևան, 2023, էջ 8:

³ Տե՛ս **Ушанова Н. В.**, “Правосубъектность как сочетание возможности и действительности”, Правовая политика и правовая жизнь, № 1, Саратов - Москва, 2009, էջ 170:

⁴ Տե՛ս Теория государства и права: курс лекций / под ред. **Матузова Н.И., Малько А.В.**, М., 2000, էջ 520 - 521:

⁵ Տե՛ս **Флейшиц Е. А.**, Соотношение правоспособности и субъективных прав // Вопросы общей теории советского права. М., 1960, էջ 271 - 281:

⁶ Տե՛ս **Ямпольская Ц. А.**, Субъекты административного права: автореф. дис. ... д-ра юрид. наук. М., 1958, էջ 32 - 33:

կարելի նույնացնել անձի իրավական ունակությունը իր նպատակի հետ, որի համար այդ ունակությունը տրված է: Դրանք տարբեր հասկացություններ են, թեև սերտորեն փոխկապակցված են: Մի կողմից՝ անձի սոցիալ - իրավական հատկությունը, մյուս կողմից՝ օրենքով ամրագրված իրավունքներն ու պարտականությունները, որոնց կրողը կարող է լինել միայն այն իրավունքի սուբյեկտը, ով օժտված է վերոհիշյալ հատկությամբ»¹:

Իրավունակության և սուբյեկտիվ իրավունքների տարբերակման վառ ընդգծված մոտեցումներ կարող ենք հանդիպել նաև տեսաբաններ Վ.Վ. Կոժենիկովի և Ն.Մ. Կորկունովի մոտ: Վ.Վ. Կոժենիկովը գրում է. «Պետության կողմից ճանաչված իրավունակությունը օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ ունենալու և դրանք կրելու ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություն է, սակայն իրավունակությունը ինքնին ոչ մի իրական իրավունք չի տրամադրում: Սա միայն «իրավունք ունենալու իրավունք է», որը ճանապարհ է այս կամ այն բարիքի ստացման, որոշակի գործողությունների կատարման համար»²: Իսկ Ն.Մ. Կորկունովի համոզմամբ. «Իրավունակությունը բացառապես նշանակում է, որ մարդը կարող է ունենալ որոշակի իրավունքներ, բայց դա չի նշանակում, որ նա իրականում տիրապետում է այդ իրավունքներին: Յուրաքանչյուր ոք կարող է ունենալ սեփականության իրավունք, բայց դրանից որևէ կերպ չի բխում, որ այդ իրավունքներն արդեն իսկ նրա մոտ առկա են»³:

Իրավունակության և սուբյեկտիվ իրավունքների փոխհարաբերությունը և հիմնական տարբերությունները հետևյալն են. Նախ՝ իրավունակությունը ֆիզիկական անձի մոտ ծագում է ծննդյան պահից և դադարում է մահվամբ (<< Քաղաքացիական օրենսգիրք, գլուխ 4, 20-րդ հոդված, 2-ին կետ): Այն կախված չէ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից: Այլ կերպ ասած կամ համաձայն << Քաղաքացիական օրենսգրքի՝ քաղաքացիական իրավունակությունը բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես (<< Քաղ. օրենսգիրք, գլուխ 4, 20-րդ հոդված, 1-ին կետ): Երկրորդը, իրավունակությունը անբակտելի է անձից, հետևաբար չի կարելի փոխանցել, գրկել, «խլել» կամ սահմանափակել այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով: Ինչպես դիպուկ նկատում է Ա.Մ. Նեչաևան, «Միայն իրավունքը կարող է սահմանափակվել, բայց ոչ իրավունակությունը»⁴: Երրորդը, իրավունակությունը առաջնային է սուբյեկտիվ իրավունքի նկատմամբ. այդպիսով՝ իրավունակությունը կատարում է անհրաժեշտ նախապայմանի դեր իրավունքի կենսագործման համար: Եվ վերջապես, սուբյեկտիվ իրավունքը մասնավոր (իրական) է, իսկ իրավունակությունը՝ ընդհանուր (վերացական):

Իրավաբանական գրականության մեջ իրավունակությունը կամ իրավասությունը ընդունված է տարբերակել ընդհանուր, ճյուղային և հատուկ տեսակների⁵: Ընդհանուր իրավունակությունը (կամ իրավասությունը) յուրաքանչ-

¹ Матузов Н. И., Субъективные права граждан СССР. Саратов, 1966, էջ 79:

² Кожевников В. В., «Понятие субъекта права в контексте соотношения философско-правовых категорий «правовая возможность» и «правовая действительность», Теория и история права и государства; история учений о праве и государстве, аграрное и земельное право, 2020, № 1(181), էջ 76:

³ Коркунов Н. М., Лекции по общей теории права. СПб.: Н.К. Мартынов, 1909, էջ 147:

⁴ Нечаева А. М., О правоспособности и дееспособности физических лиц // Государство и право, 2001., № 2, էջ 39:

⁵ Տե՛ս Վաղաշյան Ա. Գ., Պետության և իրավունքի տեսություն-2: Ղաաախոսություններ, ԵՊՀ. – Երևան: Հեղինակային հրատարակություն, 2011, էջ 260 - 261:

յուր քաղաքացու հիմնարար հնարավորությունն է՝ լինել իրավունքի սուբյեկտ ընդհանրապես: Օրինակ, Ն.Ի. Մատուզովի կարծիքով, հենց ընդհանուր իրավունական շնորհիվ է, որ յուրաքանչյուր ոք ծննդյան պահից ձանաչվում է օրենքով նախատեսված իրավունքների կրող¹: Իսկ տեսաբան Օ.Օ. Միրոնովի կարծիքով. «Մենք չունենք քաղաքացիներ, որոնք օժտված չլինեն ընդհանուր իրավունակությամբ»²: Բայց և այնպես, ֆիզիկական անձանցից զատ, իրավունքի սուբյեկտ են նաև իրավաբանական անձինք, որոնց իրավունակության (կամ իրավասուբյեկտության) որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության հիմնահարցին հարկ ենք համարում անդրադառնալ առանձին:

Մասնավորապես, չնայած օրենսդրական ամրագրմանը (որպես օրինակ՝ ՀՀ Քաղ. օրենսգիրք, գլուխ 5, 50-րդ հոդված)՝ իրավաբանական անձանց ընդհանուր իրավունակության (կամ իրավասուբյեկտության) մեկնաբանման վերաբերյալ իրավաբան գիտնականների շրջանում առկա է տարակարծություն: Իրավաբան գիտնականների մի մասը համակարծիք է և ընդունում է, որ առևտրային կազմակերպությունները ունեն հնարավորություն իրականացնելու օրենքով չարգելված ցանկացած տեսակի գործունեություն (ՀՀ Քաղ. օրենսգիրք, գլուխ 5, 50-րդ հոդված, 2-րդ կետ), հետևաբար օժտված են ընդհանուր իրավունակությամբ, իսկ ոչ առևտրային կազմակերպությունները օժտված են հատուկ իրավունակությամբ³: Սա պայմանավորված է նրանով, որ ոչ առևտրային կազմակերպությունները հնարավորություն ունեն իրականացնել միայն այնպիսի իրավական նշանակալի գործողություններ, որոնք համապատասխանում են իրենց կանոնադրությամբ կամ այլ հիմնադիր փաստաթղթերով նախատեսված գործունեության նպատակներին (ՀՀ Քաղ. օրենսգիրք, գլուխ 5, 55-րդ հոդված, 2-րդ կետ), ինչպես նաև, իրենց գործունեության հետ կապված, կրում են պարտականություններ:

Վերոգրյալ մոտեցումներին հակառակ տեսակետն է պաշտպանում Վ.Կ. Անդրեևան, ով գրում է. «Այն հանգամանքը, որ իրավաբանական անձը կարող է ունենալ քաղաքացիական իրավունքներ, որոնք համապատասխանում են հիմնադիր փաստաթղթերով նախատեսված իրենց գործունեության նպատակներին, և այդ գործունեության հետ կապված կրում է պարտականություններ, ոչ այլ ինչ է, քան հատուկ իրավունակություն»⁴ (տես նաև ՀՀ Քաղ. օրենսգիրք, գլուխ 5, 50-րդ հոդված, 1-ին կետ): Իսկ տեսաբան Ն.Վ. Ուշանովան ընդգծում է, որ քաղաքացիական իրավունքի գիտակարգում ընդունված է, որ բոլոր իրավաբանական անձինք օժտված են հատուկ իրավունակությամբ, որը հիմնված է իրենց գործունեության նպատակների և բնույթի վրա⁵: Մեր կարծիքով, անկախ նրանից, թե իրավաբանական անձանց իրավունակության որ տեսակի մեկնաբանման դիրքերից ենք ելնում և ընդհանուր, և հատուկ իրավունակության ընկալման դեպքում, իրավաբանական անձը կրում է ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություններ, որոնք այն անհրաժեշտ նախապայմանն են, առանց որի իրավաբանական անձը չի կարող ձեռք բերել իրավունքի նորմերով նախատեսված համապատասխան իրավունքները և պարտականությունները:

¹ St`u Матузов Н. И., Личность, права, демократия. Саратов, 1972, էջ 203 - 204:

² Миронов О. О., Особенности правоспособности в Советском государстве // Вопросы теории государства и права. Саратов, 1968. Вып. 1, էջ 154:

³ St`u Емелин А. В., Проблемы классификации видов правоспособности и дееспособности юридических лиц в российском гражданском праве // Юрист. 2000. № 3, էջ 9 - 15:

⁴ Андреев В. К., Проблемы правосубъектности в предпринимательской деятельности // Правовое регулирование предпринимательской деятельности: сб. ст. / под ред. В.В. Лаптева. М., 1995, էջ 22:

⁵ St`u Ушанова Н. В., "Правосубъектность как сочетание возможности и действительности", Правовая политика и правовая жизнь, № 1, Саратов - Москва, 2009, էջ 172:

1.3 Իրավագործունակությունը՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություն.

Իրավունակությունը կենսագործվում կամ, այլ կերպ ասած, վերածվում է իրականության իրավագործունակության միջոցով: Սա նշանակում է, որ իրավունքի սուբյեկտը ոչ միայն ունի իրավունքներ և պարտականություններ կրելու հնարավորություն, այլ նաև իր գործողությունների արդյունքում կարող իրացնել իր իրավունքները և պարտականությունները, դրանով իսկ կրել պատասխանատվություն և լինել իրավահարաբերությունների մասնակից: «Իրավաբանական գրականության մեջ իրավագործունակությունը սահմանվում է որպես անձի՝ իրավունքի նորմերով նախատեսված ընդունակություն, իր գործողություններով ձեռք բերել իրավունքներ ու պարտականություններ, ինչպես նաև իրականացնել իրավունքները և կատարել պարտականությունները»¹: Ինչպես տեղին նկատում է Ն.Վ. Ուշանովան. «Իրավագործունակությունը կապված է գործելու ունակության հնարավորության հետ»²: Իսկ մարդու գործողությունները անշուշտ կախված են իր հոգեկան և տարիքային որակների հետ: Հետևաբար, ի տարբերություն իրավունակության՝ իրավագործունակությունը անձի երկրորդային իրավական հատկություն է և իրավունքի մի շարք ձյուղերում ժամանակային առումով վրա է հասնում որոշակի տարիքից սկսած (տես՝ ՀՀ Քաղ. օրենսգիրք, գլուխ 4, 24-րդ հոդված, 1-ին կետ): Առանաճնահատկություններից է նաև այն, որ իրավագործունակության բովանդակությունը կարող է իրացվել նաև այլ անձի կամ քաղաքացու օրինական ներկայացուցչի կողմից՝ հոգուտ քաղաքացու: Եվ վերջապես, անձի իրավագործունակությունը կարող է սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով, և լինեն համապատասխանաբար սահմանափակ ծավալի և լրիվ անգործունակ անձինք (ՀՀ Քաղ. օրենսգիրք, գլուխ 4, 31-րդ և 32-րդ հոդվածներ):

Մեր վերլուծության շրջանակներում հետաքրքրական է նաև տեսաբան Ս.Ի. Արխիպովի մոտեցումը, համաձայն որի՝ իրավունակությունը և իրավագործունակությունը կարող են դիտարկվել որպես անձի և իրավակարգի միջև առկա, այսպես կոչված, իրավասուբյեկտային կապի զարգացման երկու կարևորագույն աստիճան կամ փուլ³: Իավասուբյեկտության առաջին փուլը կամ աստիճանը իրավունակությունն է, որի դեպքում իրավունքի սուբյեկտը դեռևս զրկված է իրավական բովանդակությունից և չի ընդունում կամային որոշումներ: Իսկ արդեն իրավասուբյեկտության երկրորդ փուլը կամ աստիճանը բնորոշվում է իրավունքի սուբյեկտի մոտ իրավագործունակության կամ իրավական հասունության առաջացման հետ, որի դեպքում անձը ձեռք է բերում ունակություն՝ ինքնուրույն կատարելու իրավական գործողություններ: Իրավագործունակության նկարագրված փուլի կամ աստիճանի շնորհիվ՝ Ս.Ի. Արխիպովի մատանանշած իրավասուբյեկտային կապը անցում է կատարում որակապես այլ մակարդակ, որտեղ, բացի իրավունքի սուբյեկտ հանդիսանալու ընդհանուր (վերացական) իրավական հնարավորությունից, անձը ձեռք է բերում ունակություն (հնարավորություն) ինքնուրույն կատարել իրավական գործողություններ, ձեռք բերել և իրականացնել իր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կրել իրավական պատասխանատվություն իր գործողությունների համար:

Դիտարկելով «իրավունակություն» և «իրավագործունակություն» հասկացությունների բովանդակությունը՝ համապատասխանաբար որպես իրավունքներ ունե-

¹ Վաղաշյան Ա. Գ., Պետության և իրավունքի տեսություն-2: Պատասխանություններ, ԵՊՀ. – Երևան: Հեղինակային հրատարակություն, 2011, էջ 260:

² Ушанова Н. В., “Правосубъектность как сочетание возможности и действительности”, Правовая политика и правовая жизнь, № 1, Саратов - Москва, 2009, էջ 172:

³ Ст'я Архипов С. И., Субъект права в центре правовой системы // Государство и право. 2005, №7, էջ 21:

նալու և այդ իրավունքները սեփական գործողություններով իրականացնելու և պարտականությունները կատարելու հնարավորություն (ընդունակություն), հարկ ենք համարում արձանագրել, որ այս համատեքստում իրավունքի սուբյեկտը գտնվում է լիարժեք «հանգստի» վիճակում: Այս վիճակում նա պոտենցիալ պատրաստ է միայն (ստատիկ) գործողությունների, բայց ոչ գործելու ակտիվ (դինամիկ)¹: Իրավունքի սուբյեկտի տվյալ վիճակը պայմանավորված է նրանով, որ, ինչպես արդեն նշել ենք, իրավունակությունը ոչ թե սուբյեկտիվ իրավունքների տիրապետումն է, այլ միայն այդպիսի տիրապետման համար անձի ընդհանուր (վերացական) իրավական հնարավորությունը: Սա հավասարապես վերաբերում է նաև իրավագործունակությանը, որը նույնպես չի արտացոլում սուբյեկտիվ իրավունքների փաստացի օգտագործման, պաշտպանության կամ իրավական պարտավորությունների կատարման առանձնահատկությունները²: Փոխարենը իրավագործունակությունը բնորոշում է անձի ընդհանուր (վերացական) իրավական հնարավորությունը՝ վերը թվարկվածը անելու համար:

Եզրակացություն

Այսպիսով, կատարված վերլուծության հիման վրա կարող ենք եզրակացնել հետևյալը.

1. Իրավասուբյեկտությունը՝ որպես հավաքական կատեգորիա, պարունակում է իրավունքներ և պարտականություններ ունենալու, դրանք ինքնուրույն իրականացնելու, սեփական գործողությունների համար պատասխանատվություն կրելու ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություններ: Հետևաբար, իրավասուբյեկտությունը իրավունքի սուբյեկտ լինելու անձի հնարավորությունն (ունակությունն) է՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով: Նշվածը թույլ է տալիս մեզ արձանագրել, որ «իրավասուբյեկտություն» հասկացության հիմքում ընկած է «հնարավորություն» իրավափիլիսոփայական կատեգորիան:

2. Իրավունակությունը՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություն, իրավունքի իրացման անհրաժեշտ նախապայման է և որևէ կերպ չի կարող նույնացվել սուբյեկտիվ իրավունքների հետ, որոնք իրենց հերթին իրական իրավական հնարավորություններ են և տրված են բացառապես իրավունակությամբ օժտված իրավունքի սուբյեկտներին: Իրավունակությունը և սուբյեկտիվ իրավունքները, ըստ էության, իրավական հնարավորության զարգացման տարբեր փուլեր են, որտեղ սուբյեկտիվ իրավունքը երկրորդ փուլն է, որն առաջացել է առաջին փուլի՝ իրավունակության կենսագործման շնորհիվ:

3. Անկախ նրանից, թե ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունակության որ տեսակի մեկնաբանման դիրքերից ենք ելնում՝ և ընդհանուր, և հատուկ, և ճյուղային իրավունակության ընկալման դեպքում, իրավունքի սուբյեկտը կրում է ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություններ, որոնք այն անհրաժեշտ նախապայմանն են, առանց որի իրավունքի սուբյեկտը չի կարող ձեռք բերել իրավունքի նորմերով նախատեսված համապատասխան իրավունքները և պարտականությունները:

4. Իրավունակությունը կենսագործվում կամ, այլ կերպ ասած, վերածվում է իրականության իրավագործունակության միջոցով, որը իրավասուբյեկտության երկրորդ փուլը կամ աստիճանն է և բնորոշվում է իրավունքի սուբյեկտի իրավական

¹ Տե՛ս **Кожевников В. В.**, “Понятие субъекта права в контексте соотношения философско-правовых категорий «правовая возможность» и «правовая действительность»”, Теория и история права и государства; история учений о праве и государстве, аграрное и земельное право, 2020, № 1(181), էջ 77:

² Տե՛ս **Грецов Ю.И.**, Субъект права // Вестник СПб ун-та. Серия 14. Право. 2014, էջ 34:

հասունությամբ: Իրավագործունակության դեպքում նույնպես այն ոչ թե սուբյեկտիվ իրավունքների տիրապետումն է, այլ միայն այդպիսի տիրապետման համար անձի ընդհանուր (վերացական) իրավական հնարավորությունը:

5. Իրավասուբյեկտության՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության դիտարկումը և վերլուծությունը ունեն մեթոդաբանական կարևոր նշանակություն, քանի որ վերլուծության ընթացքում դիտարկվում և վեր են հանվում այն իրավական նախադրյալները, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում խորապես ըմբռնել իրավունքի և օրենքի արդյունավետ կենսագործման կառուցակարգերը, ինչը հատկապես կարևոր է իրավաստեղծագործության և իրավակիրառ պրակտիկայում:

Համառոտագիր

«Իրավական հնարավորություն» և «իրավական իրականություն» իրավափիլիսոփայական հասկացությունները իրենց առանձնահատուկ դրսևորումներն են ստանում իրավունքի ընդհանուր տեսության համար առանցքային հանդիսացող «իրավասուբյեկտություն» ու իր բաղկացուցիչ հանդիսացող «իրավագործունակություն» և «իրավունակություն» կատեգորիաների գործող կառուցակարգերում: Տվյալ դրսևորումների բացահայտման և նշված կառուցակարգերում իրավական հնարավորության առանձին տեսակների, մասնավորապես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության, վերլուծության ընթացքում հեղինակը «իրավասուբյեկտություն» հասկացության հիմքում դնում է «հնարավորություն» իրավափիլիսոփայական կատեգորիան:

Այս մոտեցման տեսանկյունից առանձին - առանձին դիտարկվում են իրավունակությունը և իրավագործունակությունը՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություններ, սուբյեկտիվ իրավունքերը՝ որպես իրական իրավական հնարավորություններ, ինչպես նաև վերլուծվում են նշված կատեգորիաների փոխհարաբերության առումները, հիմնական տարբերությունները և տարբերական անհրաժեշտությունը: Հեղինակը նաև հատուկ անդրադարձ է կատարում իրավունքի սուբյեկտ հանդիսացող իրավաբանական անձանց իրավունակության (կամ իրավասուբյեկտության) որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության հիմնահարցին:

Հոդվածում ներկայացված եզրակացության համաձայն՝ իրավասուբյեկտության՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության դիտարկումը և վերլուծությունը ունեն մեթոդաբանական կարևոր նշանակություն, քանի որ վերլուծության ընթացքում դիտարկվում և վեր են հանվում այն իրավական նախադրյալները, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում խորապես ըմբռնել իրավունքի և օրենքի արդյունավետ կենսագործման կառուցակարգերը, ինչը հատկապես կարևոր է իրավաստեղծագործության և իրավակիրառ պրակտիկայում:

Բանալի բառեր – իրավունք; իրավասուբյեկտություն; իրավունակություն; իրավագործունակություն; իրավական հնարավորություն; ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություն; իրավական իրականություն; սուբյեկտիվ իրավունքներ; իրավունքի կենսագործում; իրավունքի փիլիսոփայություն

ПРАВОСУБЪЕКТНОСТЬ КАК ОБЩАЯ (АБСТРАКТНАЯ) ПРАВОВАЯ ВОЗМОЖНОСТЬ

Асмик Лейлоян

*Аспирант кафедры теории и истории
государства и права ЕГУ,
Старший специалист по управлению контрактами по
размещению сайтов в ЗАО «МТС Армения»
hasmik.leyloyan@ysu.am
Orcid ID: 0000-0001-7849-9591*

Абстракт

Философско-правовые понятия «правовая возможность» и «правовая действительность» получают свои особые проявления в существующих структурах функционирования одной из ключевых категорий общей теории права — правосубъектности, а также в ее составляющих категорий правоспособности и правдееспособности. В ходе выявления данных проявлений и анализа отдельных видов правовых возможности, в частности, общей (абстрактной) правовой возможности, автор ставит в основе понятия «правосубъектность» философско-правовую категорию «возможность».

С точки зрения данного подхода отдельно рассматриваются правоспособность и дееспособность как общие (абстрактные) правовые возможности, субъективные права как реальные правовые возможности, а также анализируются соотношение между указанными категориями, основные их различия и необходимость их дифференциации. Автор также отдельно обращает внимание на вопрос о правоспособности (или правосубъектности) как общей (абстрактной) правовой возможности юридических лиц, являющихся субъектами права.

Согласно представленному в статье заключению, анализ правосубъектности как общей (абстрактной) правовой возможности имеет важное методологическое значение, поскольку в ходе анализа рассматриваются и выделяются правовые предпосылки, благодаря которым становится возможным глубокое понимание структуры эффективной реализации права и закона, что особенно важно для правотворчества и правоприменительной практики.

Ключевые слова – *Право; правосубъектность; правоспособность; правдееспособность; правовая возможность; общая (абстрактная) правовая возможность; правовая действительность; субъективные права; реализация права; философия права*

LEGAL PERSONALITY AS A GENERAL (ABSTRACT) LEGAL POSSIBILITY

Hasmik Leyloyan

*Post-Graduate Student at the YSU Chair of
Theory and History of State and Law,
Site Implementation Contracts Management
Senior Specialist at "MTS Armenia" CJSC
hasmik.leyloyan@ysu.am
Orcid ID: 0000-0001-7849-9591*

Abstract

The philosophical-legal concepts of "legal possibility" and "legal reality" manifest themselves in specific ways in the existing structures of the functioning of one of the key categories of the general theory of law — legal personality, as well as in its components of legal capacity and legal capacity to act. In the process of identifying these manifestations and analyzing various types of legal possibilities, especially general (abstract) legal possibility, the author places the philosophical-legal category of "possibility" at the core of the concept of "legal personality".

From this perspective, separately are considered legal capacity and legal capacity to act as general (abstract) legal possibilities, subjective rights as real legal possibilities, as well as the relationship between these categories is analyzed, highlighting their main differences and the necessity of differentiation. The author also draws special attention to the question of legal capacity (or legal personality) as a general (abstract) legal possibility of legal entities that are subjects of the law.

According to the conclusion presented in the article, the analysis of legal personality as a general (abstract) legal possibility has important methodological significance, as it examines and identifies the legal prerequisites that enable a deep understanding of the structure of the effective realization of law and legislation, which is particularly important for lawmaking activities and law implementation practice.

Key words – *Law; legal personality; legal capacity; legal capacity to act; legal possibility; general (abstract) possibility in law; legal reality; subjective rights; realization of law; philosophy of law*

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Աննա Հարությունյան

ԵՊՀ սահմանադրական իրավունքի

ամբիոնի ասպիրանտ

anna.harutyunyan1@ysu.am

Orcid ID: 0000-0002-8213-308X

Ներածություն

Բնականոն պայմաններում իրականացվող ամենօրյա կառավարումը էապես տարբերվում է արտակարգ դրության ընթացքում իրականացվող կառավարումից: Սահմանադրական կարգի պաշտպանության նպատակով արտակարգ դրության հայտարարման դեպքում կենսականորեն կարևոր նշանակություն է ստանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց համաձայնեցված գործունեության ապահովումը, որը պետք է ուղղված լինի իրավիճակի հաղթահարմանն ուղղված միջոցառումների արդյունավետ իրականացմանը: Այս առումով առավել քան արդիական են կառավարման մեթոդներից համակարգման էության բացահայտումը և վերլուծությունը: Հոդվածի նպատակն է նաև ուսումնասիրել համակարգման իրականացման նպատակով արտակարգ դրության պայմաններում հատուկ լիազորություններով օժտված կառույցների ձևավորման անհրաժեշտությունը, դրանց կարգավիճակը և գործառույթները:

Նշված նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- բացահայտել արտակարգ դրության պայմաններում գործադիրի կողմից իրականացվող կառավարման առանձնահատկությունները,
- ուսումնասիրել կառավարման մեթոդներից համակարգման էությունը, դրա հարաբերակցությունը կառավարման այլ մեթոդների հետ,
- բացահայտել արտակարգ դրության պայմաններում համակարգման դրսևորման եղանակները և ուսումնասիրել կառավարման հատուկ ռեժիմների հայտարարման պարագայում հատուկ կարգավիճակով օժտված մարմինների ձևավորման պրակտիկան:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (մասնավորապես իրավահամեմատական) մեթոդներ:

Արտակարգ դրության իրավական ռեժիմի պայմաններում կառավարման առանձնահատկությունները.

Քաղաքացիների և սահմանադրական կարգի պաշտպանության ապահովման նպատակով ժամանակակից ներպետական սահմանադրաիրավական կարգավորումներով նախատեսված է արտակարգ դրության հայտարարման հնարավորություն, որի նպատակն է ողջ պետությունում կամ դրա որոշակի տարածքում իրավիճակի կարգավորումը և կայունացումը:

Արտակարգ դրությունը պետության ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության իրավական հատուկ ռեժիմ է¹: Արտակարգ դրություն հայտարարելու

¹ Այս առումով կարևոր է ընդգծել, որ օտարերկրյա աղբյուրներից վերլուծություն իրականացնելիս սույն հոդվածում «state of emergency» եզրույթը թարգմանվել է որպես «արտակարգ դրություն»:

անհրաժեշտ հանգամանքները կարող են լինել սոցիալ-քաղաքական և քրեաիրավական բնույթի, ինչպիսիք են՝ սահմանադրական կարգի բռնի տապալման փորձը, իշխանության յուրացումը կամ զավթումը, զինված ապստամբությունը, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունը, հատուկ կարևորություն ունեցող օբյեկտների կամ տարածքների զավթումը կամ արգելափակումը, անօրինական զինված խմբավորումների ստեղծումը և դրանց գործունեությունը, բռնի գործողություններով ուղեկցվող ազգամիջյան և կրոնական բախումները, համաճարակները, բնական աղետները, որոնք անմիջական վտանգ են ստեղծում քաղաքացիների կյանքի և անվտանգության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեության համար: Այսպես, COVID-19 համավարակի վերաբերյալ հրապարակված՝ ԵԱՀԿ զեկույցում ևս նշվում է, որ իրավիճակով պայմանավորված ԵԱՀԿ անդամ պետությունների մեկ երրորդում հայտարարվել է արտակարգ դրություն, սակայն մի շարք պետություններում հայտարարվել են տարբեր աստիճանի խստության արտակարգ իրավիճակի ռեժիմներ, կամ առհասարակ կիրառվել են սահմանափակումներ նախատեսող որոշակի օրենսդրական կամ վարչարարության միջոցներ առանց արտակարգ դրություն հայտարարելու: Միաժամանակ նշվում է, որ «արտակարգ դրություն» եզրույթը առավել մեծ տարածում ունի միջազգային հարթությամբ¹: Կարծում ենք, որ անկախ տերմինաբանական ձևակերպումից, էական է հայտարարված հատուկ իրավական ռեժիմի էությունը, այն է՝ այն բոլոր միջոցների, միջոցառումների և սահմանափակումների հանրաազումարը, որոնք կիրառվում են դրա շրջանակներում: Հետևաբար, սույն հոդվածում քննարկվող հիմնահարցերը հավասարապես վերաբերելի են արտակարգ դրության ռեժիմին համարժեք նաև այլ հատուկ կառավարման ռեժիմների պարագայում:

Այս առումով կարևոր է նշել, որ արտակարգ դրության պայմաններում հասարակական հարաբերությունների կարգավորման հիմնական մեթոդը հանրային իրավականն է, իսկ առաջնահերթություն են ստանում ուղղահայաց ենթակայական բնույթ կրող վարչաիրավական հարաբերությունները²: Պատճառն այն է, որ բնականոն պայմաններում իրականացվող ամենօրյա կառավարումը էապես տարբերվում է արտակարգ դրության ընթացքում իրականացվող կառավարումից: Նման խիստ կառավարման ռեժիմի պայմաններում անհրաժեշտ ժամանակավոր սահմանափակումների և միջոցառումների կիրառումը բավականաչափ բարդ և խնդրահարույց գործընթաց է:

Պետությունների մեծ մասում աղետների կառավարման համար պատասխանատու սուբյեկտը կառավարությունն է: Սակայն հատուկ ռեժիմի գործողության պայմաններում պետական և համայնքային գերատեսչությունների և կազմակերպությունների գործունեության արդյունավետ և միասնական համակարգման և որպես հետևանք՝ իրավիճակի կառավարման առավել արդյունավետ իրականացման նպատակով տարբեր պետություններում ստեղծվում են տարատեսակ կառույցներ: Սույն հոդվածում կանդիդատառանք արտակարգ դրության ընթացքում նշված մարմինների ձևավորման անհրաժեշտության և դրանց կողմից իրականացավող կարևորագույն գործառնություն՝ համակարգման էության վերլուծությանը:

Այսպես, աղետի կառավարման գործառնությունը գրականության մեջ բնորոշվում է որպես գործընթաց, որը ընդգրկում է երկու բաղադրատարր՝ համակարգում և

¹ Տե՛ս «Обязательства ОБСЕ в области человеческого измерения и меры реагирования государств на пандемию COVID-19» էջ 4, <https://www.osce.org/files/f/documents/3/e/473679.pdf> 29.11.2023թ. դրությամբ:

² Տե՛ս **К.Б.Брониславович, О.О.Садрудинович**, «Правовые аспекты обеспечения режима чрезвычайного положения в современных условиях», էջ 200, <https://cyberleninka.ru/article/n/pravovye-aspekty-obespecheniya-rezhima-chrezvychaynogo-polozeniya-v-sovremennyh-usloviyah/viewer> 19. 11.2023թ.-ի դրությամբ:

դեկավարում: Համակարգումը բնորոշվում է որպես ներդաշնակեցմանն ուղղված գործողությունների ամբողջություն, իսկ դեկավարումը՝ ուղղորդելու և կարգավորելու իրավասություն¹: Նշված երկու բաղադրիչներից բաղկացած գործընթացի նպատակն է աղետի արձագանքմանն ու դիմակայմանը ուղղված բոլոր գործողությունների համակարգումը և ուղղորդումը²: Ընդ որում, համակարգման և դեկավարման ոչ ճիշտ իրականացումը կարող է հանգեցնել շփոթի, տարբեր գործողությունների անհարկի կրկնության, անարդյունավետության և անհարկի ծախսերի³: Նման բացասական հետևանքներից խուսափելու և բնական կամ արհեստածին աղետների առավել արդյունավետ հաղթահարման նպատակով է, որ պետություններում կարող են ձևավորվել հատուկ լիազորություններով օժտված կառույցներ: Իրավիճակի անսպասելիությամբ և իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությամբ պայմանավորված՝ նման մարմինների ձևավորումը որոշակի դեպքերում տեղի ունեցավ առանց անհրաժեշտ նորմատիվ իրավական հիմքի առկայության, և արդյունքում դրանք իրականացնում էին գործառնություններ, որոնց համար օժտված էին անհրաժեշտ լիազորություններով: Այսպես, ԵԱՀԿ կողմից հրապարակված գեկույցում նշվում է, որ որոշ պետություններում հատուկ արտակարգ միջոցներ կիրառվել են օրենքով չնախատեսված մարմինների կողմից, որոնք ոչ միշտ է, որ օժտված են եղել անհրաժեշտ լեգիտիմությամբ կամ իրավասությամբ նմանօրինակ լայնածավալ և լուրջ միջոցների կիրառման համար, որոնք, մասնավորապես, վերաբերել են մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակմանը: Որպես օրինակ նշվում է Խորվաթիան, որտեղ համավարակի կանխարգելման նպատակով ստեղծվել է Ներքին գործերի նախարարությանը կից Քաղաքացիական պաշտպանության շտաբը: Այս կառույցը օժտվել է համավարակի կանխարգելման նպատակով իրականացվող միջոցների համակարգման գլխավոր մարմնի կարգավիճակով, որը կիրառել է սահմանափակող միջոցների գերակշիռ մասը: Նմանօրինակ կառույց ստեղծվել է նաև Սլովենիայում, որտեղ ձգնաժամի կառավարումը սկզբնական շրջանում իրականացրել է ձգնաժամային շտաբը: Այս մարմինը նախատեսված չի եղել օրենքով և հետագայում լուծարվել է իր վիճելի կարգավիճակով պայմանավորված: Նման պրակտիկան ԵԱՀԿ կողմից մտահոգիչ է դիտարկվել հատկապես այն պատճառով, որ նման մարմինների ձևավորման համար բացակայել են անհրաժեշտ նորմատիվ իրավական հիմքերը, և արդյունքում դրանց կազմը, իրավասության շրջանակը և հաշվետվողականությունը որոշված չեն եղել: Համավարակի փորձը նաև ակնառու դարձրեց, որ այն դեպքերում, երբ գործադիր իշխանության որոշումները ընդունվում են հատուկ ներգրավված փորձագետների առաջարկությունների և դիտարկումների հիման վրա (ինչպես դա տեղի ունեցավ Ֆրանսիայում և Թուրքիայում), անհրաժեշտ են որոշումների ընդունման գործընթացը թափանցիկ դարձնող լրացուցիչ ջանքեր: Հատկապես, երբ խոսքը վերաբերում է նման մարմինների կազմին, անդամների նշանակման կարգին և հաշվետվողականությանը: Օրինակ, Ֆրանսիայում նախագահի հանձնարարությամբ առանց որևէ իրավական հիմքի ստեղծվել է հատուկ գիտական խորհուրդ, որի նպատակն է եղել գործադիր իշխանությանը համար առաջարկությունների մշակումը: Որպես հետևանք՝

¹ St' u Sundnes, Knut Ole. "CHAPTER 6: Coordination and Control." *Scandinavian Journal of Public Health. Supplement*, vol. 14, 2014, pp. 56–75. JSTOR, էջ 56, <http://www.jstor.org/stable/45205998> 25.11.2023թ. դրությամբ: St' u նաև Guralnik DB and Friend JH (eds). *Webster's Nezv World dictionary of the American language*, college edn. Cleveland: The World Publishing Company, 1966:

² St' u Sundnes KO and Birbaum ML (eds), Task Force on Quality Control of Disaster Management, World Association for Disaster and Emergency Medicine and Nordic Society for Disaster Medicine. *Health disaster management: guidelines for evaluation and research in the Utstein style*. *Prehosp Disaster Med* 2003;17(Suppl 3), էջ 147:

³ St' u Sundnes, Knut Ole, նշված աշխատությունը, էջ 56:

Հանրային առողջապահության օրենսգրքով նախատեսված համաճարակային ռիսկերի հարցերով փորձագիտական քննարկումների ինստիտուցիոնալ մեխանիզմները, ԵԱՀԿ գնահատմամբ, մղվել են երկրորդ պլան: Իսկ Թուրքիայի օրինակում ականատես ենք լինում, որ «Բնակչության առողջության պահպանության մասին» օրենքով նախատեսված հանրային առողջապահության խորհուրդներին ի լրումն բոլոր շրջաններում ստեղծվեցին համավարակի պայքարի շրջանային խորհուրդներ, որոնց իրավունքները և պարտականությունները չեն սահմանվել որևէ օրենքով կամ նախագահի հրամանագրով: Ուսումնասիրված փորձին զուգահեռ հարկ է նշել, որ անկախության և թափանցիկության երաշխիքների բացակայությամբ պայմանավորված՝ քննադատություն է հնչել նույնիսկ այն պարագայում, երբ իշխանությունները հանրային առողջապահության ոլորտում առաջարկություններ պատրաստելիս օգտագործել են արդեն իսկ գոյություն ունեցող կառուցակարգերը, օրինակ՝ Արտակարգ իրավիճակների գիտական խորհրդատվական խմբի դեպքում, որը ձևավորվել էր Միացյալ Թագավորությունում¹:

Վերոգրյալ համատեքստում նշենք, որ ներպետական օրենսդրության տեսանկյունից նման մարմին է պարետատունը, որը օրենքով բնութագրվում է որպես վարչապետին կամ փոխվարչապետին կից խորհրդակցական մարմին, որը ստեղծվում է կառավարության որոշմամբ²: 2020 թվականի մարտի 16-ին Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու որոշմամբ արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծվեց պարետատուն, իսկ պարետատան ղեկավար նշանակվեց Հայաստանի Հանրապետության փոխվարչապետը: Միաժամանակ ներպետական օրենսդրական կարգավորումներով հստակ սահմանված չէր պարետի իրավասության և գործառնությունների շրջանակը: Մասնավորապես, օրենսդրությամբ բացահայտված չէին վերջինիս կողմից իրականացվող ղեկավարման և համակարգման գործառնությունների բովանդակությունը և դրանց իրականացման կարգը, ինչը սկզբունքային նշանակություն ունի դրանց հայեցողական դրսևորման կանխման և արտակարգ դրության պայմաններում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ գործունեության ապահովման և չխոչընդոտման նպատակով: Ընդ որում, արտակարգ դրության պայմաններում նշված մարմինները պետք է շարունակեն իրականացնել իրենց լիազորությունները՝ հիմք ընդունելով ստեղծված իրավիճակի վերաբերյալ առկա ճշգրիտ տեղեկատվությունը, ինչը պահանջում է նշված մարմինների սերտ համագործակցություն և տեղեկատվության օպերատիվ փոխանակում ու համատեղ վերլուծություն: Իսկ ստեղծվող ժամանակավոր կառույցի գերխնդիրը համատեղ աշխատանքի արդյունավետ համակարգման ապահովումն է: Արտակարգ դրության պայմաններում արդյունավետ որոշումների կայացման հիմքում ընկած է ղեկավարի ունակությունը՝ հավաքագրելու անհրաժեշտ տեղեկատվություն, որի համար կենսականորեն կարևոր նշանակություն ունի տարբեր ոլորտների գերատեսչությունների, պաշտոնատար անձանց և կազմակերպությունների գործունեության համակարգումը³: Այս առումով կարևոր է բացահայտել համակարգման՝ որպես արտակարգ դրության պայմաններում իրականացվող կառավարման եղանակի էությունը:

¹ «Обязательства ОБСЕ в области человеческого измерения и меры реагирования государств на пандемию COVID-19» էջ 41, <https://www.osce.org/files/f/documents/3/e/473679.pdf> 29.11.2023թ. դրությամբ:

² Տե՛ս «Արտակարգ դրության մասին» օրենք, ՀՕ-106-Ն, ընդունված՝ 21.03.2012, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2012.04.25/21(895) Հոդ.473:

³ Տե՛ս National Incident Management System, Emergency Operations Center How-to Quick Reference Guide, FEMA, 2022, էջ 1, https://www.fema.gov/sites/default/files/documents/fema_eoc-quick-reference-guide.pdf 14.11.2023թ.-ի դրությամբ:

Համակարգման՝ որպես կառավարման եղանակի էությունը.

Իր էությամբ համակարգումը փիլիսոփայական կատեգորիա է, որը դիտարկվում է հասկացությունների, կատեգորիաների և սուբորդինացիոն հակադրության համատեքստում¹: Համակարգվող տարրերը ունեն ինքնուրույն նշանակություն և միաժամանակ արտաքին կախվածություն: Համակարգումը և ենթակայությունը (սուբորդինացիա) ճանաչողության տարբեր գործընթացների արդյունք են²: Հատկանշական է, որ համակարգման և փոխազդեցության միջև տարբերությունները քննարկելիս հեղինակները նշում են, որ, ի տարբերություն փոխազդեցության, համակարգումը սոսկ իրավահավասար և միմյանց ոչ ենթակա կառավարման մասնակիցների միասնության ապահովում չէ, այլ դրանց ենթարկումը ընդհանուր համակարգող մարմնի կամ պաշտոնատար անձի համատեղ գործունեության վերաբերյալ առկա կամքին³: Սկզբունքորեն չառարկելով մեջբերված գաղափարին նշենք, որ այս առումով կարծում ենք, որ համակարգումը ենթադրում է մարմինների համատեղ և համաձայնեցված գործունեություն, որը սակայն ուղղված է միասնական նպատակին հասնելուն, իսկ համակարգումն ապահովող պետական մարմնի կամ պաշտոնատար անձի գործունեությունը պետք է ուղղված լինի անհրաժեշտ նպատակի և ակնկալվող արդյունքի որոշմանը և համակարգման բաղադրատարրերը կազմող սուբյեկտների համատեղ գործունեության ապահովմանը: Այլապես, առկա է հավանականություն համակարգման սկզբնական խնդրից ենթակայական հարաբերություններին անցնելու վտանգ: Այսպես, հեղինակները նշում են, որ համակարգման արժեքն է այս կամ այն գործունեության ոլորտում սիներգիայի, որոշակի գործընթացների համաձայնեցման և փոխազդեցության հնարավորության ապահովումը⁴: Համակարգման միջոցով պետք է ապահովվի առանձին սուբյեկտների գործունեության արդյունավետությունը, որն ավելի նվազ կլիներ, եթե վերջիններս գործեին համակարգային համաձայնեցման և փոխազդեցության բացակայության պարագայում⁵: Կարծում ենք, որ նշված միտքը վերաբերելի է արտակարգ դրության պայմաններում իրականացվող համակարգման գործառույթի էությանը: Համակարգումը պետք է ուղղված լինի սուբյեկտների համատեղ գործունեության կազմակերպմանը և միաժամանակ առանձին ինքնուրույն գործողությունների համաձայնեցմանը⁶: Իսկ Անրի Ֆայոլը համակարգման էությունը բնութագրելիս նշում էր, որ համակարգել նշանակում է կապել, միավորել, ներդաշնակեցնել բոլոր ջանքերը և գործողությունները⁷: Համաձայնելով մեջբերված դիրքորոշմանը՝ կարծում ենք, որ այն առավել քան արդիական է արտակարգ դրության հայտարարման պարագայում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների համատեղ գործունեությունը կազմակերպելիս: Ընդ որում, հաշվի առնելով, որ խոսքը հասարակական տարբեր ոլորտներում կառավարում իրականացնելու լիազորությամբ օժտված մարմինների մասին է, մեր համոզմամբ՝ առաջնահերթություն պետք է տրվի հորիզոնական համակարգմանը: Այսպես, գրականության մեջ համակարգման տիպաբանությանը անդրադառնալիս հեղինակները տարանջատում են հորիզոնական և ուղղահայաց համակարգման կատեգորիաները: Ուղղահայաց համակարգումը բնորոշվում է որպես կառավարման եղանակ, որը

¹ St' u **А.А.Максуров** "Координация как метод построения вертикали власти", էջ 85, <https://cyberleninka.ru/article/n/koordinatsiya-kak-metod-postroeniya-vertikali-vlasti/viewer> 30.11.2023թ. դրությամբ:

² St' u Философский словарь/под ред. М.М.Розенталя-М, 1975, էջ 189, 190:

³ **Погодина, И.В.** Управление в юридической практике правоохранительных органов/И.В.Погодина.-Владимир,2003, էջ 34:

⁴ St' u Новый словарь русского языка. Толково-словообразовательный-М,2003,т1, էջ 113:

⁵ St' u **А.А.Максуров**, նշված աշխատությունը, էջ 86:

⁶ St' u նաև Погодина, И.В., նշված աշխատությունը, էջ 6:

⁷ St' u Fayol, H. Administration industrielle et generaie/H. Fayol.-Paris, 1920, էջ 11:

դրսևորվում է գործադիրի և աջակցող անձնակազմի, ստորաբաժանման, բաժնի կամ վարչության միջև: Մինչդեռ՝ հորիզոնական համակարգումը բնորոշվում է որպես մի քանի ստորաբաժանումների, վարչությունների և բաժինների միջև իրականացվող գործընթաց¹: Ուղղահայաց համակարգումը բնութագրվում է որպես առավելապես հիերարխիկ բնույթ կրող, որը հիմնված է վերևից ներքև առկա ենթակայական հարաբերությունների վրա: Մյուս կողմից, հորիզոնական համակարգման դեպքում շեշտադրվում են մասնագիտացումը և մասնակցությունը, ինչն ապահովում է ապակենտրոնացում, հավասարություն և ձկունություն: Հեղինակները նշում են, որ համակարգման հենց այս տիպի դեպքում է, որ անձինք առավել մեծ պատասխանատվություն են ստանձնում իրենց առաջ դրված խնդիրների իրականացման համար²:

Վերոգրյալը ամփոփելով՝ կարող ենք նշել, որ արտակարգ դրության պայմաններում առաջնային նշանակություն է ստանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հորիզոնական համակարգումը, որը չի ենթադրում մարմինների կողմից սեփական լիազորությունների իրականացման պատվիրակում մեկ այլ՝ նոր ձևավորված մարմնին կամ պաշտոնատար անձին, այն է՝ ներպետական կարգավորումների դեպքում՝ պարետին: Իրավիճակի կառավարման նպատակով պարետատան ձևավորումը պետք է օժանդակի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը՝ նպաստելով համաձայնեցված գործունեության իրականացմանը: Հատկանշական է, որ գրականության մեջ որոշ հեղինակներ առանձնացնում են այն գործառույթները, որոնք արտակարգ դրության կամ դրան համարժեք այլ ռեժիմների դեպքում կազմում են համակարգման էությունը: Մասնավորապես, այդպիսիք են դիտարկվում ստորև նշված գործառույթները՝

- տեղեկատվության հավաքագրումը, գնահատումը և տարածումը,
- անհրաժեշտության դեպքում առաջնահերթությունների որոշումը,
- ռեսուրսների կառավարումը և փաստաթղթավորումը³,
- ծրագրերի համակարգումը և ներկա ու ապագա կարիքների որոշումը,
- որոշ դեպքերում համակարգման և քաղաքականության ուղղորդման ապահովումը⁴:

Կարծում ենք, որ վերոգրյալ գործառույթները սպառիչ չեն, սակայն հնարավորություն են տալիս ուրվագծել ստեղծված իրավիճակով պայմանավորված կատարման ենթակա գործողությունների շրջանակը: Այս առումով հետաքրքիր է ԱՄՆ փորձը: Այսպես, Ամերիկայի Միացյալ Նահանգներում նման մարմինները անվանվում են «շտապ օպերատիվ կենտրոններ» (emergency operation centers), որոնք բնորոշվում են որպես կառույցներ, որոնց միջոցով կառավարությունը արտակարգ իրավիճակների հաղթահարման նպատակով կարողանում է ցանկացած մակարդակում իրականացնել արդյունավետ համակարգում և որոշումների կայացում⁵: Նման կենտրոնները այնպիսի հարթակներ են, որտեղից տարբեր ոլորտների համար պատասխանատու ղեկավարները տեղեկատվության և ռեսուրսների համակարգման հնարավորություն են ստանում, որն իր հերթին ուղղված է աջակցելու իրավիճակի կառավարման նպատակով իրականացվող գործողություններին: Ըստ

¹ St'u **Mst Marzina Begum and Md Nurul Momen**, Coordination and Effective Governance, էջ 2:

² St'u նույն տեղում, էջ 3:

³ St'u EOC Management and Operations course, UNIT 2. EOC: THE BASICS, https://www.msema.org/wp-content/uploads/2018/10/02_sm_basics_dec2012.pdf էջ 5:

⁴ St'u National Incident Management System, Emergency Operations Center How-to Quick Reference Guide, FEMA, 2022, էջ 2, https://www.fema.gov/sites/default/files/documents/fema_eoc-quick-reference-guide.pdf 14.11.2023թ.-ի դրությամբ:

⁵ St'u EOC Management and Operations course, UNIT 2. EOC: THE BASICS, https://www.msema.org/wp-content/uploads/2018/10/02_sm_basics_dec2012.pdf էջ 5:

այդմ, նման կենտրոնների կառուցվածքը և թիվը ԱՄՆ-ում տարբերվում են¹: ԱՄՆ-ում նման կենտրոնները կազմում են տարբեր իրավասություն ունեցող գերատեսչությունների և կազմակերպությունների միավորում, որոնք գործում են համատեղ և համակարգված՝ միասնական նպատակին հասնելու համար²: Հատկանշական է, որ կենտրոնների բնորոշումը բնութագրելիս կիրառվում է հենց «համակարգում» եզրույթը: Նման հաստատությունների ձևավորման նպատակը առավել ուղղված է հենց համակարգմանը և ոչ կառավարմանը կամ հսկողությանը³: Ընդ որում, ամերիկյան հեղինակների միջև առկա է բանավեճ նման հաստատությունների գործառնությունների բնույթը քննարկելիս: Մասնավորապես, քննարկվում է, թե արդյոք նման կենտրոնների հիմնական գործառնությունը համակարգումն է, թե՞ ռազմավարության մշակումը: Որոշ հեղինակներ կարծում են, որ կենտրոնների գործառնությունը աջակցելն է արդեն իսկ կայացված որոշումների կիրարկմանը: Նրանք կարծում են, որ նման կենտրոնների կազմում պետական պաշտոնակատար անձանց ընդգրկումը երբեմն նույնիսկ խնդրահարույց է լինում, քանի որ վերջիններս աշխատելիս ձգտում են որոշումների կայացմանը, մինչդեռ՝ կենտրոնի գործառնությունը որոշելն է այն անհրաժեշտ գործողությունների և միջոցառումների շրջանակը, որոնք կաջակցեն կայացված որոշումների կիրարկմանը: Ընդ որում, իրավիճակի հաղթահարման նպատակով պաշտոնատար անձինք պետք է նախ ուրվագծեն, թե ինչ փոփոխություն է անհրաժեշտ իրականացնել, և արդյոք դրան հնարավոր է հասնել որոշման կայացմամբ, թե անհրաժեշտ է քաղաքականության փոփոխություն⁴: Համաձայնելով արտահայտված տեսակետին՝ կարծում ենք, որ արտակարգ դրության կամ դրան համարժեք այլ հատուկ իրավական ռեժիմի հայտարարման դեպքում իրապես առկա է տարբեր ոլորտներում կառավարում իրականացնելու լիազորությամբ օժտված պետական մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համակարգման անհրաժեշտություն, որը առավել արդյունավետ կարող է իրականացնել օրենքով նախատեսված և ժամանակավոր հիմունքներով ձևավորված մարմինը: Այս մասին է վկայում նաև տարբեր պետություններում հատկապես կորոնավիրուսային համավարակի տարածմամբ պայմանավորված ձևավորված պրակտիկայի վերլուծությունը: Սակայն, նման մարմինների գործառնությունը պետք է լինի անհրաժեշտ տեղեկատվության օպերատիվ համակարգումը և վերլուծությունը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց և կազմակերպությունների միջև համագործակցության ապահովումը: Այն առավելապես պետք է օժանդակի արդեն իսկ կայացված որոշումների կիրարկմանը և ձեռնամուխ լինի իրավիճակի հաղթահարման նպատակով անհրաժեշտ միջոցների կիրառման անհրաժեշտության որոշմանը:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել, որ արտակարգ դրության կամ այլ համարժեք կառավարման ռեժիմի պարագայում իրավիճակի արդյունավետ կառավարման և որպես հետևանք՝ հաղթահարման նպատակով, առաջնային նշանակություն են ստանում պետական և տեղական ինքնակառավար-

¹ St'u National Incident Management System, Emergency Operations Center How-to Quick Reference Guide, FEMA, 2022, էջ 2, https://www.fema.gov/sites/default/files/documents/fema_eoc-quick-reference-guide.pdf 14.11.2023թ.-ի դրությամբ:

² St'u National Incident Management System, Emergency Operations Center How-to Quick Reference Guide, FEMA, 2022, էջ 3, https://www.fema.gov/sites/default/files/documents/fema_eoc-quick-reference-guide.pdf 14.11.2023թ.-ի դրությամբ:

³ St'u EOC Management and Operations course, UNIT 2. EOC: THE BASICS, https://www.msema.org/wp-content/uploads/2018/10/02_sm_basics_dec2012.pdf էջ 5:

⁴ St'u նույն տեղում, էջ 24:

ման մարմինների գործունեության համակարգումը, պաշտոնատար անձանց գործունեության համաձայնեցումը: Նման գործառնությունների առավել արյունավետ իրականացման նպատակով ընդունելի է օրենքով նախատեսված և ժամանակավոր հիմունքներով որոշակի մարմնի ձևավորումը: Սակայն դա չպետք է հանգեցնի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների գերկենտրոնացման և պատվիրակման ձևավորված մարմնին: Ընդ որում, կարևոր է, որ համակարգումը իրականացվի հորիզոնական և ոչ ուղղահայաց հիմունքներով՝ նպաստելով նաև պաշտոնատար անձանց կողմից կայացված որոշումների նկատմամբ առավել բարձր պատասխանատվության դրսևորմանը:

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է արտակարգ դրության իրավական ռեժիմի պայմաններում կառավարման առանձնահատկությունների վերլուծությանը: Մասնավորապես, հոդվածի շրջանակներում քննարկվել են արտակարգ դրության իրավական ռեժիմի հայտարարման պարագայում կառավարման մեթոդներից համակարգման էությունը և կարևորությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց համաձայնեցված գործունեության ապահովման տեսանկյունից, որը որպես վերջնարդյունք հանգեցնում է իրավիճակի հնարավորինս արագ և արդյունավետ հաղթահարմանը: Սույն հոդվածի շրջանակներում հեղինակը նաև քննարկել է արտակարգ դրության և դրան համարժեք կառավարման այլ ռեժիմների հայտարարման պարագայում հատուկ լիազորություններով օժտված մարմնի ձևավորման նպատակահարմարությունը, դրա իրավական կարգավիճակը և գործառնությունների բովանդակությունը: Վերհանվել է նման մարմինների ձևավորման միջազգային պրակտիկան՝ հատկապես կորոնավիրուսային համավարակի տարածման ընթացքում:

Կատարված վերլուծության արդյունքում հեղինակը հանգել է այն եզրակացության, որ արտակարգ դրության կամ այլ համարժեք կառավարման ռեժիմի պարագայում առաջնային նշանակություն է ստանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հորիզոնական համակարգումը: Նման գործառնության առավել արյունավետ իրականացման նպատակով ընդունելի է օրենքով նախատեսված և ժամանակավոր հիմունքներով որոշակի մարմնի ձևավորումը, սակայն ստեղծված մարմինը չպետք է փոխարինի մյուս մարմիններին և ստանձնի վերջիններիս լիազորությունների իրականացումը: Նման մարմնի գործունեությունը պետք է լինի իրավիճակով պայմանավորված առկա տեղեկատվության օպերատիվ հավաքումը և վերլուծությունը, կիրառման ենթակա անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, արդեն իսկ կայացված որոշումների կիրարկման օժանդակումը: Ընդ որում, կարևոր է, որ իրականացվող համակարգումը իրականացվի հորիզոնական և ոչ ուղղահայաց հիմունքներով՝ նպաստելով նաև պաշտոնատար անձանց կողմից կայացված որոշումների նկատմամբ առավել բարձր պատասխանատվության դրսևորմանը:

Համակարգումը որպես ենթակայական հարաբերություններում կառավարման տարատեսակ համարելը հիմնավորված չէ, քանզի ուղղահայաց կառավարման դեպքում համակարգումը, ըստ էության, ոչ թե կառավարման մեթոդ է, այլ նպատակ, մասնավորապես կառավարման վերջնարդյունքում հարկ է լինում ուղղահայաց կառավարման շրջանակներում ևս ապահովել փոհամաձայնեցված գործունեություն:

Բանալի բառեր – *կառավարման հատուկ ռեժիմ; արտակարգ դրություն; կառավարման մեթոդ; հորիզոնական համակարգում; ուղղահայաց համակարգում; պարետ; պարետատուն:*

STATE OF EMERGENCY AND COORDINATION ISSUES

Anna Harutyunyan

PhD student at the YSU Chair of Constitutional Law

anna.harutyunyan1@ysu.am

Orcid ID: 0000-0002-8213-308X

Abstract

The article is devoted to the analysis of the features of management under the legal regime of the state of emergency. In particular, within the framework of the article, the essence and importance of coordination from management methods in the case of declaring a legal regime of emergency were discussed from the point of view of ensuring the coordinated activity of state and local self-government bodies and officials, which as a final result leads to overcoming the situation as quickly and efficiently as possible. In the framework of this article, the author also discussed the expediency of forming a body with special powers, its legal status and the content of its functions in the event of declaring a state of emergency and other regimes equivalent to it. The international practice of forming such bodies has been lifted, especially during the spread of the coronavirus pandemic.

As a result of the analysis, the author came to the conclusion that in the case of a state of emergency or other equivalent management regime, the horizontal coordination of the activities of state and local self-government bodies is of primary importance. In order to carry out such a function more effectively, it is acceptable to form a certain body provided by law and on a temporary basis, but the created body should not replace other bodies and take over the implementation of their powers. The task of such a body should be the operative collection and analysis of the existing information due to the situation, the presentation of recommendations on the necessary measures to be applied, and the support for the implementation of already made decisions. Moreover, it is important that the implemented coordination is carried out on a horizontal and not a vertical basis, contributing to the higher responsibility towards the decisions made by the officials.

Considering coordination as a type of management in subordinate relations is not justified, because in the case of vertical management, coordination is, in fact, not a method of management, but a goal, in particular, in the end result of management, it is necessary to ensure coordinated activities within the framework of vertical management.

Key word – *special administrative regime; state of emergency; management method; horizontal coordination; vertical coordination; commandant; commandant's office.*

ЧРЕЗВЫЧАЙНОЕ ПОЛОЖЕНИЕ И ПРОБЛЕМЫ КООРДИНАЦИИ

Анна Арутюнян

Аспирант кафедры конституционнофо права ЕГУ

anna.harutyunyan1@ysu.am

Orcid ID: 0000-0002-8213-308X

Абстракт

Статья посвящена анализу особенностей управления в условиях правового режима чрезвычайного положения. В частности, в рамках статьи обсуждались сущность и значение метода координации управления в случае объявления правового режима чрезвычайного положения с точки зрения обеспечения согласованной деятельности органов государственной власти и местного самоуправления и должностных лиц, что в конечном итоге приводит к максимально быстрому и эффективному преодолению ситуации. В рамках данной статьи автор также обсудил целесообразность формирования органа с особыми полномочиями, его правовой статус и содержание его функций в случае объявления чрезвычайного положения и иных приравненных к нему режимов. Также проанализирована международная практика формирования таких органов, особенно в условиях распространения пандемии коронавируса.

В результате анализа автор пришел к выводу, что в случае чрезвычайного положения или иного приравненного к нему режима управления первостепенное значение имеет горизонтальная координация деятельности органов государственной власти и местного самоуправления. Для более эффективного осуществления такой функции допускается образование определенного органа, предусмотренного законом и на временной основе, однако создаваемый орган не должен подменять другие органы и брать на себя реализацию их полномочий. Задачей такого органа должен стать оперативный сбор и анализ имеющейся информации с учетом ситуации, представление рекомендаций о необходимых мерах, которые необходимо применить, а также поддержка реализации уже принятых решений. При этом важно, чтобы координация осуществлялась на горизонтальной, а не вертикальной основе, что способствует повышению ответственности должностных лиц за решения.

Рассматривать координацию как вид управления в подчиненных отношениях не обоснованно, поскольку в случае вертикального управления координация является, по сути, не методом управления, а целью, в частности, в конечном результате управления необходимо обеспечить скоординированную деятельность в рамках вертикального управления.

Ключевые слова - специальный режим управления; чрезвычайное положение; метод управления; горизонтальная координация; вертикальная координация; комендант; комендатура.

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՆԱԴԻՐՆԵՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հասմիկ Հակոբյան

ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

hasmik.hakobyan@ysu.am

Orcid - 0000-0002-7014-9164

Ներածություն

ՀՀ իրավական համակարգում 2020 թվականին ներդրվեց առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնազանձման ինստիտուտը, որն ամրագրվեց «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ նաև Օրենք): Օրենքի ընդունումից ի վեր՝ 2020 թվականի սեպտեմբերից մինչև 2023 թվականի սեպտեմբերը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման գործերով նախաձեռնվել է 419 ուսումնասիրություն¹:

Իրավական այս ինստիտուտի գործադրումն անմիջականորեն ուղղված է անձանց ոչ օրինական եկամուտների և դրանցով ձեռք բերված գույքի բացահայտմանը, այսինքն՝ դիտարկվող իրավանորմերի կիրառման արդյունքում միջամտություն է տեղի ունենում սահմանադրորեն երաշխավորված սեփականության իրավունքին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ սույն ուսումնասիրության շրջանակներում քննարկման առարկա են դարձել ՀՀ իրավական համակարգում ներդրված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման ինստիտուտի սահմանադրաիրավական ասպեկտները՝ կարևորելով սեփականության իրավունքի սահմանափակում նախատեսող կարգավորումների իրավական որոշակիությունն ու կանխատեսելիությունը, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում կամայականությունների դրսևորման հնարավորությունների բացառումը:

Օրենսդրական կարգավորումները, դրանցում ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխություններն ու այդ կարգավորումների շարքում նոր իրավական ինստիտուտների նախատեսումը հետապնդում են մեկ կարևոր և առանցքային նպատակ՝ առեքստվել առկա մարտահրավերներին և ներկայացնել դրանց համարժեք լուծումներ: Իրավական յուրաքանչյուր ինստիտուտի նախատեսումն ու գոյությունը պետք է հետապնդեն հասարակության կյանքում օրինականության ապահովման, հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության և սոցիալական արդարության վերականգնման նպատակներ: Այս առումով արդի ժամանակշրջանում մեծ կարևորություն է ներկայացնում ապօրինի ձեռք բերված միջոցների վերադարձման կամ բռնազանձման գործընթացների ներդրման անհրաժեշտությունը՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ և արդիական միջոց:

Յուրաքանչյուր պետության զարգացման և տնտեսական առաջընթացի համար կարևոր նշանակություն ունի պետությանը պատկանող սեփականությունը զավթելու, ապօրինի կարգով միջոցներ կուտակելու մեխանիզմների կանխումը, որի ապահովման համար առանցքային նշանակություն ունեն համարժեք իրավական ինստիտուտների ներդրումն ու դրանց արդյունավետ գործարկումը:

¹ ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական կայք, <https://www.prosecutor.am/article/4371>, 29.11.2023, 13:26:

Դեռևս 2003 թվականին ընդունված ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի շրջանակներում ընդգծվել է, որ «անձնական հարստության ապօրինի ձեռքբերումը կարող է ուղղակիորեն վնաս հասցնել ժողովրդավարական ինստիտուտներին, ազգային տնտեսություններին և օրենքի գերակայությանը, ուստի պետք է վճռական լինել ապօրինի ձեռք բերված արժեքների փոխանցումներն ավելի արդյունավետ ձևով կանխարգելելու, հայտնաբերելու և խափանելու ու արժեքների վերադարձման ուղղությամբ»¹:

Վերոգրյալ նկատառումների հաշվառմամբ ապօրինի միջոցների բացահայտման և արդյունավետ կերպով բռնագանձում իրականացնելու համար առաջադրվում է առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձման իրավական գործիքակազմի ներդրման անհրաժեշտությունը, որի նպատակը ապօրինի, չհիմնավորված եկամուտներով ձեռք բերված գույքի բռնագանձումն է:

Իրավական այս հնարավորության գործադրման վերաբերյալ առկա են մի շարք միջազգային իրավական ակտեր², սակայն միայն դրանց գոյությունը բավարար չէ յուրաքանչյուր պետության կազմում այդպիսի դեպքերի դեմ պայքարն արդյունավետ իրականացնելու համար: Ըստ այդմ, առաջ է գալիս համանման ինստիտուտների կիրառման պայմանների, կարգի և առանձնահատկությունների վերաբերյալ օրենսդրական կարգավորումների նախատեսման անհրաժեշտություն: Այս առումով գտնում ենք, որ ակտիվների բռնագանձման իրավական ինստիտուտի էության և հետապնդած նպատակների բացահայտումը մեծ կարևորություն ունի ոչ միայն համապատասխան իրավակարգավորումների առանձնահատկությունները և դրանցում առկա հիմնախնդիրները բացահայտելու, այլև կոռուպցիայի դեմ պայքարն առավել արդյունավետ և առարկայական դարձնելու առումներով:

Սույն ուսումնասիրության նպատակն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավական ինստիտուտի սահմանադրաիրավական հիմնախնդիրների բացահայտումն է, որի իրագործման նկատառումներից ելնելով իրականացրել ենք ինչպես առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձման ինստիտուտի էության բացահայտում, այնպես էլ ՀՀ իրավական համակարգում ներդրված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործիքակազմի սահմանադրականության դիտարկում սեփականության իրավունքի պաշտպանության և իրավական որոշակիության սկզբունքի երաշխավորման համատեքստում:

Ուսումնասիրության իրականացման շրջանակներում կիրառվել են գիտական ուսումնասիրության ինչպես ընդհանուր մեթոդները՝ տրամաբանական, քննադատական, վերլուծական, համակարգային-կառուցվածքային, այնպես էլ մասնավոր մեթոդները՝ ձևական-տրամաբանական, իրավական նորմերի քերականական, տրամաբանական և համակարգային մեկնաբանման մեթոդները:

1. Առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձման ինստիտուտի էությունը

Առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձման հայեցակարգն առաջ է եկել շատ վաղուց և հիմնված է այն գաղափարի վրա, որ եթե «ինչ-որ բան» խախտում է օրենքը, այն կարող է բռնագրավվել հօգուտ պետության³:

¹ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիա (2003 թ.):

² ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիա (2003 թ.), Եվրոպայի խորհրդի «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիա (2005 թ.), Resolution 2218, Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets, adopted by the Parliamentary Assembly on 26 April 2018 (17th Sitting):

³ Stolen asset recovery : a good practices guide for non-conviction based asset forfeiture /Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, Larissa Gray, էջ 18:

Առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձումն արդյունավետ միջոց է այն իրավիճակներում, երբ մահվան, անհայտ բացակայող ճանաչվելու, վաղեմության ժամկետները լրացած լինելու և քրեական հետապնդումը բացառող այլ հանգամանքների առկայության դեպքում անհնար է դառնում ոչ օրինական եկամուտների բռնագանձումը քրեադատավարական կարգով: Այսինքն իրավական այս հնարավորությունը նախատեսված է լուծելու բոլոր այն խնդիրները, որոնք օբյեկտիվ իրողությունների արդյունքում անհնարին են դարձնում ոչ օրինական եկամուտների և դրանցով ձեռք բերված գույքի բռնագանձման գործընթացը:

«Ընդհանուր առմամբ, ապօրինի հարստացման կամ քաղաքացիական բռնագրավման մասին օրենքների հիմնական նպատակը կոռուպցիայի դեմ պայքարն է»¹: «Կոռուպցիայի միջոցով հափշտակված ակտիվների գոյությունը շարունակվում է մնալ իրավապահ մարմինների ներկայացուցիչների առջև ծառացած ամենամեծ մարտահրավերներից մեկը, քանի որ նրանք փորձում են օրինականացնել զրկել ապօրինի գործունեությունից ստացված եկամուտներից և վերադարձնել այդ ակտիվներն իրենց նախնական սեփականատերերին կամ փոխհատուցել տուժածներին»²:

«Առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձումը, որը նաև կոչվում է «քաղաքացիական բռնագանձում», «in-rem բռնագանձում» կամ «օբյեկտիվ բռնագանձում», գործողություն է հենց ակտիվի դեմ, ոչ թե անհատի»³:

Սրանք կարևոր չափանիշներ են ոչ միայն քաղաքացիական և քրեական կարգով գույքի բռնագանձման ինստիտուտների տարբերակման, այլև առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի էության բացահայտման և դրա վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումների համարժեք մեկնաբանման ու կիրառման առումներով:

«Ստացվում է, որ այս ինստիտուտը կարգավորող նորմերի վերջնական և գերակա նպատակը հանդիսանում է ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի տնտեսական շրջանառությունից դուրսբերումը, դրա պետության տնտեսական շահերին ծառայեցնելը»⁴: Այսինքն ինստիտուտի գործադրմանն ուղղված իրավակարգավորումները պետք է ձևակերպվեն, մեկնաբանվեն և կիրառվեն այնպես, որ չխեղաթյուրեն ինստիտուտի առջև դրված հիմնական նպատակը, այն է՝ ոչ օրինական եկամուտների բացահայտումն ու դրանցով ձեռք բերված գույքի բռնագանձումը:

«Օրենքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքների առկայության դեպքում առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագրավումը կարող է դառնալ հակակոռուպցիոն կարևոր գործիք»⁵: Ուստի այս հարցում չափազանց կարևոր դերակատարում են ձեռք բերում ինչպես տվյալ ինստիտուտի կարգավորմանն ուղղված իրավանորմերի հստակությունն ու որոշակիությունը, այնպես էլ սեփականության իրավունքի միջամտության համար ընտրված միջոցների պիտանիությունն ու անհրաժեշտությունը նախանշված նպատակների իրացվելիության համատեքստում:

¹ Venice Commission, CDL-AD(2022)029, Republic of Moldova - Joint amicus curiae Brief of the Venice Commission and the OSCE/ODIHR relating to the offence of illicit enrichment, adopted by the Venice Commission at its 132nd Plenary session (Venice, 21-22 October 2022), para. 9.

² Transparency International Anti-Corruption Helpdesk Answer, Non-conviction-based confiscation as an alternative tool to asset recovery, January 2022, էջ 2:

³ Stolen asset recovery: a good practices guide for non-conviction based asset forfeiture /Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, Larissa Gray, էջ 14:

⁴ **Մարգարյան Ս.**, Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի քաղաքացիադատավարական բնույթը// Օրինականություն, N122, Երևան, 2021, էջ 33:

⁵ **Guilherme F.**, Non-conviction-based confiscation as an alternative tool to asset recovery, Lessons and concerns from the developing world, Transparency International Anti-Corruption Helpdesk Answer, 2022, էջ 2:

2. Իրավական որոշակիության խնդիրը դիտարկվող օրենքում

«Իրավական համակարգը սկզբունքորեն պետք է բացառի իրավակարգավորման այնպիսի երևույթ, ինչպիսին է թերի ու տարակարծությունների տեղիք տվող, ինչպես նաև հակասական իրավական ակտերի ընդունումը»¹: Ընդ որում, կարևոր է ոչ միայն իրավակարգավորման որոշակիության և հստակության երաշխավորումը, այլև իրավակիրառ պրակտիկայում դրա մեկնաբանման իրավասություն ունեցող սուբյեկտների կողմից նորմի որոշակիության ապահովմանն ուղղված համարժեք քայլերի ձեռնարկումը²: Իրավական որոշակիության պահանջը բխում է ինչպես Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության գաղափարից, այնպես էլ իր ուղղակի ամրագրումն է ստացել Սահմանադրության 79-րդ հոդվածում, որի համաձայն՝ «հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին՝ արտահայտելով իրավական դիրքորոշում առ այն, որ «օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության»³, «առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»⁴:

Վերոգրյալի հաշվառմամբ կարևոր ենք համարում ընդգծել, որ իրավական որոշակիության պահանջը երբևէ չի կարող մեկնաբանվել այնպես, որ հանգեցնի հասկացություններով և սահմանումներով ծանրաբեռնված կամ քարացած օրենսդրական կարգավորումների գոյությանը, սակայն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, հատկապես իրավունքների և ազատությունների սահմանափակում նախատեսող իրավակարգավորումների պայմաններում պետք է ապահովվել բավարար որոշակիություն և կանխատեսելիություն, որպեսզի երաշխավորվի կամայականությունների դրսևորման անհնարինությունը: Այսինքն, բոլոր այն դեպքերում, երբ դժվար կամ անհնարին է նախատեսել կոնկրետ ձևակերպումների հասկացությունները կամ թվարկել դրանց սպառիչ ցանկը, օրենքը պետք է նախատեսի այն չափանիշները, որոնց գնահատման արդյունքում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավասու մարմնի գործողություններն ու դրանց հետևանքները կլինեն կանխատեսելի, և կամայականությունների դրսևորման հնարավորություններն ի չիք կդառնան:

Հարկ է նշել, որ «առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձման մեխանիզմի կիրառման հարցում ևս կարևորվում է ապացույցների և ընթացա-

¹ **Ղանիելյան Գ.**, Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համանմանության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները// «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2016, № 2 (20), էջ 3:

² Սա մի դեպքում կարող է լինել համապատասխան մեկնաբանության միջոցով իրավանորմի բովանդակությունը հստակեցնելը, մյուս կողմից նախորդ գործառնության կիրառման անհնարինության դեպքում այդ խնդրով իրավասու մարմնին դիմելը, օրինակ՝ իրավանորմի անորոշության խնդրով ՀՀ սահմանադրական դատարան դիմելը:

³ ՍՂՈ-1176, 02.12.2014 թ.:

⁴ ՍՂՈ-1213, 09.06.2015 թ.:

կարգային կանոնների վերաբերյալ հստակ և հատուկ առանձնահատկությունների նախատեսումը, որոնք կապահովեն այդ ոլորտում գործող իրավակարգավորումների կիրառման միատեսակությունը և կնվազեցնեն օրենսդրորեն նախանշված նպատակներից շեղվելու վտանգները»¹:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը սկսվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, այսինքն՝ այս գործընթացի օրինականության ապահովման հարցում չափազանց կարևոր նշանակություն ունեն հենց ուսումնասիրություն սկսելու հիմքերի հայտնաբերումը և այդ գործընթացը հնարավորինս որոշակի, կանխատեսելի և կամայականություններից զերծ պահելու հանգամանքը: Այս առումով կարևոր դերակատարում է ձեռք բերում հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությանը վերաբերող օրենսդրական կարգավորումների դիտարկումը:

Օրենքի 4-րդ հոդվածը նախատեսում է, թե որ դեպքերում է իրավասու մարմինը սկսում ուսումնասիրություն՝ մասնավորապես նշելով, որ նույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի առնչությամբ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, իսկ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալների առնչությամբ համապատասխան միջոցառումներն իրականացրած մարմինը պարտավոր են ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության մասին իրենց հայտնի դառնալու պահից՝ տասնօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել իրավասու մարմնին և փոխանցել այն բոլոր փաստաթղթերը և տվյալները, որոնք կարող են վերաբերել ուսումնասիրություն սկսելու հիմքերին:

Նույն հոդվածով նշվում է նաև, որ Իրավասու մարմինը սկսում է ուսումնասիրություն ներկայացված նյութերի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ, եթե՝

1) առկա է ուսումնասիրություն սկսելու՝ նույն օրենքով նախատեսված հիմքերից առնվազն մեկը, և

2) առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ ուսումնասիրությամբ հայտնաբերվելիք ապօրինի ծագում ունեցող գույքն իր շուկայական արժեքով կարող է գերազանցել 50 միլիոն դրամը:

Օրենքի վերոնշյալ կարգավորումների արդյունքում հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության գործընթացի վերաբերյալ ամբողջական պատկերացում ձևավորելու համար խիստ անհրաժեշտ է դառնում «Ուսումնասիրություն սկսելու հիմքերը» վերտառությամբ հոդվածի բովանդակության բացահայտումը, քանի որ հոդվածի վերտառությունը հույս է ներշնչում հիմքերին ծանոթանալու առումով: Ավելին, «Ուսումնասիրություն սկսելու հիմքերը» վերտառությամբ 5-րդ հոդվածի բովանդակությունն առաջին հայացքից տպավորություն է ստեղծում, որ բավականին մանրամասն ներկայացված են ուսումնասիրություն սկսելու հիմքերը, սակայն երբ դրանց համադրված վերլուծության արդյունքում փորձում ենք վեր հանել ուսումնասիրության հիմքերը, հասկանում ենք, որ մի քանի կետից բաղկացած հիմքերի թվարկման շարքն ունի մեկ բովանդակություն, այն է՝ **«առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք»**: Այս առումով հարց է առաջանում՝ իսկ որո՞նք են այդ *բավարար* հիմքերը կամ գոնե դրանց գնահատման չափանիշները: Արդյո՞ք չափազանց անորոշ և վերացական չէ *«առկա են բավարար հիմքեր»* ձևակերպումը, և ինչպե՞ս պետք է անձը կանխատեսի, թե այդ ո՞ր հիմքերն են բավարար գնահատվելու իրավասու մարմնի կողմից, և որո՞նք են համարվելու ոչ բավարար գույքը ապօրինի ծագում ունեցող համարելու համար:

¹ Stolen asset recovery: a good practices guide for non-conviction based asset forfeiture /Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, Larissa Gray, էջ 34:

Ավելին, խնդիրը ոչ միայն անձի համար կարող է առաջացնել խնդիրներ, այլ նաև հենց իրավասու մարմնի, քանի որ ուսումնասիրություն իրականացնող իրավասու սուբյեկտը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում չունի գնահատման համարժեք չափանիշներ, որոնցով կարողանա կողմնորոշվել գույքը ապօրինի ծագում ունեցող համարելու կամ չհամարելու համար: Սա կարող է հանգեցնել կամայականությունների դրսևորման լրջագույն խնդրի, որպիսի գործընթացը հղի է, ի թիվս այլնի, նաև կոռուպցիոն վտանգներով՝ կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացը վերածելով նոր կոռուպցիայի:

Հաշվի առնել այն իրողությունը, որ օրենքում օգտագործվող բոլոր ձևակերպումների բովանդակությունը բացահայտելը մի շարք դեպքերում կարող է իրատեսական և հնարավոր չլինել, կարևոր ենք համարում ընդգծել, որ բոլոր այն դեպքերում, երբ այդ ձևակերպումները հիմք են հանդիսանալու որևէ հիմնարար իրավունքի սահմանափակման համար, այդ ձևակերպումների բովանդակությունը հստակ ներկայացնելու անհնարինության դեպքում պետք է ներկայացվեն դրանք գնահատելու հստակ չափանիշները: Մասնավորապես, «բավարար հիմքեր կան կասկածելու» ձևակերպման բովանդակությունն ամբողջական բացահայտելու համար առավել արդյունավետ կլինե՞ր օրենսդրորեն նախատեսել, թե ինչ չափանիշների հաշվառմամբ է իրավասու մարմինը գոյություն ունեցող հիմքերը համարելու բավարար: Այս մեխանիզմը էապես կնպաստի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նախաձեռնման գործընթացի որոշակիության ու կանխատեսելիության ապահովմանը, ինչն առանցքային նշանակություն ունի ինչպես իրավասու մարմնի գործունեության օրինականության ապահովման, այնպես էլ այդ վարույթի գործընթացում ներգրավված անձանց իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության համար:

Այս առումով կարող է հակափաստարկ ներկայացվել առ այն, որ Օրենքի 7-րդ հոդվածով սահմանվում են ուսումնասիրության սահմանները, սակայն, միևնույն է, օրենքը կրկին չի պատասխանում այն հարցին, թե այդ սահմանների մեջ մտնող հարցերը ինչ չափանիշներով պետք է գնահատվեն բավարար կամ ոչ բավարար:

Ստացվում է, որ խիստ անորոշ և կամայական օրենսդրական կարգավորման գործադրմամբ միջամտություն է կիրառվում անձի սեփականության իրավունքի նկատմամբ, որպիսի պարագայում չեն բացառվում սեփականության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման դեպքերը:

Ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփմամբ կայացվում է որոշում կա՛մ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը դադարեցնելու մասին, կա՛մ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին¹: Այս առումով ևս հետաքրքիր է, որ օրենսդիրը օգտագործում է «*եթե առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք*» ձևակերպումը, սակայն օրենսդրական մակարդակով չի բացահայտվում, թե ինչ չափանիշների լույսի ներքո է գնահատվում այդ հիմքերի բավարար լինելու կամ չլինելու հանգամանքը: Այս անորոշության արդյունքում չեն բացառվում իրավիճակները, որ նույն կամ նմանատիպ հիմքերի առկայության դեպքում իրավասու մարմինը մի դեպքում կարող է դրանք համարել բավարար հայցի հարուցման համար, մեկ այլ դեպքում՝ ոչ: Կարծում ենք՝ նշյալ մոտեցման իրականացման հավանականությունը քիչ է, քանի որ հենց իրավասու մարմնի կողմից կիրառման ենթակա օրենսդրությունն է թույլ տալիս նման հնարավորություն: Մասնավորապես, եթե չկան չափանիշներ և գնահատման հստակ մեխանիզմներ, ապա յուրաքանչյուր հաջորդ գնահատում կարող է տարբերվել նախորդից՝ առաջացնելով անկանխատեսելի և խտրական իրավիճակ:

¹ ՀՀ օրենքը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին», հոդված 13, ընդունված՝ 16.04.2020 թ., ՀՕ-240-Ն ՀՀ օրենքով:

3. Սեփականության իրավունքը և դիտարկվող ինստիտուտի էությունը

Ինչպես արդեն նշեցինք, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի նպատակը ոչ օրինական եկամուտներով ձեռք բերված գույքը բռնագանձելն է: Այս եզրահանգումը բխում է ոչ միայն դիտարկվող ինստիտուտի վերաբերյալ առկա տեսական մոտեցումներից, այլև հենց սույն ուսումնասիրության շրջանակներում գնահատման ենթակա «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագծի հիմնավորումից¹, ինչպես նաև օրենքի մի շարք կարգավորումների բովանդակությունից:

Մասնավորապես, Օրենքի՝ «Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքն այն գույքն է, որի **ծեռքերումը** չի հիմնավորվում օրինական եկամուտներով:

Օրենքի՝ «Ուսումնասիրության սահմանները» վերտառությամբ 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, որպես ուսումնասիրման ենթակա տվյալ, նշվում է նաև անձին պատկանող **գույքի ձեռքբերման** աղբյուրները: Գույքի ձեռքբերման պահի կարևորումը անուղղակիորեն բխում է նաև 7-րդ հոդվածով ամրագրված՝ ուսումնասիրվող ժամանակահատվածի վերաբերյալ կարգավորումներից, հատկապես ամրագրված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կարգավորումներից, քանի որ այս իրավական հնարավորության գործադրման համար օրենսդրորեն որպես պահանջ է ներկայացվում **գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցների պահպանված լինելը**:

Օրենքի՝ «Շահագրգիռ անձանց ծանուցումը» վերտառությամբ 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ իրավասու մարմինը ծանուցում է անձին, որի **գույքի ծագման օրինականության առնչությամբ** իրականացվել է ուսումնասիրությունը: Սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, որպես հայտարարագիր ներկայացվող տվյալ, նշվում է, ի թիվս այլնի, **գույք ձեռք բերելու գործարքները** և դրանց ֆինանսավորման աղբյուրները²:

Վերոնշյալ օրենսդրական կարգավորումների ներկայացումն ինքնանպատակ չէ, այն հստակ նպատակ է հետապնդում ընդգծելու այն իրողությունը, որ հենց դիտարկվող օրենքի կարգավորումներն են վկայում ուսումնասիրվող գույքի՝ ձեռքբերման պահի, հետևապես՝ ձեռքբերման պահին գոյություն ունեցող արժեքի կարևորման անհրաժեշտությունը: Մինչդեռ այս տրամաբանությունը չի գործում նույն օրենքի այլ կարգավորումների և դրանց մեկնաբանման ու կիրառման հարցերում: Մասնավորապես, Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ «ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա է բռնագանձման, եթե ներկայացված ապացույցների գնահատմամբ դատարանը հանգում է հետևության, որ այդպիսի գույքի շուկայական արժեքը **հայցի ներկայացման պահին** գերազանցում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը»:

Օրենքի վերոնշյալ կարգավորումը, մեր դիտարկմամբ, հակասության մեջ է գտնվում ինչպես ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի էության, այնպես էլ դիտարկվող օրենքի՝ վերոթվարկյալ կարգավորումների և գույքի՝ որպես անձին պատկանող սեփականության իրավունքի էության և այդ էության խախտման անթույլատրելիության սահմանադրական պահանջի հետ:

¹ Ըստ դիտարկվող օրենքի նախագծի հիմնավորման՝ Օրենքի նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կատարելագործել Հայաստանի Հանրապետությունում ապօրինի ձանապարհով ստացված գույքը տնտեսական շրջանառությունից հանելու օրենսդրական գործիքակազմը, ինչն ավելի արդյունավետ կդարձնի ֆինանսական հանցագործությունների կանխարգելումը:

² Օրենքում առկա են նմանատիպ այլ օրինակներ ևս:

Մասնավորապես, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի նախատեսման նպատակը հանգում է ոչ օրինական եկամուտների բացահայտմանը, ինչպես նաև այդ եկամուտներով ձեռք բերված գույքի բռնագանձմանը: Այսինքն՝ վարույթի նախաձեռնման և բռնագանձման նպատակը գույքի՝ ոչ օրինական եկամուտներով ձեռք բերված լինելն է, ուստի որպես ելակետ պետք է ընդունել այդ գույքի ձեռքբերման արժեքը: Հակառակ պարագայում թիրախավորվում են ոչ թե անձի՝ ոչ օրինական եկամուտները և դրանցով ձեռք բերված գույքը, այլ անձի սեփականությունը հայցի ներկայացման պահին: Մեր կողմից ներկայացված մոտեցումները հիմնավորվում են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն դիրքորոշմամբ, որ «յուրաքանչյուր պարագայում պետք է հիմնավորվի և գնահատվի կապը գույքի բռնագանձմանը հանգեցնող ենթադրյալ հակաօրինական վարքագծի և դրա արդյունքում առաջացած գույքի միջև»¹:

Գտնում ենք, որ օրենսդրի որդեգրած մոտեցումը՝ հայցի ներկայացման պահին գույքի արժեքի հաշվառման առումով, չի կարող ծառայել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրման նպատակներին, քանի որ, օրինակ, 10 տարի առաջ ձեռք բերված գույքի գինը հայցադիմում ներկայացնելու պահին կարող է ունենալ ձեռքբերման արժեքից անհամեմատ տարբերվող արժեք՝ ընդ որում, լինելով ինչպես 5-10 անգամ շատ, այնպես էլ նույնքան անգամ քիչ: Վերոգրյալի պարագայում ստացվում է՝ թիրախավորվում է Օրենքի իմաստով ապօրինի չհամարվող գույք:

Վերոնշյալի համատեքստում ստացվում է, որ անձի սեփականության իրավունքի սահմանափակումը տեղի է ունենում նաև խտրականության արգելման սկզբունքի խախտման պայմաններում, քանի որ անտեսելով գույքի ձեռքբերման արժեքը՝ մի դեպքում կարող են լինել անձինք, ովքեր իրապես ոչ օրինական եկամուտներով ձեռք են բերել գույք, որի արժեքը տարիների ընթացքում այնքան է նվազել, որ հայցի ներկայացման պահին չի բավարարում Օրենքով նշված շեմը, մյուս դեպքում կարող են լինել անձինք, ովքեր նույնիսկ եթե ոչ օրինական եկամուտներով են ձեռք բերել գույք, սակայն այդ եկամուտներն իրենց չափով չեն համապատասխանում Օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված շեմը, այսինքն՝ Օրենքի իմաստով չեն կարող բռնագանձվել որպես ապօրինի ծագում ունեցող գույք, մինչդեռ գույքի արժեքի բարձրացման արդյունքում հայցի ներկայացման պահին դրանք հատում են այդ շեմը և հայտնվում են ուսումնասիրության թիրախում: Այս իրավիճակը համահունչ է ոչ միայն խտրականության արգելման սկզբունքին, այլև ամբողջությամբ խաթարում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի էությունը: Ստացվում է, որ պետք է թիրախավորվեն ոչ օրինական եկամուտները, որոնց չափի մասով օրենսդիրը որդեգրել է հստակ մոտեցում, մինչդեռ ընտրվել է այդ չափի կիրառման սխալ ժամանակահատված, ինչի արդյունքում մի շարք դեպքերում ներդրված ինստիտուտը չի ծառայում իր բուն նպատակին: Այս առումով առաջ է գալիս նաև սեփականության իրավունքին միջամտության համաչափության գնահատման անհրաժեշտություն, քանի որ ընտրված միջոցի, այն է՝ հայցի ուսումնասիրման պահին գույքի շուկայական արժեքի հաշվառման արդյունքում, չեն ապահովվում համաչափության սկզբունքի տարրեր հանդիսացող պիտանիության և անհրաժեշտության չափանիշները²: Մասնավորապես, գույքի արժեքը հայցի ներկայացման պահի դրությամբ գնահատելը որևէ կերպ չի կարող ծառայել օրենքի ընդունման, ինչպես նաև ոչ օրինական եկամուտներով ձեռք բերված գույքի բռնագանձման ինստիտուտի էությանն ու հետապնդող նպատակներին, ուստի այն պիտանի է, քանի որ ուղղված է ոչ օրինական եկամուտների չափի և դրանցով

¹ Todorov and others V. Bulgaria, 13.07.2021, §231:

² Համաչափության սկզբունքի մասին առավել մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Գ., Համաչափության սկզբունքը// Պետություն և իրավունք, N 1 (92), 2022, Երևան, էջեր 47-61:

ծեռք բերված գույքի բացահայտմանն ու բռնագանձմանը: Ընտրված միջոցի՝ ոչ պիտանի լինելու արդյունքում այլևս էական նշանակություն չունի դրա անհրաժեշտության չափանիշի գնահատումը:

Այս առումով, սակայն, չափազանց հետաքրքրական է օրենսդրի այն՝ կրկին կամայական մոտեցումը, որ Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով նշվում է, որ եթե ապօրինի ծագում ունեցող գույքը փոխանցվել է բարեխիղճ ձեռք բերողի, կամ այն անհնար է նույնականացնել, առանձնացնել կամ բռնագանձել, ապա դատարանի որոշմամբ համապատասխան պահանջի առկայության դեպքում պատասխանողից կարող է բռնագանձվել հայցի ներկայացման պահի դրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի, իսկ շուկայական արժեքի պարզման անհնարինության դեպքում՝ այդ գույքը ձեռք բերելու արժեքի չափով գումար: Այսինքն ստացվում է, որ անձի սեփականության իրավունքի սահմանափակման հարցում օրենսդիրը որդեգրել է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տարբերակների ընտրությունը ըստ հարմարավետության կատարելու սկզբունքը, ինչը, մեր դիտարկմամբ, անթույլատրելի է, քանի որ ստեղծում է խիստ անորոշ, անկանխատեսելի և կամայական իրավիճակ:

Եզրակացություն

Իրականացնելով կատարված ուսումնասիրության արդյունքների ամփոփում՝ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել մեր կողմից առաջադրվող հետևյալ եզրահանգումները.

- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը կարող է ծառայել որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործուն և արդյունավետ միջոց, եթե դրա գործադրմանն ուղղված իրավակարգավորումներն ունենան իրավական որոշակիության և հստակության բարձր մակարդակ, բացառեն կամայականությունների դրսևորման հնարավորությունները և իրավունքների անհամաչափ սահմանափակումները, որպեսզի կոռուպցիայի դեմ պայքարը չվերածվի նոր կոռուպցիայի:

- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նախաձեռնման համար ուսումնասիրություն սկսելու հիմքերն ամրագրող կարգավորումներն ունեն հստակեցման և որոշակիացման կարիք, որպեսզի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավասու մարմինն ունենա օրենսդրորեն նախանշված չափանիշներ գույքի ապօրինի ծագում ունենալու կասկածը **բավարար** գնահատելու համար:

- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նպատակը ոչ օրինական եկամուտներով ձեռք բերված գույքի բռնագանձումն է, մինչդեռ այդ բռնագանձման հիմքում գույքի՝ ոչ թե ձեռքբերման, այլ հայցի ներկայացման պահի արժեքի հաշվառումը խաթարում է ինչպես առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձման ինստիտուտի էությունը, այնպես էլ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակը՝ հանգեցնելով սեփականության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման:

- Կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում կարևորելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի դերը՝ բացառում ենք դրա գործադրման միջոցով սեփականության իրավունքին միջամտությունը խտրականության արգելման, իրավական որոշակիության և համաչափության սկզբունքների անտեսման ձևով:

Ամփոփագիր

Արդի ժամանակաշրջանում իրավական համակարգի առջև ծառացած լրջագույն խնդիրներից մեկը ոչ օրինական եկամուտների բացահայտումն է և դրանցով ձեռք բերված գույքի բռնագանձման մեխանիզմների ներդրումը: Առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձման ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը բխում է կոռուպցիայի դեմ պայքարն առավել արդյունավետ իրականաց-

նելու նկատառումներից: Այս գործիքակազմի ներդրման ուղղությամբ հայ իրավական համակարգում նախատեսվեց ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավական հնարավորության գործադրումը, որի գլխավոր նպատակը օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքի բռնագանձումն է՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործուն միջոց: Մինչդեռ այս հարցում կարևոր են ոչ միայն համապատասխան օրենսդրական կարգավորումների նախատեսումը, այլև այդ կարգավորումների սահմանադրականության երաշխավորումը: Այս արձանագրման համատեքստում սույն ուսումնասիրության շրջանակներում քննարկման առարկա են դարձել իրավական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով ամրագրված իրավակարգավորումների որոշակիության և հստակության, ինչպես նաև դրանց արդյունքում սահմանադրորեն երաշխավորված սեփականության իրավունքին միջամտության իրավաչափության հիմնահարցերը: Ուսումնասիրության շրջանակներում կարևորվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործուն միջոց, մյուս կողմից արձանագրվել է այդ միջոցի գործադրման հնարավորությունը բացառապես իրավական որոշակիության, խտրականության արգելման և համաչափության սահմանադրական սկզբունքների հաշվառմամբ իրականացնելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր – *կոռուպցիա, ապօրինի ծագում, քաղաքացիական բռնագանձում, գույքի բռնագանձում, սեփականության իրավունք, իրավական որոշակիություն, կամայականությունների բացառում:*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ КОНФИСКАЦИИ ИМУЩЕСТВА, ИМЕЮЩЕГО НЕЗАКОННОЕ ПРОИСХОЖДЕНИЕ, В КОНТЕКСТЕ ОГРАНИЧЕНИЯ ПРАВ СОБСТВЕННОСТИ

Асмик Акобян

Соискатель кафедры конституционного права ЕГУ

hasmik.hakobyan@ysu.am

Orcid - 0000-0002-7014-9164

Абстракт

Одной из наиболее серьезных проблем, стоящих перед правовой системой в наше время, является выявление незаконных доходов и реализация механизмов конфискации приобретенного таким путем имущества. Необходимость введения института конфискации имущества без вердикта суда обусловлена соображениями осуществления более эффективной борьбы с коррупцией. В целях реализации данного инструмента в правовой системе Армении предусмотрена реализация юридической возможности конфискации имущества незаконного происхождения, основной целью которой является конфискация имущества, не обоснованного законными доходами, как эффективное средство борьбы с коррупцией. Между тем, в этом вопросе важно не только предусмотреть соответствующие законодательные нормы, но и гарантировать конституционность этих норм. В рамках данного исследования рассматриваются такие правовые вопросы, как определенность и ясность правовых норм, установленных Законом РА "О конфискации имущества, имеющего незаконное происхождение", а также проблемы возникающие в результате вмешательства в права собственности, гарантированные Конституцией. В рамках исследования была подчеркнута необходимость реализации института конфискации

имущества, имеющего незаконное происхождение, как эффективное средство борьбы с коррупцией, с другой стороны, была отмечена необходимость реализации возможности данной меры исключительно принимая во внимание конституционные принципы правовой определенности, запрета дискриминации и соразмерности.

Ключевые слова – *коррупция; незаконное происхождение; гражданская конфискация; конфискация имущества; права собственности; правовая определенность; исключение произвола.*

SOME PROBLEMS OF CONFISCATION OF PROPERTY OF ILLICIT ORIGIN IN THE CONTEXT OF RESTRICTION OF PROPERTY RIGHTS

Hasmik Hakobyan

PhD applicant at the YSU Chair of Constitutional law

hasmik.hakobyan@ysu.am

Orcid - 0000-0002-7014-9164

Abstract

One of the most serious problems facing the legal system in modern times is the detection of illicit income and the implementation of confiscation mechanisms of the property acquired with it. The need to introduce the institution of confiscation of assets without a conviction stems from the considerations of more effective implementation of the fight against corruption. In order to implement this toolkit, the Armenian legal system provided for the implementation of the legal possibility of confiscation of property of illicit origin, the main purpose of which is the confiscation of property not justified by legal income as an effective means of fighting corruption. Meanwhile, in this matter, it is important not only to provide appropriate legislative regulations, but also to guarantee the constitutionality of these regulations. In the context of this report, within the framework of this study, such legal issues as the certainty and clarity of the legal regulations established by the RA Law "On confiscation of property of illicit origin", as well as the issues of interference with the constitutionally guaranteed property rights, were discussed. Within the framework of the study, the need to implement the institution of confiscation of illegally-sourced property as an effective means of combating corruption was highlighted, on the other hand, it was noted the need to implement the possibility of implementing this measure exclusively by taking into account the constitutional principles of legal certainty, prohibition of discrimination and proportionality.

Key words – *corruption; illicit origin; civil forfeiture; forfeiture of property; property rights; legal certainty; exclusion of arbitrariness.*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Տաթևիկ Սիրադեղյան

ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

tatevik.siradeghyan@ysu.am

orcid: 0000-0003-1868-6568

Ներածություն

Յուրաքանչյուր անձի՝ անհատապես և այլոց հետ ազգային և միջազգային մակարդակներում ոչ կառավարական կազմակերպություններ, ասոցիացիաներ կամ խմբեր ստեղծելու, դրանց անդամակցելու, գործունեությանը մասնակցելու իրավունքն ու պարտականությունը նախատեսվել են Միավորված ազգերի կազմակերպության դեռևս 1998 թվականի դեկտեմբերի 09-ի «Մարդու համընդհանուր ճանաչված իրավունքները և հիմնարար ազատությունները խթանելու և պաշտպանելու անհատների, խմբերի և հասարակական մարմինների իրավունքների և պարտականությունների մասին» հռչակագրով (տե՛ս 5-րդ և 18-րդ հոդվածները):

Հասարակական կազմակերպությունները ոչ կառավարական կազմակերպություններ են, «(...) իրենց գործունեությունը ծավալում են պետություններից անկախ և ի գործու են էականորեն ազդել հասարակական կարծիքի վրա: Հիմնականում դրանք բնութագրվում են անկախությամբ (առնվազն այդպիսին պետք է լինեն), շահույթի բացակայությամբ և մեծամասամբ հստակ սահմանված նպատակների հետապնդմամբ, որպիսիք են օրինակ՝ բնապահպանական և իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները»¹: «Հասարակական կազմակերպությունների հայեցակարգային հիմքերն են՝ անկախությունը պետություններից, իրավաբանական անձի կարգավիճակը, շահույթ չհետապնդելը, միջազգային ներկայացուցչականությունը, հանրային շահի հետապնդելու նպատակները, խաղաղասիրական գործունեությունը և այլն»²: «(...) հասարակական կազմակերպություններն ունեն խմբերի և անհատների մասնավոր շահերի և պահանջմունքների իրացմանը, այդ թվում՝ հանրային կառավարմանը մասնակցելու գործառնություն, (...) դրանց միջոցով է, որ հասարակությունը հնարավորություն է ստանում հասարակական հսկողություն և վերահսկողություն սահմանել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ: Այս հանգամանքը հատկապես կարևորվում է այն պարագայում, երբ առկա է ոչ թե անհատի, այլ իրավունքի կոլեկտիվ սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքների կամ օրինական շահերի խախտում»³:

Հասարակական կազմակերպությունների դերը մեծ է հենց հիմնարար իրավունքների և ազատությունների երաշխավորման նկատմամբ հանրային վերահսկողության, դրանց պաշտպանության, խախտված իրավունքների, ազատությունների

¹ Տե՛ս **Maiara Giorgi**, "The Role of Non-Governmental Organizations in the Process of International Treaty", <https://revistas.juridicas.unam.mx/index.php/derecho-internacional/article/view/13321/14771> Making, 2019, էջ 155:

² Տե՛ս **Szazi, Eduardo**, "NGOs :legitimate subjects of international law", Lieden University Press, 2022., էջ 30-39:

³ Տե՛ս Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. թիվ ՍՊՈ-906 որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60551>, կետ 7:

և օրինական շահերի վերականգման հարցերում մասնավորապես, երբ հնարավոր է առավել լայն շրջանակի անձանց իրավունքների և ազատությունների նկատմամբ ներգործությունը: Նշված գործառնություններն իրականացնելու նպատակով հասարակական կազմակերպություններն օգտվում են համապատասխան գործիքակազմից, որոնց շարքին է դասվում նաև վերջիններիս կողմից այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավական կաջուցակարգը: Այս ինստիտուտը, սակայն, գիտագործնական առումով սակավ ուսումնասիրությունների առարկա է դարձել մեզանում և այն էլ՝ ոչ ամբողջական:

Հայրենական իրավական համակարգում հասարակական կազմակերպությունների կողմից հայց հարուցելու ինստիտուտը հատուկ է վարչական արդարադատությանը՝ շրջակա միջավայրի պահպանության և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հայցով գործերի քննության հատուկ վարույթի շրջանակներում: Քննարկվող ինստիտուտին առնչվող որոշ հիմնախնդիրներ հետազոտության առարկա են դարձել իրավաբանական գիտությունների թեկնածու Աիդա Իսկոյանի աշխատանքում¹, որում հասարակական կազմակերպությունների կողմից հայց հարուցելու ինստիտուտին առնչվող առանձնահատկություններն ուսումնասիրության առարկան են դարձել շրջակա միջավայրի պահպանության համար հայց հարուցելու տեսանկյունից՝ Օրիուսի կոնվենցիայի համատեքստում, երբ դեռևս բացակայում էին գործող ներպետական օրենսդրական կարգավորումները: Այդպիսով, նշված ինստիտուտի ուսումնասիրությունը, խնդիրների և դրանց լուծման ուղիների վերհանումը շարունակում են գիտագործնական առումով արդիական լինել հասարակական կազմակերպությունների դերի բարձրացմանն ու ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը զուգընթաց:

Գիտական հոդվածի շրջանակներում նպատակ ենք հետապնդել տեսական մոտեցումների հիման վրա բացահայտել հասարակական կազմակերպությունների կողմից այլոց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար դատարան հայց հարուցելու ինստիտուտին բնորոշ առանձնահատկությունները, անդրադառնալ հայրենական օրենսդրությամբ տրված լուծումներին, գիտագործնական ուսումնասիրությունների և միջազգային փորձի հիման վրա առաջ քաշել ինստիտուտի կատարելագործմանն ուղղված մեր մոտեցումները: Նշված նպատակներն ու խնդիրներն իրագործելու համար օգտագործվել են անալիզի և սինթեզի, համեմատական-իրավական մեթոդները:

Հասարակական կազմակերպությունների կողմից դատարան հայց հարուցելու իրավունքը. առանձնահատկությունները և զարգացման արդի միտումները

Դատարան հայց հարուցելու առաջնային պայմաններից մեկն անձի իրավական շահագրգռվածությունն է: Արդարադատության մատչելիության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր ոք, ում իրավունքները և օրինական շահերը խախտվել են (կարող են խախտվել), դրանց վերականգնման նպատակով իրավունք ունի դիմելու դատական պաշտպանության միջոցների: Դատարան դիմելու անձի իրավունքը պետք է ուղղված լինի, իսկ դրա բավարարումը հանգեցնի վերջինիս խախտված իրավունքների վերականգնման: «(...) յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն»²: «Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականություն-

¹ St' u Aida Iskoyan, "The Issue of Locus Standi of Non-Governmental Organizations in the Sphere of Environmental Protection (Constitutional-Legal Analysis)", http://www.old.yu.am/files/Aida_Iskoyan-1415703186-.pdf, Materials of conference devoted to 80 th of the Faculty of Law of the Yerevan State University: Yerevan, YSU Press, 2014, էջեր. 259-270:

² St' u Սահմանադրական դատարանի 04.04.2008թ. թիվ ՍԴՈ-747 որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=43081>, կետ 7:

ների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն ու ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա»¹: «Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ և հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը»²: Այլ կերպ ասած, ընդհանուր կանոնի համաձայն, հայց հարուցելու իրավունքից օգտվում է այն անձը (անձինք), ում սուբյեկտիվ իրավունքները և օրինական շահերը խախտվել կամ կարող են խախտվել, և այս առումով վարչական արդարադատությունը բացառություն է: «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու նկատմամբ իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները»³: «Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ»⁴:

Ընդհանուր կանոնից բացառություն է այլ անձանց խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով դատարան դիմելու կառուցակարգը, և խոսքն այստեղ բնավ չի վերաբերում ներկայացուցչի, այդ թվում նաև՝ օրինական ներկայացուցչի միջոցով հայց հարուցելու դեպքերին: «Ներկայացուցչությունը հիմնված է «շահերը կրող» և «շահերն արտահայտող» եզրույթների հարաբերակցության վրա»⁵, այս դեպքում ներկայացուցիչը դատավարական կարգավիճակ է ձեռք բերում ներկայացվողի նախաձեռնությամբ կամ օրենքով նախատեսված պարտականություններից ելնելով, հանդես է գալիս ներկայացվողի անունից և ի շահ նրա, իսկ իրականացված ցանկացած գործողություն նույնանուն է ներկայացվողի կողմից կատարված գործողություններին: Ինչ վերաբերում է այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ինստիտուտին, ապա այն, «(...) հանդիսանալով դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման լրացուցիչ երաշխիք, հնարավորություն է տալիս ապահովել քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի առավել ամբողջական պաշտպանությունը»⁶: «Այլ անձանց շահերը պաշտպանող սուբյեկտները, օրենքով նախատեսված դեպքերում, հանդես են գալիս իրենց անունից, ինքնուրույն են կառուցում գործով իրենց տեսակետը: Այդ սուբյեկտները կողմի հետ կապված չեն հանձնարարության պայմանագրին բնորոշ հարաբերություններով»⁷: Ընդ

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Լը Քոմպտեն և մյուսներն ընդդեմ Բելգիայի գործով 23.06.1981թ. թիվ 6878/75 վճիռը, պարբ. 47, Բենթհենն ընդդեմ Նիդերլանդների 23.10.1985թ. թիվ 8848/80 գործով վճիռը, պարբ. 32:

² Տե՛ս Վռաբեկ դատարանի 26.12.2014թ. թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95703>, կետ 4:

³ Տե՛ս Սահմանադրական դատարանի 17.04.2012թ. թիվ ՍԴԴ-1022 որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75351>, կետ 4:

⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի 08.05.2014թ. թիվ ՎԴ/6403/05/12 գործով որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90976>, կետ 4:

⁵ Տե՛ս **Гуксян Р.Е.**, "Избранные труды по гражданскому процессу", М., Проспект, 2016, էջ 344:

⁶ Տե՛ս **Белова Т.**, "Возбуждение гражданских дел в защиту прав и законных интересов других лиц", <https://elib.bsu.by/handle/123456789/10357>, 2002թ.:

⁷ Տե՛ս **Потапенко Е.Г.**, "Частный законный интерес как предмет судебной защиты: сравнительно-правовой анализ в контексте унификации цивилистического процессуального права", Человек. Право. Экология. Сборник научных и научно-прикладных трудов преподавателей, молодых ученых и студентов. – Саратов: Наука, 2017, էջ 97-101:

որում, «այլ անձի շահ» կարող է հանդիսանալ կոնկրետ անձի կամ անձանց խմբի կամ հանրային շահը»¹:

Այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով դատարան դիմելու կառուցակարգերը բնորոշ են ինչպես քաղաքացիական, այնպես էլ՝ վարչական արդարադատությանը: Ըստ Տամիլովի՝ «Այլ անձանց շահերի պաշտպանության եզրույթի վերլուծությունը քաղաքացիական դատավարությունում անհրաժեշտ է իրականացնել միայն այն հասարակական հարաբերությունները մատնանշող պետության սոցիալական գործառնությունների հետ փոխադարձ կապի մեջ, որոնք կանխորոշում և թույլատրում են սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության այդպիսի ձևերն ու միջոցները»²: «Բազմաթիվ երկրներում այլ անձանց իրավունքների պաշտպանությունը հիմնականում իրականացվում է դատախազական վերահսկողության մարմինների միջոցով»³, դրանց շարքին են դասվում նաև «(...) պետության պաշտպանության նպատակով հատուկ այդպիսի լիազորությամբ օժտված պետական մարմինների կողմից ներկայացվող հայցերը, (...) դիմումի ներկայացումը թույլատրվում է օրենքում հատուկ նախատեսված դեպքերում: (...) այդպիսի պահանջի բացակայությունը սահմանափակում է այլ անձի անունից ցանկացած պետական մարմնի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը»⁴: «Այն դեպքերում, երբ որոշակի շահերի պաշտպանությունը հանդիսանում է պետության ավանդական գործառնություն, դրա իրականացման համար ստեղծվում են հատուկ պետական մարմիններ, որոնք լիազորված են, ի պաշտպանություն այլ անձանց շահերի, վարել վարույթ, այդ թվում նաև՝ դատական»⁵: «Դատախազի կամ հանրային իշխանության մարմինների մասնակցությունը գործին ունի ոչ թե անձնական, այլ հանրային դրդապատճառներ: Նշված սուբյեկտները վերջնական արդյունքում պաշտպանում են հասարակական (հանրային) շահը (...), հետևաբար, գործով կայացված որոշումը չի շոշափում նրանց սուբյեկտիվ իրավունքները և շահերը»⁶:

Ինչ վերաբերում է վարչական արդարադատության միջոցով այլ անձանց շահերի պաշտպանության ինստիտուին, ապա արդարադատության այս եղանակին հատուկ նպատակների ու խնդիրների համատեքստում այն միտված է անձանց խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ու վերականգնմանը հանրային իշխանության մարմինների ոչ իրավաչափ վարչարարությունից, և այդ նպատակով հայցերի հարուցումը, որպես կանոն, հատուկ է իրավունքի մասնավոր սուբյեկտներին:

Վարչական իրավունքի ոչ պետական սուբյեկտների շարքին են դասվում նաև հասարակական կազմակերպությունները, որոնք, իհարկե, որպես իրավունքի ինք-

¹ Տե՛ս **Томилев А.Ю.**, "Защита чужих прав и интересов в гражданском судопроизводстве", монография, Москва, 2012, էջ 14, էլ. հղումը՝ <https://op.raj.ru/index.php/serijnye-izdaniya/103-monografii/225-tomilov-a-yu-zashchita-chuzhikh-prav-i-interesov-v-grazhdanskom-sudoproizvodstve>:

² Սույն տեղում, էջ 24:

³ Տե՛ս **Здрок О. Я.**, "Гражданский процесс зарубежных стран", Москва, 2005, էջ 108-111:

⁴ Տե՛ս **Томилев А.Ю.**, "Процессуально-правовые основания участия органов государственной власти и органов местного самоуправления в гражданском процессе с целью защиты прав и законных интересов других лиц", <https://cyberleninka.ru/article/n/protsessualno-pravovye-osnovaniya-uchastiya-organov-gosudarstvennoy-vlasti-i-organov-mestnogo-samoupravleniya-v-grazhdanskom/viewer>, Вестник Челябинского государственного университета, 2007, էջ 55.:

⁵ Տե՛ս **Елисеев Я. Г.**, "Гражданское процессуальное право зарубежных стран", Москва, 2004, էջ 365:

⁶ Տե՛ս **Синенко В.С.**, "Понятие и виды юридической заинтересованности в исходе дела", <https://cyberleninka.ru/article/n/ponyatie-i-vidy-yuridicheskoy-zainteresovannosti-v-ishode-dela/viewer>:

նուրույն սուբյեկտ, իրենց խախտված սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության նպատակով կարող են ազատորեն դիմել դատական պաշտպանության համապատասխան միջոցների: Այլ է խնդիրը, երբ վերջիններիս կողմից դատարան դիմելը նպատակ է հետապնդում պաշտպանել երրորդ անձանց խախտված իրավունքները և ազատությունները: «Աշխարհի բազմաթիվ իրավական համակարգերում հասարակական կազմակերպությունների համար խիստ բարդ է հանրային նպատակներով իրենց անունից դատական հայցեր հարուցելը: Նրանց հաճախ չի բավարարում այսպես կոչված «իրավունակությունը», այսինքն ֆորմալ, ուղղակի իրավական շահագրգռվածությունը, որը պետք է դատարանի կողմից ճանաչվի հանրային շահի հետապնդող յուրաքանչյուր գործում»¹: «Հասարակական կազմակերպությունները, կրելով հասարակական գործառնություններ, հանդես են գալիս որպես վարչական իրավունքի սուբյեկտների առանձին խումբ, միջնորդի դեր են իրականացնում հանրային իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև»²:

Տեսության մեջ հասարակական կազմակերպությունների կողմից այլ անձանց շահերի պաշտպանության նպատակով հայց հարուցելու ինստիտուտը երբեմն նույնացվում է խմբային հայցի ինստիտուտի հետ: «Խմբային հայցին բնութագրող չափանիշներն են՝ պատասխանողի կողմից խախտված իրավունքների մասնակիցների բազմաթիվությունը, քաղաքացիական իրավունքների պաշտպանության օգտագործվող միջոցների ընդհանրությունը, մարդկանց խմբի կողմից պահանջվող հիմքի և առարկայի միատեսակությունը, հայցվորների ընդհանուր պատասխանողի առկայությունը»³: Մեր համոզմամբ, սակայն, այս երկու կառուցակարգերի նույնացումը նվազեցնում է հասարակական կազմակերպությունների կողմից այլ անձանց խախտված իրավունքների պաշտպանության նպատակով հայց հարուցելու ինստիտուտի դերն ու նշանակությունը, քանզի խմբային հայցն առավելապես շահագրգիռ անձանց որոշակի խմբի կողմից իրենց սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով համատեղ հայցի հարուցումն է նույն պատասխանողի (պատասխանողների) դեմ: Մինչդեռ այլ անձանց, այդ թվում՝ որոշակի խմբի շահերի պաշտպանության նպատակով հասարակական կազմակերպությունների կողմից հայցի հարուցումը վերջիններիս, որպես իրավաբանական անձի, խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակ չի հետապնդում:

Հասարակական կազմակերպությունների դերը մեծ է հատկապես շրջակա միջավայրի պաշտպանության հարցերում: «Իրենց գոյության և գործունեության սկզբնական շրջանում շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող հասարակական կազմակերպությունները մեծ դերակատարում չունեին իրավունքի նորմերի մշակման և պահպանության նկատմամբ, սովորաբար գործում էին որպես կառավարությունների և միջազգային կազմակերպությունների նկատմամբ ճնշում գործադրող կառույցներ»⁴: «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» 1998 թվականի հունիսի 25-ի Օրհուսի կոնվենցիան (Հա-

¹ Grant B. Stillman «NGO LAW and Governance», a resource book, ADBInstitute, <https://adb.org/sites/default/files/publication/159367/adbi-ngo-law-gov.pdf>, Տոկիո, 2006, էջ 16:

² Мацеллик Т., "Коллективные субъекты административного права: понятие, виды и классификация", https://ibn.idsi.md/sites/default/files/imag_file/Kolektivnie%20subiekti%20administrativnogo%20prava.pdf 2013, էջ 103:

³ Մ. Մամաջանյան, Մ. Խաչատրյան, «Որոշ նկատառումներ խմբային հայցի մասին», «Արդարադատություն», 2011, 1 (12):

⁴ "Constantinos Lycourgos, Apostolos Vlachogiannis, and Artemis Yiordamli, Access to justice of environmental NGOs: a comparative perspective (EU, France, Cyprus)", 2021, էջ 5:

յաստանի Հանրապետության համար այն ուժի մեջ է մտել 2001 թվականի հոկտեմբերի 30-ից) հնարավորություն տվեց ոչ կառավարական կազմակերպություններին բնապահպանական հարցերով դիմել դատարան երրորդ անձանց շահերի պաշտպանության համար՝ ազգային օրենսդրության հիման վրա և շահագրգիռ հասարակայնության արդարադատության լայն մատչելիություն ապահովելու նպատակից ելնելով (տե՛ս կոնվենցիայի 9-րդ հոդվածը): Այդուհանդերձ, «Կոնվենցիայի 9-րդ հոդվածը վերաբերում է կոնկրետ բնապահպանական հարցերով որոշումների կայացման հանրային մասնակցությանը (տեղեկատվության մատչելիությունը և հասարակության մասնակցությունը որոշումների կայացմանը)»¹: Մինևույն ժամանակ կոնվենցիան վավերացրած անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ համապատասխան կարգավորումների բացակայությունը հասարակական կազմակերպությունների արդարադատության մատչելիության սահմանափակման հիմք է, որի օրինակն է Վարչական դատարանի 2010 թվականի մարտի 24-ի վճիռը, որով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպության հայցը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Օրիուսի կոնվենցիան հասարակական կազմակերպություններին ուղղակի դատավարական իրավասույթեկտությամբ չի օժտում, իսկ Վճռաբեկ դատարանը 2011 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ, հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրությամբ դատարան դիմելու իրավունք նախատեսված է միայն այն անձանց համար, որոնց իրավունքներն անմիջականորեն խախտվել են վիճարկվող ակտով, գործողությամբ կամ անգործությամբ, գտել է, որ վիճարկվող դատական ակտը հիմնավոր է և բխում է ՀՀ օրենսդրության կարգավորման նպատակներից²:

Անորոշ շրջանակի անձանց իրավունքների պաշտպանության համար հայց հարուցելու ինստիտուտը հայրենական վարչադատավարական օրենսդրություն է փոխառվել վերջին տասնամյակում՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելով, երբ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան դիմելու իրավունք վերապահվեց Մարդու իրավունքների պաշտպանին (տե՛ս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 4-րդ մասը): Ինչ վերաբերում է հասարակական կազմակերպություններին, ապա վերջիններիս այդ իրավունքն օրենսդրական կարգավորում է ստացել միայն 2016 թվականի դեկտեմբերի 16-ի, այնուհետև 2021 թվականի մայիսի 5-ի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարված լրացումներով, որոնց արդյունքում հասարակական կազմակերպություններն իրավունք են ստացել վարչական դատարան հայց ներկայացնել համապատասխանաբար շրջակա միջավայրի պահպանության և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հայցերով: Հատկանշական է, որ հասարակական կազմակերպությունները Հայաստանի Հանրապետությունում այլոց շահերի պաշտպանության նպատակով հայց հարուցելու իրավունքից օգտվում են միայն վարչական դատավարության կարգով, իսկ քաղաքացիադատավարական գործընթացներում կարող են հայցել բացառապես իրենց սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Հնարավորություն տալով հասարակական կազմակերպություններին այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով հայց հարուցել վարչական դատարան՝ օրենսդիրը սահմանել է այն պարտադիր պայմանները, որոնց պետք է բավարարեն կազմակերպությունները: Դրանք են՝

- շրջակա միջավայրի պահպանության հայցերի դեպքում՝ հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում այդ ոլորտում գործունեություն ծավալելը, հայցադիմումի՝ կազմակերպության կանոնադրական նպատակներից և

¹ Տե՛ս Aida Iskoyan, նշված աշխատությունը, էջ 268:

² Տե՛ս «Ղատալեք» դատական տեղեկատվական համակարգ, թիվ ՎՂ/3275/05/09 վարչական գործը, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809420633:

խնդիրներից բխելը և կազմակերպության շահառուների՝ կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանն ուղղված լինելը, օրենքով սահմանված հիմնադրությամբ փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին մասնակցելը կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չտրվելը:

- հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հայցերի դեպքում՝ հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում այդ ոլորտում գործունեություն ծավալելը, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը որպես կազմակերպության կանոնադրական նպատակ սահմանված լինելը, և անդամների պարզ մեծամասնության՝ հաշմանդամություն ունեցող անձինք լինելը, հաշմանդամություն ունեցող անձանց խմբերի՝ հաշմանդամության հիմքով խտրականությունից պաշտպանվելու իրավունքի խախտումը, կամ հաշմանդամություն ունեցող անձի՝ խտրականությունից պաշտպանվելու իրավունքի խախտումը, և որը, ելնելով առողջական վիճակից կամ այլ հանգամանքից, չի կարող անձամբ ներկայացնել իր իրավունքները և օրինական շահերը դատարանում (տե՛ս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը):

Ընդ որում, նշված պայմանների միաժամանակյա առկայությունն է հասարակական կազմակերպությունների համար ապահովում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29.3-րդ գլխով նախատեսված հայցերի հարուցման իրավունքի իրացման հնարավորությունը:

Նկատենք, որ հասարակական կազմակերպությունների հայցադիմումը պետք է նշումներ պարունակի նշված հիմքերի առկայության մասին՝ կցելով դրանց վերաբերյալ համապատասխան ապացույցները, իսկ այդ պահանջները չպահպանելը հայցադիմումը վերադարձնելու հիմք է (տե՛ս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.7-րդ հոդված): Հատուկ վարույթի կարգով քննվող նշված գործերի նկատմամբ դատավարական այլ առանձնահատկություններ, բացի օրենսգրքի ընդհանուր տրամաբանությունից բխող ապացուցման բեռի բաշխման կանոններից, չեն տարածվում, դրանք քննվում և լուծվում են ընդհանուր կարգով:

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն շրջակա միջավայրի պահպանության հայցերի, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հայցերի նկատմամբ օրենսդիրը կիրառել է միմյանցից տրամազօրեն տարբերվող երկու մոտեցում. կազմակերպությունը կարող է հայց հարուցել հաշմանդամություն ունեցող անձանց խմբերի կամ կոնկրետ անձի խտրականությունից պաշտպանվելու իրավունքի խախտման դեպքում՝ վերջինի պարագայում առանձին պայման նախատեսելով տվյալ անձի՝ առողջական վիճակից կամ այլ հանգամանքից ելնելով իր իրավունքները և օրինական շահերը դատարանում անձամբ ներկայացնելու անկարողությունը: Այլ կերպ ասած, օրենսդիրը հասարակական կազմակերպությունների կողմից այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հայցի շրջանակներում հնարավոր է համարել ինչպես խմբային, այնպես էլ՝ անհատական շահերի պաշտպանությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարված լրացումներից հետո խիստ սակավ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը մտահոգիչ է: Մասնավորապես՝ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի որոնման գործիքների միջոցով վեր է հանվել հասարակական կազմակերպությունների կողմից օրենսգրքի 29.3-րդ գլխով սահմանված հատուկ վարույթի կարգով վարչական դատարան ներկայացված երկու դատական գործ՝ Նշված գործերով կայացված դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միասնական մո-

¹ Տե՛ս «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգ, թիվ ՎԴ/10306/05/17 և թիվ ՎԴ/2420/05/17 վարչական գործերը:

տեցում է ձևավորվել դատարան դիմելու՝ հասարակական կազմակերպություններին ներկայացվող պայմանների բավարարման առնչությամբ: Մասնավորապես, մի դեպքում գործի քննության վարույթը կարձվել է հայցադիմումը՝ այն ներկայացնելու իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից ներկայացված լինելու հիմքով՝ պատճառաբանությամբ, որ գործում առկա ապացույցներով հիմնավորվել է, որ հասարակական կազմակերպությունը չի մասնակցել օրենքով սահմանված բոլոր քննարկումներին, չի սպառել մինչդատական բոլոր ընթացակարգերը, ինչի արդյունքում կազմակերպությունը գնահատվել է որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով ՀՀ վարչական դատարան հայցադիմում ներկայացնելու իրավունք չունեցող անձ¹, մեկ այլ դեպքում՝ դատարանը գտել է, որ հայցվոր հասարակական կազմակերպություններից մեկը չի բավարարում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.6-րդ հոդվածով սահմանված դատարան դիմելու պայմաններից որևէ մեկին, իսկ մյուսը՝ պայմանին առ այն, որ կազմակերպությունը պետք է մասնակցած լինի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի շրջանակներում հիմնադրության փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն նրան տրված չլինի և հայցվորների իրավական շահագրգռվածության բացակայության հիմքով մասնակի կարճել է գործի վարույթը՝

Ուշագրավ է, որ դեռևս 2010 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ Սահմանադրական դատարանը հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա անդրադարձել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի (տե՛ս 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված և 2014 թվականի հունվարի 07-ին ուժը կորցրած ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը)՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցին և առանցքային դիրքորոշումներ արտահայտել հասարակական կազմակերպությունների կողմից վարչական դատավարության կարգով հայց հարուցելու իրավունքի իրացման հարցերի առնչությամբ: Սահմանադրական դատարանն այս որոշմամբ գտել է, որ «(...) ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը, (...) ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը»³:

Բարձր դատարանի մոտեցումները, սակայն, մինչև օրս այդպես էլ համարժեք չեն ընկալվել և արտացոլվել ներպետական օրենսդրությամբ, ինչը վկայում է, որ օրենսդիրը, բացի առանձին դեպքերից, այդպես էլ անհրաժեշտ կամք չի դրսևորել Սահմանադրական դատարանի դիրքորոշումները կյանքի կոչելու և դրանով իսկ իրավունքի զարգացմանը նպաստելու ու արդարադատության մատչելիության սկզբունքի իրացման տեսանկյունից լրացուցիչ օրենսդրական երաշխիքներ նախա-

¹ Տե՛ս «Ղատալեքս» դատական տեղեկատվական համակարգ, Վարչական դատարանի թիվ ՎՂ/2420/05/17 վարչական գործով 07.11.2018թ. որոշումը, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809902504:

² Տե՛ս «Ղատալեքս» դատական տեղեկատվական համակարգ, Վարչական դատարանի թիվ ՎՂ/10306/05/17 վարչական գործով 30.08.2017թ. որոշումը, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809911211:

³ Տե՛ս Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. թիվ ՍՂՈ-906 որոշումը, կետ 7:

տեսելու հարցում: Նշված գործով Սահմանադրական դատարան դիմելու առիթ էր հանդիսացել հասարակական կազմակերպության՝ համայնքի ավագանու որոշումն առջինն ձանաչելու պահանջով ներկայացված հայցադիմումի վարույթ ընդունումը մերժելիս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին տրված մեկնաբանությունն առ այն, որ կազմակերպությունը պատշաճ հայցվոր չի հանդիսանում և Վարչական դատարանին նման հայց ներկայացնելու իրավունք չունի՝ վիճարկվող որոշումը որևէ ձևով նրա իրավունքներին կամ պարտականություններին չառնչվելու հիմնավորմամբ¹: Թեև նշված որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «(...) քաղաքացիական հասարակությունում հասարակական կազմակերպությունների գործառնությունների իրականացման, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների միջոցով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետության բարձրացման նկատառումներով հետագա օրենսդրական գործադրումները պետք է ընթանան վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ», սակայն դրանք օրենսդրի կողմից հաշվի չեն առնվել անգամ նոր՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչադատավարական օրենսդրության ընդունման գործընթացում և միայն շուրջ վեց տարի անց, այն էլ մասամբ լրացվել են նշված օրենսգրքում:

Սինչ 2016 թվականի դեկտեմբերի 16-ի օրենսդրական փոփոխությունները դատական պրակտիկայի ուսումնասիրությունը փաստում է, որ դատարանների մոտեցումներն այս առումով համապատասխանել են գործող իրավակարգավորումներին: Բարձր դատարանի քննարկվող որոշման կայացումից հետո նույն կազմակերպությունը այլ՝ անորոշ շրջանակի անձանց շահերի պաշտպանության նպատակով հայցեր է հարուցել Վարչական դատարան, սակայն դրանց վարույթ ընդունումը մերժվել է դատարանի դիմելու շահագրգռվածության բացակայության պատճառաբանությամբ: Մի դեպքում դատարանը գտել է, որ «(...) չի հաստատվում այն հանգամանքը, որ Կազմակերպության կողմից վիճարկվող ՀՀ պաշտպանության մարտնչության գործողությունները որևէ կերպ առնչվում են կամ կարող են առնչվել վերջինիս՝ որպես իրավաբանական անձի՝ դատավարական առանձին սուբյեկտի՝ (...) իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև (...) կազմակերպության անդամների իրավունքների հնարավոր խախտումն ինքնըստինքյան չի կարող հանգեցնել նաև Կազմակերպության իրավունքների խախտման փաստի հաստատմանը, քանի դեռ նրանք չեն գործել որպես Կազմակերպություն, (...)»²: Մյուս դեպքում, Վարչական դատարանը գտել է, որ «վարչական արդարադատությունը կրում է հասցեավորված բնույթ: Անձը (...) կարող է հայցել ենթադրյալ խախտված իրավունքի պաշտպանություն, երբ հանդիսանում է շահագրգիռ անձ, այսինքն՝ երբ վարչական մարմնի կողմից ենթադրաբար խախտվել են հենց այդ անձի հանրային սուբյեկտիվ իրավունքները: (...) վարչական դատավարության օրենսգրքը, (...) չի ձանաչում (...), այսպես կոչված, հանրային գանգատը՝ ամրագրելով միայն (...) սուբյեկտիվ իրավունքների խախտումից բխող դատական պաշտպանություն հայցելու տարբեր հնարավորություններ»³:

¹ Տե՛ս թիվ ՎՂ6/0250/05/09 վարչական գործը, ինչպես նաև Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. թիվ ՍՂՈ-906 որոշումը, կետ 2:

² Տե՛ս «Ղատալեքս» դատական տեղեկատվական համակարգը, թիվ ՎՂ/0644/05/14 վարչական գործով Վարչական դատարանի 24.02.2014թ. որոշումը, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809857299, թիվ ՎՂ/2921/05/14 վարչական գործով Վարչական դատարանի 17.06.2014թ. որոշումը, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809875737:

³ Տե՛ս «Ղատալեքս» դատական տեղեկատվական համակարգը, թիվ ՎՂ/2384/05/14 վարչական գործով Վարչական դատարանի 23.05.2014թ. որոշումը, էլ. հղումը՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809874969:

Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ «(...) իրավական պետության գաղափարից բխում է այն մոտեցումը, որ որևէ իրավական ակտ, այդ թվում՝ նորմատիվ (բացառությամբ Սահմանադրության) չի կարող դուրս մնալ դատական վերահսկողությունից, որի նպատակն անձի խախտված իրավունքների պաշտպանությունն է, ներառյալ՝ արդյունավետ դատական պաշտպանությունը»¹։ Իր հերթին, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն «Վարչական ակտերի դատական վերանայման մասին» 2004 թվականի դեկտեմբերի 15-ի (2004)20 հանձնարարականով անդամ պետություններին խրախուսել է ինքնուրույն որոշել, թե արդյո՞ք դատական վերանայման մատչելիությունը պետք է երաշխավորվի նաև այն միավորումների կամ այլ անձանց և մարմինների համար, որոնք իրավասու են պաշտպանել խմբային կամ համայնքային շահեր։ Նույն հանձնարարականով վարչական ակտ են համարվում ինչպես անհատական, նորմատիվ ակտերը, այնպես էլ վարչական մարմինների ակտերը և գործողությունները կամ անգործությունը, ինչն էլ ենթադրում է, որ անդամ պետությունները խմբային կամ համայնքային շահերի պաշտպանության նպատակով կարող են նախատեսել միավորումների կամ այլ անձանց և մարմինների դատական պաշտպանության իրավունքի իրացման համապատասխան կառուցակարգեր թե՛ վարչական մարմինների վարչական ակտերի և գործողության կամ անգործության, թե՛ նորմատիվ բնույթ ունեցող իրավական ակտերի վիճարկման համար։

Ի հակադրություն նշվածի՝ թեև ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի մասնավորեցնում, թե վարչարարության որ տեսակները կարող են կազմել 29.3-րդ գլխով նախատեսված հատուկ վարույթի կարգով քննարկվող հայցերի առարկան, ինչի արդյունքում երբեմն ընդունվում է այն թյուր մոտեցումը, որ հասարակական կազմակերպությունների կողմից կարող է վիճարկվել նաև նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը², սակայն, պետք է նկատել, որ օրենսդիրը նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հատուկ վարույթի կարգով քննվող գործերով դատարան դիմելու իրավունք նախատեսել է միայն անձի նկատմամբ կիրառված սուբյեկտիվ իրավունքների խախտման կամ դրանց խախտման վտանգի դեպքում։ Մեր համոզմամբ՝ սա ինքնին հասարակական կազմակերպությունների դատարան դիմելու իրավունքը սահմանափակող կարգավորում է՝ անգամ շրջակա միջավայրի պահպանության և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով։

Քննարկվող ինստիտուտի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրներում մոտեցումները միասնական չեն։ Օրինակ, Ֆրանսիայում «(...) շրջակա միջավայրի պահպանության համար հասարակական կազմակերպություններն օգտվում են որոշակի պայմաններում դատարան դիմելու իրավասուբյեկտության կանխավարկածից։ Օրենքը նախատեսում է, որ օրենքի հիման վրա ստեղծված կազմակերպությունները, որոնց գործունեությունն իրենց կանոնադրությամբ կապված է շրջակա միջավայրի պահպանության կամ համանման նպատակների հետ, և որոնք գործունեություն են իրականացնում ոչ պակաս, քան երեք տարի, կարող են վնասի հատուցման պահանջ ներկայացնել քաղաքացիական կամ քրեական դատարաններ»³։ «Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ևս հասարակական կազմակերպությունների քննարկվող իրավունքը

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 09.03.2021թ. թիվ ՍԴՈ-1584 որոշումը, կետ 5.1, էլ. հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150757>:

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծի հիմնավորումներ, <https://www.e-draft.am/projects/1555/about>, էջ 29:

³ Տե՛ս "Constantinos Lycourgos, Apostolos Vlachogiannis, and Artemis Yiordamli, նույն տեղում, էջ 12-13:

նախատեսված է շրջակա միջավայրի պահպանության հարցերով այլ անձանց իրավունքների պաշտպանության համար, և օրենքով նախատեսված են կազմակերպություններին ներկայացվող հստակ պահանջներ»¹: Ռուսաստանի Ղաշնության Վարչական դատավարության օրենսգրքով հասարակական միավորումներն իրավունք ունեն դաշնային օրենքով նախատեսված դեպքերում այդ կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության նպատակով դիմել դատարան (տե՛ս Ռուսաստանի Ղաշնության Վարչական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 3-րդ մաս):

Եզրակացություն

Ամփոփելով վերը նշվածը և հոդվածում ներկայացված մեր դատողությունները՝ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ եզրահանգումները.

Ներկայումս հասարակական կազմակերպությունները կարևոր տեղ են զբաղեցնում պետության կողմից մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման, դրանց պաշտպանության հարցերում, որպիսի առաքելությունն իրականացնելիս կարող են նաև այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով դիմել դատարան: Իրավական և ժողովրդավարական պետություններում նշվածն ուղղված է ոչ միայն հասարակական կազմակերպությունների արդարադատության մատչելիության սկզբունքի իրացումն ապահովելուն, այլև լրացուցիչ երաշխիք է անձանց արդարադատության մատչելիության սկզբունքի ապահովման համար:

Հատկանշական է, որ գործող իրավակարգավորումները հասարակական կազմակերպություններին հնարավորություն են տալիս վարչական դատարան դիմել միայն շրջակա միջավայրի և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված հայցերով, ընդ որում, վերջինի դեպքում նաև՝ առանձին անձի խտրականությունից զերծ մնալու իրավունքի խախտման հիմքով: Այսինքն՝ օրենսդիրը կիրառել է միմյանցից տարբերվող երկու մոտեցում՝ դատարան դիմելու իրավունքը մի դեպքում պայմանավորելով հանրային շահի՝ որոշակի խմբի խախտված իրավունքների, մյուս դեպքում՝ կոնկրետ անձի խախտված իրավունքների պաշտպանության համար: Այս տեսանկյունից առնվազն կարող է հարց առաջանալ, թե ինչո՞ւ այլ հիմնարար իրավունքների և օրինական շահերի խախտման դեպքերը չեն կարող հասարակական կազմակերպությունների կողմից հայց հարուցելու առիթ դառնալ:

Քննարկվող թեմային առնչվող դատական սակավ պրակտիկայի ուսումնասիրության արդյունքների հիման վրա կարելի է հետևության հանգել, որ թեև հասարակական կազմակերպություններն օգտվում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում այլ անձանց շահերի պաշտպանության նպատակով հայց հարուցելու իրավունքից, սակայն օրենսդրի կողմից սահմանված պահանջները կարող են գործնականում սահմանափակել վերջիններիս դատարան դիմելու իրավունքի իրացումն այնքանով, որքանով իրենց բնույթով դժվար հաղթահարելի են:

Հոդվածում կատարված ուսումնասիրությունների, Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների, Սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 07-ի թիվ ՍԴՂ-906 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում կարծում ենք, որ նպատակահարմար է վերանայել գործող օրենսդրական կարգավորումները՝ ընդլայնելով հասարակական կազմակերպությունների կողմից Վարչական դատարան

¹ Տե՛ս **Васильева, А. Ф.**, "«Административные иски общественных объединений в защиту чужих интересов»", <https://doi.org/10.21638/11701/spbu14.2018.302>, Вестник Санкт-Петербургского университета. Право 3, 2018թ., էջ 305:

հարուցվող հայցերի շրջանակը: Մեր համոզմամբ, հարկ է վերանայել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29.3-րդ գլխի կարգավորումները և հասարակական կազմակերպություններին իրավունք վերապահել հանրային (այդ թվում նաև՝ համայնքային) նշանակություն ունեցող և մարդու ու քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների խախտման հանգեցրած (հանգեցնող) վարչարարության՝ անհատական կամ ռեալ ակտերի, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման պահանջով հայց հարուցել դատարան՝ վերջիններին շահագրգռվածության հիմքում դնելով կանոնադրությամբ ուղղակիորեն այդպիսի նպատակներ և խնդիրներ հետապնդելը: Այսպիսի մոտեցումը, մեր համոզմամբ, ոչ միայն կխթանի հասարակական կազմակերպությունների դերի ու գործունեության նշանակության բարձրացումը, այլև կստեղծի հասարակության կողմից հանրային իշխանության նկատմամբ վերահսկողության լրացուցիչ երաշխիքներ, որոնք էլ կնպաստեն հանրային (համայնքային) նշանակություն ունեցող հարցերով վարչարարության հետևանքով անձանց խախտված իրավունքների և օրինական շահերի առավել արդյունավետ պաշտպանությանն ու վերականգնմանը, ինչպես նաև՝ ռեսուրսների խնայողությանը:

Հասարակական կազմակերպությունների կողմից դատարան դիմելու իրավունքը, իհարկե, չպետք է փոխարինի այս կամ այն անձի կողմից դատարան դիմելու իրավունքի իրացմանը, այն պետք է առնչվի բացառապես հանրային (համայնքային) նշանակություն ունեցող հարցերին և բխի տվյալ հասարակական կազմակերպության կանոնադրական նպատակներից ու խնդիրներից:

Համառոտագիր

«Հասարակական կազմակերպությունների վարչական դատարան դիմելու իրավունքի իրացման որոշ հիմնախնդիրներ» վերտառությամբ հոդվածում, ուսումնասիրության հիմքում ունենալով արդարադատության մատչելիության սկզբունքի հիմնադրույթները, քննարկման առարկա են դարձվել այլ անձանց շահերի պաշտպանության ինստիտուտի շրջանակներում հասարակական կազմակերպությունների կողմից դատարան հայց հարուցելու կառուցակարգերը: Աշխատանքում անդրադարձ է կատարվել հասարակական կազմակերպությունների դերին առհասարակ և ի մասնավորի՝ այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով հայց հարուցելու ոլորտում, ներկայացվել են քաղաքացիական և վարչական դատավարությունների կարգով այլ անձանց իրավունքների պաշտպանության ինստիտուտի գիտագործնական հիմքերը, վարչական արդարադատությանը բնորոշ առանձնահատկությունները, հայրենական իրավակարգավորումները, այդ թվում՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29.3-րդ գլխով նախատեսված հասարակական կազմակերպությունների ներկայացրած հայցով գործերի քննության հատուկ վարույթի վերաբերյալ:

Փիտակյան աշխատանքը հիմնվել է ինչպես տեսական, այնպես էլ գործնական հետազոտությունների վրա, տարբեր հեղինակների կարծիքների, գործող օրենսդրական կարգավորումների, միջազգային ու դատական մարմինների, այլ երկրների փորձի ուսումնասիրության միջոցով ներկայացվել են հասարակական կազմակերպությունների կողմից այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով հայց հարուցելու ինստիտուտին վերաբերող խնդիրները, հեղինակի կողմից առաջ է քաշվել դրանց լուծման, գործող օրենսդրական կարգավորումները վերանայելու անհրաժեշտությունը, և առաջարկվել են օրենսդրությունը կատարելագործելու ուղիները:

Բանալի բառեր - դատարան դիմելու իրավունք, հասարակական կազմակերպություն, շահագրգիռ անձ, այլ անձանց իրավունքների և օրինական շահեր, շրջակա միջավայրի պահպանություն, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն, հանրային (համայնքային) նշանակություն ունեցող հարցեր:

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ ПРАВА НЕПРАВИТЕЛЬСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ НА ОБРАЩЕНИЕ В АДМИНИСТРАТИВНЫЙ СУД

Татевик Сирадегян

Соискатель кафедры конституционного права ЕГУ

tatevik.siradeghyan@ysu.am

идентификатор: 0000-0003-1868-6568

Абстракт

В статье под названием «Некоторые проблемы реализации права неправительственных организаций на обращение в административный суд», исходя из принципов доступности правосудия, обсуждаются вопросы механизмов подачи иска неправительственными организациями в рамках института защиты чужих интересов. В статье рассмотрена роль общественных организаций в целом и в частности в сфере возбуждения иска в целях защиты прав других лиц, представлены научно практические основы института защиты прав других лиц в порядке гражданского и административного судопроизводства, особенности административной юстиции, отечественные правовые нормы, в том числе касаясь особого порядка рассмотрения дел, возбужденных неправительственными организациями в соответствии с главой 29.3 Кодекса Административного судопроизводства РА.

Научная работа основывалась как на теоретических, так и на практических исследованиях, путем изучения мнений различных авторов, действующих правовых норм, решений международных организаций и судебных органов, опыта других стран, представлены проблемы института подачи иска неправительственными организациями с целью защиты прав других лиц; автором выдвинута необходимость их решения, проведен пересмотр существующих правовых норм, предложены пути совершенствования законодательства.

Ключевые слова - право обращения в суд; общественная организация; заинтересованное лицо; права и законные интересы других лиц; охрана окружающей среды; защита прав инвалидов; вопросы общественного значения.

CERTAIN PROBLEMS OF IMPLEMENTATION OF THE RIGHT OF NON-GOVERNMENTAL ORGANIZATIONS TO APPEAL TO ADMINISTRATIVE COURT

Tatevik Siradeghyan

Applicant at YSU Chair of Constitutional Law

tatevik.siradeghyan@ysu.am

ID: 0000-0003-1868-6568

Abstract

In the article entitled "Some problems of realization of the right of non-governmental organizations to appeal to administrative court", the issues of mechanisms of filing a lawsuit by non-governmental organizations within the framework of the institute of protection of others' interests are discussed, based on the principles of accessibility of justice. The paper considers the role of non-governmental organizations in general and in particular in the field of initiating a lawsuit to protect the rights of others, presents the scientific and practical bases of the institute of protecting the rights of others in civil and administrative proceedings, the peculiarities of administrative justice, the norms of domestic legal norms, including the special procedure of considering the cases initiated by non-governmental organizations in accordance with Chapter 29.3 of the RA Code of Administrative Procedure.

The scientific work is based on both theoretical and practical research; the problems of the institute of filing a lawsuit by non-governmental organizations to protect the rights of others are presented by studying the opinions of various authors, current legal norms, international and judicial bodies, experience of other countries; the author brings forward the need for their solution, reviews the existing legal norms, proposes ways to improve the legislation.

Key words - *right to appeal to the court; public organization; interested person; rights and legitimate interests of other persons; environmental protection; protection of the rights of persons with disabilities; issues of public importance.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տիգրան Մարկոսյան

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ,
ԵՊՀ իրավաբանական կլինիկայի դասախոս-կոորդինատոր,
Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլ. փոստ՝ tigranmarkosyan@ysu.am
<https://orcid.org/0000-0002-4671-1663>

Նարե Պարոնյան

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի
իրավաբանական վարչության աշխատակից
էլ. փոստ՝ nare.paronyan@edu.ysu.am
<https://orcid.org/0009-0005-4171-6480>

Ներածություն

Սպառողների շահերի պաշտպանությունը առավել ընդհանուր բնորոշմամբ ենթադրում է համալիր միջոցառումների համակարգ, որը, մի կողմից, ուղղված է լայն առումով անբարեխիղճ արտադրողների և վաճառողների կողմից անորակ ապրանքների և ծառայությունների իրացման հնարավորության բացառմանը, իսկ, մյուս կողմից, նման դեպքերում խախտված իրավունքների արդյունավետ վերականգնմանը: Այն պահանջում է սպառողների համար հավելյալ երաշխիքների առկայություն, քանի որ նրանք, չունենալով ոլորտին առնչվող բավարար գիտելիքներ, ավելի հեշտ են տրվում մանիպուլյացիաներին, և նրանց շահերը հեշտությամբ հարմարեցվում են վաճառողների՝ շահույթը առավելագույնին հասցնելու ձգտումներին¹:

Սպառողների շահերի պաշտպանությունը անհրաժեշտություն է դարձնում պետության դիմամիկ մոտեցման առկայությունը ոչ միայն եղած մարտահրավերներին համարժեք արձագանքելու, այլև ապագա խնդիրները կանխատեսելու առնչությամբ՝ ապահովելով, որ սպառողները լավ պաշտպանված լինեն արագ փոփոխվող շուկաներում, այդ թվում՝ օրըստօրե զարգացող համաշխարհային էլեկտրոնային առևտրի շրջանակում: Ընդ որում, սպառողների շահերի պաշտպանության միջազգայնորեն ճանաչված բարձր ստանդարտները կարևոր նախադրյալ են ինչպես սեփական արտադրանքը այլ երկրների շուկա մուտքի, այնպես էլ այլ երկրներից դրանց հոսքի ապահովման առումով:

Պատահական չէ, որ, նոր խմբագրությամբ Սահմանադրության² 86-րդ հոդվածի համաձայն, սպառողների շահերի պաշտպանությունը տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական

¹ Տե՛ս T. Ucaryilmaz, Morality in Competition Law: The Culture of Honesty and Trust in Consumer Protection, <https://doi.org/10.30958/ajl.7-2-4>, Athens Journal of Law, e-ISSN: 2407-9685, Volume 7, Issue 2, Athens, 2021, էջ 198, <https://www.athensjournals.gr/law/2021-7-2-4-Ucaryilmaz.pdf> (մուտք 05.06.2024թ.):

² Ընդունվել է 05.07.1995թ.: Ամբողջությամբ վերաշարադրվել է 06.12.2015թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

նպատակներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետության, մի կողմից, և Եվրոպական միության և Ատոմային Էներգիայի եվրոպական համայնքի և դրանց անդամ պետությունների, մյուս կողմից, միջև 2017 թվականին կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով Հայաստանը, ի թիվս այլնի, պարտավորվել է իր սպառողների պաշտպանության համակարգը համապատասխանեցնել Եվրոպական միության օրենսդրությանը¹:

Միաժամանակ պետք է ընդգծել, որ տարբեր պետություններում սպառողների շահերի պաշտպանության գործառնություններով օժտված են տարբեր մարմիններ, որոնց շարքում հատկապես կարևոր դերակատարություն ունեն մրցակցային կամ հակամենաշնորհային մարմինները: Այս առումով Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէ, քանի որ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) և ունի սպառողների շահերի պաշտպանության գործառնություն: Այնուամենայնիվ, ներկայումս Հանձնաժողովին են հասցեագրվում որոշ խնդիրներ, որոնք չեն տեղավորվում նրա գործառնության շրջանակում, և, միևնույն ժամանակ, առկա են այնպիսի իրավիճակներ, որոնք ակնհայտորեն առնչվում են Հանձնաժողովի գործունեությանը, սակայն վերջինս չունի համապատասխան լիազորություններ: Այս տեսանկյունից ընտրված թեմայի տեսագործնական արդիականությունը կասկած չի հարուցում:

Սույն հետազոտության նպատակն է տեսական աղբյուրների, հայրենական և արտասահմանյան օրենսդրության, ինչպես նաև դատական պրակտիկայի հիման վրա բացահայտել Հանձնաժողովի՝ սպառողների շահերի պաշտպանության գործառնության բովանդակությունը և նախանշել դրա հետագա զարգացման ուղղությունները:

Այդ նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- բացահայտել Հայաստանի Հանրապետության մրցակցային իրավունքում «սպառող» հասկացության բովանդակությունը.
- համառոտ ներկայացնել սպառողների իրավունքների պաշտպանության զարգացման պատմությունը.
- պարզաբանել սպառողների շահերի պաշտպանության և մրցակցային միջավայրի միջև կապը.
- վերլուծել Հանձնաժողովի կողմից սպառողների շահերի պաշտպանության առանձնահատկությունները.
- վեր հանել ոլորտում առկա խնդիրները և առաջարկել դրանց հաղթահարմանն ուղղված լուծումներ:

Հետազոտության շրջանակում կիրառվել են ընդհանուր գիտական (անալիզ, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, ընդհանրացում և այլն) և հատուկ (դիալեկտիկական, ձևական-տրամաբանական, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական և այլն) մեթոդներ:

1. Պատմական համառոտ ակնարկ սպառողների իրավունքների պաշտպանության զարգացման մասին.

Սպառողների իրավունքների պաշտպանության շարժման սկիզբ է ընդունված համարել Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Ջոն Քենեդիի 1961 թ. մարտի 15-ի՝ Կոնգրեսին ուղղված ուղերձը, որում ասվում էր. «Սպառողները մենք բոլորս ենք: Սա է ամենամեծ տնտեսական շերտը, որն ազդում է, և որի վրա ազդում է ցանկացած մասնավոր կամ պետական տնտեսական որոշում: Չնայած դրան՝ նրանք միակ տնտեսական խումբն են, որոնց ծայրը հաճախ մնում է չլսված»²:

¹ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 11.04.2018թ.: Ուժի մեջ է մտել 01.03.2021թ.: Տե՛ս ՀՀԱԳՆՊՏ 2018.08.15/1(40):

² Տե՛ս <https://www.consumersinternational.org/what-we-do/world-consumer-rights-day/united-nations-recognition-of-world-consumer-rights-day/>

Մեկ տարի անց Ջոն Քենեդին Կոնգրես ներկայացրեց սպառողների իրավունքների մասին օրենքի նախագիծը (Consumer Bill of Rights), որը նախատեսում էր սպառողների այնպիսի հիմնական իրավունքներ, ինչպիսիք են տեղեկություն ստանալու, ընտրության, անվտանգության և լաված լինելու իրավունքները: Քենեդին Կոնգրեսի ուշադրությունը հրավիրեց գործող օրենսդրությունը հզորացնելու և նոր օրենքներ ու կարգավորումներ ստեղծելու անհրաժեշտության վրա, որին էլ հաջորդեցին նաև այլ՝ սպառողների կրթության և վնասի հատուցում ստանալու իրավունքները¹:

Սպառողների իրավունքների պաշտպանության հետագա զարգացումը արդեն կապվում է Եվրոպական միության հետ: Մասնավորապես, հիշատակման է արժանի Եվրոպական միության 1975թ. իրականացրած «Սպառողների պաշտպանության և տեղեկատվական քաղաքականության» ծրագիրը, որով նախատեսվեցին սպառողների առողջության և անվտանգության պաշտպանության, տնտեսական շահերի պաշտպանության, վնասի հատուցման, տեղեկություն ստանալու և կրթության, ինչպես նաև շահերի ներկայացվածության իրավունքները²: Այնուհետև այս իրավունքները իրենց նորմատիվ ամրագրումը ստացան սպառողների պաշտպանության ոլորտում կարևոր նշանակություն ունեցող մի շարք դիրեկտիվներում:

1980-ական թվականների վերջում զարգացած երկրների մեծ մասի օրենսդրությունները արդեն նախատեսում էին սպառողների հիմնական իրավունքները: Դրանք հիմնվում էին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1985թ. ապրիլի 9-ի թիվ 39/248 բանաձևով ընդունված «Սպառողների շահերի պաշտպանության ղեկավար սկզբունքներ»-ի վրա, որոնք նախատեսում էին սպառողների ուժ՝ ապրանքի անվտանգության, տեղեկության, ապրանքի ընտրության, շահերի արտահայտման, հիմնական կարիքների բավարարման, վնասի հատուցման, սպառողների կրթության և առողջ շրջակա միջավայրի իրավունքները³: Այս սկզբունքները հետագայում ընդլայնվել են Տնտեսական և սոցիալական խորհրդի թիվ 1999/7 բանաձևով, այնուհետև վերանայվել և ընդունվել են Գլխավոր ասամբլեայի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 70/186 բանաձևով⁴:

2. Սպառողների շահերի պաշտպանության և մրցակցային միջավայրի կապը.

Ժամանակակից աշխարհում մրցակցությունը շուկայական տնտեսության զարգացման կարևոր գործոն է: Այն շուկայական տնտեսության հիմնական սկզբունքներից մեկն է, որը հիմնված է ընտրության ազատության, ձեռներեցության և նորարարության վրա: Այն նպաստում է միջոցների արդյունավետ բաշխմանը, որակի բարելավմանը, գների և ծախսերի նվազեցմանը, խթանում է գիտության և տեխնիկայի զարգացումը⁵:

¹ Տե՛ս **C. MacCarald**, Key Consumer Rights Laws, ISBN 978-1978514317, Cavendish Square Publishing, New York, 2020, էջ 12:

² Տե՛ս **J. Mkrtchian**, Consumer Rights Concept And Historical Review, <https://doi.org/10.36475/9.3.11>, "Law And World", ISSN 2346-7916, Volume 9; Issue 3, Tbilisi, 2023, էջ 206, <https://lawandworld.ge/index.php/law/issue/view/56/28> (մուտք 05.06.2024թ.):

³ Տե՛ս **Е.В. Осипова**, Система защиты прав потребителей в России: к 30-летию антимонопольных органов РФ // Социальные новации и социальные науки, 2020, էջեր 129-130:

⁴ Տե՛ս **A. Haykyants, Sh. Ghukasyan**, The Factor Of Consumer Rights Protection As A Criterion For Social System Development, DOI:10.24234/wisdom.v22i2.807, WISDOM, ISSN 1829-3824, 2(22), Երևան, 2022, էջ 32, <https://wisdomperiodical.com/index.php/wisdom/article/view/807/442> (մուտք 05.06.2024թ.):

⁵ Տե՛ս <https://nipkef.ru/about/blog/pochemu-konkurenciyu-schitayut-glavnym-motorom-ekonomiki-analiz-klyuchevyh-aspektov/>

Վերոշարադրյալի լույսի ներքո հատկանշական է մրցակցային միջավայրի և սպառողների շահերի պաշտպանության սերտաձած կապը: Այսպես, սպառողների համար մրցակցությունը ունի երկակի դեր: Այն, նախ, խթանում է տնտեսական աճը, քանի որ մրցակցության շնորհիվ բարելավվում են ապրանքի սպառողական հատկությունները, ապրանքի և ծառայության որակը և արտաքին տեսքը: Բացի այդ, շուկայում պարբերաբար հայտնվում են նոր ապրանքներ և ծառայություններ, և սպառողներին գրավելու մրցավազքը խթանում է ընկերություններին բարելավելու իրենց տեսականին, ավելացնելու շուկա մատակարարվող ապրանքների քանակն ու որակը¹: Այսինքն՝ այն սպառողների համար ստեղծում է ընտրության ավելի լայն հնարավորություն և օգնում նվազեցնել գներն ու բարելավել որակը²:

Սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությունն էլ իր հերթին կարևոր է հենց բիզնեսի տեսանկյունից, քանի որ հնարավորություն է ընձեռում բարեխիղճ տնտեսավարող սուբյեկտներին ձեռք բերելու լավ համբավ և պահանջարկ, ինչն էլ կարող է հանգեցնել շահութաբերության և մրցունակության աճի և, ի վերջո, երկարաժամկետ հեռանկարում՝ տնտեսական աճի: Սպառողների պաշտպանության քաղաքականությունը, օրենքները և կանոնակարգերը կոչված են նաև երաշխավորելու բիզնեսի նկատմամբ վերահսկողությունը³:

Հիշյալ բոլոր տեսանկյունների լիարժեք իրացումը ուղղակիորեն առնչվում է տեղեկություն ստանալու սպառողի իրավունքին: Այն կոչված է ապահովելու, որ սպառողներին տրամադրվեն համարժեք, հուսալի և բավարար, անհրաժեշտ և ստույգ տեղեկություն ապրանքների կամ ծառայությունների վերաբերյալ՝ իրենց գնումների և պայմանագրերի վերաբերյալ իրազեկված որոշումներ կայացնելու համար⁴: Սա ներառում է ապրանքի մանրամասների, գների, դրույթների և պայմանների, ինչպես նաև գործարքների հետ կապված ռիսկերի և օգուտների հստակ, հասկանալի և մատչելի ներկայացում: Արդյունքում այն ենթադրում է պաշտպանված լինելու հնարավորություն անարդար, կեղծ և ապակողմնորոշիչ տեղեկատվությունից, գովազդից և տնտեսավարող սուբյեկտի այլ վարքագծից, որոնք կարող են խաթարել սպառողի իրավունքները և ընտրությունները: Այլ կերպ ասած՝ միայն անհրաժեշտ տվյալների առկայության դեպքում սպառողները կարող են խաղալ իրենց կարևոր դերը՝ «լավ տեղեկացված ակտիվ ընտրություն կատարել՝ լավագույն ապրանքներ գնելու համար, որոնք համապատասխանում են իրենց կարիքներին»⁵:

3. «Սպառող» հասկացությունը Հայաստանի Հանրապետության մրցակցային իրավունքում.

«Սպառող» հասկացությունը մրցակցության պաշտպանության օրենսդրության շրջանակում կիրառվող հիմնական հասկացություններից է, սակայն մինչև 2021 թվականը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում⁶ (այսուհետ նաև՝ **Օրենք**) այն սահմանված չէր: Միևնույն ժամանակ, Օրենքի հիմնական հասկացությունները սահմանող 4-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված էր, որ Օ-

¹ Տե՛ս **В.Л. Сиднина**, Конкуренция за потребителя: роль в экономическом развитии, УДК: 339.137.2 «Теоретическая экономика», ISSN 2221-3260, 5(17), Ярославль, 2013, էջ 53, <https://www.ystu.ru/files/other/5-2013.pdf> (մուտք 05.06.2024թ.):

² Տե՛ս https://competition-policy.ec.europa.eu/about/why-urban-competition-policy-important-consumers_en

³ Տե՛ս Association of Southeast Asian Nations, (<https://www.aseanconsumer.org/cterm-consumer-protection/why-is-consumer-protection-important>), (մուտք 05.06.2024թ.):

⁴ Տե՛ս <https://www.aces.edu/blog/topics/business-community-/know-your-consumer-rights-and-responsibilities/>

⁵ Տե՛ս **D. Bird**, Three Essays on the Effects of Consumer Protection Policy on Market Competition, Loughborough University, 2022, p. 1, <https://doi.org/10.26174/thesis.lboro.20051774.v1> (մուտք 05.06.2024թ.):

⁶ Ընդունվել է 06.11.2000թ.: Ուժի մեջ է մտել 15.12.2000թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2000.12.15/30(128):

րենքում նշված մյուս հասկացությունները կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով¹, այլ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իմաստով:

Շարադրվածից հետևում է, որ «սպառող» հասկացության բովանդակության բացահայտումը օրենսդիրը պայմանավորել էր այլ իրավական ակտերում առկա սահմանումներով: Այսպես, օրինակ՝ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի² համաձայն՝ սպառող է համարվում բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացին, իսկ «Էներգետիկայի մասին» օրենքի³ համաձայն՝ սպառող (բաժանորդ) է համարվում էլեկտրական էներգիայի (իզոթրոյան), բնական գազի և (կամ) ջերմային էներգիայի սպառման պահանջարկ ունեցող անձը, որն էներգիայի մատակարարման պայմանագիր է կնքել մատակարարման լիցենզիա ունեցող անձի (ներառյալ՝ երաշխավորված մատակարարի) հետ կամ գտնվում է այդ գործընթացում:

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև **Օրենսգրք**) տարբեր դրույթներում առկա էին այս հարցին առնչվող որոշակի կարգավորումներ: Մասնավորապես, Օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 6.4-րդ մասում օրենսդիրը օգտագործում է «**ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված (սպառողների հետ կնքվող) պայմանագրերից**» արտահայտությունը, իսկ 416-րդ հոդվածի 2-րդ մասում առկա է «Միանալու կամ այլ պայմանագրով, որով պարտատերը **սպառող քաղաքացի է**» ձևակերպումը, իսկ մեկ այլ՝ 550-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործված է «Էներգամատակարարման պայմանագրով էներգամատակարարող կազմակերպությունը պարտավորվում է **աբոնենտին (սպառողին)** միացման ցանցի միջոցով մատուցել էներգիա» արտահայտությունը:

Հետևում է, որ օրենսդիրը «սպառող» կարգավիճակի հատկորոշումը պայմանավորել և պայմանավորում է ապրանքի ձեռքբերման նպատակով՝ առանց սահմանափակելու այն ձեռք բերող սուբյեկտի ֆիզիկական կամ իրավաբանական անձ լինելու հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ օրենսդրի նպատակն էր սպառող համարել նաև այն իրավաբանական անձանց, որոնք ապրանքները ձեռք են բերում ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված նպատակներով: Այս գաղափարը բխում է նաև Օրենսգրքի 508-րդ հոդվածի 1-ին մասից, որի համաձայն՝ մանրածախ առուվաճառքի պայմանագրով ապրանքների մանրածախ վաճառքի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող վաճառողը պարտավորվում է գնորդին հանձնել ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված ապրանք:

Պետք է նկատել, որ «սպառող» հասկացության բովանդակության նման ընկալումը կիրառելի է նաև այլ երկրներում: Այսպես, Ֆրանսիայում ձևավորված դատական պրակտիկան ցույց է տալիս, որ սպառող է համարվում այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը, պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելով, չի հետապնդում մասնագիտական գործունեության նպատակ⁴, իսկ Իսպանիայում

¹ Ընդունվել է 05.05.1998թ.: Ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

² Ընդունվել է 26.06.2001թ.: Ուժի մեջ է մտել 01.01.2002թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2001.08.02/25(157) Հոդ.580:

³ Ընդունվել է 07.03.2001թ.: Ուժի մեջ է մտել 01.04.2001թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2001.03.22/10(142) Հոդ.205:

⁴ Տե՛ս **M. Ebers**, The notion of consumer, Consumer Law Compendium, 2008, էջ 722, file:///C:/Users/User/Downloads/consumerstudy_part3a_en_en%20(1).pdf

2014 թվականի մարտին իրականացված բարեփոխումից հետո թագավորական 1/2007 օրենսդրական հրամանագիրը սահմանեց, թե ինչ պետք է հասկանալ «սպառողներ» և «օգտագործողներ» եզրույթներն օգտագործելիս՝ սահմանելով, որ պետք է ելակետ ընդունել ոչ թե ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ գործ ունենալու հանգամանքը, այլ այդ անձի գործունեության ոլորտը՝ հաշվի առնելով, որ իրավաբանական անձի կողմից ձեռք բերված ոչ բոլոր ապրանքները պետք է համարվեն ձեռք բերված իրենց բիզնեսի կամ մասնագիտական գործունեության համար¹: Նմանատիպ մոտեցումներ առկա են նաև Բուլղարիայում, Լեհաստանում և Լատվիայում:

Միացյալ Թագավորությունում 1977 թվականի «Անբարեխիղճ պայմանագրերի մասին» օրենքի (UCTA) 12 (1) բաժնի համաձայն՝ բիզնեսները, որոնք ներգրավված են գործարքի մեջ, որը դուրս է իրենց սովորական գործունեության նպատակներից, R & B Customs Brokers Ltd v United Dominions Trust Ltd որոշումից ի վեր կարող են հանդես են գալ որպես «սպառող»²:

Հետաքրքրական է նաև Եվրոպական միության արդարադատության դատարանի C-329/19 Condominio di Milano գործով դիրքորոշումը, որի համաձայն՝ «Սպառողների իրավունքների պաշտպանության» դիրեկտիվում³ կիրառվող «սպառող» հասկացությունը ազգային մակարդակում կարող է ընդլայնվել այնպես, որ դրա պաշտպանիչ նորմերը կիրառվեն նաև վաճառողների և իրավունքի այնպիսի սուբյեկտի միջև կնքված պայմանագրային հարաբերությունների նկատմամբ, որոնք ֆիզիկական անձինք չեն, ինչպես, օրինակ՝ իտալական օրենսդրության համաձայն՝ համասեփականատերերի միավորումը⁴:

Կարևոր է նկատել, որ ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված նպատակով ապրանք ձեռք բերած իրավաբանական անձին սպառող դիտարկելու հանգամանքը արձանագրվել է նաև ՀՀ բարձրագույն դատական ատյանի պրակտիկայում: Մասնավորապես, այս տրամաբանությունն է դրված Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/12665/05/18 վարչական գործով 2022 թվականի մայիսի 10-ի որոշմամբ արտահայտված դիրքորոշումների հիմքում, համաձայն որի. «(...) «խտացրած կաթ»-ի ներմուծում իրականացված չլինելու պայմաններում ներմուծված ապրանքը որպես «խտացրած կաթ» իրացնելն իրավամբ անբարեխիղճ մրցակցության գործողություն է, քանի որ մոլորեցրել է տվյալ ապրանքը **սպառող ընկերություններին** Ընկերության առաջարկած ապրանքի իրական որակի վերաբերյալ(...):»:

Զնայած շարադրվածին՝ հետագայում թիվ ՎԴ/11331/05/18 վարչական գործով 2023 թվականի փետրվարի 1-ի և թիվ ՎԴ/11553/05/18 վարչական գործով 2023 թվականի հունիսի 13-ի որոշումներով Վճռաբեկ դատարանը որդեգրեց տրամադժորեն հակառակ մոտեցում: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով իրավահարաբերության ծագման պահին գործող Օրենքում «սպառող» հասկացության բացակայությունը և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքում «սպառող» հասկացության միայն այդ օրենքի իմաստով տրված չլինելու հանգամանքը, եզրահանգեց, որ «սպառող» կարգավիճակ կարող է ունենալ միայն ֆիզիկական անձը՝ բացառելով այլ բնույթի սուբյեկտների սպառող դիտարկվելու նույնիսկ հնարավորությունը:

¹ Տե՛ս <https://www.abogadosmadridtenerife.com/english/blog/legal-persons-as-consumers-and-users/> (մուտք 05.06.2024թ.):

² Տե՛ս նույն տեղում, էջ 723:

³ Տե՛ս Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council of 25 October 2011 on consumer rights

⁴ Տե՛ս Commission notice Guidance on the interpretation and application of Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council on consumer rights (Text with EEA relevance) 2021/C 525/01, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A52021XC1229%2804%29> (մուտք 05.06.2024թ.):

Այնինչ նման մոտեցումը արդարացված և ընդունելի չէ հետևյալ հանգամանքների լույսի ներքո.

1. Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Օրենքը դրանում չսահմանված հասկացությունների բացահայտումը նախատեսում էր Օրենսգրքի և այլ իրավական ակտերի միջոցով, որոնցից, ինչպես ներկայացվել է վերևում, բխում էր նաև իրավաբանական անձանց սպառող դիտարկվելու հնարավորությունը.

2. Առկա չէ որևէ հիմնավոր պատճառաբանություն այն մասին, թե ինչու է հիմք ընդունվել միայն «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքը այն պարագայում, երբ Օրենքը այս խնդրի լուծման ճանապարհը կապում էր Օրենսգրքի, ապա այլ իրավական ակտերի հետ.

3. Որևէ կերպ պատճառաբանված չէ նախկինում թիվ ՎԴ/12665/05/18 վարչական գործով 2022 թվականի մայիսի 10-ի որոշմամբ իրավաբանական անձին սպառող դիտարկելու իր իսկ դիրքորոշումից Վճռաբեկ դատարանի հրաժարվելու շարժառիթը, և ներկայացված չէ նոր մոտեցման առնչությամբ իրավունքի զարգացման բաղադրիչը.

4. «Սպառող» հասկացության բովանդակության նման սահմանափակումը մրցակցային վերահսկողությունից դուրս է թողնում այլ անձանց միջոցով ապրանքները վաճառող տնտեսավարող սուբյեկտներին, իսկ նրանց վարքագծից տուժած սպառողներին դարձնում է անպաշտպան՝ հանրային շահերին պատճառելով էական վնաս:

Պետք է, սակայն, նշել, որ Վճռաբեկ դատարանի հիշյալ որոշումներով տրված մեկնաբանությունների հետագա կիրառումը բացառվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2021 թվականի մարտի 3-ի ՀՕ-92-Ն օրենքով: Մասնավորապես, այդ փոփոխության շնորհիվ 2021 թվականի մայիսի 31-ից Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը ուղղակիորեն նախատեսում է «սպառող» հասկացությունը, որի համաձայն՝ սպառող է համարվում սպառման նպատակով ապրանք ձեռք բերող կամ հնարավոր ձեռք բերող իրավաբանական կամ ֆիզիկական անձը կամ պետական մարմինը:

4. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից սպառողների շահերի պաշտպանության առանձնահատկությունները.

Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտը կարգավորող հիմնական ակտի՝ Օրենքի նպատակներից է Հայաստանի Հանրապետությունում սպառողների շահերի պաշտպանությունը, որին համապատասխան Օրենքի գործողությունը, ի թիվս այլնի, տարածվում է տնտեսավարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների, վարքագծի կամ ակտերի վրա, որոնք վնասում կամ կարող են վնասել սպառողների շահերը: Միևնույն ժամանակ, մինչև 2021 թվականը այս առնչությամբ Օրենքում առկա էր անուղղակի հիշատակում: Մասնավորապես, Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը Հանձնաժողովի խնդիրների շարքում նախատեսում էր ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով տնտեսական մրցակցության պաշտպանումն ու խրախուսումը:

Մինչդեռ նման կարգավորումը ակնհայտորեն համահունչ չէր պետական մարմինների ձևավորման և գործունեության հիմքում դրված գործառույթ-ինստիտուտ-լիազորություն եռամիասնական շղթայի տրամաբանությունը: Ընդ որում, այդ եռամիասնության մեջ ինստիտուտն ու իրավասությունը միջոց են գործառույթին իրականացնելու համար, որը ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների հիման վրա տեղի է ունենում Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձևերի ու մեթոդների շրջանակներում, որոնց արդյունքում երաշխավորվում են պետության ողջ տարածքում հասա-

րական հարաբերությունների կանոնակարգումը (համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումը) և դրանց իրացման ապահովումը¹:

Բացի այդ, սպառողների շահերի պաշտպանությունը նախատեսված էր որպես տնտեսական մրցակցության պաշտպանության և խրախուսման միջոց և ոչ թե ինքնուրույն խնդիր: Այլ կերպ ասած՝ այն երկրորդվում էր տնտեսական մրցակցության պաշտպանությանը:

Իրավիճակը որոշակիորեն փոխվեց «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2021 թվականի մարտի 3-ի ՀՕ-92-Ն օրենքով, որի արդյունքում Օրենքում դրա նպատակներին համահունչ սահմանվեցին Հանձնաժողովի գործառնությունները: Մասնավորապես, Օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովն ինքնավար մարմին է, որն ապահովում է տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, բարեխիղճ մրցակցության և ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ միջավայրը և իրականացնում է սպառողների շահերի պաշտպանությունը: Մյուս կողմից, այս առնչությամբ Հանձնաժողովին, ըստ էության, չվերապահվեցին նոր լիազորություններ:

Նման պայմաններում Հանձնաժողովի հիշյալ գործառնության բովանդակությունը բացահայտելու համար էական են վերջինիս լիազորությունների շրջանակի դիտարկումը և դրանց իրացումը պայմանավորող հիմնական պայմանի վերհանումը:

Այսպես, տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների առնչությամբ Հանձնաժողովի լիազորությունների ընդհանրացումը թույլ է տալիս դրանք պայմանականորեն դասակարգել երկու խմբի.

1) Կանխարգելում, որը ենթադրում է տնտեսական մրցակցությանն առնչվող խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցների, այլ փաստաթղթերի հաստատում, հանրությանը տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի մասին իրազեկում և այլն.

2) Վերահսկողություն, որի շրջանակում են տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը, պատասխանատվության միջոցի կիրառումը և խախտումը շտկելու վերաբերյալ հանձնարարություն տալը:

Շարադրվածի հիման վրա դժվար չէ նկատել, որ Օրենքում խոսքը միայն մրցակցային իրավախախտումների մասին է: Այդուհանդերձ, դա չի նշանակում, որ այս դեպքում չի ապահովվում սպառողների շահերի պաշտպանությունը, քանի որ, ինչպես վերևում ներկայացվել է, սպառողների շահերի պաշտպանության և մրցակցային միջավայրի միջև առկա է անխզելի կապ: Հենց այդ հանգամանքից ելնելով է, որ օրենսդիրը Հանձնաժողովի կողմից մրցակցային իրավախախտման համար պատասխանատվության միջոց կիրառելիս Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է սպառողների շահերի վրա իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը գնահատելու պահանջ:

Ավելին, որոշ մրցակցային իրավախախտումներ ունեն սպառողների շահերի վրա անմիջական բացասական ազդեցություն, ինչպես, օրինակ՝ չհիմնավորված բարձր գնի սահմանմամբ գերիշխող դիրքի չարաշահման կամ հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցության դեպքում է: Ընդ որում, առանձին իրավիճակներում, ինչպես վերջին իրավախախտման պարագայում է, սպառողների շահերի խախտման միջոցով է իրավախախտ տնտեսավարող սուբյեկտը ստանում անհիմն մրցակցային առավելություն:

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՍԴՌ-766 որոշումը և Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, 2014, էջեր 27, 29, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>, (մուտք 05.06.2024թ.):

Այդուհանդերձ, չնայած հիշատակված և մյուս առանձին բացառություններին, սպառողների շահերի պաշտպանությունը ներկայումս առկա լիազորությունների շրջանակում Հանձնաժողովը, որպես կանոն, իրականացնում է ածանցյալ ձևով: Մյուս կողմից, կարևոր է նկատել, որ Հանձնաժողովը իր լիազորությունները կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ քննարկվող հարցը առնչվում է հանրային շահերին: Այլ կերպ ասած՝ անհատական շահերի պաշտպանության անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը չունի որևէ իրավասություն: Այս հետևությունը բխում է «ինքնավար մարմիններ» գաղափարից, որին առնչվող Սահմանադրության 122-րդ հոդվածը սահմանում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով պատգամավորների ընդհանուր թվի ծայերի մեծամասնությամբ ընդունված օրենքով կարող են ստեղծվել ինքնավար մարմիններ¹:

Այս համատեքստում հիշատակման է արժանի Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, որի շրջանակում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով Վարչապետը ընդունել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ձևապարհային քարտեզը հաստատելու մասին» թիվ 666-Լ որոշումը²: Այդ որոշման հավելված 1-ի 14-րդ գլուխը նվիրված է Եվրոպական միության ստանդարտներին համապատասխան սպառողների պաշտպանության համակարգի ձևավորման առնչությամբ Հայաստանի կողմից կատարվելիք միջոցառումներին: Մասնավորապես, ի թիվս այլնի, նախատեսվում է սպառողական պայմանագրերի անարդար պայմանների մասին Խորհրդի 1993 թվականի ապրիլի 5-ի 93/13/EEC, սպառողներին առաջարկվող ապրանքների գների նշման մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի փետրվարի 16-ի 98/6/EC, ապրանքների վաճառքի պայմանագրերին վերաբերող որոշ ասպեկտների մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2019 թվականի մայիսի 20-ի 2019/771, ապակողմնորոշիչ և համեմատական գովազդի վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի 2006/114/ԵՀ, ներքին շուկայում ձեռնարկությունների և սպառողների միջև անարդար առևտրային պրակտիկայի մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի մայիսի 11-ի 2005/29/ԵՀ դիրեկտիվներին Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցում, որը հնարավորություն կտա ընդլայնել սպառողների իրավունքները, ապահովել բիզնեսի բարելավված գործունեություն և հեշտացված առևտուր, ինչպես նաև սպառողների շրջանում պաշտպանության և վստահության բարձր աստիճան:

Նման գործիքակազմի ներդրման պայմաններում քննարկման առարկա է նաև այն կիրառող մարմնի ընտրության հարցը: Այս առումով նախընտրելի լուծում է թվում այդ լիազորությունների վերապահումը Հանձնաժողովին՝ հաշվի առնելով ոլորտում նրա ունեցած փորձը, ինչպես նաև արդեն իսկ ձևավորված ինստիտուցիոնալ որոշակի կարողությունները: Ընդ որում, այս մոտեցման օգտին է խոսում նաև Եվրոպական միության փորձը, որտեղ մի շարք երկրներում (Լեհաստան, Մալթա,

¹ Տե՛ս Ա. Մանասյան, Տ. Մարկոսյան, Ինքնավարության իրավական բովանդակությունը և ինքնավար մարմինների առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, <https://doi.org/10.46991/S&L/2020.88.004>, «Պետություն և իրավունք», N 3 (88) 2020, Երևան, 2020, էջ 4, https://degrees.hesc.am/sites/default/files/2021-08/Manasyan_Markosyan_3_88_2020.pdf, (մուտք 05.06.2024թ.):

² Ընդունվել է 01.06.2019թ.: Ուժի մեջ է մտել 08.06.2019թ.:

Ֆրանսիա, Միացյալ Թագավորություն, Իռլանդիա, Իսպանիա, Նիդերլանդներ և այլն¹) սպառողների շահերի պաշտպանության իրականացումը վերապահված է մրցակցային մարմիններին: Ընդ որում, ուշագրավ է նաև Վրաստանի փորձը, որտեղ 2024 թվականի հունվարի 1-ից մրցակցային մարմինը վերանվանվել է Վրաստանի մրցակցության և սպառողների գործակալություն²:

Եզրակացություն

Այսպիսով, կատարված հետազոտության հիման վրա կարելի է անել հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. ՀՀ մրցակցային իրավունքում, ի տարբերություն սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության, «սպառող» հասկացությունը չունի սուբյեկտային սահմանափակում, և ելակետային է դիտարկվում ապրանքի ձեռքբերման նպատակը: Այլ կերպ ասած՝ մրցակցային իրավունքի լուսի ներքո սպառող կարող է դիտարկվել ոչ միայն ֆիզիկական, այլև իրավաբանական անձը և պետական մարմինը՝ պայմանով, որ ապրանքը ձեռքբերված լինի սպառման նպատակով:

2. Սպառողների շահերի պաշտպանության և մրցակցային միջավայրի միջև առկա է անխզելի կապ, քանի որ պաշտպանված, այդ թվում՝ տեղեկացված սպառողը լավ մրցակցային միջավայրի անհրաժեշտ պայման և բաղկացուցիչ է, իսկ լավ մրցակցային միջավայրն իր հերթին ապահովում է սպառողների շահերի պաշտպանությունը:

3. Ցանկացած մրցակցային իրավախախտում սպառողների շահերի վրա ունի ուղղակի կամ անուղղակի որոշակի բացասական ազդեցություն, և, ըստ այդմ, մրցակցային իրավախախտումների դեմ պայքարը, ի թիվս այլնի, ուղղված է սպառողների շահերի պաշտպանությանը:

4. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի՝ սպառողների շահերի պաշտպանության գործառույթի բովանդակությունը ներկայումս առարկայանում է բացառապես մրցակցային իրավախախտումների առնչությամբ կանխարգելիչ և վերահսկողական լիազորությունների իրականացմամբ:

5. Մրցակցային իրավախախտումների դեմ պայքարի շրջանակում Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը սպառողների շահերի պաշտպանությունը, որպես կանոն, ապահովում է ածանցյալ ձևով: Բացառություն են այն իրավիճակները, երբ սպառողների շահերի խախտման միջոցով է իրավախախտ տնտեսավարող սուբյեկտը ստանում անհիմն մրցակցային առավելություն, ինչպես, օրինակ՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության դեպքում է:

6. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը՝ որպես ինքնավար մարմին, չունի անհատական շահերի պաշտպանության իրավասություն, այլ կարող է իրացնել իր լիազորությունները միայն այն դեպքում, երբ հարցը առնչվում է հանրային շահերին:

7. Հրատապ են ժամանակակից զարգացումներին, այդ թվում՝ Եվրոպական միության ստանդարտներին համահունչ Հայաստանի Հանրապետության սպառողների շահերի պաշտպանության համակարգի վերանայումը և դրան համապատասխան Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին համապատասխան գործիքակազմի տրամադրումը:

¹ St' u K. Csere, Integrate or separate: institutional design for the enforcement of competition law and consumer law, DOI:10.2139/ssrn.2200908, Amsterdam Law School Legal Studies Research Paper No. 2013-03, Amsterdam Centre for European Law and Governance Research Paper No. 2013-01, Amsterdam, 2020, էջ 1, https://www.researchgate.net/publication/256044525_Integrate_or_Separate_-_Institutional_Design_for_the_Enforcement_of_Competition_Law_and_Consumer_Law (մուտք 05.06.2024թ.):

² <https://competitionlawblog.kluwercompetitionlaw.com/2024/01/22/main-developments-in-competition-law-and-policy-2023-georgia/>

Համառոտագիր

Սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությունը ավանդաբար պահանջում է պետության առանձնակի ուշադրությունը՝ պայմանավորված արտադրողների և միջնորդների հետ պայմանագրային հարաբերություններում նրանց «թույլ կողմ» լինելու հանգամանքով: Մյուս կողմից, ժամանակակից աշխարհում սպառողների շահերի պաշտպանության մարտահրավերները հաճախ դուրս են գալիս կոնկրետ պետության սահմաններից՝ պայմանավորված համաշխարհային էլեկտրոնային առևտրի աճի արդի միտումներով:

Հիշյալը պայմանավորում է պետությունների կողմից սպառողների շահերի պաշտպանության միջազգայնորեն ընդունված բարձր ստանդարտների ներդրման և շարունակական զարգացման հրամայականը: Այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետության համար հիմնաբարային է 2017 թվականին Եվրոպական միության հետ կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, որով Հայաստանը, ի թիվս այլնի, պարտավորվել է իր սպառողների պաշտպանության համակարգը համապատասխանեցնել ԵՄ չափանիշներին: Ընդ որում, այս համատեքստում զգալի դերակատարում է վերապահված Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին:

Տեսական աղբյուրների, հայրենական և արտասահմանյան օրենսդրության, ինչպես նաև դատական պրակտիկայի հիման վրա աշխատանքում համառոտ ներկայացվում է սպառողների իրավունքների պաշտպանության զարգացման պատմությունը, բացահայտվում է «սպառող» հասկացությունը Հայաստանի Հանրապետության մրցակցային իրավունքի համատեքստում, պարզաբանվում է սպառողների շահերի ազդեցության և մրցակցային միջավայրի միջև կապը, վերլուծվում են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից սպառողների շահերի պաշտպանության առանձնահատկությունները, ինչպես նաև վեր են հանվում ոլորտում առկա խնդիրները և առաջարկվում դրանց հաղթահարմանն ուղղված լուծումներ:

Հոդվածում հեղինակները ներկայացնում են գիտագործնական մի շարք եզրահանգումներ, որոնք կարող են ուղենիշային լինել օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի հետագա զարգացման համար:

Բանալի բառեր - սպառող; տնտեսական մրցակցություն; Մրցակցության պաշտպանության հանձնաժողով; սպառողների շահերի պաշտպանություն; գործառույթ; լիազորություն; դիրեկտիվ:

ПРАВОВОЕ СОДЕРЖАНИЕ ФУНКЦИИ ЗАЩИТЫ ПРАВ ПОТРЕБИТЕЛЕЙ КОНКУРЕНТНОГО ОРГАНА АРМЕНИИ

Тигран Маркосян

*Доцент кафедры гражданского процесса ЕГУ,
Преподаватель-координатор юридической клиники ЕГУ,
Член Комиссии по защите Конкуренции РА,
Кандидат юридических наук, доцент
эл. почта: tigranmarkosyan@ysu.am
<https://orcid.org/0000-0002-4671-1663>*

Наре Паронян

*Сотрудник юридического управления
Комиссии по защите Конкуренции РА
эл. почта: nare.paronyan@edu.ysu.am
<https://orcid.org/0009-0005-4171-6480>*

Абстракт

Эффективная защита интересов потребителей традиционно требует особого внимания государства из-за того, что они являются «слабой стороной» в договорных отношениях с производителями и посредниками. С другой стороны, в современном мире проблемы защиты интересов потребителей часто выходят за рамки конкретного государства, учитывая современные тенденции роста мировой электронной коммерции.

Вышеизложенное обуславливает необходимость внедрения и постоянного развития государствами высоких международно-признанных стандартов защиты интересов потребителей. С этой точки зрения краеугольным камнем для Республики Армения является Соглашение о всеобъемлющем и расширенном партнерстве, подписанное в 2017 году с Европейским союзом, которым Армения, среди прочего, обязалась привести свою систему защиты прав потребителей в соответствие со стандартами ЕС. При этом в этом контексте значительная роль отводится Комиссии по защите конкуренции.

На основе теоретических источников, отечественного и зарубежного законодательства, а также судебной практики, в работе кратко представлена история развития защиты прав потребителей, раскрывается понятие «потребитель» в контексте конкурентного права Республики Армения, разъясняется связь между влиянием интересов потребителей и конкурентной средой, анализируются особенности защиты интересов потребителей комиссией по защите конкуренции, а также выявляются проблемы, существующие в отрасли, и предлагаются решения, направленные на их преодоление.

В статье авторы представляют ряд научно-практических выводов, которые могут иметь решающее значение для дальнейшего развития законодательства и правоприменительной практики.

Ключевые слова – *потребитель; экономическая конкуренция; Комиссия по защите Конкуренции; защита интересов потребителей; функция; орган; директива.*

LEGAL CONTENT OF THE CONSUMER PROTECTION FUNCTION OF THE COMPETITION AUTHORITY OF ARMENIA

Tigran Markosyan

*Associate Professor at the YSU Chair of Civil Procedure,
Lecturer-Coordinator at the YSU Legal Clinic,
Member of the Competition Protection
Commission of RA, PhD in Law, Associate Professor
e-mail: tigranmarkosyan@ysu.am
<https://orcid.org/0000-0002-4671-1663>*

Nare Paronyan

*Employee at Competition Protection
Commission of RA, Legal department
e-mail: nare.paronyan@edu.ysu.am
<https://orcid.org/0009-0005-4171-6480>*

Abstract

Effective protection of consumers' interests traditionally requires special attention from the state because they are "the weak party" in contractual relations with manufacturers and intermediaries. On the other hand, in the modern world, consumer protection challenges often transcend national borders, especially given the current tendencies in the growth of global e-commerce.

This necessitates that states implement and continuously develop internationally recognized high standards for consumer protection. From this perspective, a cornerstone for the Republic of Armenia is the Comprehensive and Enhanced Partnership Agreement signed in 2017 with the European Union. Through this agreement, Armenia committed to aligning its consumer protection system with EU standards. At the same time, a significant role is assigned to the Competition Protection Commission in this context.

Drawing from theoretical sources, national and foreign legislation, and judicial practice, this work briefly presents the history of consumer protection. It defines the concept of "consumer" within the context of competition law in the Republic of Armenia, explains the relationship between consumer interests and the competitive environment, analyzes the peculiarities of consumer protection by the Competition Protection Commission, identifies existing problems of the sphere and proposes solutions to overcome them.

In the article, the authors present several scientific and practical conclusions that may be crucial for the further development of legislation and law enforcement practices.

Key words – *consumer; economic competition; Competition Protection Commission; protection of consumer interests; function; authority; directive.*

ՓՈԽՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԻԵՐԸ

Նաիրա Արտաշեսյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող
գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ
n.artashesyan@prosecutor.am
ORCID`0009-0004-8113-5165

Ներածություն

Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների զարգացմանը և տարածմանը զուգընթաց՝ անհրաժեշտություն է առաջացել խորապես ուսումնասիրելու և վերլուծելու ոլորտում առկա խնդիրները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս ոլորտում բավականին դժվար է ուսումնասիրություն իրականացնել, քանզի վիճակագրական տվյալներ չեն հրապարակվում, և տեղեկատվությունը համարվում է բժշկական գաղտնիք, նմանատիպ գիտական վերլուծությունները կարող են օգտակար լինել պրակտիկ աշխատողներին, փաստաբաններին, դատավորներին և այլ անձանց, ովքեր ցանկանում են մանրամասն տեղեկություններ ունենալ ոլորտում առկա խնդիրների մասին: Բացի այդ, թեմային առնչվող տեսական հայալեզու գրականությունը բացակայում է, իսկ դատական պրակտիկանում ընդհանրապես մի քանի գործ է քննվել, որոնք հիմնականում՝ դոկտրինային պայմաններում, որը ևս հնարավորություն չի տալիս ծանոթանալու դատարանների կայացրած ակտերի բովանդակությանը: Այս տեսանկյունից, հոդվածի արդիականությունը կասկած չի հարուցում: Հոդվածի նպատակն է նախ իրազեկել հասարակությանը վերոնշյալ ինստիտուտի մասին և ապա պրակտիկ աշխատողների ուշադրությունը հրավիրել առկա կամ հնարավոր իրավական խնդիրների վրա և առաջարկել լուծման տարբերակներ:

Նշված նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- Բացահայտել փոխնակ մայրության պայմանագրի հասկացությունը, իրավական բնույթը և ընդհանրապես տեղը իրավական համակարգում,
- Ուսումնասիրել փոխնակ մայրության պայմանագրը և այն՝ որպես առևտրային գործունեություն, ազատորեն դիտարկելու խնդիրները,
- Բացահայտել այս իրավահարաբերություններում պետության դերակատարությունը և վերահսկողության մեխանիզմները:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (մասնավորապես՝ իրավահամեմատական) մեթոդներ:

1. Փոխնակ մայրության պայմանագրի հասկացությունը և բնույթը.

Մարդու վերարտադրողական իրավունքը մարդկային ցեղի շարունակականությունն ապահովելու համար սերունդ թողնելու հնարավորությունն է: Հայտնի են մարդու՝ կենդանական աշխարհի բարձրագույն տարատեսակի վերարտադրողական իրավունքի դրսևորման մի քանի եղանակներ, օրինակ՝ փոխնակությունը, կլոնավորումը և այլն: Այժմ արգելված է մարդկային ցեղի կլոնավորումը (պատճենահանումը, կրկնօրինակի ստեղծումը) մարդկային ցեղի շարունակականությունն ապահովելու համար: Մասնավորապես, Օվիեդոյի կոնվենցիային կից լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածը սահմանում է, որ արգելվում է ստեղծել մարդկային էակ, որը գենետիկորեն նույնական կլինի այլ մարդկային էակի՝ անկախ նմանակ-

ված մարդկային էակի կենդանի կամ մահացած լինելու հանգամանքի¹։ Փոխնակությունը (surrogacy) վերարտադրողական իրավունքի իրացման առավել հայտնի ձևերից մեկն է։ Մարդու վերարտադրողական իրավունքն էլ, իր հերթին, մարդու սոմատիկ իրավունք է, քանի որ սոմատիկ² են անձի հետ կապված այն իրավունքները, որոնք կապված են մարդու մարմնի՝ որպես ամբողջության, ինչպես նաև այդ ամբողջականության առանձին մասերի (օրգաններ, հյուսվածքներ, բջիջներ) նկատմամբ մարդու, ըստ իր հայեցողության, տնօրինման հետ, այլ կերպ ասած՝ դրանք մարդուն տրված հնարավորություններ են՝ ազատորեն տնօրինելու իր մարմինը։ Այդ իրավունքները գոյություն ունեն օբյեկտիվորեն, բացարձակ և անժամկետ են, վերագրվում են կոնկրետ անձի։ Հետևաբար, փոխնակությունը՝ որպես մարդու վերարտադրողականության իրավունքի դրսևորում, մտնում է մարդու սոմատիկ իրավունքի համախմբի մեջ։

Բժշկական տեսանկյունից փոխնակ մայրությունը համարվում է անպտղությունը հաղթահարելու ամենաարդյունավետ տարբերակներից մեկը։ Դրա հետ մեկտեղ՝ սա վերարտադրողական տեխնոլոգիաների՝ իրավական և էթիկայի տեսակետից ամենավիճելի հարցն է։

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը տվել է փոխնակ մայրության հասկացությունը. «Գեստացիոն կրողը (փոխնակ մայրը) այն կինն է, որի մոտ հղիությունը սկսվել է երրորդ կողմին պատկանող ձվաբջջի և սպերմատոզոիդի բեղմնավորման միջոցով։ Այդ կինը կրում է երեխային այն պայմանով կամ նախնական համաձայնությամբ, որ ծնված երեխայի ծնողներն են համարվելու այն անձինք, որոնց դոնորական սաղմը օգտագործվել է տվյալ բեղմնավորման համար»³։

Փոխնակ մայրությունը հաճախ սահմանվում է նաև որպես մեկ այլ ընտանիքի կամ անձի խնդրանքով երեխա կրելու գործընթացը։ Այս դեպքում երեխան ծնվում է ոչ թե փոխնակ մոր մայրական բնագծի շնորհիվ, այլ զույգի կամ անհատի՝ ծնող դառնալու ցանկության շնորհիվ⁴։

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ նաև Օրենք) սահմանում է փոխնակ մոր հասկացությունը, մասնավորապես Օրենքի 2-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն. «Փոխնակ (սուրոգատ) մայր՝ դոնորական սաղմը իր արգանդում կրած կին, որից ծնված երեխան չի կրում նրա գենոտիպը...»։

Փոխնակ մայրության պայմանագիր, որպես պայմանագրի առանձին տեսակ, մեր իրավական համակարգում նախատեսված չէ, բացահայտված չեն նաև պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը։ Պրակտիկայում այս հարաբերությունները կարգավորելու համար կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր, որը լիարժեք չի արտացոլում այս ինստիտուտի կիրառման արդյունքում կողմերի միջև ծագած իրավահարաբերությունների բնույթը։ Այս առումով դեռևս չի ձևավորվել միասնական պրակտիկա, թե ի վերջո ի՞նչ տեսակի պայմանագիր պիտի կնքվի փոխնակ մայրության հարաբերությունները կարգավորելու համար։ Քանի որ այս ոլորտը բավականին փակ է ուսումնասիրություն իրականացնելու համար և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետաքրքրող տեղեկատվությունը համարվում է բժշկական գաղտնիք և իրապարակման ենթակա չէ, բացի այդ՝ դատական

¹ Տե՛ս Մարդկային էակի արժանապատվության և մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիա։ Ընդ որում՝ հաճախ անվանվում է Օվիեդոյի կոնվենցիա։ Այն ընդունվել է 1997 թվականին։ ՀՀ-ն չի վավերացրել սույն կոնվենցիան։

² «Սոմա» (soma) բառը հունարեն է, որը նշանակում է մարմին։

³ Տե՛ս **Ն.Մ.Արտաշեսյան** «Փոխնակ մայրության ինստիտուտի կիրառման որոշ հիմնական դիրքերը ՀՀ-ում» // Պետություն և իրավունք, 1(89), էջ 47, 2021թ.

⁴ Տե՛ս **K.Stiven**, "Legal control of surrogacy-international perspectives", էջ 13 <https://www.degruyter.com/document/doi/10.1515/9783110240214.149/html>

պրակտիկան ըստ էության սակավ է, և հիմնականում դռնփակ նիստեր են կայանում, հնարավոր չէ վեր հանել այն բոլոր խնդիրները, որոնք առաջանում են պրակտիկայում: Սակայն, վերլուծելով առկա իրավական կարգավորումները, կարծում ենք, որ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը նաև կենսաբանական ծնողների հետ չի կարող համապարփակ կարգավորել այն բոլոր խնդիրները, որոնք դուրս են գուտ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակից և լիարժեքորեն տեղավորվում են ընտանեկան իրավունքի կարգավորման տիրույթում:

Բժշկական կազմակերպությունը, որը ծառայություններ է մատուցում փոխնակ մորը և կենսաբանական ծնողներին, երեխայի ծնվելուց հետո այլևս դուրս է այդ հարաբերություններից, և կարծեք թե արդարացված կլինի, որ բժշկական կազմակերպության հետ պայմանագրի կողմերը կնքեն առանձին պայմանագրեր, որտեղ մանրամասն կկարգավորվի ամբողջ գործընթացը: Սակայն, հետագայում երեխայի ծնվելուց հետո, կարող են առաջանալ մի շարք այլ խնդիրներ, որոնք իրավական տեսանկյունից ճիշտ չէ, որ կարգավորվի ծառայությունների մատուցման պայմանագրով, քանզի ծառայությունները արդեն մատուցվել են, և այդ իրավահարաբերությունը դադարել է:

Որոշ հեղինակներ կտրականապես դեմ են այն թեզին, որ փոխնակ մայրության պայմանագիրը կարող է դասվել քաղաքացիաիրավական պայմանագրերի թվին: Օրինակ՝ Լեբեդևան կարծում է, որ փոխնակ մայրության պայմանագրի էությունը ծնողական և անձնական ոչ գույքային իրավունքների փոխանցումն է փոխնակ մորից կենսաբանական ծնողներին, հետևաբար այս պայմանագիրը չի կարող դասվել ծառայությունների մատուցման քաղաքացիական պայմանագրերի կատեգորիային՝ հաշվի առնելով միայն այս համաձայնագրի հատուցելի բնույթի հնարավոր առկայությունը: Փոխնակ մայրության պայմանագիրը ընտանեկան իրավական պայմանագրերի հատուկ տեսակ է¹: Գ. Վ. Բոգդանովան կարծում է, որ կենսաբանական ծնողների և փոխնակ մոր միջև ծագող հարաբերությունները, ինչպես նաև նրանց միջև հարաբերությունների հատուկ անձնական բնույթը, փոխնակ մոր կողմից կատարվող հատուկ պարտավորությունը, այս պայմանագրի էությունից բխող հատուկ իրավունքներն ու պարտականություններն այնքան առանձնահատուկ են, որ քաղաքացիական օրենսդրության նորմերը չեն կարող կիրառվել փոխնակ մայրության պայմանագրի նկատմամբ²:

Ե.Վ.Ստեբլևան, ընդգծելով փոխնակ մայրության յուրահատուկ բնույթը, այն համարում է ոչ թե կողմերի միջև առևտրային գործարք, այլ հնարավորություն այն կնոջ համար, ով ֆիզիոլոգիական պատճառներով չի կարող ունենալ սեփական երեխա: Այլ իրավաբաններ պայմանագիրը համարում են ո՛չ քաղաքացիաիրավական, ո՛չ էլ ընտանեկան-իրավական բնույթի, այլ դրանց խառնուրդը:

Կինը, ով համաձայնվել է օգտվել վերարտադրողական մեթոդներից, ունի իրավունք տեղեկացված լինելու բեղմնավորման ողջ ընթացքի, բժշկական և գենետիկ հետազոտությունների, դոնորի արտաքին տվյալների և ազգային պատկանելիության մասին, ինչպես նաև իր իրավունքների մասին: Դոնորի մասին տեղեկությունները, ինչպես նաև արհեստական բեղմնավորման փաստը համարվում են բժշկական գաղտնիք: Ամուսնական զույգի համաձայնությունը արհեստական բեղմնավորման իրականացման համար համարվում է ոչ թե քաղաքացիաիրավական, այլ ընտանեկան-իրավական գործարք: Դոնորի և ամուսնական զույգի միջև պայմանավորվածությունը քաղաքացիական-իրավական պարտավորություն է: Ամուս-

¹ Տե՛ս Լեբեդեვა Ю. О. Некоторые проблемы правового регулирования вспомогательных репродукции в свете нового Федерального закона «Об основах охраны здоровья граждан в Российской Федерации». // Медицинское право. 2012. № 2, էջ 16:

² Տե՛ս Богданова Г. В. Проблемы правового регулирования личных и имущественных отношений между родителями и детьми: Дисс. Канд. юрид. наук. Саратов, 1999, էջ 80:

նական զույգը և փոխնակ մայրը տալիս են գրավոր համաձայնություն փոխնակ մայրության ծրագրի իրականացման համար:

Եվրոպական երկրներում որպես կանոն փոխնակ մայրը համաձայնվում է արհեստական բեղմնավորման միջոցով առաջացած հղիության արդյունքում կրել երեխային իր մարմնում և ծնվելուց հետո հանձնել նրան ծնողներին: Որոշ երկրներում միայն որոշակի պայմանների բավարարման դեպքում է հնարավոր իրականացնել փոխնակ մայրության ծրագիրը: Օրինակ, Իսրայելում փոխնակ մայր կարող է լինել այն կինը, ով որևէ հարազատական կապ չունի ո՛չ երեխայի, ո՛չ էլ նրա ծնողների հետ, պատկանում է այն նույն դավանանքին, ինչին որ երեխայի գենետիկական ծնողները: Համաձայնությանը պետք է հավանություն տա կոմիտեն՝ կազմված տոնցիալական աշխատողներից, բժիշկներից և կրոնի ներկայացուցիչներից: Չնայած ֆինանսական փոխհատուցումը թույլատրելի է, սակայն իրավաբանական տեսակետից պայմանագիրը ոչ առևտրային բնույթ է կրում: Բոլոր մասնակից անձինք պիտի լինեն Իսրայելի քաղաքացի:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է Ընտանեկան օրենսգրքում որպես պայմանագրի առանձին տեսակ նախատեսել փոխնակ մայրության պայմանագիրը, որը ավելի համապարփակ ձևով կանդրադառնա այս իրավահարաբերություններին և ավելի շատ կնախատեսի իմպերատիվ նորմեր, ինչը ուղղակիորեն բխում է իրավահարաբերության մասնակիցների իրավունքների պաշտպանության նկատմամբ պետության պատասխանատվությունից, քանի որ այս հարաբերությունները մենք չենք կարող դիտարկել զուտ մասնավոր հարաբերություններ, որտեղ պետությունը անելիք չունի, ավելին՝ այս պարագայում պետության ուղղակի պարտականությունն է հոգ տանել բոլոր կողմերի իրավունքների պաշտպանության մասին: Փոխնակ մայրության պայմանագրի նախատեսումը ՀՀ ընտանեկան օրենսգրքում միանգամայն տրամաբանական է, քանի որ այդ պայմանագիրը կարգավորում է հատուկ հասարակական հարաբերություններ և կապված է առավելապես նոր ծնվող երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության հետ, և ինչպես օրինակ ամուսնական պայմանագիրը կամ ալիմենտի վճարման վերաբերյալ համաձայնությունը պիտի կարգավորվի ընտանեկան իրավունքի նորմերով:

2. Փոխնակ մայրության պայմանագրի տարրերը.

Փոխնակ մայրության պայմանագրի՝ որպես հասարակական որոշակի խումբ հարաբերությունները կարգավորող ինստիտուտի տարրերը կազմում են օբյեկտը, սուբյեկտը և բովանդակությունը: Նույն դիրքորոշումը արտահայտել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը իր որոշումներից մեկում, որտեղ փաստում է, որ ինչպես ցանկացած հարաբերություն, այնպես էլ իրավական նորմերի միջոցով կարգավորվող հասարակական հարաբերությունը՝ իրավահարաբերությունը, որոշակի փոխկապակցված տարրերի (սուբյեկտ, օբյեկտ և բովանդակություն) ամբողջություն (համակարգ) է, որոնց բովանդակային-որակական տարբերությունը հնարավորություն է տալիս իրավահարաբերությունները տարանջատելու միմյանցից¹:

Փոխնակ մայրության պայմանագրի առարկայի մեջ փոխնակ մոր և երեխայի (էմբրիոն, նորածին) առողջության հարցը որևէ կերպ ներառված չէ, որը, ըստ որոշ հեղինակների, օրինակ՝ Լ.Բ. Սիտդիկովի, հանգեցնում է նրան, որ պայմանագիրը կորցնում է իր առանձնահատկությունը²: Հարկ է նշել, որ փոխնակ մայրության մասին պայմանագրի կնքումը կարևոր նախապայման է բոլոր կողմերի իրավունքների և իրավական շահերի պահպանման համար: Փոխնակ մոր և նրա ծառայության հա-

¹ Տե՛ս թիվ ՎԴ/0830/05/14 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016թ. որոշումը:

² Տե՛ս **Ситдикова Л.Б.** Проблемы установления родительских прав при использовании суррогатного материнства // Актуальные проблемы российского законодательства. 2014. № 8, էջ 107-117:

մար դիմած անձանց միջև հարաբերությունների կառուցումն ու զարգացումը կախված են այն բանից, թե որքան խելամիտ է կազմված պայմանագիրը:

Փոխնակ մայրության պայմանագիրը տարբերվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ պայմանագրերից և, մեր կարծիքով, չի կարող դասվել քաղաքացիական պայմանագրերի թվին: Փոխնակ մայրության պայմանագրով դիտարկվում են նորածին երեխայի, երեխայի համար փոխնակ մորը դիմած անձանց, փոխնակ մոր, փոխնակ մոր ամուսնու իրավունքները:

Փոխնակ մայրության պայմանագիրը կարգավորում է երկու տիպի իրավահարաբերություններ՝ ածնական ոչ գույքային և դրանց հետ կապված գույքային հարաբերություններ (միայն հատուցելի պայմանագրի կնքման դեպքում): Այս առումով ուրոշ հեղինակները գտնում են, որ պայմանագրից ծագող գույքային հարաբերությունները ամենամոտն են ծառայությունների մատուցման պայմանագրին¹:

Փոխնակ մայրության պայմանագրի բովանդակությունը պիտի ներառի կողմերի իրավունքների և պարտականությունների հետ կապված այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝

➤ ինչպիսի՞ նյութական մասնակցություն պիտի ունենան պատվիրատու ծնողները փոխնակ մոր նկատմամբ հղիության ընթացքում,

➤ ինչպիսի՞ համագործակցություն պիտի նրանք ունենան,

➤ ի՞նչ պարբերականությամբ է փոխնակ մայրը պարտավոր հղիության ընթացքի մասին տեղեկություններ տրամադրել կենսաբանական ծնողներին,

➤ առողջական խնդիրների ի հայտ գալու ժամանակ պարտավոր են արդյոք ծնողները փոխհատուցել վնասը,

➤ ի՞նչ պատասխանատվություն պիտի ունենան փոխնակ մայրը և բժշկական կազմակերպությունը, երբ հղիությունը չի ավարտվում առողջ երեխայի ծնունդով,

➤ համաձայնում են արդյոք կողմերը փոխնակ մոր գաղտնիության շուրջ:

Սրանք դեռևս մասն են այն հարցերի, որոնք առաջանում են փոխնակ մայրության պայմանագրի կնքումից հետո և կարգավորված չեն ՀՀ օրենսդրությամբ:

Փոխնակ մոր ծառայությունների էությունը այն է, որ կողմերից մեկը՝ փոխնակ մայրը, համաձայնում է իրականացնել մյուս կողմի՝ պատվիրատու ծնողների պահանջները, այն է՝ անցնել բջջի իմպլանտացիայի գործընթացը, կրել այն բարենպաստ պայմաններում և երեխայի ծնվելուց հետո վերջինիս հանձնել ծնողներին, իսկ նրանք պարտավորվում են փոխնակ մորը վարձատրել պայմանագրի իրականացումից հետո: Քանի որ պայմանագիրը ստեղծում է իրավահարաբերություն կողմերի միջև, բայց չի երաշխավորում վերջնական արդյունքը, այսինքն՝ երեխայի հանձնումը, այս պայմանագիրը պատկանում է ավատորային (ռիսկային) պայմանագրերի կատեգորիային: Փոխնակ մայրության պայմանագիրը կնքելիս կողմերը հաստատապես չգիտեն, թե որքան բարեհաջող կանցնի հղիությունը, չկա որևէ երաշխիք, որ կծնվի առողջ երեխա, նաև չկա երաշխիք, որ կողմերը կկատարեն իրենց պարտավորությունները: Թեև, թեք փոխնակ մայրը անցել է ձվաբջջի արհեստական բեղմնավորման գործընթացը, կրում է նրան, ապահովում է ներարգանդային կյանքի համար նպաստավոր պայմաններ, ապա անգամ ծրագրի անհաջող ավարտի դեպքում ծառայությունը համարվում է մատուցված: Այդ դեպքում ծառայությունը՝ սաղմնավորումը, պտղի կրելը, բարենպաստ ներարգանդային կյանքի պայմանների ապահովումը, համարվում է իրականացված: Փոխնակ մայրության պայմանագիրը դասակարգվում է կոնսենսուալ պայմանագրերի ցանկին, քանի որ այն կնքված է համարվում կողմերի միջև էական նշանակության պայմանների շուրջ համաձայնությունից հետո: Պայմանագիրը համարվում է երկկողմ, քանի որ կողմերից յուրաքանչյուրը ստանձնում է թե՛ իրավունք, թե՛ պարտականություն: Ինչպես ամուսնական զույգը, այնպես էլ փոխնակ մայրը համարվում են պայմանագրի կող-

¹ Տե՛ս Пестрикова А.А. Гражданское право, N 2, 2006, էջ 16:

մերը, որոնք միմյանց նկատմամբ ունեն իրավունքներ և պարտավորություններ: Պայմանագիրը կարող է լինել և՛ հատուցելի, և՛ անհատույց: Առաջին դեպքում փոխնակ մայրը իրավունք ունի ստանալ վարձատրություն իր մատուցած ծառայությունների համար անկախ այն հանգամանքից, թե ինչպես է ընթացել բջի իմպլենտացիայի գործընթացը, գումարը ենթակա է վճարման: Եթե, օրինակ, պայմանագրով նախատեսվածի համաձայն՝ փոխնակ մայրը կատարել է իր պարտավորությունները, սակայն երեխան խնդիրներով է ծնվել, ապա փոխնակ մորը, միևնույն է, վարձատրում են ծառայության դիմաց: Փոխնակ մայրության պայմանագրի հատուցելիությունը չպետք է հանգեցնի նրան, որ փոխնակ մայրությունը դիտարկվի շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեություն, և այդպիսով խաթարվի այն ամբողջ տրամաբանությունը, որը դրված է փոխնակ մայրության ինստիտուտի թույլատրման հիմքում: Ներկայումս այս հարցը բավականին խնդրահարույց է, քանի որ եթե փորձենք համացանցային հարթակով որոնել փոխնակ մայր, ապա անմիջապես կտեսնենք բազմաթիվ հայտարարություններ, որով առաջարկվում է բարձր հոնորարով դառնալ փոխնակ մայր: Սա, մեր կարծիքով, անթույլատրելի է, և ուղղակի պետք է արգելվեն փոխնակ մոր ծառայությունների գովազդումը և այն որպես առևտրային գործունեություն ազատորեն դիտարկելը: Կարծում ենք, որ որպես խնդրի լուծում ՀՀ առողջապահության նախարարությունում կարող է ստեղծվել տեղեկատվական բանկ, որտեղ կհաշվառվեն բոլոր այն անձինք, ովքեր ցանկանում են դառնալ փոխնակ մայր, բոլոր բժշկական հաստատությունները, որոնք այս ոլորտում մատուցում են համապատասխան ծառայություններ և այդպիսով դիմելով նախարարություն՝ կենսաբանական ծնողները հեշտությամբ կարող են գտնել և՛ բժշկական հաստատությունների և՛ փոխնակ մայրերի տվյալները: Վերոնշյալ ստորաբաժանումը կարող է հաշվառել բոլոր այն անձանց, ովքեր մեկ անգամ արդեն իսկ հանդիսացել են փոխնակ մայր՝ բացառելով այն հավանականությունը, որ մեկ անձը կարող է մի քանի անգամ հանդես գալ փոխնակ մայր՝ այն դարձնելով առևտրային գործունեություն: Փոխնակ մոր չփոխհատուցվող ծառայությունը չի ենթադրում որևէ վճարում և իրականացվում է ոչ առևտրային հիմունքներով: Մինչդեռ հատուցելի ծառայության դիմաց կնքվող պայմանագրի և փոխնակ մայրության պայմանագրի տարբերությունը այն է, որ վերջինս կարող է իրականացվել նաև անվճար հիմունքներով, ինչն էլ բացառում է որոշ հեղինակների առաջ քաշած այն պնդումը, որ փոխնակ մայրության պայմանագիրը հատուցելի գործարք է: Տ.Ե. Բորիսովայի կարծիքով՝ փոխնակ մոր հատուցելի ծառայության պայմանագիրը չի կարող դասվել քաղաքացիաիրավական պայմանագրերի դասին, իսկ անհատույց պայմանագիրը՝ այլ դասի: Նույնիսկ այն դեպքում, երբ անհատույց փոխնակ մայրության ծառայությունների քանակը զգալիորեն քիչ է, սխալ կլիներ դրանք առհասարակ անտեսել: Այն դեպքում, երբ փոխնակ մայրը չի ակնկալում որևէ եկամուտ, միևնույն է, հնարավոր են այնպիսի խնդիրներ, որոնք անհրաժեշտ կլինի լուծել պայմանագրի համաձայն: Այդ պատճառով սխալ կլիներ փոխնակ մայրության պայմանագիրը դասել հատուցելի պայմանագրերի դասին, իսկ նրա մյուս հատվածը թողնել առանց ուշադրության: Փոխնակ մայրության պայմանագիրը երկկողմ է: Պայմանագրի կողմերն են փոխնակ մայրը և կենսաբանական ծնողները: Միջդեռ այս տեսակետը ոչ բոլոր մասնագետներն են կիսում: Այլ հեղինակներ, օրինակ՝ Ա.Ն. Չապլիգինը, համարում են, որ փոխնակ մայրության պայմանագիրը պետք է լինի բազմակողմ¹: Բացի փոխնակ մորից և մասնակից ծնողներից, պայմանագրի կողմ պիտի հանդիսանան նաև փոխնակ մոր ամուսինը, գործընթացն իրականացնող բժիշկը, հոգեբանը, հոգեբույժը, ծննդագնություն իրականացնող բուժաշխատողները, պետական կառա-

¹ St'u Вестник Краснодарского Университета Мвд России, 2014 № 4 (26) էջ 31: **Г.А. Владимирович, А.А. Юрьевна**, «Проблемы суррогатного материнства по российскому законодательству». <https://cyberleninka.ru/article/n/problemy-surrogatnogo-materinstva-po-rossijskomu-zakonodatelstvu/viewer>

վարման կամ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք տեղեկացված են գործընթացի մասին և կարող են հանդես գալ կոնֆլիկտային իրավիճակները շտկելիս: Կոզլովսկայան գտնում է, որ բացի ծնողներից և փոխնակ մորից, մասնակիցների թվի մեջ պետք է ներառել նաև բժիշկ-մանկաբարձին, որպեսզի ամուսնական զույգը տեղեկանա հղիության ընթացքի մասին¹: Մեր կարծիքով՝ պետք է պայմանագրով նախատեսել փոխնակ մոր կողմից զույգերին տեղեկատվության տրամադրումը հղիության ընթացքի մասին, որն ստացվել է բժշկական հաստատությունում հետազոտությունների ժամանակ, որն էլ կբացառի բժիշկ-մանկաբարձի՝ որպես կողմ պայմանագրում հանդես գալը: Ե.Վ. Միտրյակովայի կարծիքով փոխնակ մայրության պայմանագիրը պետք է կնքվի փոխնակ մոր, ամուսնական զույգերի, բժշկական հաստատության միջև, որն իրականացնելու է բժշկական միջամտություն: Մեր կարծիքով՝ այս տեսակետը չի ընդգրկում ընտանեկան իրավունքը, քանի որ վերջինս կանոնակարգում է ֆիզիկական անձանց միջև հարաբերությունները:

Ելնելով վերոգրյալից՝ փոխնակ մոր և ամուսնական զույգերի, ինչպես նաև փոխնակ մոր և բժշկական հաստատության կողմից պետք է կնքել առանձին պայմանագրեր: Այսինքն, փոխնակ մոր, բժշկական հաստատության և պատվիրատու ծնողների միջև պիտի կնքվի վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման մասին պայմանագիր, որի տիպային տարբերակը հաստատված է ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1395-Ն որոշմամբ², որը ուժի մեջ է մտել 2017 թվականի նոյեմբերի 25-ին «ԴՆԹ-ի որոշման (ներառյալ՝ նմուշառման) կարգը և ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մարտի 9-ի N 351-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշմամբ, սակայն պիտի կարգավորի միայն այնպիսի հարցեր, որոնք առնչվում են բեղմնավորմանը և զուտ բժշկական միջամտությանը: Մնացածը՝ ըստ էության փոխնակ մայրությունը, չի առնչվում բժշկական գործունեության հետ: Հետևաբար, փոխնակ մայրության պայմանագիրը նպատակահարմար է կնքել փոխնակ մոր և ամուսնական զույգերի միջև:

Քանի որ գործ ունենք երեխայի լավագույն շահի պաշտպանության հետ, պայմանագրի էական պայմանները պիտի իմպերատիվ սահմանվեն Օրենքով և ներառեն հետևյալ տեղեկությունները.

1. պայմանագրի կողմերի տվյալների նույնականացումը,
2. ամբողջական անունը, իրավական և փաստացի բնակության հասցեն, պետական գրանցման համարը, իրավաբանական անձանց միասնական պետական գրանցամատյանում գրանցման ամսաթիվը, առողջապահական կազմակերպության գրանցման մարմնի անունը և հասցեն, որտեղ արհեստական բեղմնավորում է կատարվելու, բջջի իմպլանտացիային, հղիության ընթացքին վերաբերող տվյալներ,
3. պայմանագրի սկիզբը և ավարտը,
4. փոխնակ մոր կողմից ծառայությունների մատուցման արժեքը,
5. պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
6. կողմերի կողմից հաշվետվությունների իրականացման կարգը,
7. կողմերի կողմից պարտականությունների կատարման կարգը,
8. ինքնաբեր վիժման, ոչ առողջ կամ մահացած երեխայի ծնվելու հետևանքները,

¹ Տե՛ս **Козловская А.Э.**, <<Правовые аспекты суррогатного материнства>>, Гражданское право, 2006, N2, էջ 27:

² Տե՛ս «ԴՆԹ-ի որոշման ներառյալ նմուշառման կարգը և ժամկետները սահմանելու և ՀՀ Կառավարության 2006 թվականի մարտի 09-ի N 351-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում (26.10.2017թ.) ՀՀՊՏ 2017.11.15/67 (1342) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=117151>

9. փոխնակ մոր կողմից հղիության արհեստական ընդհատման պատասխանատվությունը,

10. կողմերի կողմից պարտավորությունների թերի իրականացման կամ խախտման պատասխանատվությունը,

11. պայմանագրի խախտման հիմնավորումը և հետևանքները,

12. կողմերի կողմից համաձայնեցված այլ պարտավորություններ:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը և հիմնվելով սույն աշխատանքում կատարված վերլուծությունների վրա՝ առաջարկում ենք փոխնակ մայրության պայմանագիրը՝ որպես պայմանագրի առանձին տեսակ, նախատեսել Ընտանեկան օրենսգրքում, որը ավելի համապարփակ կանոնադաշտնա այս իրավահարաբերություններին և ավելի շատ կնախատեսի իմպերատիվ նորմեր, որը ուղղակիորեն բխում է իրավահարաբերության մասնակիցների իրավունքների պաշտպանության նկատմամբ պետության պատասխանատվությունից, քանի որ այս հարաբերությունները մենք չենք կարող դիտարկել զուտ մասնավոր, որտեղ պետությունը անելիք չունի, ավելին՝ այս պարագայում պետության ուղղակի պարտականությունն է հոգ տանել բոլոր կողմերի իրավունքների պաշտպանության մասին: Փոխնակ մայրության պայմանագրի նախատեսումը ՀՀ ընտանեկան օրենսգրքում միանգամայն տրամաբանական է, քանի որ այն կարգավորում է հատուկ հասարակական հարաբերություններ և կապված է առավելապես մոր ծնվող երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության հետ, և ինչպես, օրինակ, ամուսնական պայմանագիրը կամ ալիմենտի վճարման վերաբերյալ համաձայնությունը պիտի կարգավորվի ընտանեկան իրավունքի նորմերով:

Առաջարկում ենք նաև օրենսդրորեն սահմանել, որ փոխնակ մայրության ծառայությունների գովազդելը՝ տեղեկատվության տարածման որևէ ձևով և այն որպես առևտրային գործունեություն ազատորեն ներկայացնելը արգելվում են՝ նախատեսելով պատասխանատվության խիստ միջոցներ: Բացի այդ, կարծում ենք, որ անհրաժեշտ է ստեղծել հատուկ մարմին, որը հաշվառելու և վարելու է փոխնակ մայրերի ռեեստր՝ այդպիսով վերահսկողություն իրականացնելով այս գործընթացի նկատմամբ:

Համառոտագիր

Սույն աշխատանքում անդրադարձ է կատարվել փոխնակ մայրության պայմանագրի առանձնահատկություններին և իրավական բնույթին, մասնավորապես՝ փոխնակ մայրության պայմանագրին՝ որպես պայմանագրի առանձին տեսակ, պայմանագրի էական պայմաններին, ներպետական իրավական կարգավորումներին և առկա բացերին:

Հոդվածը նվիրված է ՀՀ օրենսդրությամբ ներդրված համեմատաբար մոր ինստիտուտի համալիր ուսումնասիրությանն ու վերլուծությանը: Քանի որ հայկական իրականության մեջ բացակայում են հայալեզու գրականությունն ու խորը իրավական վերլուծությունները, հոդվածի արդիականությունն անհերքելի է:

Հոդվածի նպատակն է իրազեկել հասարակությանը ներկայումս այդքան տարածված և օր օրի տարածվող ինստիտուտի հնարավոր իրավական խնդիրների և դրանց լուծումների մասին: Այն օգտակար կլինի պրակտիկ իրավաբանների և գործընթացն իրականացնող բժիշկների համար, որոնք հաճախ կիրառում են օրենքը՝ առանց իրապես պատկերացնելու հնարավոր ռիսկերը:

Հոդվածի մեջ ներկայացվել են կոնկրետ առաջարկություններ իրավական բացերի հաղթահարման և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ:

Բանալի բառեր- փոխնակ մայրության պայմանագիր; փոխնակ մայր; կենսաբանական ծնողներ; անպտղություն; սոմատիկ իրավունք:

CONCEPT AND ELEMENTS OF SURROGACY CONTRACT

Naira Artashesyan

*Prosecutor General's office of the RA,
Prosecutor of Department for Confiscation of Property of Illicit Origin,
Post-Graduate student at the YSU Chair of Civil Procedure
n.artashesyan@prosecutor.am
ORCID'0009-0004-8113-5165*

Abstract

In this article, the features and legal nature of the surrogacy contract were touched upon, in particular, the surrogacy contract as a separate type of contract, the essential terms of the contract, domestic legal regulations, existing contradictions and risks. The article is devoted to a comprehensive study and analysis of a relatively new institutional introduced by the legislation of the Republic of Armenia, and in this regard, there is also no Armenian-language literature and in-depth legal analysis. The article will also be useful for practicing lawyers and implementing doctors who often apply the law without a real idea of the possible risks. The article presents specific proposals for overcoming legal gaps and improving legislation.

Key words – *surrogacy contract; surrogate mother; biological parents; infertility; somatic law.*

ПОНЯТИЕ И ЭЛЕМЕНТЫ СУРРОГГИЧЕСКОГО КОНТРАКТА

Наира Арташесян

*Прокурор управления по делам конфискации имущества, имеющего незаконное происхождение Генеральной прокуратуры РА,
Аспирант кафедры гражданского процесса ЕГУ
n.artashesyan@prosecutor.am
ORCID'0009-0004-8113-5165*

Абстракт

В данной работе были затронуты особенности и правовой характер договора суррогатного материнства, в частности договор суррогатного материнства как отдельный вид договора, существенные условия договора, внутригосударственные правовые регулирования и существующие пробелы и риски. Статья посвящена комплексному изучению и анализу относительно нового института, введенного законодательством РА, в связи с чем также отсутствует армяноязычная литература и глубокие правовые анализы. В этом плане актуальность статьи обеспечена. Цель статьи - проинформировать общественность о возможных правовых проблемах института, столь распространенного в настоящее время, и их решениях. Статья также будет полезна для практикующих юристов и для врачей, выполняющих процедуру, которые часто применяют закон без реального представления о возможных рисках. В статье были представлены конкретные рекомендации в направлении преодоления правовых пробелов и совершенствования законодательства.

Ключевые слова – *контракт суррогатного материнства; суррогатная мать; биологические родители; бесплодие; соматическое право.*

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԵՃԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ

Հենրիկ Խունդկարյան

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

Էլ. փոստ՝ henrik.khundkaryan@ysu.am

ORCID՝ <https://orcid.org/0000-0002-9335-1007>

Ներածություն

Վիճելի իրավահարաբերության բնույթը ճիշտ որոշելը չափազանց կարևոր է հարաբերություններից բխող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում՝ պարտականությունների բացահայտման, հարաբերությունների դադարման (դադարեցման) կարգի որոշման, ինչպես նաև համապատասխան հարաբերությունների իրականացման ընթացքում ծագող վեճերի լուծման պատշաճ ընթացակարգերի որոշման առումով: Վերոգրյալի ճիշտ բացահայտումը նույնիսկ որոշ դեպքերում անհրաժեշտ է առաջացած վեճի լուծման տեսանկյունից իրավասու դատարանը պարզելու համար:

Հայաստանի Հանրապետությունում իրավահարաբերության բնույթը պարզելու տեսանկյունից հաճախ առաջացող խնդիրներից է աշխատանքային և կորպորատիվ վեճերի տարբերակումը: Տվյալ խնդիրը հիմնականում դրսևորվում է այն պարագայում, երբ անհրաժեշտ է լինում պարզել՝ արդյոք կազմակերպության և կազմակերպության տնօրենի միջև վերջինիս լիազորությունների դադարեցման համատեքստում ծագող վեճը աշխատանքային բնույթ է կրում, թե՛ ոչ, և արդյոք կազմակերպության տնօրենը տվյալ իրավիճակում պետք է օգտվի ՀՀ աշխատանքային օրենսգրքով աշխատողի համար նախատեսված երաշխիքներից, թե՛ ոչ:

Սույն հետազոտությունը նվիրված է կազմակերպության տնօրենի լիազորությունների դադարեցման հետ կապված վեճերի որակման առանձնահատկությունների բացահայտմանը, ինչպես նաև տվյալ հարցի վերաբերյալ ՀՀ և օտարերկրյա դատական արակտիկայի քննությանը:

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ ՀՀ բարձրագույն դատական ատյանը վերոնշյալ խնդրի վերաբերյալ հայտնել է հակասական դիրքորոշումներ, և անհրաժեշտ է բացահայտել կազմակերպության տնօրենի առանձնահատուկ կարգավիճակի էությունը:

Հետազոտության կատարման համար հիմք են հանդիսացել գիտական ուսումնասիրության որոշակի ընդհանուր մեթոդներ, ինչպիսիք են դիալեկտիկական, տրամաբանական, քննադատական, վերլուծական, համակարգային-կառուցվածքային մեթոդները: Բացի վերոնշյալից հետազոտության կատարման ժամանակ կիրառվել են գիտական ուսումնասիրության մասնավոր մեթոդները՝ ձևական-տրամաբանական, իրավական նորմերի քերականական, տրամաբանական, համակարգային մեկնաբանման մեթոդները: Հետազոտությունում լայնորեն կիրառվել է համեմատական-իրավական մեթոդը:

Աշխատանքային և կորպորատիվ վեճերի տարբերակումը՝ ելնելով կազմակերպության տնօրենի կարգավիճակի առանձնահատկություններից

Հաճախ արակտիկայում խնդրահարույց է լինում որոշել, թե կազմակերպության և կազմակերպության տնօրենի միջև վերջինիս լիազորությունների դադարեց-

ման համատեքստում ծագող վեճը աշխատանքային բնույթ է կրում, թե՛ ոչ, և արդյոք կազմակերպության տնօրենը տվյալ իրավիճակում պետք է օգտվի ՀՀ աշխատանքային օրենսգրքով աշխատողի համար նախատեսված երաշխիքներից, թե՛ ոչ: Քննարկվող խնդրի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների ընդհանրացումը թույլ է տալիս պնդել, որ իրավահարաբերության բնույթը պարզելու և ձիշտ որոշելու հիմնախնդիրներն արդիական են դատական պրակտիկայում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է վերոնշյալ իրավահարաբերությունների տարանջատման խնդրին, որոնց ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումների՝ կազմակերպության տնօրենը համարվում է աշխատող, սակայն չի օգտվում աշխատողի ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարևորագույն երաշխիքներից մեկից, այն է՝ աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունքից:

ՀՀ վճռաբեկ դատարանը իր որոշումներից մեկում, անդրադառնալով բաժնետիրական ընկերության տնօրենի պայմանագրի լուծման որոշման մեջ պատճառաբանություն պարունակելու հարցին, նշել է, որ ընկերության տնօրենի հետ պայմանագիրը լուծելու վերաբերյալ համապատասխան մարմնի որոշումը **կարող է չպարունակել որևէ պատճառաբանություն**, ինչը ևս բխում է տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության սկզբունքից, քանի որ այդպիսի որոշում կայացնելու դրդապատճառները կարող են կապված լինել, օրինակ, առևտրային գաղտնիքի կամ նոու-հաուի (know-how) հետ (*տե՛ս Կարինե Տիտանյանն ընդդեմ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի թիվ ԵԿԴ/1896/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը*):

Մեկ այլ գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կազմակերպության ընդհանուր ժողովն օժտված չէ տնօրենի պայմանագիրը լուծելու անսահմանափակ ազատությամբ և հայեցողությամբ: Այս հարցում ընդհանուր ժողովի անսահմանափակ հայեցողությունը կարող է հանգեցնել տնօրենի նկատմամբ օրենքի կամայական, խտրական կիրառմանը կամ ընդհանուր ժողովի կողմից պայմանագիրը լուծելու իրավունքի չարաշահմանը: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տնօրեն Մինասյանի հետ պայմանագիրը լուծելու հրամանում նշված չի եղել հրամանը կայացնելու համար առիթ հանդիսացած փաստական հիմքը, ինչն ինքնին բավարար է՝ հրամանն անվավեր ճանաչելու համար (*տե՛ս Արա Մինասյանն ընդդեմ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի թիվ ԵԴ/18568/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.04.2022 թվականի որոշումը*):

Այսպիսով, մի դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանն անուղղակի կերպով արձանագրել է, որ կազմակերպության տնօրենի և կազմակերպության միջև աշխատանքային հարաբերություններ չեն ծագում, և կազմակերպության տնօրենի հետ պայմանագիրը լուծելու վերաբերյալ համապատասխան մարմնի որոշումը կարող է չպարունակել որևէ պատճառաբանություն, իսկ մյուս դեպքում կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Առանձին աշխատանքային վեճերով վարույթը» վերտառությամբ 24-րդ գլխով նախատեսված իրավակարգավորումները՝ անուղղակի կերպով արձանագրել է, որ կազմակերպության տնօրենի և կազմակերպության միջև ծագում են աշխատանքային հարաբերություններ, և կազմակերպության տնօրենի հետ պայմանագիրը լուծելու հրամանում այն կայացնելու համար առիթ հանդիսացած փաստական հիմքի բացակայությունն ինքնին բավարար է հրամանն անվավեր ճանաչելու համար:

Այսպիսով, պարզ է դառնում, որ նախ առանց միմյանց հղում կատարելու կամ բացառություններ սահմանելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Առանձին աշխատանքային վեճերով վարույթը» վերտառությամբ 24-րդ գլուխը ՀՀ աշխատանքային օրենսգրքի «Աշխատանքային վեճի հասկացությունը» վերտա-

ռությամբ 263-րդ հոդվածի համատեքստում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում են տարբեր իրավակարգավորումներ՝ կապված աշխատողի (այդ թվում նաև՝ իրավաբանական անձի տնօրենի) հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման (լիազորությունների դադարեցման) վերաբերյալ վեճերի քննության տեսանկյունից: Բացի այդ, համապատասխան իրավահարաբերությունների կարգավորման ոլորտում առկա են որոշակի հակասություններ և անհստակություններ, որոնք արտացոլվել են վերոնշյալ նախադեպային որոշումների վերլուծություններում:

Այսպիսով, գործնական խնդիրները, որոնք ծագում են վերոնշյալ իրավական նորմերի կարգավորման օբյեկտի նմանության համատեքստում, ամբողջանում են հետևյալ իրավական հարցադրումներում.

1. արդյո՞ք իրավաբանական անձի տնօրենի լիազորությունների դադարեցման հետ կապված վեճերն իրենց բնույթով աշխատանքային վեճեր են, թե՞ ոչ,

2. արդյո՞ք իրավաբանական անձի տնօրենի լիազորությունների դադարեցման (աշխատանքային պայմանագրի լուծման) հետ կապված վեճի որակումից փոփոխվում է համապատասխան սուբյեկտի իրավական վիճակը, թե՞ ոչ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 263-րդ հոդվածում բացահայտվում է անհատական աշխատանքային վեճի հասկացությունը, ըստ որի՝ *աշխատանքային վեճը աշխատողի կամ տվյալ գործատուի հետ նախկինում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնված աշխատողի և գործատուի միջև տարածայնությունն է, որն առաջանում է կամ առաջացել է աշխատանքային օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, ներքին իրավական ակտերով, աշխատանքային կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված իրավունքների և պարտականությունների կատարման ժամանակ:*

Վերոգրյալ իրավանորմի վերլուծությունից եզրահանգում ենք, որ իրավական վեճն աշխատանքային բնույթի որակելու համար անհրաժեշտ է մի քանի հատկանիշների համակցված առկայությունը.

1. «անհատական աշխատանքային վեճը» կարող է առաջանալ աշխատանքային հարաբերությունների համապատասխան սուբյեկտների (աշխատողի և գործատուի) միջև,

2. տարածայնությունը պետք է կապված լինի աշխատանքային հարաբերությունների իրականացման կամ դադարման հետ:

Գտնում ենք, որ որևէ հարաբերություն կարող է աշխատանքային բնույթ ունենալ, եթե այն բավարարում է որոշակի չափանիշների:

Այսպես, Աշխատանքի համաշխարհային կազմակերպության 2006 թվականի թիվ 198 հանձնարարականի 12-րդ և 13-րդ կետերի համակցված ուսումնասիրությունից բխում է, որ սահմանվել են աշխատանքային հարաբերությունները քաղաքացիաիրավական այլ հարաբերություններից տարբերակելու որոշակի չափանիշներ, որոնցից անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հետևյալներին.

Հարաբերությունն աշխատանքային բնույթ ունի, եթե, ի թիվս այլնի, այն բավարարում է հետևյալ չափանիշները՝

1. *եվրոպական բոլոր երկրներում հարաբերությունները կամ պայմանագիրն աշխատանքային բնույթի որակելու համար հիմնական չափանիշն այն է, որ մի անձը պետք է ենթակա կամ կախյալ լինի մյուսից,*

2. *ենթակայության հիմնական ցուցիչներից մեկը հսկողությունն է, այսինքն՝ աշխատողին աշխատանքային գործընթացի փոփոխվող կարիքներին համապատասխան ուղղորդելու իրավունքը,*

3. *աշխատուժի մեջ ինտեգրվելու չափանիշը, որի առանձնահատկություններից է նաև այն, որ անհատը չի կրում ուղղակի ֆինանսական ռիսկեր, եթե գործատուի գործունեությունը դառնում է ավելի քիչ եկամտաբեր:*

Այսպիսով, անհրաժեշտ ենք համարում հստակեցնել վերոնշյալ չափանիշները և անդրադառնալ դրանց Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության համատեքստում:

Ենթակայության և հսկողության իրավական տարրերը կարևորագույն նշանակություն ունեն իրավահարաբերությունն աշխատանքային բնույթի որակելու համար: Ֆինլանդիայի Գերագույն դատարանն իր թիվ 1999:113 որոշմամբ հայտնել է այն դիրքորոշումը, որ աշխատանքային հարաբերությունների ամենակարևոր տարրը գործատուի՝ աշխատողին ուղղորդելու և վերահսկելու իրավունքն է: Վերահսկողությունը դրսևորվում է անձնական և գործառական հրահանգներ տալու միջոցով: Անձնական հրահանգները նպատակ ունեն որոշել, թե որտեղ և երբ պետք է կատարվի աշխատանքը և, հնարավոր է, նույնիսկ կարգավորեն աշխատողի վարքագիծն աշխատավայրում: Գործատուի՝ ինչպես անձնական, այնպես էլ գործառական հրահանգներ տալու և դա շարունակաբար անելու լիազորությունը հաճախ աշխատանքային հարաբերությունների առկայությունը որոշելու հիմնական տարրն է¹:

Աշխատանքային օրենսդրության հիմնական նպատակն է նպաստել աշխատանքի անվտանգությանը և զբաղվածության շարունակականությանը, ապահովել ընկերության աշխատակիցների շահերի պաշտպանությունը, իսկ կորպորատիվ օրենսդրությունն ավանդաբար ավելի շատ վերաբերում է ընկերության բաժնետերերի շահերին: Տնօրեններից պահանջվում է բարեխիղճ գործել՝ ելնելով ընկերության լավագույն շահերից: «Ընկերության» լավագույն շահերը սահմանելիս տնօրեններն ավանդաբար իրավասու են (նույնիսկ պահանջվում է) կենտրոնանալ հիմնականում ընկերության բաժնետերերի շահերի վրա²: Իրավաբանական անձի գործադիր մարմինը հաճախ ընկալվում է որպես անհատ, որը ոչ միայն կանգնած է իրավաբանական անձի աշխատակիցների բուրգի վերնամասում, այլ նաև ապահովում է համապատասխան իրավաբանական անձի բարձրագույն մարմնի «քաղաքական» և առևտրային որոշումների կատարումը: Տնօրենից պահանջվում է ողջամիտ քայլերի միջոցով այնպիսի դիրքում հայտնվել, որի շնորհիվ նա կուղղորդի և կվերահսկի կազմակերպության ղեկավարումը³: Ի տարբերություն աշխատանքային հարաբերությունների, երբ կատարված աշխատանքի պատշաճության հիմքն աշխատանքի որակն է, կազմակերպության տնօրենի աշխատանքի դեպքում վերջինիս գործունեության պատշաճության հիմքում առավելապես ընկած է կատարված աշխատանքի արդյունքը, որի գնահատականի հասցեատերն ընկերության բարձրագույն մարմինն է: Կազմակերպության տնօրենի գործունեության այս առանձնահատկությունը հաստատվում է նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորմամբ, որի համաձայն՝ «*Ժողովի որոշմամբ Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները պայմանագրով կարող են տրվել առևտրային կազմակերպության (կառավարող կազմակերպության) կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի)*», ինչպես նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի (գ) կետով, ըստ որի՝ «*Ընդհանուր ժողովի բացառիկ լիազորություններն են (...) ինչպես նաև ընկերության գործադիր մարմնի լիազորություններն առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ կառավարիչ) տալու հարցեր*»: Վերոնշյալի տրամաբանության ներքո պարզ է դառնում, որ կազմակեր-

¹ St'u Regulating the employment relationship in Europe: a guide to Recommendation No. 198 / International Labour Office, Governance and Tripartite Department. - Geneva: ILO, 2013, էջ 38,39:

² St'u Bps Van Eck and S Lombard "Dismissal of executive directors: comparing principles of company law and labour law":

³ St'u the case of ASIC v. Healey and Ors, the decision of the Federal Court of Australia No. 717 dated 27.06.2011:

պությունները և անհատ ձեռնարկատերերը քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության գործադիր մարմնի լիազորությունների իրականացման համատեքստում ծառայություններ կարող են մատուցել այլ կազմակերպությունների, ինչը բացառում է նմանատիպ հարաբերությունների աշխատանքային բնույթի որակումը, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառնություններ (...))», իսկ նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Աշխատողը սույն օրենսգրքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է (...))»: Այսպիսով, եթե ընկերության այլ աշխատակիցները պատասխանատվություն չեն կրում կատարված աշխատանքի արդյունքում ընկերության ցուցաբերած արդյունքների համար, ապա գործադիր մարմնի ղեկավարն անմիջական պատասխանատվություն է կրում, և կազմակերպության բարձրագույն մարմնի իրավաչափ սկնկալիքների պաշտպանության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հարկավոր է վերջիններիս հնարավորություն ընձեռել օպերատիվ կերպով հաղթահարել ընկերության առջև ծառացած մարտահրավերներն ընկերության քաղաքականության փոփոխման միջոցով: Կազմակերպության տնօրենը պատասխանատու է կազմակերպության բարձրագույն մարմնի առջև իրականացված գործունեության արդյունքի համար և ոչ թե իր կողմից իրականացվող աշխատանքային պրոցեսի համար, և քայլերի ողջամտությունն ու արդյունավետությունը կարող են գնահատվել իրականացված գործունեության արդյունքում ձևավորված արդյունքի գնահատման միջոցով, այլ ոչ թե աշխատանքային բուն պրոցեսի գնահատման միջոցով, ինչի մասին է վկայում նաև Սահմանադրական դատարանի 28.10.2016 թվականի թիվ ՍԴՈ-1316 որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, ըստ որի՝ «ի տարբերություն աշխատանքի շուկայում առկա այլ իրավահարաբերությունների, որտեղ, որպես կանոն, կատարված աշխատանքի գնահատման չափանիշն աշխատանքի որակն է, բաժնետիրական ընկերությունների միանձնյա գործադիր մարմնի կամ կոլեգիալ գործադիր մարմնի անդամների աշխատանքի գնահատականը հիմնականում կատարված աշխատանքի արդյունքն է, որի գնահատողն ընկերության բաժնետերերն են (...): «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում որևէ հատուկ կարգավիճակ որևէ աշխատակցի համար, սակայն տնօրենի աշխատանքից ազատման առնչությամբ օրենքի 88-րդ հոդվածում ամրագրված իրավասության բնույթից հետևում է, որ այստեղ առկա է հատուկ կարգավիճակի ինստիտուտ: Ի դեպ, նույնը վերաբերում է նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքին»:

Այսպիսով, գտնում ենք, որ կազմակերպության տնօրենի և կազմակերպության միջև ծագող հարաբերություններն առնչվում են ոչ թե կատարվող աշխատանքի պրոցեսի որակին, այլ աշխատանքի արդյունքին, միաժամանակ, աշխատանքային իրավահարաբերության օբյեկտը, այն է՝ կատարվող կենդանի աշխատանքը կամ աշխատանքի բուն պրոցեսը, սույն հարաբերությունների կարգավորման ոլորտում առկա չէ:

Ինչ վերաբերում է կազմակերպության տնօրենի կողմից ուղղակի ֆինանսական ռիսկեր կրելու հանգամանքին, ինչը նույնպես աշխատանքային հարաբերությունները բացառող հանգամանք է, ապա գտնում ենք, որ այդ հանգամանքի մասին է խոսում, օրինակ՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի՝ «Խորհրդի անդամները, Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը), վարչության ու տնօրինության անդամները, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպությունը և կառավարիչն ու օրենքով սահմանված այլ անձինք Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար՝ Օ-

րենսգրքով, սույն օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով: (...) Խորհրդի կամ Ընկերության տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների հրաժարականը, պաշտոնից հետ կանչելը կամ ազատելը չի ազատում նրանց՝ Ընկերությանը պատճառած վնասի համար պատասխանատվությունից», ինչպես նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի՝ «Ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմինը պատասխանատվություն են կրում ընկերությանն իրենց մեղքով պատճառված վնասների համար, եթե օրենքներով պատասխանատվության այլ հիմքեր և չափեր նախատեսված չեն»: Իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 239-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ աշխատողների դեպքում ուղղակի ֆինանսական ռիսկ առաջանում է մեղքի տեսանկյունից, միայն եթե աշխատողը վնասը պատճառել է մեղքի ձև հանդիսացող դիտավորությամբ:

Վերոնշյալի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ իրավաբանական անձի կողմից «կատարված» Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված իրավախախտման պարագայում որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ ենթակա է պատասխանատվության իրավաբանական անձի ղեկավարը: Վերոնշյալը պայմանավորված է նաև կազմակերպության տնօրենի հատուկ կարգավիճակով, ինչը կրկին վկայում է իրավաբանական անձի «կատարած» արարքի համար տնօրենի ուղղակի ֆինանսական ռիսկի առկայության մասին:

Այսպիսով, պարզ է դառնում, որ կազմակերպության տնօրենի և կազմակերպության միջև առաջացող հարաբերություններում բացակայում են աշխատանքային հարաբերությունների հատկանիշներ համարվող ենթակայության, վերահսկողության և ֆինանսական ուղղակի ռիսկի բացակայության հատկանիշները, որով էլ պայմանավորվում է կազմակերպության տնօրենի հատուկ կարգավիճակը:

Ինչ վերաբերում է նրան, թե արդյո՞ք իրավաբանական անձի տնօրենի լիազորությունների դադարեցման (աշխատանքային պայմանագրի լուծման) հետ կապված վեճի որակումից փոփոխվում է համապատասխան սուբյեկտի իրավական վիճակը, թե՞ ոչ, ապա անհրաժեշտ ենք համարում նշել հետևյալը.

Համապատասխան վեճի որակման հիմքում ընկած է իրավահարաբերության բնույթը, իսկ վերջինիս բացահայտման համար, ի թիվս այլնի, անհրաժեշտ պայման է համարվում իրավահարաբերության սուբյեկտների կարգավիճակը: Ըստ այդմ, ելնելով նաև իրավահարաբերության սուբյեկտների կարգավիճակից՝ իրավահարաբերության բնույթն է կանխորոշում տվյալ իրավահարաբերությունից բխող վեճերի որակումը, և ոչ թե հակառակը: Մինչդեռ համապատասխան իրավահարաբերությունը և դրանից բխող վեճն աշխատանքային բնույթի որակելն ինքնին պահանջում է իրավահարաբերության սուբյեկտներին տվյալ իրավահարաբերության բովանդակությանը համապատասխանող իրավունքների և պարտականությունների տրամադրում:

Կազմակերպության տնօրենի ֆիդուցիար պարտականությունները

Կազմակերպության տնօրենը, ի թիվս այլնի, ունի նաև ֆիդուցիար պարտականություններ, որը ևս մեկ ցուցիչ է վկայելու կազմակերպության տնօրենի հատուկ կարգավիճակի մասին:

Կազմակերպություններում սեփականատերերը իրենց գույքի նկատմամբ վերահսկողությունը հանձնում են կազմակերպությունը ղեկավարելու համար վարձված պրոֆեսիոնալ մենեջերներին (գործակալներին): Այսպիսով, կազմակերպության սեփականատերերը (մասնակիցները, բաժնետերերը և այլն)՝ պրինցիպալները, պասիվ սեփականատերեր են, ովքեր օգտվում են իրենց ներդրումներից ստացված օգուտներից՝ չմասնակցելով ընկերության կառավարմանը: Ընկերության տնօրենները՝ գործակալները, մյուս կողմից, պատասխանատու են ընկերության կառավար-

ման համար, սակայն ստանում են շահույթի մի փոքր մասը կամ ընդհանրապես ոչինչ¹: Տնօրենները դիտվում են որպես գործակալներ իրենց ընտրողի՝ կորպորատիվ իրավունքի սուբյեկտ հանդիսացող կազմակերպության համար²:

Հարկ ենք համարում նշել, որ բազմաթիվ պետությունների նախադեպային իրավունքից պարզ է դառնում, որ կազմակերպության տնօրենի և կազմակերպության միջև ծագող հարաբերությունները որակվում են որպես գործակալության պայմանագրից ծագող հարաբերություններ:

Օրինակ՝ Կոթանդարաման ընդդեմ Եկանտային հարկի հանձնակատարի գործով Հնդկաստանի Բարձր դատարանի 24.11.1965 թվականի որոշմամբ արձանագրվել է, որ Ընկերության տնօրենը ընկերության աշխատակից չէ: Ֆերգյուսոնն ընդդեմ Ուիլսոնի գործով ԱՄՆ Օկլահոմա նահանգի Գերագույն դատարանի 04.18.1939 թվականի որոշմամբ արձանագրվել է, որ տնօրեններն օրենքի տեսանկյունից համարվում են «Ընկերության գործակալներ»: Ընկերությունն օրենքով ստեղծված արհեստական անձ է և չի կարող ինքնուրույն գործել: Այն գործում է իր տնօրենների, այսինքն՝ ընկերության գործակալների միջոցով: Ֆաուրե Էլեկտրիկ Ակուիմենտոր կազմակերպության գործով էլ դատարանը նշել է, որ տնօրենները հանդիսանում են ընկերության գործակալներ, որոնք ունեն իրավասություններ և պարտականություններ՝ իրականացնելու իրենց գործունեությունը, որոնք ենթակա են օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված սահմանափակումների: Նրանց դերը՝ որպես **կազմակերպության գործակալ**, սահմանափակվում է իրենց վստահված լիազորություններով և պարտականություններով³: Թուրքիայի վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 07.07.2010 թվականի E. 2010/9-328, K. 2010/370 որոշման մեջ դատարանը հստակ արձանագրել է, որ տնօրենի և կազմակերպության միջև հարաբերությունները հիմնված են վստահված անձի պայմանագրի վրա, և, հետևաբար, **տնօրենը պետք է պատասխանատու լինի կազմակերպության առջև որպես կազմակերպության գործակալ**:

Այսպիսով, տարբեր դոկտրինալ աղբյուրներում և օտարերկրյա նախադեպային իրավունքում կազմակերպության և կազմակերպության տնօրենի միջև ծագող հարաբերությունները որակվում են որպես պրինցիպալ-գործակալ հարաբերություններ: Ավելին՝ վերոնշյալի մասին է վկայում նաև գործակալ-պրինցիպալ հարաբերություններում և կազմակերպության տնօրեն-կազմակերպություն հարաբերություններում ֆիդուցիար պարտականությունների համընկնումը:

Այսպես, գործակալության պայմանագրի համատեքստում գործակալ-պրինցիպալ հարաբերություններում գործակալն ունի որոշակի հավատարմագրային (ֆիդուցիար) պարտականություններ:

Դրանք են.

1. Շահերի բախումից խուսափելու պարտականություն.

Գործակալության էական տարրերից մեկը վստահությունն է, հետևաբար ոչ մի դեպքում գործակալն իր շահը չպետք է վեր դասի պրինցիպալի շահերից⁴:

Տնօրենը նույնպես կազմակերպության հետ հարաբերություններում պետք է խուսափի շահերի բախումից, որը գործակալ-պրինցիպալ հարաբերությունների ցուցիչ է: Տնօրենը պետք է խուսափի իրավիճակներից, երբ իր ուղղակի կամ ա-

¹ St'u Matthew A. Rutherford "Understanding The Agency Relationship Between Boards Of Directors And Ceos: The Role Of Information Asymmetry":

² St'u Bps Van Eck and S Lombard "Dismissal of executive directors: comparing principles of company law and labour law":

³ St'u Unmesh Shankar Zagade "Directors are not only agents but also in some sense trustees of the Company":

⁴ St'u Vidur Thanawala "Agents Duty to avoid Conflict of Interest":

նուղղակի շահերը կհակասեն կամ հնարավոր է, որ կհակասեն ընկերության շահերին¹:

2. Գործակալները պետք է խուսափեն չլիազորված շահույթից²:

Չեյս Մանհեթենի բանկն ընդդեմ Իսրայելի բրիտանական բանկի գործով Մեծ Բրիտանիայի դատարանն արձանագրել է, որ կազմակերպության տնօրենը՝ որպես գործակալ, չպետք է շահագրգռված լինի գաղտնի շահույթ ստանալու մեջ, որն ուղղակի հակադրվում է անշահախնդրության և հավատարմության սկզբունքին³:

3. Գործակալներն ունեն լիազորությունների և պարտականությունների լայն շրջանակ, ներառյալ բոլոր շահառուների համար հավասարապես գործելու պարտականություն⁴:

Ընկերության տնօրենը նույնպես պարտավոր է կազմակերպության մասնակիցներին կամ սեփականատերերին հավասար վերաբերվել և ողջամիտ քայլեր ձեռնարկել կազմակերպության ունեցվածքն առավելագույնի հասցնելու համար⁵:

Այսպիսով, հաշվի առնելով նշված հարցի վերաբերյալ վերոնշյալ օտարերկրյա դատական պրակտիկան, ինչպես նաև գործակալության պայմանագրից բխող հարաբերությունների հիմքում ընկած ֆիդուցիար պարտականության չափանիշները, որոնք նաև համընկնում են կազմակերպություն և կազմակերպության տնօրեն հարաբերություններում, գտնում ենք, որ կազմակերպության տնօրենի և կազմակերպության միջև առկա հարաբերությունները չեն կարող համարվել աշխատանքային հարաբերություններ, և, տնօրենի հատուկ կարգավիճակով և հարաբերությունների քաղաքացիաիրավական առանձնահատկություններով պայմանավորված, տվյալ հարաբերությունները ենթադրում են տնօրենի ֆիդուցիար պարտականություններ:

Համառոտագիր

Հոդվածում վերլուծված են աշխատանքային և կորպորատիվ վեճերի հարաբերակցության սահմանները, հիմնախնդիրները և առանձնահատկությունները կազմակերպության տնօրենի լիազորությունների դադարեցման (աշխատանքային պայմանագրի լուծման) պարագայում: Ուսումնասիրության արդյունքում ընդգծվել է կազմակերպության տնօրենի հատուկ կարգավիճակը՝ պայմանավորված կազմակերպության տնօրենի և կազմակերպության՝ որպես կորպորատիվ իրավունքի սուբյեկտի միջև ծագող գործակալ-պրինցիպալ հարաբերություններով: Աշխատանքում նաև անդրադարձ է կատարվել այն առանձնահատկություններին, որոնցով աշխատանքային վեճը տարբերվում է քաղաքացիաիրավական այլ վեճերից: Ուսումնասիրության արդյունքում առաջարկված լուծումը կհանգեցնի կազմակերպության տնօրենի լիազորությունների դադարեցման գործերով ձևավորված դատական պրակտիկայում (այդ թվում՝ ներպետական նախադեպային իրավունքում) առկա հակասությունների վերացմանը:

Բանալի բառեր- աշխատանքային վեճ; տարաձայնություն; կորպորատիվ վեճ; աշխատանքային պայմանագիր; աշխատանքային վեճի առանձնահատկություններ; տնօրենի լիազորությունների դադարեցում; գործակալ; ֆիդուցիար պարտականություն:

¹ St'u URL: <https://www.gannons.co.uk/insights/directors-duties-to-avoid-conflicts-of-interest/>

² St'u the case of Al Nehayan v. Kent, the decision of the UK Economic Court, Queen's Bench Division dated 22.02.2018:

³ St'u Teacher, Law. (November 2013). Directors Duties from View of Agency Law. Retrieved from <https://www.lawteacher.net/free-law-essays/business-law/directors-duties-from-view-of-agency-law-business-law-essay.php?vref=1>

⁴ St'u Ridley&Hall "What duties do trustees have towards the beneficiaries of a trust":

⁵ St'u Teacher, Law. (November 2013). Directors Duties from View of Agency Law. Retrieved from <https://www.lawteacher.net/free-law-essays/business-law/directors-duties-from-view-of-agency-law-business-law-essay.php?vref=1>

ОСОБЕННОСТИ КВАЛИФИКАЦИИ КОРПОРАТИВНЫХ СПОРОВ В СЛУЧАЕ ПРЕКРАЩЕНИЯ ПОЛНОМОЧИЙ ДИРЕКТОРА ОРГАНИЗАЦИИ

Դենրիկ Խունդկարյան

Аспирант кафедры гражданского процесса ЕГУ

Էլ. փոստ՝ henrik.khundkaryan@ysu.am

ORCID՝ <https://orcid.org/0000-0002-9335-1007>

Абстракт

В статье анализируются пределы, проблемы и особенности соотношения трудовых и корпоративных споров в случае прекращения полномочий директора организации (расторжение трудового договора). В результате исследования подчеркнут особый статус директора организации, обусловленный агентско-принципальными отношениями между директором организации и организацией как субъектом корпоративного права. В работе также затронуты особенности, которыми трудовой спор отличается от других гражданско-правовых споров. Предложенное в результате исследования решение приведет к устранению противоречий в судебной практике (в том числе отечественной судебной практике), сложившихся в случаях прекращения полномочий директора организации.

Ключевые слова – *трудовой спор, разногласие, корпоративный спор, трудовой договор, особенности трудового спора, прекращение полномочий директора, агент, фидуциарная обязанность.*

CHARACTERISTICS OF THE QUALIFICATION OF THE CORPORATE DISPUTES IN THE CASE OF TERMINATION OF THE AUTHORITIES OF THE DIRECTOR OF THE ORGANIZATION

Henrik Khundkaryan

Ph.D. Student of the YSU Chair of Civil Procedure

Էլ. փոստ՝ henrik.khundkaryan@ysu.am

ORCID՝ <https://orcid.org/0000-0002-9335-1007>

Abstract

The article analyzes the borders, problems and characteristics of the ratio of labor and corporate disputes in the case of the termination of the authority of the director of the organization (resolving the employment contract). As a result of the study, the special status of the director of the organization was emphasized due to the agent-principal relationship between the director of the organization and the organization as a subject of corporate law. The work also touched upon the features by which the labor dispute differs from other civil law disputes. The solution proposed as a result of the study will lead to the elimination of the contradictions in the judicial practice (including domestic case law) formed in the cases of termination of the authority of the director of the organization.

Key words – *labor dispute; conflict; corporate dispute; labor contract; characteristics of labor dispute; termination of director's duties; agent; fiduciary duty.*

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ժենյա Ստեփանյան

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ

zhenyastepanyan@ysu.am

<https://orcid.org/0000-0002-3144-3264>

Ներածություն

Խտրականության դեմ պայքարը ժամանակակից հասարակության կարևոր մարտահրավերներից է, որի դեմ արդյունավետ հակազդեցությունը գլխավորապես պայմանավորված է համապարփակ և լիարժեք օրենսդրական կարգավորումների առկայությամբ: Այս հարցում հատկապես կարևոր է քրեաիրավական ներգործության արդյունավետ միջոցների նախատեսումը: ՀՀ քրեական նոր օրենսգիրքն էական առաջընթաց է գրանցել խտրականության և ատելության խոսքի դեմ ուղղված ամբողջական կարգավորումներ նախատեսելու հարցում: Մասնավորապես, կարևոր քայլ է հենց «խտրականություն» անվամբ հանցակազմի նախատեսումը, որը բովանդակային առումով ևս էապես կատարելագործվել է և համապատասխանեցվել խտրականության դեմ պայքարի միջազգային չափանիշներին: Միևնույն ժամանակ, պետք է նկատել, որ օրենսդրական կարգավորումը զերծ չէ նաև թերություններից և բացերից, որոնք մանրամասն գիտական վերլուծության կարիք ունեն՝ հատկապես նկատի ունենալով նաև, որ խտրականության դեմ պայքարի հիմնախնդիրները շատ սուր են դրված միջազգային հանրության առաջ:

Վերոնշյալ նկատառումներից ելնելով՝ հոդվածի շրջանակներում խորությամբ վերլուծության են ենթարկվել խտրականության համար քրեական պատասխանատվության հիմնահարցերը, բացահայտվել են հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, վեր են հանվել կարգավորման բացերն ու թերությունները, որոնք գործնականում արարքի որակման հարցում կարող են որոշակի խնդիրներ առաջացնել:

Հոդվածում լայնորեն օգտագործվել են խտրականության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները, միջազգային կառույցների հանձնարարականներն ու զեկույցները, փորձագիտական հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև վերլուծվել են խտրականության վերաբերյալ դոկտրինալ աղբյուրներում առկա հիմնական մոտեցումները:

Արդյունքում կատարվել են առկա բացերն ու թերություններն արդյունավետորեն հաղթահարելուն ուղղված համապատասխան առաջարկություններ:

Խտրականության հանցակազմի քրեաիրավական բնութագիրը

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը սահմանում է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց իրավունքներով և արժանապատվությամբ:

Խտրականության արգելքը և հավասարության սկզբունքը միջազգայնորեն ճանաչված, միմյանց հետ սերտորեն փոխկապակցված հիմնարար սկզբունքներ են: Մասնավորապես, հավասարության սկզբունքը ենթադրում է, որ հավասար իրավիճակում պետք է հավասար վերաբերմունք դրսևորվի, իսկ ոչ հավասար իրավիճակում՝ տարբերակված, որը չիրականացնելը, որպես կանոն, խտրականություն է:

Խտրականության արգելքն ընդգրկված է մարդու իրավունքների վերաբերյալ գրեթե բոլոր կարևորագույն փաստաթղթերում: Այդ արատավոր երևույթի դեմ պայքարում սկզբնական առաջընթացը գրանցվեց ՄԱԿ-ի կանոնադրության մշակման ժամա-

նակ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, ինչը, ինքնին, սկիզբ էր առել կանխամտածված և համակարգված խտրական գործելակերպից¹:

Այնուհետև, հետևելով ՄԱԿ-ի կանոնադրությամբ ռասայի, սեռի, լեզվի և դավանանքի հիմքով խտրականության արգելքի սահմանմանը, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» և «Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և պատժելու մասին կոնվենցիան» օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի իրավական համախմբման և խտրականության արգելքի սահմանման հարցում հաջորդ կարևոր քայլերը դարձան: Միևնույն ժամանակ, խտրականությունն արգելող դրույթներ են սահմանվել մարդու իրավունքների պաշտպանությանը նվիրված այնպիսի կարևորագույն միջազգային-իրավական փաստաթղթերով, ինչպիսիք են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը», «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին», «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին», «Երեխաների իրավունքների մասին», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիաները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան և դրան կից թիվ 12-րդ արձանագրությունը և այլն:

Օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի վերաբերյալ նորմեր նախատեսվել են նաև ՀՀ Սահմանադրությամբ: Այսպես՝ Սահմանադրությամբ նախ ընդգծվել են օրենքի առջև բոլորի հավասարության կարևորագույն սկզբունքը (հոդված 28) և դրա մասնավոր դրսևորումը՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը (հոդված 30), այնուհետև նախատեսվել է խտրականության արգելքը (հոդված 29)՝ որպես հավասարության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք:

Ընդ որում, ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխով երաշխավորված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված առավել վտանգավոր ոտնձգությունների դեպքում նախատեսվել է քրեական պատասխանատվություն՝ ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ 28-րդ գլխում: Այստեղ գետեղված է նաև խտրականության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմը: Մասնավորապես, 2022 թվականի հուլիսի 1-ից գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) հոդված 203-ի համաձայն՝ *«խտրականությունը՝ տարբերակված վերաբերմունքի դրսևորումը, որը ոտնահարում է անձի իրավունքները կամ ազատությունները, կամ որով անձին առավելություններ են տրվում՝ առանց օբյեկտիվ հիմքի կամ իրավաչափ նպատակի՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային վիճակի, ծննդի, առողջական վիճակի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով»*:

Մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական նախկին օրենսգիրք) հոդված 143-ը պատասխանատվություն էր նախատեսում *մարդու և քաղաքացու իրավահավասարությունը* խախտելու համար. *«Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ*

¹ St' u Human Rights in the Administration of Justice: A Manual on Human Rights for Judges, Prosecutors and Lawyers ծեռնարկը, 2003, գլուխ 13, էջեր 633-636:

անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, որը վնաս է պատճառել մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին»:

Մեջբերված կարգավորումների համեմատական վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 203-ում էական փոփոխություններ են կատարվել, և նախատեսվել են առավել համապարփակ կարգավորումներ՝ խտրականության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմը առավելագույնս համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին: Նախ՝ տեղին է հանցակազմը «խտրականություն» վերանվանելը՝ իրավահավասարությունը խախտելու նախկին ձևակերպման փոխարեն, ինչը համահունչ է միջազգային-իրավական կարգավորումներին: Միևնույն ժամանակ, խտրականության հանցակազմը բովանդակային առումով ևս կատարելագործվել է, մասնավորապես՝ նախատեսվել է այնպիսի կարգավորում, որը բխում է խտրականությունն արգելող միջազգային փաստաթղթերում և միջազգային դատական մարմինների մեկնաբանություններում նշված երևույթի էությանը տրված բնորոշումից: Այսպես՝ հանցակազմում ներառվել են օբյեկտիվ կողմի այնպիսի պարտադիր հատկանիշներ, ինչպիսիք են **տարբերակված վերաբերմունքի դրսևորումը՝ օբյեկտիվ հիմքի կամ իրավաչափ նպատակի բացակայության պայմաններում**: Տարբերակված վերաբերմունքի ընդգծումը, մեր կարծիքով, հատկապես կարևոր է, քանի որ արտացոլում է խտրականության բուն էությունը. խտրականության առկայությունը կամ բացակայությունը որոշվում է նախևառաջ համեմատության կիրառմամբ, այն է՝ արդյո՞ք անձը, այլոց համեմատ, ում հետ գտնվել է համանման իրավիճակում, արժանացել է տարբերակված վերաբերմունքի՝ ի վնաս իր իրավունքների կամ ազատությունների, կամ արդյո՞ք անձին այլոց համեմատ տրվել է առավելություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքի շրջանակներում խտրականությունը բնորոշել է որպես **համանման իրավիճակում** գտնվող անձանց նկատմամբ **տարբերակված վերաբերմունքի** դրսևորում՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքի կամ ողջամիտ բացատրության¹: Այլ կերպ՝ Եվրոպական դատարանը խտրականության փաստը հիմնավորելու համար կիրառում է «համեմատական եզրը»²՝ ընդգծելով, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա կամ Կոնվենցիա) 14-րդ հոդվածով բողոք ներկայացնելիս դիմումատուն նախևառաջ պետք է հիմնավորի, որ այլ անձի համեմատ, ում հետ գտնվել է համանման իրավիճակում, արժանացել է տարբերակված վերաբերմունքի, կամ այլ անձանց կամ նրանց խմբի հետ հավասար է դիտարկվել, թեև գտնվել են հարաբերականորեն տարբեր իրավիճակում³: Ընդ որում, պարտադիր չէ, որպեսզի իրավիճակը լինի լրիվ նույնական, այլ բավարար է ցույց տալ, որ դիմումատուն գտնվել է **հարաբերականորեն նման իրավիճակում** այլ անձանց հետ⁴:

¹ St' u mutatis mutandis, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Virabyan v. Armenia* գործով 2013 թվականի հունվարի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, *Willis v. United Kingdom* գործով 2002 թվականի սեպտեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 36042/97:

² St' u իրավական պաշտպանության եղանակները խտրականության գործերով ձեռնարկը, <https://rm.coe.int/168048a700> (մուտք 23.05.2024թ.):

³ St' u mutatis mutandis, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ուղեցույցը Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի և թիվ 12-րդ արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ՝ 2023 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ https://www.echr.coe.int/documents/d/echr/Guide_Art_14_Art_1_Protocol_12_ENG (մուտք 23.05.2024թ.):

⁴ Օրինակ՝ *Varnas v. Lithuania* և *Chaldeyev v. Russia* գործերով վճիռներում Եվրոպական դատարանը գտել է, որ կալանավորված և դատապարտված անձինք գտնվում են համանման իրավիճակում ամուսնական այցելությունների կամ երկարաժամկետ այցերի առումով, կամ որ կինը և տղամարդը գտնվում են համանման իրավիճակում դեկրետ գնալու իրավունքից օգտվելիս (*Yocheva and Ganeva v. Bulgaria*):

Այսպիսով, պետք է նկատել, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն խտրականությունն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ համանման իրավիճակում ի վնաս անձի տարբերակված վերաբերմունք է դրսևորվում, կամ անձին առավելություն է տրվում, այլև երբ *նույն վերաբերմունքը ցուցաբերվում է տարբեր իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ*¹։ Մինչդեռ խտրականության վերոնշյալ դրսևորումը ներառված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի շրջանակներում, ինչը, կարծում ենք, օրենսդրական բաց է և կարող է գործնականում արարքի որակման հարցում խնդիրներ առաջացնել։

Միաժամանակ, միջազգային-իրավական չափանիշների համաձայն՝ ցանկացած տարբերակված վերաբերմունք չէ, որ խտրականություն է, այլ այնպիսին, որը *գուրկ է օբյեկտիվ հիմքից կամ ողջամիտ բացատրությունից*։ Վերոնշյալը որոշելու համար Եվրոպական դատարանը հետևյալ թեսթն է կիրառում. արդյո՞ք տարբերակված վերաբերմունքը հետապնդում է *իրավաչափ նպատակ*², և արդյո՞ք առկա է *համաչափություն*³ ձեռնարկվող միջոցի ու հետապնդվող նպատակի միջև։ Ընդ որում, դրանցից թեկուզև մեկի բացակայությունը ենթադրում է, որ վերաբերմունքը խտրական է եղել։

Ընդհանուր առմամբ խտրականությունը բացակայում է *աշխատանքին ներհատուկ պահանջների դեպքում*, ինչը տարբերակված վերաբերմունքի արդարացման օբյեկտիվ հիմք է, *կառուցողական գործողությունների դեպքում* (որպես այդպիսին դիտարկվում են ժամանակավոր միջոցառումները, որոնք, որպես կանոն, կիրառվում են պետական մարմինների կամ մասնավոր կազմակերպությունների կողմից՝ մարդկանց որոշակի խմբի և հասարակության միջև ավանդաբար տիրող անհավասարությունը վերացնելու նպատակով), ինչպես նաև *ողջամիտ հարմարեցումների դեպքում* (սա գործատուի վրա դրված պարտականություն է, որպեսզի վերջինս աշխատավայրում կատարի անհրաժեշտ փոփոխություններ, որ անբարենպաստ վի-

¹ Տե՛ս խտրականության դեմ Եվրոպական իրավունքի վերաբերյալ ձեռնարկը https://fra.europa.eu/sites/default/files/fra_case_law_handbook_hy_0.pdf (մուտք 23.05.2024թ.)։

² Եվրոպական դատարանը սահմանել է մի շարք նպատակներ, որոնք կարող են թույլատրելի և իրավաչափ դիտարկվել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի ներքո դիմումները քննարկելիս, մասնավորապես՝ խաղաղության վերականգնում (Sejdić and Finci v. Bosnia and Herzegovina [ՄՊ], 2009, §45), ազգային անվտանգության պաշտպանություն (Konstantin Markin v. Russia [ՄՊ], 2012, §137), տնտեսական կայունության ապահովում (Mamatras and Others v. Greece, 2016, §103), անչափափա իրավախախտների ռեպրիխտացիայի նպատակով (Khamtokhu and Aksenchik v. Russia [ՄՊ], 2017, §80), սեռով պայմանավորված բռնությունից կանանց պաշտպանություն (Khamtokhu and Aksenchik v. Russia [ՄՊ], 2017, §82) և այլն։

³ Այս առումով Եվրոպական դատարանն ընդգծել է, որ պետությունները տարբերակված վերաբերմունքի գնահատման հարցում օժտված են որոշակի հայեցողական ազատությամբ, ընդ որում, կան կոնկրետ ոլորտներ, որտեղ այդ հայեցողությունը բավականին լայն է։ Մասնավորապես, դատարանը նշել է, որ քանի որ ազգային իշխանություններն ավելի լավ պատկերացում ունեն իրենց հասարակության և նրա պահանջումների մասին, ուստի կարող են ավելի լավ գնահատել՝ սոցիալական կամ տնտեսական տեսնակյունից ինչն է հանրային շահի տիրույթում, եթե այն, իհարկե, ակնհայտորեն զրկված չէ ողջամիտ հիմքերից։ Միևնույն ժամանակ, դատարանը սահմանել է խտրականության կոնկրետ հիմքեր, որտեղ պետության հայեցողության աստիճանն ավելի սահմանափակ է։ Մասնավորապես, դատարանը նշել է, որ ոչ մի տարբերակված վերաբերմունք, պայմանավորված բացառապես կամ մեծամասամբ անձի էթնիկ ծագմամբ, չի կարող օբյեկտիվորեն արդարացվել ժամանակակից ժողովրդավարական հասարակությունում, որը կառուցված է բազմակարծության և տարբեր մշակույթները հարգելու սկզբունքի վրա։ Նմանապես գենդերային կամ սեռական կողմնորոշման հիմքով տարբերակված վերաբերմունքը կարող է արդարացվել առավել ծանրակշիռ պատճառաբանությունների առկայության պայմաններում։

ճակում գտնվող աշխատողը կարողանա կատարել իր աշխատանքային պարտականությունները)¹: Այս առումով Եվրոպական դատարանը փաստել է, որ պետության նեգատիվ պարտավորությանը զուգընթաց, այն է՝ թույլ չտալ խտրականության դրսևորում, Կոնվենցիայի 14-րդ հոդվածից բխում է նաև պետության պոզիտիվ պարտավորությունը՝ կանխելու, վերացնելու կամ պատժելու խտրականությունը: Նման պոզիտիվ պարտավորություններն ընդգրկում են, այսպես կոչված, պոզիտիվ միջոցառումները կամ պոզիտիվ գործողությունները, որոնք պետությունը պետք է ձեռնարկի փաստացի անհավասարությունը վերացնելու համար²: Մասնավորապես, հավասարության սկզբունքը երբեմն պահանջում է, որ մասնակից պետությունները դրական միջոցառումներ ձեռնարկեն վերացնելու կամ նվազեցնելու այն պայմանները, որոնք նպաստում են խտրականության դրսևորմանը: Նման գործողությունները կարող են ենթադրել որոշակի արտոնյալ վերաբերմունք բնակչության որոշակի մասի նկատմամբ: Հետևաբար, քանի դեռ նման գործողություններն անհրաժեշտ են փաստացի անհավասարությունը շտկելու համար, իրավաչափ տարբերակման հիմք են³:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 203-ով նախատեսված խտրականության հանցակազմում հատկապես շեշտվում է իրավաչափ նպատակի բացակայությունը՝ որպես տարբերակված վերաբերմունքը խտրականություն դիտարկելու պարտադիր պահանջ, մինչդեռ որևէ նշում առկա չէ համաչափության վերաբերյալ: Այնինչ եթե նույնիսկ տարբերակված վերաբերմունքն իրավաչափ նպատակ է հետապնդում, *այն չի կարող խտրականությունն արդարացնող ողջամիտ և օբյեկտիվ հիմք լինել, եթե խախտվել է գործադրվող միջոցի ու հետապնդվող նպատակի միջև համաչափությունը*: Հետևաբար, կարծում ենք, համաչափությունն ապահովելու վերաբերյալ պահանջը ևս պետք է արտացոլվի հանցակազմի դիսպոզիցիայում:

Պաշտպանվող հատկանիշները

Խտրականության հանցակազմն առկա է ոչ թե պարզապես տարբերակված վերաբերմունք դրսևորելու ցանկացած դեպքում, այլ այնպիսի իրավիճակում, երբ նման տարբերակումը պայմանավորված է եղել *պաշտպանվող հատկանիշներից* որևէ մեկով:

Վերոշարադրյալի կապակցությամբ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ Կոնվենցիայի 14-րդ հոդվածը վերաբերմունքի ցանկացած տարբերակում չէ, որ արգելում է, այլ միայն այնպիսին, որը հիմնված է *անհատականացված, օբյեկտիվ անձնական բնութագրի կամ կարգավիճակի վրա, ինչով կարելի է անձանց կամ անձանց խմբերը տարբերակել միմյանցից*⁴: Կոնվենցիայի 14-րդ հոդվածում նախատեսված է խտրականության պաշտպանվող հատկանիշների բաց թվարկում, քանի որ օգտագործվում է «այլ ցանկացած կարգավիճակ» արտահայտությունը: Ընդ որում, «այլ կարգավիճակ» արտահայտությունը Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում լայն կերպով է մեկնաբանվել՝ վերոնշյալի ներքո դիտարկելով նաև այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են տարիքը, գենդե-

¹ Տե՛ս Իրավական պաշտպանության եղանակները խտրականության գործերով ձեռնարկը, <https://rm.coe.int/168048a700> (մուտք 23.05.2024թ.):

² Տե՛ս mutatis mutandis, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի ուղեցույցը Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի և թիվ 12-րդ արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ՝ 2023 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ https://www.echr.coe.int/documents/d/echr/Guide_Art_14_Art_1_Protocol_12_ENG (մուտք 23.05.2024թ.):

³ Տե՛ս Human Rights in the Administration of Justice: A Manual on Human Rights for Judges, Prosecutors and Lawyers ձեռնարկը, 2003, գլուխ 13, էջեր 651-655:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ *Molla Sali v. Greece* գործով 2020 թվականի հունիսի 18-ի վճիռը, զանգատ թիվ 20452/14, § 134, *Fábián v. Hungary* գործով 2017 թվականի սեպտեմբերի 5-ի վճիռը, զանգատ թիվ 78117/13, § 113:

րային ինքնությունը, սեռական կողմնորոշումը, առողջական վիճակը և հաշմանդամությունը, ծնողական և ընտանեկան կարգավիճակը, աշխատանքային կարգավիճակը և այլն¹:

Հետաքրքրական է Եվրոպական դատարանի դիրքորոշումն առ այն, թե որ հանգամանքները չեն դիտարկվում «այլ կարգավիճակի» ներքո: Մասնավորապես, վերաբերմունքի մեջ տարբերությունը, որը պայմանավորված չէ անձնական կարգավիճակով, չի կարող դիտարկվել որպես «այլ կարգավիճակ»: Օրինակ՝ *Gerger v. Turkey* գործով վճռում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ պայմանական վաղաժամկետ ազատվելու հարցում դատապարտյալների միջև տարբերակումը չի կարող դիտարկվել որպես «այլ կարգավիճակով» պայմանավորված, քանի որ այն եղել է ոչ թե անձանց խմբերի, այլ տարբեր հանցանքների միջև՝ դրանց ծանրության աստիճանով պայմանավորված²:

Այսպիսով, պաշտպանվող հատկանիշներն արտացոլում են անձանց կամ անձանց խմբի ինքնության առավել կարևոր և էական կողմերը, որոնք, որպես կանոն, չեն կարող փոփոխվել (օրինակ՝ լեզուն, սեռը կամ էթնիկ պատկանելությունը):

ՀՀ քրեական օրենսգրքով խտրականության պաշտպանվող հիմքերի բավականին լայն շրջանակ է նախատեսված, որոնք նույնական են ՀՀ Սահմանադրության մեջ սահմանված հատկանիշներին: Միևնույն ժամանակ, Օրենքն արդարացիորեն սպառնիչ թվարկում չի պարունակում՝ ընդօրինակ, որ խտրականությունը կարող է տեղի ունենալ նաև անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված: Սակայն վերոնշյալն ամենևին չի նշանակում, որ ցանկացած հանգամանք կարող է դիտարկվել որպես պաշտպանվող հատկանիշ. անձնական կամ սոցիալական այլ հանգամանքը պետք է իր բնույթով այնպիսին լինի, որ համարժեք կամ համաբնույթ լինի հողվածով հստակ թվարկված մյուս հատկանիշներին: Հետևաբար, ընդհանրացնելով նաև այս հարցի վերաբերյալ Եվրոպական դատարանի դիրքորոշումը, կարծում ենք, որ այլ հանգամանքով պայմանավորված տարբերակված վերաբերմունքը կդիտարկվի որպես խտրականություն, եթե հիմնված լինի անձի անձնական կամ սոցիալական այնպիսի անհատականացված և օբյեկտիվ բնութագրի կամ կարգավիճակի վրա, որի ուժով կարելի է **անձանց կամ անձանց խմբերը տարբերակել միմյանցից**:

Միաժամանակ, թեև մեր օրենսդրությամբ պաշտպանվող հիմքերի սպառնիչ ցանկ չի սահմանվում, այնուամենայնիվ Եվրոպական մի շարք կառույցներ ՀՀ-ին ուղղված իրենց հանձնարարականներում մշապես ընդգծել են օրենսդրորեն այնպիսի պաշտպանվող հատկանիշների ամրագրման անհրաժեշտության մասին (ոչ միայն քրեական օրենսդրությամբ), ինչպիսիք են սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը³: Վերոնշյալի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ ՀՀ Սահմա-

¹ *St'u mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ուղեցույցը Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի և թիվ 12-րդ արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ՝ 2023 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ https://www.echr.coe.int/documents/d/echr/Guide_Art_14_Art_1_Protocol_12_ENG (մուտք 23.05.2024թ.):

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ *Gerger v. Turkey* գործով 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 24919/94, §69:

³ Այսպես, օրինակ, Ռասիզմի և անհամադրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի հունիսի 28-ի զեկույցում ընդգծվել է, որ ՀՀ իշխանություններին խորհուրդ է տրվում քրեական օրենսդրությունը համապատասխանեցնել Ռասիզմի և անհամադրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովի ընդհանուր քաղաքականության 7-րդ հանձնարարականի պահանջներին, մասնավորապես, անհրաժեշտ է արգելված հիմքերի շարքում, ի թիվս այլնի, հստակորեն սահմանել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը: Այնուհետև, անդրադառնալով վերոնշյալ զեկույցի իմպլեմենտացման հարցերին՝ Հանձնաժողովը 2019 թվականի հունիսի 18-ի եզրահանգումներում ընդգծել է, որ թեև ՀՀ կառավարությունը ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի որոշ հոդվածներ համապատասխանեցրել է զեկույցի պահանջներին,

նադրությամբ, ինչպես նաև քրեական օրենսգրքով խտրականության հիմքերի սպառնիչ թվարկում նախատեսված չլինելու պայմաններում թե՛ սեռական կողմնորոշումը, թե՛ գենդերային ինքնությունն անխուսափելիորեն դիտարկվելու են որպես անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանք, ուստի այս առումով, կարծում ենք, որևէ մտահոգություն չի կարող, հատկապես որ այս հարցի շուրջ միջազգային հանրության դիրքորոշումը միանշանակ է ու հստակ:

Քրեական պատասխանատվության շենք

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 203-ի վերլուծությունից հետևում է, որ խտրականության հանցակազմն ավարտված է համարվում անձի իրավունքները կամ ազատությունները ոտնահարող կամ անձին առավելություններ տվող տարբերակված վերաբերմունք դրսևորելու պահից, այլ կերպ՝ սույն հանցավոր արարքը նկարագրված է ձևական հանցակազմով¹: Հարկ է նկատել, որ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի հոդված 143-ը նկարագրված էր նյութական հանցակազմով, քանի որ հանցագործությունն ավարտված էր համարվում այն դեպքում, երբ մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին *վնաս* էր պատճառվում: Այսպիսով, քրեական նոր օրենսգրքով խտրականության համար քրեական պատասխանատվության շենք բավականին իջեցվել է: Ստացվում է, որ անձի իրավունքները կամ ազատությունները ոտնահարող ցանկացած տարբերակված վերաբերմունք արդեն իսկ հանցագործություն է: Թվում է, թե դրանով օրենսդիրն էլ ավելի է ընդգծում խտրականության բարձր վտանգավորությունը, հետևաբար՝ պատրաստականությունը վերոնշյալ արատավոր երևույթին հակադրելու քրեաիրավական գործիքակազմի կիրառմամբ, այնուամենայնիվ, մեր խորին համոզմամբ, խտրականության՝ որպես հանցագործության շրջանակի ընդլայնումը ոչ միայն չի նպաստելու դրա դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը, այլ, ընդհակառակը, շատ դեպքերում խոչընդոտ է դառնալու տուժողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Բացի այդ, նման պայմաններում վերանում կամ անորոշ է դառնում այն սահմանագիծը, որը թույլ կտար տարանջատել հանցագործությունը վարչական կամ քաղաքացիական իրավախախտումներից, քանի որ խտրականության արգելքը սահմանված է ոչ միայն քրեական օրենսգրքով, այլև ճյուղային մի շարք այլ օրենսդրություններով, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքով և այլն:

Այս առումով հատկանշական է, որ խտրականության դեմ պայքարի եվրոպական չափանիշների տեսանկյունից հատկապես կարևորվում են խտրականության համընդգրկուն հասկացության և դրա տեսակների սահմանումը, նման գործերով ապացույցի չափանիշի, ինչպես նաև ապացուցման բեռի հստակեցումը, տուժողի իրավունքների վերականգնման արդյունավետ կառուցակարգերի նախատեսումը: Մասնավորապես, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովն իր ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականով ընդգծել է, որ խտրականության գործերով օրենքը պետք է ոլորտինացնի ապացուցման գործընթացը՝ նախատեսելով նման գործերով ապացուցման բեռի տարբերակված բաշխման չափանիշներ: Վերոնշյալը ենթադրում է, որ եթե հայցվորին հաջողվում է

այնուամենայնիվ Հանձնաժողովի հանձնարարականներն ամբողջությամբ չեն կենսագործվել, քանի որ խտրականության բոլոր հիմքերը չէ, որ ներառվել են համապատասխան հոդվածներում:

¹ Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույցը, Երևան, 2022 թ., **Ս.Վ. Առաքելյան, Ա.Վ. Բարսեղյան**, Մարդու դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի, Երևան, 2023թ., էջեր 272-275:

համոզիչ փաստերով բարձրացնել խտրականության կանխավարկածը, ապա ապացուցման բեռն առ այն, որ խտրականություն տեղի չի ունեցել, ընկնում է պատասխանող կողմի վրա¹:

Մինչդեռ քրեական վարույթի շրջանակներում ապացուցման գործընթացը շատ ավելի բարդ է: Նախ՝ այդ բեռը կրում է մեղադրանքի կողմը, բացի այդ, քրեական դատավարության շրջանակներում անձի մեղքը հաստատվում է միայն հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով: Կարծում ենք՝ նաև վերոնշյալով է պայմանավորված հանձնարարականում տեղ գտած այն մոտեցումը, որ ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարում *քաղաքացիական և վարչական օրենսդրությունները տուժողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից շատ ավելի ձկուն իրավական գործիքակազմեր են պարունակում (պատճառված նյութական և բարոյական վնասի փոխհատուցում, տուժողի խախտված իրավունքների վերականգնում), քան քրեաիրավականը, որն ավելի շատ սիմվոլիկ դեր է կատարում և միտված է խտրականության կանխարգելմանը*²:

Այսպիսով, ակնհայտ է, որ խտրականության վերաբերյալ գործերով քաղաքացիաիրավական և վարչաիրավական գործիքակազմերը տուժողների իրավունքների պաշտպանության հարցում արդյունավետ վերականգնողական մեխանիզմներ են պարունակում, գործում են ավելի արագ, նվազ բարդության են և ավելի քիչ ռեսուրսներ են պահանջում, քան քրեաիրավական ներգործության միջոցները: Այլ հարց է, սակայն, որ ՀՀ քաղաքացիաիրավական և վարչաիրավական ներկայիս կարգավորումները չեն համապատասխանում խտրականության դեմ պայքարի եվրոպական չափանիշներին, չեն պարունակում համապարփակ և արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ, ինչը մշտապես ընդգծվել է Հայաստանի Հանրապետության վերաբերյալ զեկույցներում³: Ուստի պետության ջանքերը նախևառաջ պետք է ուղղվեն առկա բացերը և թերի կարգավորումները շտկելուն, խտրականության դեմ պայքարում միջազգային չափանիշներին բավարարող գործիքակազմեր ներդնելուն, որոնք գործում երաշխիք կլինեն խտրականության գոհերի իրավունքների պաշտպանության հարցում:

Վերոգրյալ նկատառումներով պայմանավորված՝ կարծում ենք՝ անընդունելի է խտրականության համար քրեական պատասխանատվության շեմն իջեցնելը, ինչն ամենևին չի ապահովելու վերոնշյալ երևույթի դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը, խտրականության գոհերի իրավունքների համակողմանի պաշտպանությունը: Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 203-ից հետևում է, որ պաշտպանվող հատկանիշներից որևէ մեկով պայմանավորված ցանկացած տարբերակված վերաբերմունք, որի արդյունքում ոտնահարվում է անձի իրավունքներն ու ազատությունները, արդեն իսկ հանցագործություն է: Այլ կերպ՝ վերոնշյալ ձևակերպումն այնքան լայն է, որ հավակնում է ընդգրկել խտրականության գրեթե ցանկացած դրսևորում, այնինչ որպես հանցագործություն պետք է դիտարկվեն միայն խտրականության ամենավտանգավոր դրսևորումները, որոնց արդյունքում անձի իրավունքներին և ազատություններին առավել էական վնաս է պատճառվում: Այս առումով տեղին է մեջբերել *Վ.Ա. Նովիկովի* դիրքորոշումը. «*խտրականության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմի չգործելու հիմնական պատճառն այն է, որ հոդվածը ներառում է խտրականության գրեթե բոլոր տեսակ-*

¹ Տե՛ս Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականը <https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-7-revised-on-national-legislation/16808b5aae> (մուտք 23.05.2024թ.):

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի՝ 2016 թվականի հունիսի 28-ի զեկույցը Հայաստանի մասին (մշտադիտարկման հիմնադրոջ փուլ) <https://rm.coe.int/fourth-report-on-armenia-armenian-translation-/16808b5538> (մուտք 23.05.2024թ.):

Կատարված հետազոտության մեթոդոլոգիական բազան են կազմում դիալեկտիկական և պատմական մեթոդները: Հետազոտության օբյեկտը և առարկան ուսումնասիրվել են գիտական ճանաչողության ընդհանուր և հատուկ այնպիսի մեթոդների օգտագործմամբ, ինչպիսիք են՝ ինդուկցիան, դեդուկցիան, անալիզը և սինթեզը, իրավահամեմատական ու տրամաբանական մեթոդները:

Հանցագործությունից կամովին հրաժարվելու հասկացությունը և հատկանիշները.

Օրենսգրքի 80-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե անձը կամովին հրաժարվում է հանցագործությունից, ապա ազատվում է այդ հանցագործության համար քրեական պատասխանատվությունից: Եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:

2. Հանցագործությունից կամովին հրաժարվելն անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամովին, վերջնականապես դադարեցնելն է կամ արարքի վտանգավոր հետևանքները կանխելը, եթե նա գիտակցել է տվյալ իրադրությունում հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը (...):»:

Օրենսգրքում տրված նշված սահմանումը, ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի, առավել ամբողջական է և ընդգրկում է տեսության մեջ ներկայացվող հանցագործությունից կամովին հրաժարվելու բոլոր հատկանիշները:

Ելնելով Օրենսգրքում տրված սահմանումից՝ կարելի է առանձնացնել հանցագործությունից կամովին հրաժարվելու հետևյալ հատկանիշները.

Նախնական հանցավոր գործունեությունն ավարտին հասցնելուց հրաժարվելը պետք է լինի կամովին: Այսինքն՝ անձը հանցավոր գործողությունները դադարեցնում է իր կամքով և ոչ թե այն ավարտին հասցնելու օբյեկտիվ անհնարինության պատճառով:

Կամովին հրաժարվելու հաջորդ հատկանիշը հանցագործությունը ավարտին հասցնելու գիտակցումն է: Այսինքն՝ անձը պետք է գիտակցի տվյալ իրադրությունում հանցագործությունն ավարտին հասցնելու իրական հնարավորությունը:

Ն. Դուրմանովի կարծիքով՝ հանցագործությունից կամովին հրաժարում չի կարող լինել այն դեպքում, երբ հանցագործության կատարման ժամանակ հանդիպում են խոչընդոտներ, թեկուզ և հաղթահարելի, սակայն ավելի էական, քան կարծում էր անձը հանցագործությունը սկսելիս, և այդ հանգամանքների պատճառով է անձը հրաժարվում հանցագործությունն ավարտին հասցնելուց¹: Այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ հանցանքի կատարումը դժվարացել է, և այդ հանգամանքի ուժով է դադարեցնում հանցագործությունը: Սակայն գտնում ենք, որ բոլոր դեպքում անձը հանցագործությունից կամովին հրաժարվելու հիմքով պատասխանատվությունից ազատվելու համար պետք է գիտակցի, որ տվյալ իրադրությունում հնարավորություն ունի հանցանքն ավարտին հասցնելու: Խոսքը վերաբերում է անձի սուբյեկտիվ ընկալմանը, այսինքն՝ եթե նույնիսկ օբյեկտիվորեն հնարավորություն չի եղել հանցագործությունն ավարտին հասցնելու, սակայն անձը կարծել է, թե ինքն ունի այդպիսի հնարավորություն և դադարեցրել է հանցանքի կատարմանն ուղղված գործողությունները, ապա կամովին հրաժարումն առկա է²:

Կամովին հրաժարվելու կարևոր հատկանիշ է համարվում նաև հանցագործությունից վերջնականապես հրաժարվելը: Նախնական հանցավոր գործունեություն սկսած անձը պետք է ամբողջությամբ և վերջնականապես հրաժարվի այն ավարտին հասցնելուց և ոչ թե ժամանակավորապես հետաձգի հանցագործության կատարումը՝ հետագայում առավել նպաստավոր պայմաններում իրականացնելու համար:

Հանցագործությունից կամովին հրաժարվելու հետևանքով հանցակիցներին քրեական պատասխանատվությունից ազատելը.

Հանցակցության դեպքում հանցագործությունից կամովին հրաժարվելն ունի որոշակի առանձնահատկություններ՝ պայմանավորված հանցագործությանը տարբեր դերակատարություն ունեցող մեկից ավելի անձանց մասնակցությամբ:

Օրենսգրքի 80-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հանցագործության կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա իրավասու մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով կանխել է կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը: Եթե կազմակերպիչի, դրդիչի կամ օժանդակողի գործողությունները չեն հանգեցնում կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա ձեռնարկված միջոցները հաշվի են առնվում որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք»: Օրենսգրքում տեղ գտած այս ձևակերպումը, ըստ էության, քրեական նախկին օրենսգրքի հոդված 36-ի 3-րդ և 4-րդ մասերում առկա իրավակարգավորումների վերարտադրությունն է՝ որոշակի եզրութաբանական ձգձգումներով³:

¹ Տե՛ս **Дурманов Н.Д.** Стадии совершения преступления по советскому уголовному праву. – М., 1999, էջ 193:

² Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, Ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, ԵՊՀ իրատարակչություն, Երևան, 2012, էջ 256:

³ Տե՛ս **Ա. Գաբրիելյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան**, ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս 2022թ., էջ 167:

Հաշվի առնելով այն, որ օժանդակողի դերը հանցակցության մեջ որոշակիորեն տարբերվում է հանցագործության կազմակերպչի և դրդիչի դերից՝ պայմանավորված հանցակիցների կատարած գործողությունների և կատարողի կողմից կատարված հանցագործության հանցավոր հետևանքների միջև պատճառական կապի զարգացման առանձնահատկություններով, Օրենսգիրքը օժանդակողի կողմից հանցագործությունից կամովին հրաժարվելու որոշ դրսևորումների կապակցությամբ սահմանել է առանձնահատուկ կարգավորումներ, որոնք նախատեսվել են Օրենսգրքի 80-րդ հոդվածի 5-րդ մասով: Այսպես, հոդվածի նշված մասի համաձայն՝ «Գործիք կամ միջոց տրամադրելու կամ խոչընդոտը վերացնելու եղանակներով օժանդակության դեպքում անձն օժանդակության համար ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա հետ է վերցրել տրամադրած գործիքը կամ միջոցը կամ վերականգնել է խոչընդոտները: Այդ դեպքում անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում հանցագործության մասին չհայտնելու համար, եթե նրա արարքում առկա են այդ հանցակազմի հատկանիշները»:

Օրենսգրքի նշված կարգավորումից հետևում է, որ օժանդակողի դեպքում, որը նախապատրաստվող հանցագործության մեջ ներդրում է ունեցել, հանցագործությանը հանցակցել է գործիք կամ միջոց տրամադրելու կամ խոչընդոտը վերացնելու եղանակներով, հանցագործությունից կամովին հրաժարվելու համար բավարար է միայն նախապատրաստվող հանցագործությունից իր ներդրումը հանելը՝ տրված գործիքը ու միջոցը հետ վերցնելը կամ նախապես վերացրած խոչընդոտը վերականգնելը: Այսինքն՝ օժանդակության այս դեպքերում, հանցագործությունից կամովին հրաժարվելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատվելու համար, օժանդակողից ակտիվ գործողություններ կատարելու (նախապատրաստվող կամ կատարվող հանցագործության մասին իրավասու մարմիններին հաղորդել կամ այլ միջոցներ ձեռնարկել) և կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը կանխելու պարտականություն նախատեսված չէ:

Օժանդակողի՝ հանցագործությունից կամովին հրաժարվելու համար օրենսդրի կողմից նման առանձնահատուկ կարգավորում նախատեսելը, մեր կարծիքով, արդարացված է և բխում է հանցակցության օբյեկտիվ հատկանիշների առանձնահատկություններից: Տրված գործիքը կամ միջոցը հետ վերցնելու կամ վերացված խոչընդոտը վերականգնելու պարագայում օժանդակողը խզում է բոլոր այն կապերը, որոնք առկա էին իր և հանցագործությունը կատարողի միջև: Փաստորեն, այս պարագայում օժանդակողի նախկին գործողությունների և հանցավոր հետևանքների միջև բացակայում է պատճառական կապը՝ որպես հանցակցության օբյեկտիվ հատկանիշ: Կատարողի և մյուս հանցակիցների համար պարզ է դառնում, որ օժանդակողը «խաղից դուրս է եկել» և հրաժարվել է հետագա մասնակցություն ունենալ նախապատրաստվող հանցագործությանը, ուստի օժանդակողի նշված գործողությունները պետք է որակվեն որպես հանցագործությունից կամովին հրաժարում: Այլ հարց է, որ այս դեմքում անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել հանցագործության մասին չհայտնելու համար, եթե նրա արարքում առկա են այդ հանցակազմի հատկանիշները:

Հանցակիցների՝ հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտն առավել մանրամասն և ամբողջական կարգավորելուն միտված օրենսդրական այս նորամուծությունը թեև կարևոր է օժանդակողի արարքներին առավել ձիշտ, հանցակցության վերաբերյալ առկա մոտեցումներին համապատասխան իրավական գնահատական տալու կապակցությամբ, սակայն, կարծում ենք, որ այն ամբողջական չէ և կարիք ունի լրամշակման:

Կարծում ենք, որ ինտելեկտուալ օժանդակության դեպքում, երբ այն դրսևորվում է հանցագործին, հանցագործության միջոցներն ու գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները պարտակելու, այդպիսի առարկաները ձեռք բերելու կամ իրացնելու խոստումով,

հանցագործությունից հրաժարվելու համար բավական է միայն կատարողին տեղեկացնել, որ տրված խոստումները չեն կատարվելու: Այս դեպքում ևս հանցագործությունից կամովին հրաժարվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու համար օժանդակողի վրա չպետք է դրվի ակտիվ գործողություններ կատարելու և հանցագործությունը կանխելու պարտականությունը: Նշված հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օժանդակության նշված դրսևորումներում նույնպես, տրված խոստումները կատարելուց հրաժարվելով անձը խզում է բոլոր այն կապերը, որոնք առկա էին իր և հանցագործությունը կատարողի միջև: Այս դեպքում ևս խզվում է նաև պատճառական կապը օժանդակողի գործողությունների և հանցագործության հետևանքների միջև: Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր Անտյե Բուա-Պեդեյնը ընդգծում է, որ կատարված հանցագործության և կատարողին ցուցաբերված օգնության (այդ թվում նաև հոգեբանական) միջև պատճառական կապը օժանդակության պարտադիր հատկանիշ է¹: Բացի այդ, տրված խոստումները, որոնցից անձը հրաժարվել է, այլևս չեն կարող հանցագործության կատարման անհրաժեշտ պայման հանդիսանալ: Այս դեպքում ևս մյուս հանցակիցների և հատկապես կատարողի համար ակնհայտ է դառնում, որ հանցագործությանը օժանդակելու խոստում տված անձը «դուրս է եկել խաղից» և չի պատրաստվում ներդրում ունենալ համատեղ իրականացվող հանցագործության մեջ:

Վերոգրյալով պայմանավորված՝ կարծում ենք, որ ինտելեկտուալ օժանդակության նշված դեպքերում ևս հանցագործությունից կամովին հրաժարվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու համար անձի վրա չպետք է դրվի հանցագործությունն ավարտին հասցնելը կանխելու պարտականություն: Ուստի նպատակահարմար կլիներ Օրենսգրքի 80-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված բացառության մեջ ինտելեկտուալ օժանդակության նշված դեպքերը ևս հաշվի առնվելին: Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ նման մոտեցում նախատեսված է եղել նաև ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգում²:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Օրենսգրքի 80-րդ հոդվածի 5-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Գործիք կամ միջոց տրամադրելու կամ խոչընդոտող վերացնելու եղանակով կամ հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները պարտակելու կամ այդպիսի առարկաներ ձեռք բերելու նախապես խոստում տալու եղանակներով օժանդակության դեպքում անձն օժանդակության համար ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա հետ է վերցրել տրամադրած գործիքը կամ միջոցը կամ վերականգնել է խոչընդոտները կամ տեղեկացրել է, որ չի կատարելու խոստումը: Այդ դեպքում անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում հանցագործության մասին չհայտնելու համար, եթե նրա արարքում առկա են այդ հանցակազմի հատկանիշները»:

Ասվածով պայմանավորված՝ ցանկանում ենք անդրադառնալ նաև այն հարցին, թե ինչպես պետք է որակվի արարքն այն դեպքում, երբ կատարողը հանցանքը կատարելիս չի օգտվում «օժանդակողի» տրամադրած գործիքներից կամ միջոցներից: Կարծում ենք, որ այստեղ պետք է առաջնորդվել մեկնաբանման այն տրամաբանությամբ, որ եթե օրենսդիրը, հաշվի առնելով օժանդակության դեպքում պատճառական կապի առանձնահատկությունները, նախատեսել է հանցագործությունից կամովին հրաժարվելու հետևանքով օժանդակողին քրեական պատասխանատվությունից ազատվելու հիմքով:

¹ Sté Antje du Bois-Pedain, Participation in Crime / University of Cambridge Faculty of law Research Paper. no. 6/2019:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի հայեցակարգ, Երևան, Տիգրան Մեծ իր., 2015թ., էջ 44:

վությունից ազատելու առանձին կարգավորում՝ օժանդակողի կողմից տրամադրված գործիքը կամ միջոցը հետ վերցնելը բավարար համարելով օժանդակողին քրեական պատասխանատվությունից ազատելու համար, ապա նույն տրամաբանությամբ, երբ կատարողը չի օգտվում օժանդակողի «ծառայություններից»՝ տրամադրված գործիքից կամ միջոցից, նույնպես բացակայում է պատճառական կապը օժանդակողի գործողությունների և կատարողի կատարած հանցանքի միջև¹։ Հետևաբար՝ օժանդակողի արարքները պետք է որակվեն որպես հանցագործության նախապատրաստություն կամ հանցավորո՞ճ չհաջողված հանցակցության կանոններից ելնելով²։

Քրեական նոր օրենսգրքով առանձնահատուկ կարգավորում է նախատեսվել նաև հանցագործությունից կանոնված հրաժարվելու հետևանքով համակատարողին քրեական պատասխանատվությունից ազատելու կապակցությամբ։ Օրենսգրքի 80-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Համակատարողը հանցագործությունից կանոնված հրաժարվելու դեպքում ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա իրավասու մարմիններին հաղորդելով կամ այլ միջոցներով կանխում է կատարողի կողմից հանցագործությունը ավարտին հասցնելը։ Եթե համակատարողի գործադրած միջոցները չեն հանգեցնում կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա ձեռնարկված միջոցները հաշվի են առնվում որպես քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք»։

Օրենսգրքի 80-րդ հոդվածի 6-րդ մասի տառացի, ինչպես նաև նույն հոդվածի 4-րդ մասում առկա կարգավորման հետ միասին համակարգային մեկնաբանությունից կարելի է հետևություն անել, որ եթե հանցագործությունից կանոնված հրաժարված համակատարողը ակտիվ գործողություններ չկատարի և հանցագործությունն ավարտին հասցնելը չկանխի, ապա մյուս հանցակիցների նման պետք է պատասխանատվության ենթարկվի ավարտված հանցագործությանը հանցակցելու համար՝ այն տարբերությամբ, որ համակատարողի պարագայում Օրենսգրքի 46-րդ հոդվածին հղում չի կատարվում։

Նման կարգավորում նախատեսելով՝ թվում է, որ օրենսդիրն առավել ընդունելի է համարել տեսության մեջ առկա այն մոտեցումը, որ կատարողը (համակատարողը) ևս հանդիսանում է հանցակից (դրդիչի, կազմակերպիչի և օժանդակողի հետ հավասար), հետևաբար մյուս հանցակիցների նման հանցագործությունից կանոնված հրաժարվելու հետևանքով քրեական պատասխանատվությունից կարող է ազատվել միայն ակտիվ գործողություններ կատարելով և հանցագործությունն ավարտին հասցնելը կանխելով³։ Օրենսդրի կողմից նշված տեսությունն առավել ընդունելի

¹ Стн Уголовное право, общая часть, отв. ред. И.Я. Козанченко, 4-е издание, Издательства НОРМА, Москва, 2008, էջ 349։

² Այստեղ ցանկանում ենք ավելացնել, որ մեկնաբանման նույն տրամաբանությունը կարող է կիրառվել նաև օժանդակության այլ դրսևորումների պարագայում ևս։ Օրինակ, երբ կատարողը չի օգտվում օժանդակողի տրամադրած խորհուրդներից, ցուցումներից կամ տեղեկություններից։ Այստեղ ևս առկա է չհաջողված հանցակցություն, որի կանոններով էլ պետք է որոշվի օժանդակողի պատասխանատվության հարցը։ Կարծում ենք, որ այս համատեքստում Օրենսգրքը ենթակա է լրամշակման, քանի որ անկախ նրանից՝ կատարողը օգտվել է օժանդակողի «ծառայություններից», թե ոչ, վերջինիս գործողությունների վտանգավորությունը չի չեզոքանում։ Դրանք, այնուամենայնիվ, նպաստում են կատարողի հանցանքը կատարելու վճռականության ամրապնդմանը։ Գտնում ենք նաև, որ խնդիր լուծում կարող է լինել Օրենսգրքով տրվող օժանդակության հասկացության ընդլայնումը և կատարողի՝ հանցանք կատարելու վճռականությունն ամրապնդելը նախատեսել որպես օժանդակության ինքնուրույն դրսևորում։ Քանի որ այս խնդիրը դուրս է սույն հետազոտության շրջանակներից, դրան, ի տեղին, առավել մանրամասն կանդիդատանք մեկ այլ հետազոտության շրջանակներում։

³ Հանցակցության նշված մոտեցումների վերաբերյալ տես **Фристер Г.** Уголовное право Германии. Общая часть. 5-е изд. Пер. с нем. М., 2013. էջ 515, **Пудовочкин Ю.** Концепция

համարելու մասին են վկայում նաև հանցակցի տեսակները սահմանելիս «կատարողի հետ մեկտեղ» ձևակերպումից հրաժարվելը և կատարողին մյուս հանցակիցներից չառանձնացնելը¹։ Այս տեսանկյունից, կարծում ենք, որ համակատարողի համար հոդվածի 6-րդ մասով առանձին կարգավորում նախատեսելն ավելորդ է թվում։

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ համակատարողի և մյուս հանցակիցների (դրդիչի, կազմակերպիչի և մասամբ օժանդակողի) հանցագործությունից կամովին հրաժարվելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու պայմաններն ամբողջությամբ նույնական են կարելի էր 80-րդ հոդվածի 4-րդ մասում մյուս հանցակիցների՝ կազմակերպիչի, դրդիչի և օժանդակողի շարքում ներառել նաև համակատարողին։

Հաշվի առնելով, սակայն, որ համակատարողի՝ հանցագործությունից կամովին հրաժարվելու առանձնահատկությունները նախատեսող կարգավորումը նորամուծություն է հայրենական քրեական իրավունքում, ինչպես նաև, որ այն բավականաչափ հստակ չէ և կարող է իրարամերժ մեկնաբանությունների տեղիք տալ ու պրակտիկ կիրառման դժվարություններ առաջացնել՝ գտնում ենք, որ այն մանրամասն վերլուծության կարիք ունի։

Այսպես, տարակարծիք մեկնաբանություններ կարող են առաջանալ այն հարցի կապակցությամբ, թե ինչպես պետք է որոշվի համակատարողի պատասխանատվության հարցը, եթե նա կամովին հրաժարվել է հանցագործությունից նախապատրաստության կամ հանցափորձի փուլում, իսկ մյուս կատարողն այն ավարտին է հասցրել։ Այս դեպքում հանցագործությունից կամովին հրաժարված համակատարողը պատասխանատվության պետք է ենթարկվի հանցագործության նախապատրաստության², հանցափորձի³, թե՞ ավարտված հանցագործության համար։ Բացի այդ, դժվարություններ կարող են առաջանալ հանցագործությունից կամովին հրաժարվելու հետևանքով համակատարողին քրեական պատասխանատվությունից ազատելու կարգավորումը Օրենսգրքի 46-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով նախատեսված օժանդակողի հասկացության հետ համակարգային մեկնաբանելու կապակցությամբ։ Մասնավորապես Օրենսգրքի 46-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ օժանդակող է համարվում նաև այն անձը, որը նախապես համաձայնություն է տվել մասնակցելու հանցագործությանը որպես համակատարող, սակայն մյուս համակատարողի կողմից հանցանքը կատարելու ընթացքում, անմիջականորեն չմասնակցելով հանցանքի կատարմանը, իր ներկայությամբ ամրապնդել է կատարողի՝ հանցանք կատարելու վճռականությունը։ Նշված կարգավորումների մեկնաբանությունից կարող է հետևություն արվել, որ, եթե անձը նախապես համաձայնել է մասնակցել հանցագործությանը որպես համակատարող, սակայն հետագայում հանցագործության անմիջական կատարմանը մասնակցելուց հրաժարվում է և հեռանում կամ, այնուամենայնիվ, մնալով հանցանքի կատարման վայրում, իր ներկայությամբ չի ամրապնդում կատարողի՝ հանցանք կատարելու վճռականությունը, ապա պետք է պատասխանատվության ենթարկվի տվյալ հանցագործության համար որպես համակատարող, եթե չի կանխում հանցագործությունն ավարտին հասցնելը։ Իսկ եթե անձը, նման իրավիճակում անմիջականորեն չմասնակցելով հանցանքի կատարմանը, իր ներկայությամբ ամրապնդում է կատարողի՝ հանցանք

соучастия: опыт теоретической разработки и нормативного закрепления// Журнал российского права, 2018, № 8 էջ 106:

1 Քրեական նախկին օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր, որ «Կատարողի հետ մեկտեղ հանցակիցներ են համարվում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը», մինչդեռ նոր օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Հանցակիցներ են համարվում կատարողը, դրդիչը, կազմակերպիչը և օժանդակողը»:

կատարելու վճռականությունը, ապա տվյալ հանցագործության համար պետք է պատասխանատվության ենթարկվի որպես օժանդակող:

Նշված մեկնաբանության պարագայում ստացվում է, որ անձը որպես համակատարող պատասխանատվության պետք է ենթարկվի ավարտված հանցագործության համար նույնիսկ այն պարագայում, երբ հանցագործությունն ավարտին հասցնելուց հրաժարվել է հանցագործության նախապատրաստության փուլում և օրենքով պաշտպանվող շահերին անմիջական վնաս պատճառելուն ուղղված որևէ գործողություն, ըստ էության, չի կատարել:

Քրեական օրենքի այսպիսի մեկնաբանությունը, որը կարող է տեղ գտնել պրակտիկայում, չի բխում հանցակցության և հանցակիցների կամովին հրաժարվելու ինստիտուտի առանձնահատկություններից և կարող է հանգեցնել անձնական պատասխանատվության սկզբունքի խախտմանը:

Կարծում ենք, որ, եթե անձը նախապես համաձայնություն է տվել մասնակցելու հանցագործությանը որպես համակատարող, բայց հետագայում մյուս համակատարողի կողմից հանցանքը կատարելու ընթացքում հրաժարվել է անմիջականորեն մասնակցել հանցանքի կատարմանը ու չի կատարել պայմանավորված հանցագործության օբյեկտիվ կողմը կամ դրա մի մասը, ապա նա չի կարող համարվել համակատարող: Համակատարողի վերաբերյալ նման մեկնաբանությունը բխում է Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասում առկա հանցագործությունը կատարողի օրենսդրական բնորոշումից: Մասնավորապես, հոդվածի նշված մասի համաձայն կատարող է համարվում այն անձը, որն անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանը մասնակցել է այլ անձի (համակատարողի) հետ համատեղ: Այս բնորոշումից աներկիմաստ բխում է, որ կատարող (համակատարող) կարող է համարվել միայն այն անձը, որը հանցանքն անմիջականորեն կատարելուն ուղղված որևէ գործողություն է կատարել:

Վերոգրյալից ելնելով՝ կարող ենք արձանագրել, որ եթե հանցագործությունը դեռևս գտնվում է նախապատրաստության փուլում, և հանցագործությանը որպես համակատարող մասնակցելու համաձայնություն տված անձը դեռևս չի կատարել պլանավորված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն, ապա հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում այն ավարտին հասցնելը կանխելու պարտականություն նրա վրա չի կարող դրվել: Օրինակ, եթե երկու անձ պայմանավորվել են համատեղ կատարել բնակարան ապօրինի մուտք գործելով գողություն, և դեպքի վայր հասնելուց հետո, սակայն, նախքան հանցագործության օբյեկտիվ կողմը սկսելը, նրանցից մեկը հրաժարվել է շարունակել մասնակցել հանցագործությանը, ապա նա հանցագործությունից կամովին հրաժարվելու հետևանքով պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից, անկախ նրանից, թե մյուս հանցակիցը հանցագործությունը ավարտին հասցրել է, թե ոչ: Այսինքն՝ հանցագործությունը որպես համակատարող մասնակցելու համաձայնություն տված անձը, քանի դեռ հանցանքն անմիջականորեն կատարելուն ուղղված որևէ գործողություն չի կատարել, համակատարող չի համարվում, և հանցագործությունից կամովին հրաժարվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու համար նրա վրա հանցագործությունն ավարտին հասցնելը կանխելու պարտականություն դրված չէ: Իսկ պլանավորված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն կատարելու դեպքում անձն արդեն կհամարվի համակատարող և հանցագործությունից կամովին հրաժարվելու հիմքով քրեական պատասխանատվությունից կարող է ազատվել միայն ակտիվ գործողություններով հանցագործությունն ավարտին հասցնելը կանխելու միջոցով:

Կարծում ենք, որ այսպիսի կարգավորում նախատեսելիս օրենսդիրը հաշվի է առել նաև այն, որ եթե անձը հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն է կատարել, իսկ հետո հրաժարվել հանցագործությունը շարունակելու մտադրությունից, ապա հանցագործությունը մյուս համակատարողի կողմից ավար-

տին հասցվելու դեպքում, միևնույն է, նրա արդեն իսկ կատարած գործողությունների և հանցագործության հետևանքով վրա հասած հետևանքների միջև առկա է լիներու պատճառական կապ:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքում տրված հանցագործությունից կամովին հրաժարվելու հասկացության բնորոշումն առավել ամբողջական է և ընդգրկում է տեսության մեջ ներկայացվող հանցագործությունից կամովին հրաժարվելու բոլոր հատկանիշները:

Որոշակի փոփոխություններ են կատարվել հանցագործությունից կամովին հրաժարվելու հետևանքով հանցակիցներին քրեական պատասխանատվությունից ազատելու իրավակարգավորումներում: Մասնավորապես, հաշվի առնելով, որ օժանդակողի դերը հանցակցության մեջ որոշակիորեն տարբերվում է հանցագործության կազմակերպիչի և դրդիչի դերից՝ օրենսդիրը օժանդակության որոշ դրսևորումների պարագայում հանցագործությունից կամովին հրաժարվելու առանձնահատուկ կարգավորումներ է նախատեսել: Գործիք կամ միջոց տրամադրելու կամ խոչընդոտները վերացնելու եղանակով կատարված օժանդակության դեպքում հանցագործությունից կամովին հրաժարվելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատվելու համար բավարար է միայն տրամադրված գործիքը կամ միջոցը հետ վերցնելը կամ վերացված խոչընդոտը վերականգնելը: Այս դեպքում, ի տարբերություն օժանդակության մյուս դրսևորումների, անձի վրա ակտիվ գործողություններ կատարելու և հանցագործությունն ավարտին հասցնելը կանխելու պարտականություն դրված չէ:

Օրենսդրական այս նորամուծությունը թեև կարևոր է օժանդակողի արարքներին առավել ճիշտ իրավական գնահատական տալու կապակցությամբ, սակայն կարծում ենք, որ այն ամբողջական չէ և կարիք ունի լրամշակման:

Այն դեպքում, երբ օժանդակությունը դրսևորվում է հանցագործին, հանցագործության միջոցներն ու գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները պարտակելու, այդպիսի առարկաները ձեռք բերելու կամ իրացնելու խոստումով, հանցագործությունից հրաժարվելու համար բավական է միայն կատարողին տեղեկացնել, որ տրված խոստումները չեն կատարվելու: Այս դեպքում ևս հանցագործությունից կամովին հրաժարվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու համար օժանդակողի վրա չպետք է դրվի ակտիվ գործողություններ կատարելու և հանցագործությունը կանխելու պարտականությունը: Ուստի նպատակահարմար կլիներ Օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարվեին, և 80-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված բացառության մեջ ինտելեկտուալ օժանդակության նշված դեպքերը ևս նախատեսվեին:

Օրենսգրքով առանձնահատուկ կարգավորումներ են նախատեսվել նաև համակատարողի՝ հանցագործությունից կամովին հրաժարվելու կապակցությամբ: Մասնավորապես, մյուս հանցակիցների նմանությամբ համակատարողի համար հանցագործությունից կամովին հրաժարվելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատվելու համար ևս պարտադիր պայման է հանցագործությունն ավարտին հասցնելը կանխելը:

Հաշվի առնելով իրավակարգավորումների նույնությունը, ինչպես նաև այն, որ, ըստ քրեական նոր օրենսգրքի, համակատարողը հավասարեցված է մյուս հանցակիցներին՝ գտնում ենք, որ կարելի էր համակատարողի՝ հանցագործությունից կամովին հրաժարվելու համար առանձնահատուկ կարգավորում չնախատեսել և վերջինիս պարգապես ընդգրկել մյուս հանցակիցների կամովին հրաժարվելու պայմանները նախատեսող կարգավորման շրջանակներում:

Իրարամերժ մեկնաբանություններից խուսափելու, միատեսակ և ճիշտ իրավակիրառ պրակտիկա ձևավորելու համար անհրաժեշտ է հստակ արձանագրել, որ

հանցագործության նախապատրաստության փուլում համակատարումը որպես հանցակցության դրսևորման ձև գոյություն ունենալ չի կարող: Հետևաբար, հանցագործության նախապատրաստության փուլում հանցագործությանը համատեղ մասնակցելու նախնական համաձայնություն տված անձի կամովին հրաժարվելու համար կատարողի (մյուս համակատարողի) կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը կանխելու պարտականություն նախատեսված չէ:

Հանցագործություն օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն կատարելու պարագայում՝ համակատարողը հանցագործությունից կամովին հրաժարվելու հետևանքով քրեական պատասխանատվությունից կարող է ազատվել միայն ակտիվ գործողություններ կատարելու (իրավասու մարմիններին հաղորդելով կամ այլ միջոցներով) և կատարողի կողմից հանցագործությունը ավարտին հասցնելը կանխելու դեպքում: Ընդ որում, կատարողի կողմից հանցագործությունը ավարտին հասցնելը կանխել չկարողանալու դեպքում նա պատասխանատվության պետք է ենթարկվի մյուս համակատարողի հետ միասին ավարտված հանցանք կատարելու համար: Այս դեպքում նրա ծեռնարկված միջոցները հաշվի կառնվեն որպես քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Համառոտագիր

ՀՀ քրեական նոր օրենսգրքով (ընդունված 05.05.2021թ.) հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտը ստացել է նոր բովանդակություն, նախատեսվել են նախկինից տարբերվող նոր կարգավորումներ՝ հատկապես հանցագործությունից կամովին հրաժարվելու հետևանքով հանցակիցներին քրեական պատասխանատվությունից ազատելու կապակցությամբ: Նշվածով պայմանավորված՝ թեմայի վերաբերյալ հետազոտություններն արդիական են, կնպաստեն մեկնաբանման միասնական մոտեցումներ ձևավորելուն և կիեշտացնեն նոր կարգավորումներին գործնական կիրառումը:

Հետազոտության նպատակն է եղել հանցագործությունից կամովին հրաժարվելու հետևանքով հանցակիցներին քրեական պատասխանատվությունից ազատելու արդի հիմնախնդիրների վերհանումը, ինչպես նաև քրեական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկներ ներկայացնելը:

Հետազոտության արդյունքում հեղինակը անդրադարձել է կամովին հրաժարվելու օրենսդրական կարգավորումներում առկա խնդիրներին և ներկայացրել դրանց լուծման իր մոտեցումները: Մասնավորապես՝ օժանդակության որոշ դրսևորումների կապակցությամբ նախատեսված հանցագործությունից կամովին հրաժարվելու առանձնահատուկ կարգավորումները, հեղինակի կարծիքով, թերի են և ունեն լրամշակման կարիք: Բացի այդ՝ հեղինակը, անդրադառնալով համակատարողի հանցագործությունից հրաժարվելու վերաբերյալ առանձնահատուկ կարգավորում նախատեսելու նպատակահարմարությանը, գտել է, որ համակատարողի հանցագործությունից կամովին հրաժարվելու վերաբերյալ իրավակարգավորումը կարելի էր նախատեսել մյուս հանցակիցների՝ կազմակերպչի, դրդիչի և օժանդակողի՝ հանցագործությունից կամովին հրաժարվելու պայմանները նախատեսող իրավակարգավորման շրջանակներում՝ հաշվի առնելով, որ դրանք ամբողջությամբ նույնական են:

Հեղինակը անդրադարձել է նաև համակատարողի հանցագործությունից կամովին հրաժարվելու առանձնահատկություններին, ներկայացրել առկա կարգավորումների մեկնաբանություններ, որոնք կարող են օգտակար լինել գործնականում կամովին հրաժարվելու ինստիտուտը ճիշտ մեկնաբանելու և կիրառելու հարցում:

Բանալի բառեր – *հանցագործությունից կամովին հրաժարվել; հանցակից; հանցագործության կատարող; համակատարող; դրդիչ; կազմակերպիչ; օժանդակող*

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ОСВОБОЖДЕНИЯ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ СОУЧАСТНИКОВ В РЕЗУЛЬТАТЕ ДОБРОВОЛЬНОГО ОТКАЗА ОТ ПРЕСТУПЛЕНИЯ

Оганес Оганесян

*Соискатель кафедры уголовного права ЕГУ,
Член Палаты адвокатов РА, юрист,
e-mail: hovhannisyan.hovhannes@yahoo.com,
ORCID-0009-0006-8270-052X*

Абстракт

Согласно новому Уголовному кодексу РА (принятому 05.05.2021) институт добровольного отказа от преступления получил новое содержание, предусмотрены новые регулирования, отличающиеся от предыдущих, в частности относительно освобождения от уголовной ответственности соучастников в результате добровольного отказа от преступления. В связи с вышеизложенным, исследования по теме актуальны, будут способствовать формированию единых подходов к толкованию и облегчат практическое применение новых правил. Целью исследования было выявление современных проблем освобождения от уголовной ответственности соучастников в результате добровольного отказа от преступления, внесение предложений, направленных на совершенствование уголовного законодательства и правоприменительной практики.

В результате исследования автор затронул имеющиеся проблемы правового регулирования добровольного отказа и представил свои подходы к их решению. В частности, особые регулирования добровольного отказа от преступления относительно некоторых проявлений пособничества, по мнению автора являются неполными и нуждаются в доработке. Кроме того, автор, ссылаясь на целесообразность предусматривания специальных нормы отказа соисполнителя от преступления посчитал, что правовое регулирование добровольного отказа от преступления соисполнителя могло быть предусмотрено в рамках правового регулирования, предусматривающего условия добровольного отказа от преступления других соучастников - организатора, подстрекателя и пособника с учетом того что они полностью идентичны.

Автор также коснулся особенностей добровольного отказа соисполнителя от преступления, представил трактовки существующих регулирований, которые могут быть полезны на практике для правильного толкования и применения института добровольного отказа.

Ключевые слова- добровольный отказ от преступления; соучастник; исполнитель преступления; соисполнитель; подстрекатель; организатор; пособник.

THE CURRENT PROBLEMS OF EXEMPTION FROM CRIMINAL LIABILITY OF ACCOMPLICES AS A RESULT OF VOLUNTARY REFUSAL FROM A CRIME

Hovhannes Hovhannisyan

Postgraduate student at the YSU Chair of Criminal Law,

Member of the Chamber of Advocates of the RA, lawyer

Email: hovhannisyan.hovhannes@yahoo.com,

ORCID-0009-0006-8270-052X

Abstract

According to the new RA Criminal Code (adopted on 05.05.2021) the institution of voluntary refusal from a crime received a new content, new regulations different from the previous ones are envisaged, specifically regarding the Exemption from criminal liability of accomplices as a result of voluntary refusal from a crime. Based on the mentioned issue, researches on the subject are of current interest, will contribute to the formation of common approaches to interpretation and will facilitate the practical application of the new regulations.

The aim of the study was revealing the current problems of exemption from criminal liability of accomplices as a result of voluntary refusal from a crime, submitting proposals aimed at improving criminal legislation and law enforcement practice.

As a result of research, the author touched upon the available problems of legal regulations of voluntary refusal and presented his approaches for their solution. Specifically special arrangements regarding the voluntary refusal from a crime in relation to certain manifestations of assistance in the author's opinion are incomplete and need some improvement. Besides, the author, referring to the expediency of providing a special regulation regarding the refusal of the co-perpetrator from a crime, found that the legal regulation on the voluntary refusal from a crime by the co-perpetrator could have been foreseen within the framework of legal regulation providing conditions for voluntary refusal from a crime of other accomplices -the organizer, the abettor or the assistant taking into account that they are completely identical.

The author also referred to the peculiarities of the voluntary refusal from a crime by the co-perpetrator, provided comments on existing regulations which can be useful in practice in correctly interpreting and applying the institution of voluntary refusal.

Key words – *Voluntary refusal from a crime; accomplice; the perpetrator; co-perpetrator; the abettor; the organizer; assistant.*

THE CORRELATION BETWEEN THE TIME OF COMMITTING THE CRIME AND THE MOMENT OF THE END (COMPLETION) OF THE CRIME

Hayk Avetyan

Prosecutor of the Prosecution Office of Yerevan

haykavetyan8@gmail.com

<https://orcid.org/0009-0001-4001-8470>

1) Introduction.

The questions of **"the time of committing a criminal offense"** and **"the time of the completion of the crime (the end of the crime)"** constitute important components of the operation of criminal law over time. They are issues of great theoretical and practical importance and cause many legal disputes.

As Maria Blum pointed out, determining the exact moment or time of committing a crime is essential for several reasons: first, to establish the applicability of criminal law over time; second, to determine the illegality of a publicly dangerous act; third, to pinpoint the time of the emergence of criminal legal relations; and fourth, to define the preconditions of criminal responsibility, such as sanity, and to ascertain whether the individual has reached the legal age for criminal liability, etc.¹

The correlation between the statute of limitations for criminal liability and the moment of the commission of the crime possesses particular functional significance since the calculation of the statute of limitations commences from the day following the completion of the crime.

The issue of the time of the commission of the crime is particularly relevant because the RA Criminal and Criminal Procedure Codes came into force on July 1, 2022. For crimes committed before this date, it is crucial to consider the correlation between the law in force at the time of the act and the law in force at the time of applying a criminal-legal intervention measure. The precise determination of which law applies is key to assessing the criminality of the acts, determining the appropriate punishment, and applying other criminal legal consequences, including the calculation of the statute of limitations.

Based on the above, this article will provide a comprehensive analysis of diverse scientific approaches to the time of the commission of the crime, the moment of its completion, as well as their correlation. The methodology applied will involve legal comparative analysis, citing relevant regulations from both domestic and foreign jurisdictions, along with referencing numerous scholarly perspectives and scientific doctrines.

Consequently, this article will address the following questions: whether the onset of dangerous consequences can be regarded as the moment of committing the crime or if the actual act (action or inaction) should be deemed as such, irrespective of when the dangerous consequences materialized? Does the time of the commission of the crime coincide with the time of its completion, and how do these two moments

¹ *Якубов А. Е.*, Обратная сила уголовного закона, некоторые проблемы совершенствования Уголовного кодекса Российской Федерации, Издательство «Юридический центр Пресс, Санкт-Петербург, 2003, с. 34.

correlate? Finally, when should the statute of limitations begin to run? Based on the study and analysis, this article will also present proposals for relevant legislative changes.

2) Domestic and foreign positive law regarding the time of committing the crime.

According to the first and second parts of Article 8 of the Criminal Code of the Republic of Armenia;

"The criminality, punishability, and other criminal consequences of the act shall be determined by the criminal statute in force at the time of commission thereof

The time of committing a criminal offense shall be deemed to be the time of committing an action or inaction, irrespective of the moment the consequences ensue."

According to the first and second parts of Article 9 of the Criminal Code of the Republic of Armenia;

"The statute defining criminality of an act, aggravating the punishment or otherwise deteriorating the condition of a person having committed a criminal offense has no retroactive effect.

Legislation that fully or partially decriminalizes an act or mitigates the penalty has retroactive effect:

(...):"

The Parliament connects the time of committing the crime solely with the moment of committing the criminal act (action or omission), and therefore, the criminal law that was in force at the time of committing the criminal act is subject to application, irrespective of the laws in effect at the occurrence of dangerous consequences.

According to the first and second sections of the criminal code of the Federal Republic of Germany;

"An act can only incur a penalty if criminal liability was established by law before the act was committed."

"The penalty and any incidental legal consequences are determined by the law which is in force at the time of the act."

According to 18 United States Code § 13 (2021).

"Whoever within or upon any of the places now existing or hereafter reserved or acquired as provided in section 7 of this title, or on, above, or below any portion of the territorial sea of the United States not within the jurisdiction of any State, Commonwealth, territory, possession, or district is guilty of any act or omission which, although not made punishable by any enactment of Congress, would be punishable if committed or omitted within the jurisdiction of the State, Territory, Possession, or District in which such place is situated, by the laws thereof in force at the time of such act or omission, shall be guilty of a like offense and subject to a like punishment."

According to Article 112-1 of the Penal Code of the Republic of France.

"Conduct is punishable only where it constituted a criminal offense at the time when it took place.

Only those penalties legally applicable on the same date may be imposed.

However, new provisions are applicable to offences committed before their coming into force and which have not led to a res judicata conviction, when they are less severe than the previous provisions.

(...)"

According to the first and second parts of Article 9 of the Criminal Code of the Russian Federation on the "Operation of Criminal Law in Time."

"The criminality and punishability of a deed shall be determined by the criminal law that was operative upon the commission of this deed.

*The time of a socially dangerous action (inaction) is committed **shall be deemed to be the time of committing a crime**, regardless of the time of the onset of consequences."*

From the above-cited, it can be derived that the listed countries with well-developed legal systems and advanced criminal law regulations have adopted the approach of aligning the time of the crime with the moment of the commission of the criminal act. Subsequently, irrespective of whether there is a lengthy interval between the criminal act and the dangerous consequence, the time of committing the crime is considered to be the time of the commission of the actual criminal act (action or inaction). In such cases, the criminality, punishability, and other criminal consequences of the act are determined by the law in force at the time of the act, irrespective of the subsequent enactment of new laws.

3) Scientific doctrines regarding the time of committing the crime.

In the case of crimes, where the occurrence of dangerous consequences is not a mandatory component of the crime, or in the case of crimes, where although the occurrence of dangerous consequences is a mandatory component of the crime, yet there is a tiny or no temporal gap between the act and the occurrence of a dangerous consequence (for instance, when the perpetrator shoots the victim with a firearm, resulting in immediate death), no problem with the moment of the commission of the crime occurs.

However, under certain conditions where an extended period of time elapses between the act and the occurrence of a dangerous consequence (for instance, when the perpetrator shoots the victim with a firearm, but instead of immediate death, the victim passes away a few days later in the hospital), scholars hold varying perspectives with regard to the moment of the crime.

In particular, Professor N. Durmanov stated that in the case of crimes, where dangerous consequences are mandatory components of the objective aspect of the given crime, the moment of occurrence of those dangerous consequences should be considered as the moment of the commission of the crime.¹

Professor N. Tagantsev, also shared the belief that the time of occurrence of a dangerous consequence should be considered at the time of the act. This point of view was derived from the author's general approach that the provision of the most recent legal developments should be applied in all instances, even if it would be stricter.²

A. Boytsov objected to recognizing the moment of occurrence of dangerous consequences during the commission of the crime by noting that such an approach ignores the subjective basis of responsibility and that it sacrifices the subjective culpability to the objective culpability.³

In the case of material corpus delicti, the performance of a dangerous act that did not cause consequences is considered an attempted crime. This claim derives from the idea that the time of committing a criminal offence should be considered the moment when all the components of the criminal offense provided for by the Criminal Code are already present.

¹ *Дурманов. Н. Д.*, Советский уголовный закон. издательство московского университета, Москва 1967, с. 261.

² *Таганцев, Н. С.*, Русское уголовное право. Часть общая, Санкт-Петербург, 1902, с. 277.

³ *Бойцов А. И.*, Действие уголовного закона во времени и в пространстве., СПб, 1995, с. 65.

That is to say, concerning crimes where occurring of dangerous consequences are a mandatory component of the crime, A. Ignatov notes that only at the moment of the occurrence of the dangerous consequences all the mandatory components of the crime are present; therefore, that moment should be considered as the time of the commission of the crime.¹ It turns out that criminal responsibility for a completed crime can be imposed even when there are no grounds for it as provided for by the Criminal Code.

According to Doctor of Legal Sciences, Professor Gagik Ghazinyan, *"It would be more accurate to assert that a person can be held criminally liable for a completed crime when there are no grounds for it as provided by the Criminal Code, but rather that the criminal responsibility for a completed crime, may, in fact, be established by a law at the time when the crime was not yet consummated."*²

With this regard, N. Durmanov stated that if the factual circumstances of the act described in the criminal offense include the occurrence of a dangerous consequence as a mandatory characteristic of the objective side, then the crime should be considered committed when those consequences occur. At the same time, he adds that in cases where the person who has committed an act constituting the objective aspect of a crime does not foresee the occurrence of dangerous consequences, that is why he is deprived of foreseeing them even after the entry into force of the new law, as well as in cases where preventing a dangerous consequence is objectively impossible, then it is necessary to determine the responsibility according to the milder law in force at the time of the act.³

Ya. Braynin also expressed a similar point of view, noting that the time of the commission of the crime is the moment of the commission of the criminal act or omission, except for the cases when the criminal retains control over the development of events and can prevent the occurrence of dangerous consequences.⁴

Thus, reputable scholars in the field of criminal law hold varying and sometimes conflicting views on the issue. As mentioned earlier, one group of scholars believes that the time of committing a crime is exclusively tied to the moment of the criminal act or omission, emphasizing subjective culpability.

In contrast, another group contends that the commission of the crime is considered to end when all the mandatory elements of the crime are present. For material corpus delicti, they argue that the time of the crime should be deemed as the moment when the dangerous consequence occurs, thereby prioritizing objective culpability.

4) The approach of the RA legislation regarding the moment of committing a criminal offense.

It is necessary to examine this matter further to determine whether it is legitimate in all cases to associate the moment of the commission of the crime solely with the moment of the committing of criminal act (action or inaction).

According to first part of the Article 6 of the criminal code of Armenia;

"The person who committed the act provided by this Code without guilt is not subject to criminal liability. (...)."

¹ Якубов А. Е., IBID, с. 35.

² Պաղինյան Պ., Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում (Առաքելյան, Գաբրիելյան և այլք), ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, 2012 թ, էջ 49:

³ Дурманов Н. Д., IBID.

⁴ Брайнин Я. М., Уголовный закон и его применение. Москва, 1967. С. 136.

According to first part of the Article 21 of the criminal code of Armenia;

“Sanity is the ability of a person to realize the illegality of his/her act at the time of committing the crime and to control it.”

According to the Article 23 of the criminal code of Armenia,

“1. The person who committed the act provided by this Code, prohibited by the threat of punishment, is subject to criminal liability.

2. An act prohibited under the threat of punishment under this Code is considered to have been committed with guilty mind, if the person who committed it was aware of the illegality of his act or even though he was not aware of it, he could have been aware of it.”

Thus, the code is based on the principles of responsibility according to guilt and subjective culpability.

The principle of subjective culpability is a fundamental principle that consolidates the main philosophical, moral, ethical, and socio-legal provisions, according to which the legal doctrine and legislation are formed and constructed in such a way that the legal evaluation of the actions of a person and the application of legal measures against him/her are allowed only in case the circumstances of the act which are of legal significance were included in the consciousness of the person who committed it and are provided by law.

In the meaning of criminal law, the notion of guilt is the awareness of the illegality of the act. If a person does not realize and at the same time cannot realize that his/her act is illegal, then s/he acts without guilt and, therefore, cannot be held criminally responsible because, in that case, the act is not committed with guilty mind. This assertion implies that individuals engage in criminal activities not merely by committing acts prohibited under the threat of punishment as outlined in the RA Criminal Code, but fundamentally because s/he commits such an act with the awareness of the characteristic of illegality.

The reference to guilt and especially the institutions of subjective culpability is not coincidental. because when applying the whole principle of the operation of the law over time, and in particular when determining the moment of the commission of a criminal act, it is of utmost importance to be guided by the approach that the applicable law should align with the understanding present in an individual's consciousness at the time of their action or omission and at the moment of the occurrence of dangerous consequences.

As mentioned above, in the case of formal corpus delicti, no problem in determining the moment of the commission of the crime occurs, as the crime is considered completed at the time of the commission of the act (action or inaction). Contrary to this, in the case of material corpus delicti, there can be situations when there is a relatively long gap in time between the commission of the criminal act (action or inaction) and the occurrence of a dangerous consequence (for instance, if the perpetrator stabs the victim with the intent to kill, but the latter dies a month later in the hospital). In such a situation, when the criminal does not have any control over the occurrence of a dangerous consequence after the commission of the criminal act (action or inaction), it may seem legitimate and reasonable to take the approach that the time of the commission of the crime should be considered the moment of the commission of the criminal act (action or inaction), regardless of the fact when the dangerous consequence occurs, because the person who committed the criminal act is no longer able to change the course of events, that is, the course of events is already out of the control of the criminal, even if the latter repents of his act. In such instances, the perpetrator's attitude towards the act they committed can be considered as active remorse and taken into account when imposing punishment.

However, as mentioned above, another group of scholars presents a different approach in cases where the person who has committed the criminal act retains full control over the occurrence of the dangerous consequence of their act.

First example:

On May 30, 2022, «A» administers a slow-acting poison in «B's» food with the intent to terminate the latter's life. Only «A» possesses the antidote and at any time can save «B's» life by administering it. Nevertheless, «A» refrains from doing so, and subsequently, «B» passes away on August 15, 2022. It is worth mentioning that «A» being a doctor-pharmacist, deliberately chooses a poison with delayed effects, ensuring its impact months later.

Second example:

«A» wants to take revenge on «B», who was responsible for the death of «A's» 18-year-old son. In order to fulfill this intention, in December 2020, «A» planted a bomb in the apartment where «B» lives together with his family. Deliberately aware that each year «B's» family celebrates their son's anniversary at their residence, «A» programs the bomb to explode only three years later on «B's» 18th birthday, on December 1, 2023. Thus, by doing so, «A» aims to fulfill his revenge for the loss of his 18-year-old son.

In both of these scenarios, «A» commits an act constituting the objective aspect of murder. In one case, by poisoning «B» but knowing that the poison would take effect only months later; in the other case, by planting a bomb that would explode only three years later. Moreover, in both cases, «A» maintains complete control over the occurrence of a dangerous consequence because he could easily administrate the antidote and spare «B's» life. In the other instance, «A» could terminate the operation of the bomb that he planted.

According to the current criminal code of the Republic of Armenia, the time of committing the crime in both of the above-described cases is the moment of committing the criminal act, in the first example, the moment when «A» poured the poison into «B's» food, and in the second case, the moment when «A» put the bomb in the «B's» residence.

However, is such an approach legitimate in light of the scientific and doctrinal interpretations cited in this article?

In the first scenario;

a. «A» was well aware that the poison he administered would take effect only months later,

b. «A» wanted the dangerous consequence in the face of life's termination to occur months later,

c. «A» maintained effective control over the emergence of dangerous consequences so that he could prevent them at any moment.

In the second scenario;

a. «A» was aware that the bomb he planted would explode only years later,

b. «A» wanted the dangerous consequence in the face of life's termination to occur three years later,

c. «A» maintained effective control over the emergence of dangerous consequences so that he could prevent them at any moment.

In both cases, the perpetrator was well aware and fully acknowledged that the dangerous consequence would occur, not at the time of committing the dangerous act, but rather after a long period of time, and the criminal himself orchestrated that the consequences do not occur at the time of committing the act, but unfolds only months or even years later. In addition, the criminal had control over the entire period between the execution of the act and the occurrence of the consequences. In the sense of subjective culpability, the legally significant circumstances of the act, such as the time

of occurrence of the consequence, were included in the conscious awareness of the person who committed it.

In other words, the perpetrator was fully aware, intentionally orchestrated, and undertook all necessary measures so that death occurs at a specific moment in time. Thus, the perpetrator remained equally dangerous both at the moment of committing the criminal act and at the time when the consequences materialized. In this sense, it is vital to recall that the imposition of punishment on the perpetrator serves, *inter alia*, the purpose of correcting and resocializing. Regardless of when "A" administered the poison or planted the bomb, he had a persistent desire to inflict harm and dangerous consequences, as despite having an effective chance to prevent the occurrence of the latter, "A" refrained from doing so.

Certainly, in the cited examples, the criminal may intend for the dangerous consequences of their act to occur days, months, or even years after the act is committed. However, the individual knows at the time of committing the act that they have already done everything in their power to ensure the crime is fully realized. At the moment of committing the criminal act, all the elements of the *corpus delicti*; object, objective side, subject, and subjective side are already present.

In such circumstances, linking the moment of committing the crime with the occurrence of a dangerous consequence does not align with the previously cited principle of subjective guilt. Furthermore, if we accept for a moment that the occurrence of a dangerous consequence should be considered the time of the commission of the crime, in cases where there is a time gap between the act and the consequence and the criminal has control over preventing the consequence, this approach raises many questions regarding its application in real life.

- What constitutes a relatively long-term rupture?

For instance, if a criminal beats a person knowing that the victim will die within a few hours or days if no help is provided, and the victim dies the next day, should the time of the crime be considered the moment of the act itself, such as the beating, or the moment of the dangerous consequence, such as the death? Alternatively, should the occurrence of a dangerous consequence during the commission of a crime be considered only when it happens months or years later? In practice, this question does not have a clear-cut answer and may present more challenges than solutions.

- Is it possible to clearly assert in all cases that the criminal maintains control over the occurrence of a dangerous consequence?

For instance, in the second example cited, if the criminal intends to deactivate a bomb at the last minute and takes action on November 30, 2023, but due to technical or programming reasons, the bomb explodes anyway, killing the victim, can it be claimed that the time of the crime is the moment of the dangerous consequence rather than the moment the criminal failed to prevent it? On the other hand, the criminal had already taken all possible measures to prevent the crime. This illustrates that maintaining control over the emergence of a dangerous consequence is not a clear criterion and raises more questions than gives answers.

The cited reasoning demonstrates that the approach of RA legislation, which considers the time of committing the crime to be the moment of the criminal act (action or inaction), regardless of the timing of dangerous consequences, is more valid and scientifically substantiated.

5) The time (moment) when the crime is considered completed.

The issue of the time of end (completion) of the crime, unlike the time of committing the crime, was not clearly regulated by the legislator. In other words, if the time of the commission of the crime is specified by law, as the moment of the

commission of the dangerous act, then it is not clear when the time of the crime is considered completed. Is it identical with the time of the commission of the crime, or does the moment of completion of the crime require the presence of all the mandatory features of the crime?

The Code uses the term "the end of the crime" in relation to two criminal law institutions: the statute of limitations and the fine as a type of punishment.

According to Article 83 of the code.

"1. A person shall be released from criminal liability, if the following terms have elapsed since the day following the day of committing the criminal offence:

- 1) 5 years, in case of a minor criminal offence;*
- 2) 10 years, in case of medium gravity criminal offence;*
- 3) 15 years, in case of a grave criminal offence;*
- 4) 20 years, in case of particularly grave criminal offence."*

As indicated by the wording of the norm in this article, the statute of limitations begins to run from the day after the crime is ended (completed). In other words, the legislator's intent regarding the commencement of the limitation period is tied not to the time or moment of committing the crime but to the time when the crime ends.

In addition, according to Article 3, Part 1, point 6 of the Code

"Monthly income — the 35 percent of average monthly income received by the person during the twelve months preceding the date of end of the criminal offence."

According to Part 1 of Article 128 of the Code.

"The court shall determine the possibility to impose fine and the amount of fine, taking into consideration the gravity of the crime, property or non-property benefits received from the crime, property situation of the legal entity, the ability of the legal entity to receive income or the availability of such a property owned by it which can be confiscated. The amount of the fine shall be proportionate to the gravity of the crime and cannot exceed 20 per cent of the legal entity's gross income during the year preceding the completion of the crime."

Evidently, with respect to the statute of limitations and the type of penalty, the legislator links the commencement of certain criminal relations to the moment when the crime is considered completed. This raises a legal question about whether the time of committing the crime and the time of the completion of the crime are identical.

Part 2 of Article 15 of the RA Law "On Normative Legal Acts" defines:

"When expressing the same idea in a regulatory legal act, the same words, terms or phrases are used in a certain order."

According to Part 3 of the same Article.

"If a normative legal act uses new or ambiguous concepts or terms that cannot be clearly understood without clarification, or a different definition of these concepts or terms is given by another normative act, then the given act provides their definitions arising from the essence of that act. The definitions should be such as to ensure their uniform and unambiguous understanding and application."

The comprehensive analysis of these norms demonstrates that when the legislator refers to a specific phenomenon, they use a precise term in the normative legal act to describe it. For example, Article 3, Part 1, Clause 26 of the RA Criminal Code defines "regularly" as "committing the same act twice or more." Therefore, the term "identical" in the Code, wherever it is used, will have this singular meaning. Moreover, if the legislator uses different terms, it indicates that these terms have distinct meanings. According to Part 2 of Article 15 of the RA Law "On Normative Legal Acts," if the legislator intends to describe one phenomenon, then a single term will be used for that purpose.

Thus, the above analysis demonstrates that the terms "the time of the commission of the crime" and "the end of the crime" cannot be identical. If the legislator intended them to be synonymous, they would have used the same term for both the statute of limitations and the fine as a type of punishment.

6) The start of the calculation of the limitation period.

As already mentioned above, a person is released from criminal liability if certain periods have elapsed since the day following the end (completion) of the crime.

Article 14 of the Code defines;

"The ground for criminal liability is the committal of a completed and inchoate criminal offence."

According to article 42 of the Code.

"1. The intentional crime can have three stages: preparation of crime, attempted crime and completed crime."

2. Preparation of crime and attempted crime are considered inchoate crimes."

3. An intentional crime shall be deemed to be completed, if it contains all the elements of corpus delicti involved in the intention of the criminal."

From the interpretation of the above norms, it follows that a crime can be considered completed only when the dangerous consequences, which are a mandatory features of the crime, have occurred. For instance, in the case of murder as defined by Article 155 of the RA Criminal Code, the time of the crime's completion is considered to be the moment of the victim's death. Therefore, the statute of limitations does not begin when the criminal act is committed, but rather at the time the dangerous consequences occur. This is why the legislation uses the term "end of the crime" in relation to the statute of limitations.

From this point of view, the wording of Article 78a of the Criminal Code of the Federal Republic of Germany is noteworthy, according to which:

"The limitation period begins to run as soon as the offence is completed. If a result constituting an element of the offence occurs later, the limitation period begins to run as of that time."

The first sentence of this norm closely mirrors the wording of Article 83, Part 1, Clause 1 of the RA Criminal Code. In both, Armenian and German legislation, the statute of limitations is linked to the moment of completion of the criminal act. However, the second sentence of the cited Article 78a specifies that if the dangerous consequences occur sometime after the criminal act has been committed, the statute of limitations begins to run from the moment of the occurring of consequences.

It appears that the same logic is applied in Article 83, Part 1, Clause 1 of the RA Criminal Code, which is why the Armenian legislator uses two distinct terms: "commission of the crime" and "end of the crime". This distinction clarifies that the intention of the legislation is for the limitation period to begin only from the moment of the occurrence of dangerous consequences.

7) Conclusion

Thus, the time of the commission of the crime is the moment of the execution of the criminal act (action or omission), regardless of the moment of dangerous consequences. Moreover, all criminal consequences are related to the time of committing the criminal act, except for the retroactive effect of the mitigating law.

However, in terms of the calculation of the fine and the calculation of the beginning of the statute of limitations, the RA legislator has shown a different approach, taking as the beginning of the calculation the time of completion of the crime, which, as analyzed in this article, in the case of material corpus delicti, it is

necessary to consider the moment of occurrence of the dangerous consequences of the crime.

In such circumstances, in order to avoid various conflicting interpretations and to have a more specific regulation on this matter, it seems justified the approach that Article 83, Part 1, Clause 1 of the Code can be supplemented with the following sentence: "If a result constituting an element of the offence occurs later, the limitation period begins to run as of that time."

Abstract

The first part of the article examines the correlation between the time of committing a crime and the moment of its end (completion), highlighting their implications for criminal liability and legal application. The issue remains highly pertinent due to the enactment of the new Criminal and Criminal Procedure Codes of the Republic of Armenia on July 1, 2022, which underscores the importance of determining the applicable law for acts committed before this date. The article reviews diverse scientific perspectives and legislative approaches, comparing Armenian and international legal frameworks. The author demonstrates that the approach of RA legislation, which considers the time of committing the crime to be the moment of the criminal act (action or inaction), regardless of the timing of dangerous consequences, is more valid and scientifically substantiated.

At the second part of the article the author discusses the issue of the time of end (completion) of the crime, showing that the definition of it is not clearly regulated by the legislator. In other words, if the time of the commission of the crime is specified by the law, as the moment of the commission of the dangerous act, then it is not clear when the time of the crime is considered completed.

Through comparative analysis of Armenian and foreign legislation, the article states that the end of the crime does not coincide with the committing of the criminal act, and the author shows that the calculation of the beginning of the statute of limitations, in the case of material corpus delicti, it is necessary to consider the moment of occurrence of the dangerous consequences of the crime.

Finally the author proposes legislative refinements to better align with doctrinal interpretations and to improve practical applications.

Key words - *criminal offense; commission of the crime; completion of the crime; dangerous consequence; culpability; statute of limitations; formal corpus delicti; material corpus delicti.*

ԿՏՆԱԳԱԿՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՀՐ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հայկ Ավետյան

Երևան քաղաքի դատախազության դատախազ

haykavetyan8@gmail.com

<https://orcid.org/0009-0001-4001-8470>

Համառոտագիր

Հոդվածի առաջին մասում ուսումնասիրվում է հանցագործության կատարման ժամանակի և դրա ավարտման պահի հարաբերակցությունը՝ ընդգծելով դրանց նշանակությունը քրեաիրավական հետևանքների և իրավակիրառման տեսանկյունից: Այս խնդիրը շարունակում է մնալ խիստ արդիական՝ 2022 թվականի հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետության քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի ուժի մեջ մտնելու պատճառով մինչ այդ կատարված հանցավոր արարքների համար կիրառելի օրենքի որոշման առումով: Հոդվածում արծարծվում են գիտական և օրենսդրական տարբեր մոտեցումներ՝ համեմատելով ներպետական և միջազգային իրավական համակարգերը: Հեղինակը ցույց է տալիս, որ առավել համոզիչ և գիտականորեն հիմնավորված է ՀՀ օրենսդրության այն մոտեցումը, որը հանցանքի կատարման ժամանակ է համարվում հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) կատարման պահը:

Հոդվածի երկրորդ մասում հեղինակը քննարկում է հանցագործության ավարտման ժամանակի հարցը՝ ցույց տալով, որ դրա սահմանումը հստակորեն չի կարգավորվում օրենսդրի կողմից: Այսինքն, եթե հանցագործության կատարման ժամանակը օրենքով սահմանված է որպես վտանգավոր արարքի կատարման պահ, ապա պարզ չէ, թե երբ է հանցագործության ավարտման ժամանակը:

Ներպետական և միջազգային օրենսդրության համեմատական վերլուծության միջոցով հոդվածում ցույց է տրվում, որ հանցագործության ավարտը չի համընկնում հանցավոր արարքի կատարման հետ, և որ վաղեմության ժամկետի սկզբի հաշվարկը նյութական հանցակազմերի դեպքում անհրաժեշտ է դիտարկել հանցագործության վտանգավոր հետևանքների առաջացման պահը:

Վերջապես, հեղինակն այս առնչությամբ առաջարկում է օրենսդրական լրացում՝ դոկտրինալ մեկնաբանություններին ավելի լավ համապատասխանելու և իրավակիրառումը բարելավելու նպատակով:

Բանալի բառեր – *հանցանք; հանցանքի կատարում; հանցանքի ավարտ; վտանգավոր հետևանք; մեղսայնացում; վաղեմության ժամկետ; ծնական հանցակազմ; նյութական հանցակազմ*

МОМЕНТ НАСТУПЛЕНИЯ ОПАСНЫХ ПОСЛЕДСТВИЙ КАК МОМЕНТ СОВЕРШЕНИЯ ПРЕСТУПЛЕНИЯ

Айк Аветян

Прокурор Прокуратуры города Ереван

haykavetyan8@gmail.com

<https://orcid.org/0009-0001-4001-8470>

Абстракт

В первой части статьи рассматривается взаимосвязь времени совершения преступления и момента его завершения, подчеркивается их значение для уголовных последствий и правоприменения. Вопрос остаётся весьма актуальным с точки зрения определения применимого права к преступным деяниям, совершенным до вступления в силу с 1 июля 2022 года новых Уголовного и Уголовно-процессуального кодексов Республики Армения. В статье рассматриваются различные научные и законодательные подходы, сравниваются отечественные и международные правовые системы. Автор показывает, что более убедительным и научно обоснованным является подход законодательства РА, который рассматривает момент совершения преступного деяния (действия или бездействия) как время совершения преступления.

Во второй части статьи автор поднимает вопрос о моменте окончания преступления, показывая, что его определение недостаточно четко регламентировано законодателем. Иными словами, если время совершения преступления определяется законом как момент совершения опасного деяния, то неясно, когда наступает время окончания преступления.

Путем сравнительного анализа отечественного и международного законодательства показано, что окончание преступления не совпадает с исполнением преступного деяния, а исчисление начала срока давности по делам с материальным составом преступления, необходимо учитывать момент возникновения опасных последствий преступления.

Наконец, автор предлагает законодательную поправку в этом отношении, чтобы лучше согласовать доктринальные интерпретации и улучшать практическое применение.

Ключевые слова: *Преступление; совершение преступления; окончание преступления; опасное последствие; виновность; срок давности; формальный состав преступления; материальный состав преступления.*

ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԻ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Ֆիլիանա Բելլույան

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի

պաշտպանության վարչության դատախազ

ԵՊՀ եվրոպական և միջազգային

իրավունքի ամբիոնի ասպիրանտ

fbelluyan@gmail.com

Orcid-0000-0003-0193-1184

Ներածություն

Միակողմանի տնտեսական սանկցիաները աշխարհում ձևավորված գլոբալիզացիայի պայմաններում վնաս են հասցնում ոչ միայն սանկցիայի օբյեկտ պետությանը, այլև միջազգային հանրությանը: Ուստի, միակողմանի տնտեսական սանկցիաների իրավաչափության հարցը գնահատելը, դրաց կիրառման առանձնահատկությունները վեր հանելը կարևոր նշանակություն ունի ազգային տնտեսությունը պահպանելու, հումանիտար և այլ հետևանքները նվազագույնի հասցնելու հարցում:

Աշխատանքի նպատակն է վեր հանել միակողմանի տնտեսական սանկցիաների կիրառման պատճառները, կիրառման ոլորտները, դրանց հետևանքները, ինչպես նաև գնահատել դրանց կիրառման իրավաչափ լինելը: Դրան համապատասխան՝ աշխատանքի խնդիրներն են՝ հետազոտել տնտեսական հարաբերություններում միակողմանի տնտեսական սանկցիաների կիրառման տեսական և գործնական հիմնախնդիրները, միջազգային իրադրությունը՝ վերլուծելով միակողմանի սանկցիաների կիրառման դեպքերը: Օգտագործվել են տեսական, սոցիոլոգիական, դիալեկտիկական մեթոդները:

Միջազգային տնտեսական սանկցիաների՝ մարդու իրավունքների վրա ազդեցության վերաբերյալ բազմաթիվ հրապարակումներ կան, սակայն նույնը չենք կարող ասել միակողմանի սանկցիաների իրավաչափության և մարդու իրավունքների վրա դրանց ազդեցության վերաբերյալ: Տնտեսական սանկցիաների կիրառումը պետք է իրականացվի իրավունքի գերակայության սկզբունքներին համահունչ, մինչդեռ կան բազմաթիվ խնդիրներ, այդ թվում՝ սանկցիաների նշանակությունը բացատրելու համար օգտագործվող հասկացութաբանության մասով: Սանկցիաների առաջարկը և փաստացի կիրառումը շատ արագ են տեղի ունենում՝ երբեմն համապատասխան իրադարձությունը տեղի ունենալուց հետո՝ մեկ օրվա ընթացքում, ինչը ժամանակ չի թողնում գնահատելու դրանց օրինականությունը և մարդու իրավունքների վրա դրանց ազդեցությունը, ինչպես Մալիի և Մյանմայի դեմ կիրառված սանկցիաների պարագայում այդ երկրներում տեղի ունեցած պետական հեղաշրջումներից հետո՝ համապատասխանաբար 2020 և 2021 թվականներին: Սանկցիաների հումանիտար հետևանքների ծավալները Անվտանգության խորհրդին հարկադրեցին հրաժարվել համընդգրկուն սանկցիաներից: Անկախ ՄԱԿ-ի անդամների մեծ մասի՝ միակողմանի տնտեսական սանկցիաների կիրառման նկատմամբ քննադատական մոտեցումներից՝ գործնականում սանկցիաների թիվը գնալով աճում է, մինչդեռ սանկցիաները գնահատելիս միշտ պետք է հաշվի առնել հումանիտար հետևանքները, և պետք է կիրառվի որոշակի մեթոդոլոգիա՝ դրանք չեզոքացնելու համար: Որպես առաջարկվող լուծումներից մեկը, կարծում ենք՝ սանկցիաների վե-

րաբերյալ գործերը պետք է քննվեն միջազգային դատական մարմինների, ինչպես նաև միջազգային կոմպետենտ քվադրատարանների և մարդու իրավունքների պաշտպանության մարմինների կողմից: Վեճերի վերաբերյալ բազմաթիվ դատական գործերի առկայությունը հնարավորություն կտա հաստատելու օրենքի գերակայության սկզբունքը սանկցիաներ կիրառելիս: Բացի այդ, միակողմանի սանկցիաների հումանիտար հետևանքները պետք է գնահատվեն, ինչպես օրինակ Անվտանգության խորհրդի կիրառած սանկցիաների առնչությամբ ՄԱԿ-ի երեխաների կոմիտեն (ՅՈՒՆԻՍԵՖ-ը) գնահատում իրականացրեց¹: Պետությունները սանկցիաներ կիրառելիս պետք է հաշվետու լինելու պարտավորություններ ստանձնեն ՄԱԿ-ի և հանրության առաջ, դրա հետ մեկտեղ ՄԱԿ-ի ինստիտուտները պետք է համընդգրկուն մոնիթորինգ իրականացնեն դրանց հումանիտար ազդեցության վերաբերյալ, քանզի սանկցիաները կարող են ամբողջությամբ քայքայել պետության տնտեսական համակարգը, հանգեցնել անդառնալի աղետների, ճգնաժամի, սովի:

Հետազոտություն

2021թ. մայիսի 14-ին ժնկում Եվրամիության հատուկ զեկուցողի նախագահությամբ տեղի է ունեցել փորձագետների խորհրդակցություն՝ միջազգային իրավունքում միակողմանի տնտեսական սանկցիաների և դրանց հետևանքների վերաբերյալ,² որի ընթացքում միակողմանի տնտեսական սանկցիաների, դրանց իրավաչափությանը գնահատական տալու վերաբերյալ արժեքավոր հայտարարություններ են արվել փորձագետների կողմից:

Մասնավորապես՝ խորհրդակցության ընթացքում փորձագետ Թիմոֆեևը ուշադրություն հրավիրեց միակողմանի և բազմակողմանի սանկցիաների տարբերության վրա՝ նշելով, որ համընդհանուր ճանաչմամբ սանկցիաները բազմակողմ են, եթե դրանք բխում են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերից: Ըստ նրա՝ սեկտորալ սանկցիաները կարող են հանգեցնել նրան, որ ընկերությունը հայտնվի ցուցակում զուտ այն պատճառով, որ տնտեսության որոշակի ուղղության է պատկանում: Նա նշեց, որ նպատակային սանկցիաները ՌԴ-ում բազմաթիվ քննարկումների առարկա են դարձել, մասնավորապես այն հարցի առնչությամբ, թե որն է սանկցիայի իրական նպատակը, քանի որ սանկցիայի օբյեկտի դերում կարող է հայտնվել նաև պետությունը, թեկուզ դա կարող է ուղղակիորեն ամրագրված չլինել սանկցիայի վերաբերյալ փաստաթղթերում: Դրա համատեքստում Թիմոֆեևը նշեց, որ նպատակային սանկցիաները կարող են այնքան մեծ ազդեցություն ունենալ, որ գործնականում վերածվեն համընդգրկուն սանկցիաների: Երկրորդային սանկցիաները կամ այլ կերպ ասած՝ սանկցիաները խախտողների դեմ սանկցիաները ևս մեկ կարևոր ճգնաժամային հիմնախնդիր են, օրինակ՝ ԱՄՆ պարագայում, որը հիմնավորեց իր էքստերիտորիալ իրավասությունը նրանով, որ օտարերկրյա գործարքները ԱՄՆ դուրսով են իրականացվում:

Խորհրդակցության ժամանակ փորձագետ Ռույեն ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի սանկցիաները դիտարկեց որպես «միջազգային սանկցիաներ» և դրանք տարբերակեց այլ սանկցիաներից՝ վերջիններս կոչելով «միակողմանի սանկցիաներ»: Նա նշեց, որ խնդիրները կարող են ծագել այն պետությունների «թեթև» վերաբերմունքից, ովքեր կիրառում են սանկցիաներ՝ հնարավորություն տալով դրանց տարածմանը, և որ սանկցիաների կիրառման հետևանքով առաջացող մարդու իրավունքներին առնչվող խնդիրները նույնական են՝ անկախ այն բանից՝ միջազգա-

¹ Տե՛ս <https://www.unicef.org/globalinsight/media/2531/file/%20UNICEF-Global-Insight-Sanctions-and-Children-2022.pdf>

² Տե՛ս UN Special Rapporteur on the negative impact of unilateral coercive measures on the enjoyment of human rights, 14.05.2021, ժնկ: <https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/UCM/expert-consultation-26April2021.pdf>

յին, թե միակողմանի սանկցիաների կիրառման հետևանքով են առաջանում: Նա նշեց նաև, որ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից սանկցիաների՝ առավել շատ դեպքերով կիրառման հնարավորությունն առավել քիչ է, քան միակողմանի տնտեսական սանկցիաների պարագայում: Դա պայմանավորված է նրանով, որ միջազգային կազմակերպություններում պետությունների որոշակի քանակը պետք է պարտադիր հավանություն տա սանկցիաների կիրառմանը:

Ընդհանրացնելով իր հիմնական շեշտադրումները՝ պրոֆեսոր Ռույեն ասաց, որ հարկադրանքի միջոցները և սանկցիաները, այդ թվում՝ միակողմանի, կարող են ծառայել օրինական նպատակների իրագործմանը և լինել համաչափ: Եթե վերլուծությունը կենտրոնացնենք ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող միակողմանի տնտեսական սանկցիաների վրա՝ վերջիններիս ակտիվները սառեցնելու եղանակով, ապա սանկցիաներն իրենց էությամբ գործնական հետևանքներ ունեն՝ գրկելով մարդուն իր սեփականությունից և գործառույթային աշունով համարժեք են քրեական դատավարությունում կիրառվող անվտանգության միջոցներին: Դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնել ընթացակարգային երաշխիքները, ինչպես նաև համաչափության սկզբունքը:

Դատական մի շարք գործերում համապատասխան մոտեցումն արտացոլված է: Սակայն վերջին շրջանի մի շարք որոշումներում (2016-2020թթ.) նկատվում է ստուգվող սանկցիաների՝ իրավական սկզբունքների հետ փաստացի համադրությունից հրաժարում: Թեև ձևական առումով սկզբունքները հիշատակվում են որոշումներում, սակայն փաստացի դրանք չեն դիտարկվում:

Նպատակային սանկցիաների մասով պրոֆեսոր Ռույեն նաև հայտարարեց, որ չկա դրանք սկզբնապես վիճարկելու իրավական մեթոդ, և պատժիչ միջոցները վիճարկելու անհնարինության հետ ժողովրդավարական հասարակության պայմաններում դժվար է համակերպել: Ինչ վերաբերում է սանկցիաների հետևանքների արդյունավետությանը կամ հակառակ ազդեցություն ունենալուն, ապա, նրա խոսքով, դրանք կարող են նախատեսվածի համեմատ ավելի մեծ վնաս հասցնել: Դրա գործնական օրինակներից էր ԱՄՆ և Եվրոպական միության կիրառած սանկցիաները Ռուսաստանի Դաշնության դեմ 2014 թվականի Դրիմի անեքսիայից հետո, որի հետևանքներից էր, որ ընկերությունները չէին կարողանում արտասահմանից ստանալ ֆինանսավորում, ուստի դիմեցին պետության բանկերին: Որոշ դեպքերում ընկերությունները յուրացվեցին պետության բանկերի կողմից ցածր գներով՝ ընկերությունների ունեցած պարտավորությունների վերաֆինանսավորման հնարավորության բացակայության պատճառով, քանի որ վարկերի մատակարարման այլընտրանքներ չկային: Որպես այս ամենի հետևանք՝ հարստացան բանկերը:

Փորձագետ Գլանդինի կարծիքով՝ միջազգային իրավունքում միակողմանի սանկցիաները հակաօրինական ճանաչելու կամ այսպիսի գնահատական տալու համար հիմքեր չկան: ՄԱԿ-ի կանոնադրության մեջ անդամ պետություններին իրենց պատժիչ միջոցները կիրառելն արգելող նորմեր կամ սկզբունքներ բացակայում են: Ավելին՝ որևէ միջազգային սովորույթ, պայմանագիր կամ սկզբունք չկա, որը կարգելի անդամ պետություններին կիրառելու խաղաղ հարկադրանքի միջոցներ կամ սանկցիաներ: Միջազգային դատարանը «Նիկարագուան ընդդեմ ԱՄՆ» գործով 1986թ. հունիսի 27-ի որոշմամբ հաստատել է, որ տնտեսական հարկադրանքը չի հակասում միջազգային իրավունքին: Առևտրային էմբարգոն և սահմանափակող միջոցները Միջազգային դատարանի կողմից չճանաչվեցին հակաօրինական, ընդ որում՝ դատարանը շեշտադրեց, որ կարևոր է՝ դրանք չուղեկցվեն ուժի կամ դրա կիրառման սպառնալիքով, դրանց կիրառմամբ պետության քաղաքական կամ տարածքային ամբողջականության խախտմամբ և ՄԱԿ-ի նպատակներին հակասող այլ եղանակներով:

Պրոֆեսոր Ռույսը մանրամասն խոսեց հասկացութաբանության խնդրի մասին՝ նշելով մասնավորապես, որ «սանկցիաներ» հասկացությունը միջազգային իրա-

վունքում մեկ միասնական նշանակություն չունի, իսկ «էքստերիտորիալ» հասկացությունը կիրառվում է անհետևողականորեն՝ որպես օրինակ նշելով այն, թե ինչպես Եվրոպական հանձնաժողովը Եվրոպական Միության «մազնիտական» սանկցիաները անվանում է ոչ էքստերիտորիալ: Նա նշեց, որ ռետորսիաների թվին կարող են դասվել այնպիսի գործողություններ, որոնք բարեկամական բնույթ չունեն, սակայն չեն խախտում պետությունների միջազգային-իրավական պարտավորությունները: Պրոֆեսոր Ռույսը նշեց հասկացութաբանական խնդիրների 3 տարր. առաջինը «սանկցիա ուղարկող» պետությունների կողմից հասկացությունների իրավաբանական ձևակերպման բացակայությունը, ինչը կարող է պայմանավորված լինել պետությունների՝ ձևակերպումներ տալու ցանկության բացակայությամբ, որոնցում վերջիններս ստիպված կլինեն ընդունելու իրենց միջազգային պարտավորությունների խախտումները, երկրորդ՝ բարդությունը, քանի որ հասկացությունների օգտագործման տարբերություններ գոյություն ունեն և երրորդ՝ հարկադրանքի միջոցների օրինականության հիմքում ընկած էական անորոշությունները, այդ թվում՝ չմիջամտելու սկզբունքի և երրորդ մասնակցի կողմից հակազդման միջոց կիրառելու հարաբերություններում:

Նա հայտարարեց լրացուցիչ դատական նախադեպերի ստեղծման անհրաժեշտության մասին, որոնք ունակ կլինեն նվազեցնելու հարկադրանքի միջոցների օրինականության հարցի վերաբերյալ անորոշությունը, և առաջարկեց դիմել Միջազգային դատարան՝ այդ հարցի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն ստանալու համար:

Խորհրդակցության ընթացքում ելույթով հանդես եկավ նաև փորձագետ Կազագին, ով հայտարարեց, որ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից լիազորված սանկցիաների ոլորտում պետք է գործի օրինականության կանխավարկածը, սակայն դրա հետ միասին պետք է գոյություն ունենա դրանց օրինականությունը և կիրառման հիմքում ընկած փաստերի իրական լինելը վիճարկելու հնարավորությունը: Նրա կարծիքով՝ բոլոր մնացած սանկցիաները (միակողմանի և երկրորդային) ընդհանուր առմամբ հակասում են միջազգային իրավունքին մի քանի պատճառներով, այդ թվում՝ էքստերիտորիալ իրավասության մասով, որը խախտում է պետության գործերին չմիջամտելու և ինքնիշխանության սկզբունքներին: Այդ իսկ պատճառով ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից չերաշխավորված ցանկացած սանկցիաների կիրառման հարաբերություններում պետք է գործի դրանց անօրինական լինելու կանխավարկածը՝ օրինական լինելու ապացուցման բեռը դնելով սանկցիա կիրառած պետության վրա և անօրինական սանկցիայի կիրառման հետևանքով պատճառված վնասի հատուցման պարտավորությունը դնելով վերջինիս վրա:

Երկրորդային սանկցիաների մասին նա նշեց, որ երրորդ երկրների կորպորացիաները կարող են խոցելի լինել երկրորդական սանկցիաների համար, որոնք կիրառվում են ազդեցիկ երկրների կողմից: Նա նաև շեշտադրեց, որ այդ սանկցիաները ավելացնում են առաջնային սանկցիաների կիրառման հետևանքով առաջացած վնասը, և հավելեց, որ դրանց բացասական ազդեցությունը հաճախ բավարար չափով ուշադրության չի արժանանում:

Պրոֆեսոր Ջայասը իր ելույթում նշեց, որ միակողմանի հարկադրանքի միջոցները չեն կարող համարվել օրինական բացառությամբ այնպիսի հանգամանքների, ինչպիսիք են, օրինակ՝ զենքի էմբարգո կիրառելը՝ խաղաղությունն ամրապնդելու նպատակով: Ոչ մի պարագայում սանկցիաները չեն կարող օգտագործվել «պատժելու» համար, այլ պետք է նպատակ ունենան սանկցիայի թիրախ դարձած պետությանը հարկադրելու դադարեցնել որևէ արարք:

Գլխավոր ասամբլեան ընդունել է 28 բանաձև՝ այն պահանջով, որ ԱՄՆ-ն չեղարկի Կուբայի դեմ էմբարգոն, սակայն այդ բանաձևերը անտեսվել են: Ուստի, անհրաժեշտ է դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարանին, որպեսզի վերջինս տա խորհրդատվական եզրակացություն, որպեսզի համապատասխան գործողություն-

ները միջազգային իրավունքին հակասող ճանաչվեն, և պետության համար փոխ-հատուցման պահանջ նախատեսվի: Դրան համապատասխան Միջազգային դատարանը պետք է քննարկի հարցը՝ արդյոք միակողմանի միջոցները «մարդկության դեմ հանցագործություն են», թե ոչ՝ համաձայն Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի, եթե հաստատվի, որ այդ միջոցները հանգեցրել են տասնյակ հազարավոր մարդկանց անժամանակ մահվան ջրի, դեղորայքի պակասի պատճառով՝ հատկապես համաճարակի ժամանակ:

Փորձագետների ելույթներից հետո քննարկումներ տեղի ունեցան: Բարձրացված հարցերը հետևյալն էին. որքանով են պետություններն ազատ իրենց տարածքում գործողություններ իրականացնելիս, օրինակ՝ այլ երկրի դեմ կիրառված սանկցիաները խախտող իր ներքին սուբյեկտի նկատմամբ, ինչպիսի՞ միակողմանի սանկցիաները կարող են իրավաչափ համարվել միջազգային իրավունքի տեսանկյունից, ի՞նչ իրավական մեխանիզմներ կարող են նշանակություն ունենալ, կա՞ն արդյոք էքստերիտորիալ միջոցներ, որոնք միանշանակ անօրինական են:

Ապացուցման բեռի մասով փորձագետ Սուենսթոնը հղում կատարեց Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրին, որը Առևտրի համաշխարհային կազմակերպության համաձայնագրի մասն է և միավորում է 164 երկիր: Ըստ նրա՝ տուժած պետությունը, որը հայց է ներկայացնում, պետք է ապացուցի, որ իրեն պատճառված վնասը հակասում է Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրին (*prima facie*), անյուևետև պատասխանողը պետք է հիմնավորի իր արարքը:

Պրոֆեսոր Շտրաուսը նշեց, որ սանկցիաները գնահատելիս հումանիտար հետևանքները միշտ պետք է հաշվի առնվեն՝ նշելով, որ հումանիտար հետևանքները սանկցիաների ամենահաստատուն հետևանքն են, և որ միջազգային հանրությունն ընդունել է, որ դա գոյություն ունեցող խնդիր է բազմաթիվ եղանակներով՝ Անվտանգության խորհրդի՝ համընդգրկուն սանկցիաների կիրառումից խուսափելով, Հատուկ զեկուցողի մանդատի ստեղծմամբ և այն նշանակությամբ, որը ժնկի կրնվեցնիաները տալիս են պետությունների գործողությունների հումանիտար հետևանքներին: Նա նշեց, որ եթե վերջին դեպքում այդ հետևանքները վերաբերում են ռազմական գործողություններին, ապա սանկցիաների համատեքստում դրանք առավել նշանակալից կարող են լինել:

Պրոֆեսոր Ռույեն բարձրացրեց սանկցիայի օրինականությունն ապացուցելու ապացուցման բեռի խնդիրը՝ նշելով, որ ֆիզիկական անձը, ում նկատմամբ կիրառվել է սանկցիա, ունակ չէ իր տեսանկյունից վերլուծելու սանկցիաների համաչափությունը դրանց նպատակներին, մինչդեռ պետությունն ունակ է դա անելու:

Պրոֆեսոր դը Ջայասը հղում կատարեց միակողմանի հարկադրանքի միջոցներին առնչվող մի շարք հանձնարարականների, որոնք թեև ամրագրվել էին ՄԱԿ փաստաթղթերում, սակայն չեն իրագործվել:

Քննարկման այդ մասից հետո հատուկ զեկուցողը լրացուցիչ հարցեր տվեց, որոնք մասնավորապես հանգում էին հետևյալին. արդյո՞ք պետք է գոյություն ունենան հակասանկցիաների օրինականությունը գնահատող չափանիշներ, արդյո՞ք պետք է սանկցիաների օբյեկտ անձանց նկատմամբ նախ իրականացվի քրեաիրավական դատավարություն, բացի այդ՝ բարձրացրեց հարց, որը վերաբերում էր անձանց թիրախավորմանը զուտ այն բանի համար, որ վերջիններս որոշակի պաշտոն են զբաղեցնում կամ բարեկամական հարաբերությունների մեջ են այն անձանց հետ, որոնց նկատմամբ սանկցիա է կիրառվում:

Նպատակուղղված սանկցիաների վերաբերյալ պրոֆեսոր Ջայասը նշեց, որ դատավարական նորմերի պահպանումը կարևորագույն պայման է: Ինչ վերաբերում է հակընդդեմ սանկցիաներին, հայտարարեց, որ դրանք կախված են առաջնա-յին սանկցիաների առկայությունից, և որ դրանց փոխարեն պետք է կողմերի միջև երկխոսություն լինի՝ պայմանավորված սանկցիաների հումանիտար հետևանքներով: Նշեց նաև, որ եթե սանկցիաները անօրինական են, ապա դա պետք է հիմք լինի վնասի հատուցման հարցը քննարկելու համար:

Մեր կարծիքով՝ միակողմանի տնտեսական սանկցիաների ապօրինի լինելու վերաբերյալ տեսակետն ավելի հիմնավոր է ինքնին (հիմնավորումները՝ ստորև), սակայն դրանց կիրառման պարագայում ցանկացած միակողմանի միջոց պետք է միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխանի, այդ թվում՝ ուժի կիրառման արգելքի, պետության ներքին գործերին չմիջամտելու, խտրականության արգելքի, ինքնիշխան հավասարության, մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին, և պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ սանկցիայի թիրախ դարձած պետությանը հարկադրելու դադարեցնել որևէ ապօրինի արարք: Միևնույն ժամանակ միակողմանի միջոցների կիրառումը չպետք է լինի ուժի կիրառման այլընտրանք: Ցանկացած միակողմանի միջոց պետք է ժամանակավոր բնույթ ունենա: Սանկցիաները պետք է ունենան կիրառման ավարտի հստակ ամսաթիվ, կիրառման հստակ չափանիշներ և սանկցիաները չեղարկելու հստակ կառուցակարգեր, ընդ որում՝ չեղարկելուց հետո դրանց կրկին կիրառումը պետք է հիմնավորված լինի: Միակողմանի սանկցիաների կիրառման պարզությունը չպետք է արդարացնի դրանց կիրառումը (օրինակ՝ պետությունները չպետք է սանկցիաների կիրառումը պատճառաբանեն նրանով, որ ցանկացած պետություն ինքն է որոշում իր տնտեսական քաղաքականությունը, տնտեսական հարաբերությունների ուղղությունները, գործընկերներին և այլն): Բացի այդ, որևէ սանկցիա չպետք է դատական բողոքարկումներից դուրս մնա: Պետք է անկախ և անաչառ ատյանին բողոքարկելու հնարավորություն լինի ցանկացած պարագայում:

Տեսության մեջ միակողմանի տնտեսական սանկցիաների վերաբերյալ կա երկու տեսակետ. առաջին տեսակետի համաձայն՝ միակողմանի տնտեսական սանկցիաները համապատասխանում են միջազգային իրավունքին և պետություններին բնորոշ տնտեսական ազատության մաս են կազմում: Եթե առավել որոշակի ասենք, ապա ըստ այդ տեսակետի՝ ո'չ պայմանագրերում, ո'չ սովորության կարգավորումներում պետությունների համար չկա իրենց տնտեսական հարաբերությունները ազատորեն փոխելու ուղղակի արգելք, այդ թվում՝ մեկ այլ պետության կամ սուբյեկտի դեմ տնտեսական սանկցիա կիրառելով: Իհարկե, այդ ազատությունը չի կարող այնքան լայն լինել, որ հնարավորություն տա պետություններին խախտելու իրենց ստանձնած միջազգային պարտավորությունները:

Այդ դիրքորոշումն ուներ Միջազգային դատարանը վերը հիշատակված Նիկարագուայի գործով, որի որոշման մի մասը վերաբերում էր ԱՄՆ կողմից Նիկարագուայի դեմ կիրառված տնտեսական սահմանափակումներին, մասնավորապես՝ որոշման մեջ նշվել էր, որ պետությունը (ԱՄՆ-ն) պարտավոր է շարունակել առևտրային հարաբերությունները, եթե անհրաժեշտ չի գտնում պայմանագրային պարտավորության կամ այլ իրավական պարտավորության բացակայության պայմաններում: Չնայած դատարանը եկավ այն եզրահանգման, որ ԱՄՆ կողմից Նիկարագուայի դեմ ուղղված որոշ միջոցներ, օրինակ՝ օգնության տրամադրման դադարեցումը, միջազգային իրավունքին չէին հակասում, սակայն այդ եզրահանգումը սահմանափակվեց այդ գործով ԱՄՆ կոնկրետ գործողություններով, և նշվեց, որ այն չպետք է դիտարկվի որպես ընդհանուր կանոն¹:

Տնտեսական սանկցիաների օրինական լինելու տեսակետի կողմնակիցները հաճախ հավաստիացնում են, որ ընդհանուր իրավունքում չկա մեկ պետությանը մյուս պետության հետ տնտեսական հարաբերություններ պահպանելու պարտադրանք²: Դա վերաբերում է նաև տնտեսական սահմանափակումների և հարկադրանքի միջոցներին, ընդ որում՝ եթե այդ միջոցները չեն հակասում պայմանագրային

¹ St' u Tladi (2020) "The Duty Not to Intervene in Matters within Domestic Jurisdiction", in J. Viñuales (ed.), The UN Friendly Relations Declaration at 50: An Assessment of the Fundamental Principles of International Law, էջ 100:

² St' u Carter (2011) "Economic Sanctions", in Max Planck Encyclopaedia of Public International Law (Rüdiger Wolfrum version), էջ 29:

կամ այլ նորմերին, ապա համարվում են օրինական: Նշվում է նաև, որ առանձին երկրների կողմից տնտեսական սանկցիաների կիրառումը արտաքին քաղաքականության գործիքներից է:¹ Սակայն քանի որ պետությունները, հիմնվելով պետական ինքնիշխանության վրա, դիմադրություն են ցույց տվել միակողմանի սանկցիաների որոշ էքստերիտորիալ միջոցների նկատմամբ, օրինակ՝ երրորդ պետությունների կազմակերպությունների նկատմամբ սահմանափակումներ կիրառելը, մեծ մասամբ համաձայն են, որ միջազգային իրավունքը միակողմանի էքստերիտորիալ միջոցներին վրա սահմանափակումներ է կիրառում²:

Սանկցիաների օրինական լինելու հակառակ տեսակետի վերաբերյալ միջազգային իրավունքի ոլորտում հրապարակվել են բազմաթիվ աշխատանքներ, որոնք ապացուցում են դրանց ապօրինի լինելը: Այդ տեսակետին առնչվող մի քանի դիտարկում անենք:

Նախ՝ այդ տեսակետին հարողները հավաստիացնում են, որ հարկադրանքի միջոցները ապօրինի են՝ ըստ Պետությունների տնտեսական իրավունքների և պարտականությունների մասին խարտիայի 32-րդ հոդվածի, համաձայն որի՝ «Ոչ մի պետություն չի կարող օգտագործել կամ խրախուսել տնտեսական, քաղաքական կամ ցանկացած այլ տեսակի հարկադրանքի միջոց՝ մեկ այլ պետությանը իր սեփական ինքնիշխան իրավունքների իրականացմանը ենթարկելուն պարտավորեցնելու նպատակով»³: Կարծես թե դա պետության միջամտությունը արգելող ուղղակի նորմ կարող էր լինել, սակայն դրան միջազգային ընդհանուր իրավունքի նորմի կարգավիճակ տալը չդիտարկվեց, թեև զարգացող երկրները փորձեցին այն այդպիսին դարձնել⁴: Խարտիան Չլխավոր ասամբլեայի բանաձև է, և թեկուզ այն որոշ չափով լուսաբանում է միջազգային հանրության զգալի մասի սկեպտիկ վերաբերմունքը տնտեսական սանկցիաների նկատմամբ, սակայն անհրաժեշտ է միջազգային աջակցություն, որպեսզի այն արգելք սահմանող ընդհանուր նորմ դիտվի միջազգային իրավունքի տեսանկյունից:

Բացի այդ, այս տեսակետի կողմնակիցները կարծում են, որ բարեկամական հարաբերությունների և պետությունների միջև համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը պետք է կիրառվի՝ ըստ ՄԱԿ-ի կանոնադրության: Պետությունների պարտավորությունների վերաբերյալ Չլխավոր ասամբլեայի բանաձևը, որպես կանոն, ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված սկզբունքների մեկնաբանությունն է: Այն ամրապնդում է պետությունների գործերին չմիջամտելու սկզբունքը ոչ միայն ուժի կամ դրա սպառնալիքի կիրառման, այլև քաղաքական և տնտեսական հարկադրանքի համատեքստում:

ՄԱԿ-ի նախկին հատուկ զեկուցող Իդրիս Ջազիրը իր խոսքում նշել էր. «Միայն Անվտանգության խորհրդի կողմից թույլատրված բազմակողմանի սանկցիաներին են համապատասխանում ՄԱԿ-ի կանոնադրության ոգուն»⁵:

Կիրառված միակողմանի տնտեսական ամենաաղմկահարույց սանկցիաներից մեկը և հայտնվեց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Դա հանգեցրեց Չլխավոր ասամբլեայի՝ գերակշիռ մեծամասնությամբ ընդունվող ամենամյա բանաձևերի ընդունմանը՝ 1992 թվականից սկսած՝ կոչ անելով ոչ միայն դադարեցնել էմբարգոն, այլև հաստատել միջազգային իրավունքի տեսանկյունից դրա ապօրինի լինելը: Վերջին բանաձևը ընդունվել է 2022թ.-ին 185 երկրի կողմ քվեար-

¹ St'u Happold and Eden, *Economic Sanctions and International Law*, 2016թ., էջ 3:

² St'u Pellet A. and Miron A., "Sanctions" in Rüdiger Wolfrum (general ed.), 2013թ. էջ 14:

³ St'u UNGA Resolution 3281 (XXIX), 1974թ. դեկտեմբերի 12:

⁴ St'u Akande, D., Akhavan, P., & Bjorge, E (2021) *Economic Sanctions, International Law, and Crimes Against Humanity: Venezuela's ICC Referral*, *American Journal of International Law*, էջ 501:

⁵ St'u Jazairy (2015) *Report of the Special Rapporteur on the negative impact of unilateral coercive measures on the enjoyment of human rights*, A/HRC/30/45, էջ 17:

կությամբ. միայն ԱՄՆ-ն և Իսրայելն են դեմ քվեարկել, իսկ Բրազիլիան և Ուկրաինան ձեռնպահ են մնացել: 2022թ. բանաձևում հիշատակված են «ինքնիշխան հավասարության, պետությունների ներքին գործերին միջամտելու անթույլատրելիության» սկզբունքները՝ հիմնավորելու համար հարկադրանքի միջոցների ապօրինությունը¹:

Ըստ մեր կարծիքի՝ միակողմանի տնտեսական սանկցիաների ապօրինի լինելու վերաբերյալ տեսակետը առավել հիմնավոր է, քանի որ բխում է միջազգային համաձայնագրերից, մասնավորապես՝ Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի երկրների ստանձնած պարտավորությունը, որն արգելում է երկրների դեմ առևտրի քանակական սահմանափակումները և խտրականությունը (հոդված 9 և 13): 21-րդ հոդվածում ներառված բացառությունը վերաբերում է այն միջոցներին, որոնք պետք է իրականացվեն ՄԱԿ-ի կանոնադրության սանկցիաներին համաձայն: Դրանից կարելի է ենթադրել, որ միայն ՄԱԿ-ը կարող է կիրառել սանկցիաներ, իսկ պետությունները միակողմանի միջոցներ չեն կարող կիրառել:

21-րդ հոդվածում սահմանված մեկ այլ բացառություն վերաբերում է միջոցներին, որոնք պետությունն անհրաժեշտ է համարում իր անվտանգությունը պաշտպանելու համար. սահմանափակվում է զենքի առևտրով և պատերազմի ու այլ ծայրահեղ իրադրություններում առևտրով: «Անհրաժեշտության» վերաբերյալ գնահատականը պետք է ստուգվի Առևտրի համաշխարհային կազմակերպության տրիբունալների կողմից: Առևտրի համաշխարհային կազմակերպությունը չի կարող քննարկել միակողմանի սանկցիաների հարցը, քանի որ ԱՄՆ-ն արգելափակել է Առևտրի համաշխարհային կազմակերպության բողոքարկման մարմնի պահեստային անդամների նշանակումը, որը չունի քվորում: Ամեն դեպքում դա չի կարող արգելք լինել սանկցիաների անօրինականության վերաբերյալ հետևություններ անելու: Բացի այդ, եթե միակողմանի տնտեսական սանկցիաները օրինական համարվեին, ինչպես այդ տեսակետի կողմնակիցները համարում են, ապա անհրաժեշտություն չէր լինի դրանց հարցը քննարկելու ռեպրեսալիաների (հակազդման միջոցների) համատեքստում, քանի որ այդ հասկացությունը օգտագործվում է միայն միջազգային ապօրինի վարքագծերի պարագայում, դրա փոխարեն կօգտագործվեր, օրինակ, ռետորսիա տերմինը, որն օրինականություն է ենթադրում:

Եզրակացություն

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել.

ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի՝ ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխին համապատասխան կիրառվող ուժի կիրառման հետ չկապված սանկցիաները օրինական են: Նույնը կարելի է ասել ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի թույլատրած առանձին պետությունների կողմից կիրառվող սանկցիաների մասին, եթե այդ թույլտվությունը համապատասխանում է ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխով սահմանված պահանջներին: Նման կերպ պետությունների ինքնիշխանության և գործերին միջամտելու անթույլատրելիության սկզբունքները տնտեսական սանկցիաներ կիրառելու արգելք չեն դառնում, սակայն ամեն դեպքում տնտեսական սանկցիաների օրինականությունը կախված է լինում համաչափության սկզբունքի պահպանումից և մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներից: Նույն սկզբունքները վերաբերում են նաև հակազդման միջոցներին: Եթե հակազդման միջոցներ կիրառված պետությունը հակաիրավական արարքների արդյունքում անմիջականորեն չի տուժել, իրավական վիճակը առավել բարդանում է: Թեև երրորդ պետություններն իրավունք ունեն այլ երկրներին իրենց ստանձնած պարտավորությունները խախ-

¹ St´u UNGA Resolution A/Res/77/7 (2022); For the official press release and voting figures, GA/12465, 2022թ. նոյեմբերի 3:

տելու համար պատասխանատվության կանչելու, սակայն իրավական դաշտը անորոշ է, այսինքն՝ արգելք կամ թույլտվություն չկա:

Առավել հակասական իրավական վերլուծություններն առաջանում են այն դեպքում, երբ պետությունը կոմպետենտ միջազգային ինստիտուտի շրջանակներից դուրս է կիրառում տնտեսական սանկցիան և չկանխատեսված վնաս է հասցվում սանկցիայի օբյեկտ պետությանը: Այս հարցի վերաբերյալ երկու հիմնական տեսակետ կա: Առաջին տեսակետի կողմնակիցները հավաստիացնում են, որ պետությունների տնտեսական ազատությունը ենթադրում է նաև իր տնտեսական հարաբերությունները վերանայելու պետության իրավունքը: Դա Նիկարագուայի գործով որոշակի հավաստում ունի, թեև դատարանի որոշման նախադեպային նշանակությունը միանշանակ չէ: Բացի այդ, միակողմանի տնտեսական սանկցիաների օրինական լինելու օգտին է խոսում նաև պետությունների՝ սանկցիաներ կիրառելու պրակտիկայի ավելացումը: Եվ թեև միակողմանի տնտեսական սանկցիաների օրինականությունը հաստատող միջազգային որևէ նորմ չի ընդունվել, սակայն պետությունների կողմից պրակտիկայի տարածումը կարող է վկայել իրականացվող բոլոր քայլերն այդ նպատակին ուղղելու մասին: Կարելի է եզրակացնել, որ եթե միակողմանի տնտեսական սանկցիաները օրինական համարվեն, ինչպես այդ տեսակետի կողմնակիցները համարում են, ապա անհրաժեշտություն էլի լինի դրանց հարցը քննարկելու ռեպրեսալիաների (հակազդման միջոցների) համատեքստում, քանի որ այդ հասկացությունը օգտագործվում է միայն միջազգային ապօրինի վարքագծերի պարագայում, դրա փոխարեն կօգտագործվեր, օրինակ, ռետորսիա տերմինը, որն օրինականություն է ենթադրում:

Մյուս տեսակետի համաձայն՝ միակողմանի տնտեսական սանկցիաները ապօրինի են: Այդ փաստարկը իր հիմնավորումն ունի ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձևերում՝ առաջին հերթին Բարեկամական հարաբերությունների մասին 1970 թվականի հռչակագրում, որը առնվազն մի մասով ՄԱԿ-ի կանոնադրության մեջ ամրագրված սկզբունքների մեկնաբանություն և զարգացում է պարունակում: Տնտեսական սանկցիաների ապօրինի լինելը այդ բանաձևում հիմնվում է պետական ինքնիշխանության և պետության գործերին չմիջամտելու սկզբունքների վրա: Այդ դիրքորոշմանն է ՄԱԿ անդամ պետությունների մեծ մասը, ովքեր բանաձևերի ժամանակ միակողմանի տնտեսական սանկցիաների քննադատմանը հետևողականորեն կողմ են քվեարկում: Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի երկրների ստանձնած պարտավորությունը, որը Առևտրի համաշխարհային կազմակերպության համաձայնագրի մասն է և միավորում է 164 երկրի, արգելում է երկրների դեմ առևտրի քանակական սահմանափակումները և խտրականությունը (հոդված 9 և 13): 21-րդ հոդվածում ներառված բացառությունը վերաբերում է այն միջոցներին, որոնք պետք է իրականացվեն ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն, ինչպես նաև ՄԱԿ-ի սանկցիաներին: Դրանից կարելի է ենթադրել, որ միայն ՄԱԿ-ը կարող է կիրառել սանկցիաներ, իսկ պետությունները միակողմանի միջոցներ չեն կարող կիրառել:

21-րդ հոդվածում սահմանված մեկ այլ բացառությունը վերաբերում է այն միջոցներին, որոնք պետությունն անհրաժեշտ է համարում իր անվտանգությունը պաշտպանելու համար. սահմանափակվում է զենքի առևտրով և պատերազմի ու ծայրահեղ այլ իրադրություններում առևտրով:

Սանկցիաների վերաբերյալ գործերը պետք է քննվեն միջազգային դատական մարմինների, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության մարմինների կողմից: Վեճերի վերաբերյալ բազմաթիվ դատական գործերի առկայությունը հնարավորություն կտա հաստատելու օրենքի գերակայության սկզբունքը սանկցիաներ կիրառելիս:

Համառոտագիր

Սույն հոդվածում ուսումնասիրվել է միակողմանի տնտեսական սանկցիաների օրինականության հիմնահարցը միջազգային իրավունքում երկու տեսակետների համատեքստում. առաջին տեսակետի համաձայն՝ միակողմանի տնտեսական սանկցիաները համապատասխանում են միջազգային իրավունքին և պետություններին բնորոշ տնտեսական ազատության մաս են կազմում: Եթե առավել որոշակի ասենք, ապա ըստ այդ տեսակետի՝ ո՛չ պայմանագրերում, ո՛չ սովորույթային կարգավորումներում պետությունների համար չկա իրենց տնտեսական հարաբերությունները ազատորեն փոխելու ուղղակի արգելք, այդ թվում՝ մեկ այլ պետության կամ սուբյեկտի դեմ տնտեսական սանկցիա կիրառելու: ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխին համապատասխան կիրառվող ուժի կիրառման հետ չկապված սանկցիաները օրինական են: Նույնը կարելի է ասել ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից թույլատրված առանձին պետությունների կողմից կիրառվող սանկցիաների մասին, եթե այդ թույլտվությունը համապատասխանում է ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխով սահմանված պահանջներին: Նման կերպ պետությունների ինքնիշխանության և գործերին միջամտելու անթույլատրելիության սկզբունքները տնտեսական սանկցիաներ կիրառելու արգելք չեն դառնում, սակայն ամեն դեպքում տնտեսական սանկցիաների օրինականությունը կախված է լինում համաչափության սկզբունքի պահպանումից և մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներից: Մյուս տեսակետի համաձայն՝ միակողմանի տնտեսական սանկցիաները ապօրինի են: Այդ փաստարկը իր հիմնավորումն ունի ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձևերում՝ առաջին հերթին Բարեկամական հարաբերությունների մասին 1970 թվականի հռչակագրում, որն առնվազն մի մասով ՄԱԿ-ի կանոնադրության մեջ ամրագրված սկզբունքների մեկնաբանություն և զարգացում է պարունակում: Տնտեսական սանկցիաների ապօրինի լինելը այդ բանաձևում հիմնվում է պետական ինքնիշխանության և պետության գործերին չմիջամտելու սկզբունքների վրա: Այդ դիրքորոշմանն է ՄԱԿ-ի անդամ պետությունների մեծ մասը, որոնք բանաձևերի ժամանակ միակողմանի տնտեսական սանկցիաների քննադատմանը շարունակական և հետևողականորեն կողմ են քվեարկում:

Բանալի բառեր - *միակողմանի տնտեսական սանկցիա; հակազդման միջոց; հումանիտար հետևանքներ; իրավաչափություն; էքստերիտորիալ իրավասություն; ճգնաժամ; արգելք:*

THE LEGALITY OF UNILATERAL ECONOMIC SANCTIONS IN INTERNATIONAL LAW

Filiana Belluyan

*Prosecutor of the Department of state Interests
protection of the prosecutor General's office of the RA
PHD Student at the YSU Chair
of European and International
fbelluyan@gmail.com
Orcid-0000-0003-0193-1184*

Abstract

This article explores the legality of unilateral economic sanctions in international law. Here, the legal discussion junctures into two main strands. More specifically, the argument revolves around the perception of this area of contemporary international law as containing no outright prohibition – neither in treaty nor custom – for states to freely alter its economic relations, including by imposing economic sanctions against other States or actors. non-forcible sanctions imposed by the UN Security Council in accordance with Chapter VII of the UN Charter, are lawful. The same can be said of sanctions imposed by individual states in accordance with UNSC authorization, given that the authorization in question is in line with the provisions of Chapter VII of the UN Charter. However, for both direct and indirect UNSC economic sanctions, this lawfulness is dependent on adhering to both the principle of proportionality and to human rights regulation.

On the other hand, the case is made that unilateral economic sanctions are illegal in their capacity of coercive measures. This argument largely revolves around the prohibitions of such measures laid out in UNGA resolutions, primarily the Friendly Relations Declaration of 1970. The primary grounds for illegality of economic sanctions in this resolution is rooted in the principles of State sovereignty and of non-intervention. This position is also supported by a significant majority of UN memberStates, continually and consistently voting in favour of denouncements of unilateral coercive measures in yearly UNGA resolutions.

Key words: *unilateral economic sanction; countermeasure; human consequences; legality; extraterritorial jurisdiction; crisis; prohibition.*

ПРОБЛЕМА ПРАВОМЕРНОСТИ ОДНОСТОРОННИХ ЭКОНОМИЧЕСКИХ САНКЦИЙ В МЕЖДУНАРОДНОМ ПРАВЕ

Филиана Беллуян

*Прокурор Управления по защите Государственных
интересов Генеральной прокуратуры РА*

*Аспирант кафедры Европейского и международного права
fbelluyan@gmail.com*

Orcid-0000-0003-0193-1184

Абстракт

В данной статье исследуется правомерность односторонних экономических санкций в международном праве. Здесь юридическая дискуссия разделяется на два основных направления. В частности, аргумент вращается вокруг восприятия этой области современного международного права как не содержащей прямого запрета – ни в договоре, ни в обычаях – для государств свободно изменять свои экономические отношения, в том числе путем введения экономических санкций против других государств или субъектов. Ненасильственные санкции, введенные Советом Безопасности ООН в соответствии с главой VII Устава ООН, являются законными. То же самое можно сказать и о санкциях, введенных отдельными государствами в соответствии с разрешением СБ ООН, учитывая, что данное разрешение соответствует положениям главы VII Устава ООН. Однако законность как прямых, так и косвенных экономических санкций СБ ООН зависит от соблюдения как принципа пропорциональности, так и регулирования прав человека. С другой стороны, утверждается, что односторонние экономические санкции являются незаконными в качестве принудительных мер. Этот аргумент в основном вращается вокруг запрета таких мер, изложенных в резолюциях ГА ООН, прежде всего в Декларации о дружественных отношениях 1970 года. Основные основания незаконности экономических санкций в этой резолюции коренятся в принципах государственного суверенитета и невмешательства. Эту позицию также поддерживает значительное большинство государств-членов ООН, постоянно и последовательно голосующих за осуждение односторонних принудительных мер в ежегодных резолюциях ГА ООН.

Ключевые слова: *односторонняя экономическая санкция; контрмера; гуманитарные последствия; правомерность; экстерриториальная юрисдикция; кризис; запрета.*

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՋ. ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արմեն Մեղրյան

ԵՊՀ Եվրոպական և միջազգային

իրավունքի ամբիոնի դասախոս

armenmeghryan@mail.ru

<https://orcid.org/0000-0002-1069-6000>

Ներածություն

Սույն հոդվածը նվիրված է Եվրասիական տնտեսական դատարանի գործունեության հետ կապված որոշ հարցերին, ուսումնասիրվել են մասնավորապես՝ ԵԱՏՄ դատարանի ու միջազգային մյուս դատարանների կողմից տրվող խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու լիազորությունները:

Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ 2014թ. Եվրասիական տնտեսական միության պայմանագրին միանալուց հետո առաջացավ ԵԱՏՄ իրավունքի, հատկապես դատարանի դերի և գործունեության վերաբերյալ գիտական վերլուծությունների անհրաժեշտություն ամբողջ միության տարածքում: Հայկական իրավաբանական գրականություն մեջ ԵԱՏՄ իրավունքին վերաբերող գիտական աշխատանքների սակավաթիվ լինելն էլ ավելի է արդիական դարձնում սույն աշխատանքը:

Հետազոտության նպատակն է բացահայտել Եվրասիական տնտեսական միության դատարանի կարգավիճակի և գործունեության վերաբերյալ որոշ իրավական խնդիրներ և ներկայացնել կատարելագործման համար հնարավոր ճանապարհներ: Բնականաբար, առաջ քաշված որոշ տարբերակներ կարող են օգտակար լինել այդ խնդիրների լուծման գործընթացում:

Այս հետազոտության շրջանակներում հիմնականում կիրառվել է իրավահամեմատական մեթոդը, որը հնարավորություն է տվել բացահայտելու միջազգային դատական այլ ատյանների առավելություններն ու թերությունները՝ համեմատելով Եվրասիական միության դատարանի հետ: Հետազոտությունն իրականացնելիս կիրառվել է նաև իրավավերլուծական, իրավունքի համադրման և տրամաբանական մեթոդները:

1. Ինտեգրացիոն դատարանի իրավաստեղծ գործունեությունը որպես իրավունքի զարգացման միջոց

Եվրասիական տնտեսական միության մասին հիմնադիր պայմանագրի 19-րդ հոդվածը վերաբերում է Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ, Միություն) դատարանին՝ սահմանելով, որ այն միության շրջանակներում մշտապես գործող դատական մարմին է: Միաժամանակ, հիմնադիր պայմանագիրը սահմանում է, որ դատարանի կարգավիճակին, կազմին, իրավասությանը, գործունեությանն ու ձևավորման կարգին վերաբերող նորմերը ամրագրվում են ԵԱՏՄ դատարանի ստատուտում¹: Իսկ Միության դատարանի աշխատակարգը և գործունեության կազմակերպման կարգը սահմանվում են դատարանի կանոնակարգով,

¹ Տե՛ս Եվրասիական տնտեսական միության պայմանագիր, 19-րդ հոդված: www.arlis.am/documentview.aspx?docID=95203

որն էլ հաստատվել է ԵԱՏՄ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի N 101 որոշմամբ:

Միության դատարանի գործունեությունն ուսումնասիրելիս նախ և առաջ պետք է նշել ԵԱՏՄ իրավունքի աղբյուրները, որոնք սպառնիչ սահմանված են Միության հիմնադիր պայմանագրով: Ըստ պայմանագրի՝ ԵԱՏՄ իրավունքի աղբյուրներն են՝ 1) ԵԱՏՄ պայմանագիրը, 2) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը, 3) երրորդ կողմի հետ կնքվող Միության միջազգային պայմանագրերը և 4) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումներն ու կարգադրությունները: Ինչպես տեսնում ենք, ցանկում տեղ չեն գտել Միության դատարանի կողմից կայացվող ակտերը: Իսկ արդեն դատարանի ստատուտի համաձայն՝ ԵԱՏՄ դատարանի նպատակն է միության իրավունքի միատեսակ կիրառման ապահովումը անդամ պետությունների և Միության մարմինների կողմից: Նման պարագայում կարելի է ենթադրել, որ այս դատարանն իրականացնում է զուտ իրավակիրառ գործունեություն, և նրա որոշումները Միության իրավունքի աղբյուր չեն:

Այս համատեքստում ԵԱՏՄ դատարանը փոքր-ինչ տարբերվում է Եվրոպական միության արդարադատության դատարանից: ԵՄ դատարանը՝ որպես Եվրոպական ինտեգրացիոն միավորման դատական մարմին, կարելի է ասել, ունի նաև իրավաստեղծ գործառնություն: Այն իր գոյության շուրջ 70 տարիների ընթացքում հիմնադիր պայմանագրերի կիրառման և իրավունքի նորմի մեկնաբանման միջոցով կայացրել է բազմաթիվ որոշումներ՝ սահմանելով վարքագծի համընդհանուր կանոններ, որոնք զարգացրել են ԵՄ նախադեպային իրավունքը: Դատարանի որոշումներն ունեն համապարտադիր բնույթ, վերջնական են և ենթակա են կատարման ինչպես ԵՄ բոլոր անդամ պետությունների, այնպես էլ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար: Այս դատարանը, հանդիսանալով ԵՄ ինտեգրացիոն իրավունքի շրջանակներում գործող միակ վերօրենսդրական դատական ատյանը, կոնկրետ գործով վճիռ կայացնելիս հայտնում է իր կարծիքը՝ երբեմն նաև վեր հանելով ԵՄ իրավունքի բացթողումներն ու խնդիրները:

Հատկանշական է, որ ԵՄ դատարանը ստեղծել է ինտեգրացիոն գործընթացների համար էական նշանակություն ունեցող այնպիսի ելակետային սկզբունքներ, ինչպիսիք են ԵՄ իրավունքի ուղղակի կիրառելիության և ուղղակի ազդեցության սկզբունքները, իրավունքի գերակայության սկզբունքը և այլն¹:

Եվրասիական միության Դատարանին իրավաստեղծ լիազորություն տալու գաղափարը հավանության չարժանացավ հիմնադիր անդամ պետությունների կողմից: Դրա մասին է վկայում այն, որ ԵԱՏՄ դատարանի ստատուտով հստակ ամրագրվել է, որ Դատարանի որոշումը չի փոխում և (կամ) չի վերացնում անդամ պետությունների գործող օրենսդրական նորմերը, ինչպես նաև չի ստեղծում նոր իրավակարգավորումներ²: Ավելին, այնտեղ ուղղակիորեն ամրագրված է, որ Դատարանի իրավասությունը չի ներառում ԵԱՏՄ մարմիններին լրացուցիչ իրավասություն շնորհելը՝ ի լրումն Պայմանագրով և (կամ) Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով ուղղակիորեն սահմանված, իսկ Դատարանը իր որոշման մեջ չի կարող անդրադառնալ այնպիսի հարցերի, որոնք ներկայացված չեն իրեն ուղղված դիմումի շրջանակներում³: Այսինքն՝ Դատարանը որոշում ընդունելիս կաշկանդված

¹ Տե՛ս ԵՄ արդարադատության համակարգը, ԵՄ ինստիտուցիոնալ համակարգը, ձեռնարկ: http://prwb.am/wp-content/uploads/2017/03/%D4%B5%D5%84_%D5%AB%D5%B6%D5%BD%D5%BF%D5%AB%D5%BF%D5%B8%D6%82%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6%D5%A1%D5%AC_%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A8_1.pdf (հասանելի է 28.03.2023)

² Տե՛ս ԵԱՏՄ դատարանի ստատուտ 2014 թվականի մայիսի 24-ի, 102-րդ կետ:

³ Տե՛ս նույն տեղում, 42-րդ և 101-րդ կետեր:

է դիմողի բարձրայնած հարցերի և պահանջների շրջանակով և չի կարող հայտնել իր մեկնաբանական կարծիքը հարակից իրավահարաբերությունները կարգավորող նորմերի վերաբերյալ:

Դատարանի Ստատուտի համաձայն՝ Դատարանի իրավասության մեջ են մտնում բոլոր այն վեճերը, որոնք ծագում են ԵԱՏՄ իրավունքի իրացումից: Այս վեճերը լուծելու իրավասությունը պատկանում է հենց դատարանին, որը պետք է առաջնորդվի միայն ԵԱՏՄ պայմանագրով, ներառյալ Ստատուտով¹, որը Դատարանի իրավասությունը ուրվագծում է որոշակի սահմաններում: Մասնավորապես, այս փաստաթուղթը սահմանում է, թե կոնկրետ ինչ վեճեր կարող են քննվել Միության Դատարանի կողմից՝ անդամ պետությունների հայտով, ինչպես նաև ամրագրում է վեճերի տեսակաները, որոնք կարող են քննվել տնտեսվարող սուբյեկտների հայտով:

2. Եվրասիական տնտեսական միության դատարանի խորհրդատվական եզրակացություն տրամադրելու լիազորության մասին

Դատարանի իրավասությունը սահմանված է Ստատուտի 4-րդ գլխով: Մասնավորապես՝ ԵԱՏՄ անդամ պետության պահանջով Դատարանը քննում է Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրի կամ դրա առանձին կետերի համապատասխանությունը ԵԱՏՄ պայմանագրին, քննում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների, գործողությունների համապատասխանության հարցը ԵԱՏՄ պայմանագրին՝ կայացնելով որոշում: Բացի այդ, Դատարանը տնտեսվարող սուբյեկտների դիմումի համաձայն քննում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների, գործողությունների համապատասխանության հարցը Հիմնական պայմանագրին և Միության շրջանակներում կնքված այլ միջազգային պայմանագրերին:

Ստատուտի 46-րդ կետի համաձայն՝ Դատարանը անդամ պետության կամ Միության մարմնի դիմումի հիման վրա պարզաբանում է տալիս ԵԱՏՄ Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի և Միության մարմինների որոշումների դրույթների վերաբերյալ, ինչպես նաև Միության մարմինների և Դատարանի աշխատակիցների ու պաշտոնատար անձանց դիմումի հիման վրա պարզաբանում է աշխատանքային իրավահարաբերություններին առնչվող՝ Հիմնադիր պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի և Միության մարմինների որոշումների դրույթները: Սակայն այս պարզաբանումը իրենից ենթադրում է խորհրդատվական եզրակացության ներկայացում, և այս եզրակացությունը Միության անդամ հանդիսացող պետություններին չի զրկում միջազգային պայմանագրերը համատեղ մեկնաբանելու իրավունքից: Ավելին, ԵԱՏՄ Դատարանի Ստատուտի 98-րդ դրույթը սահմանում է, որ պարզաբանման մասին դիմումի հիման վրա տրամադրված խորհրդատվական եզրակացությունը կրում է միայն խորհրդատվական բնույթ:

Նշված նորմը համապատասխանեցված է միջազգային այլ դատական ատյանների գործունեությունը կարգավորող միջազգային պայմանագրերի դրույթներին, համաձայն որոնց՝ խորհրդատվական եզրակացությունը դատարանի կողմից կայացվող մեկնաբանական բնույթի դատական ակտ է հանդիսանում: Այսինքն՝ դատարանի մեկնաբանական եզրակացությունները կարելի է համարել բացառապես

¹ Այլ վեճերը կարող են վերապահվել Դատարանի իրավասությանը Միության միջազգային պայմանագրերով կամ երրորդ կողմերի հետ կնքված պայմանագրերով, ինչպես նաև անդամ պետությունների որոշմամբ, Տե՛ս ԵԱՏՄ դատարանի ստատուտ 2014 թվականի մայիսի 24-ի, 40-41-րդ կետեր:

խորհրդատվական բնույթ կրող¹:

Ելնելով վերոգրյալից՝ ենթադրվում է, որ պարզաբանում տալու Ղատարանի իրավասությունը անդամ պետություններին և Միության մարմիններին հնարավորություն է տալիս իրենց իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության ընթացքում առաջացած Միության իրավունքի դրույթի պարզաբանման խնդրանքով դիմել դատարան, որը նախ որոշում է այն վարույթ ընդունելու հարցը և վարույթ ընդունելու պարագայում հրապարակում է խորհրդատվական որոշումը: Բացի անդամ պետություններից և Միության մարմիններից, պարզաբանում ստանալու հայտով դատարան դիմելու իրավունք ունեն նաև Միության մարմինների աշխատակից հանդիսացող միջազգային քաղաքացիական ծառայողները՝ աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող Միության իրավունքի դրույթների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով: Անկերև է, որ նման գործիքակազմը դիմողին հնարավորություն է տալիս իրեն վերաբերող իրավանորմի պարզաբանման համար դիմել դատարան, իսկ Ղատարանի համար պատեհ ամփոփ է հայտնել իր մեկնաբանական դիրքորոշումը՝ զարգացնելով Եվրասիական ինտեգրացիոն նորաստեղծ իրավունքը:

Ղատարանի կողմից խորհրդատվական եզրակացության տալը նորույթ չէ միջազգային արդարադատությունում: ՄԱԿ-ի միջազգային դատարանի ստատուտի 65-րդ դրույթը նախատեսում է, որ ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված մարմինները կարող են դիմել ՄԱԿ-ի միջազգային արդարադատության դատարան՝ կոնկրետ իրավական հարցի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով: Բարձր դատարանը այս հարցի վերաբերյալ որոշումը հրապարակում է խորհրդատվական եզրակացության ձևով²: Պարզաբանման խնդրանքով դատարան դիմելու իրավունք ունեն՝ Գլխավոր վեհաժողովը, Անվտանգության խորհուրդը, Տնտեսական և Սոցիալական խորհուրդը, Խնամակալության խորհուրդը և ՄԱԿ-ի գրեթե բոլոր մասնագիտացված կազմակերպությունները: Թեև այս եզրակացությունները չունեն իրավական պարտադիր ուժ, սակայն Ղատարանի հեղինակությունը շատ հաճախ ստիպում է պետություններին և միջազգային կազմակերպություններին հաշվի առնել նրա տեսակետը: Նույնիսկ այն դեպքերում, երբ դատարանի իրավական պարզաբանումը կարող է բացասապես ազդել դիմողի շահերին, այնուամենայնիվ դիմողը շատ հաճախ հետևում է պարզաբանմանը՝ բարձր պահելով իր իսկ միջազգային կազմակերպության դատական ատյանի հեղինակությունը:

Փոքր-ինչ այլ է իրավիճակը 5 անդամ պետություն ունեցող Եվրասիական ինտեգրացիոն միությունում: Միշտ չէ, որ իրավական հարցի վերաբերյալ պարզաբանման հայտով ԵԱՏՄ դատարան դիմողը հետևում է դատարանի՝ իր համար ոչ բարենպաստ մեկնաբանական տեսակետին: Կասկածից վեր է, որ դատարանի միջազգային հեղինակությունը կառուցվում է երկար տարիների անաչառ և անկախ գործունեության հիման վրա: Մեր կարծիքով, հենց ինտեգրացիոն միավորման մարմիններն են, որ պետք է ընդունեն կամ կատարեն խորհրդատվական եզրակացությունը՝ փորձելով բարձր պահել իրենց Միության դատական ատյանի վարկանիշը, հատկապես այն պարագայում, երբ վերջինիս ոչ պարտադիր իրավական ուժ ունեցող մեկնաբանական դիրքորոշումը բարենպաստ չէ իրենց համար:

Այդուհանդերձ, ԵԱՏՄ դատարանը, չնայած իր գործունեության շատ կարճ ժամանակահատվածին (մոտ 8 տարի), հասցրել է ձեռք բերել փորձառու դատարանի հեղինակություն Եվրասիական տնտեսական միության սահմաններում: Դրա ակ-

¹ St' u UN court rejects UK's claim of sovereignty over Chagos Islands. – *The Guardian*. February 25, 2019. URL: <https://www.theguardian.com/world/2019/feb/25/un-court-rejects-uk-claim-to-sovereignty-over-chagos-islands> (հասանելի է 09.03.2023).

² St' u Advisory Jurisdiction of the International Court of Justice. URL: <https://icj-cij.org/en/advisory-jurisdiction> (հասանելի է 09.03.2023).

ներև ապացույցն է այն, որ մինչև օրս ԵԱՏՄ դատարանը հրապարակել է 27 խորհրդատվական եզրակացություն: Դիմողների շարքում գերակշռող են Եվրասիական տնտեսական հանձնաժողովը ու ԵԱՏՄ անդամ պետությունները: Համեմատության համար կարելի է նշել, որ ՄԱԿ-ի միջազգային արդարադատության դատարանը իր գործունեության 78 տարիների ընթացքում հրապարակել է մոտ 30 խորհրդատվական եզրակացություն, որոնց գրեթե 60 տոկոս դեպքերում դիմող կողմ է եղել ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը¹:

Իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Նախարարների կոմիտեի խնդրանքով տրամադրում է խորհրդատվական կարծիք, որն ամրագրվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1970թ. թիվ 2 արձանագրությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց 16 տարի անց: Ավելին, 2018թ.-ին ուժի մեջ մտած թիվ 16 արձանագրությամբ Կոնվենցիայի մասնակից պետությունների բարձր դատական ատյաններին ընձեռվեց օրենսդրական հնարավորություն՝ դիմել ՄԻԵԴ-ին խորհրդատվական կարծիք ստանալու խնդրանքով: Ի տարբերություն ԵԱՏՄ դատարանի՝ ունենալով դիմելու իրավական հնարավորություն ունեցող մարմինների ավելի լայն շրջանակ, ՄԻԵԴ-ի հրապարակած խորհրդատվական եզրակացությունների թիվը բավականին համեստ է. այն մինչև օրս հրապարակել է 5 եզրակացություն:

Մեր կարծիքով, միջազգային դատական ատյանների հրապարակած խորհրդատվական եզրակացությունների քանակների նման տարբերությունը անշուշտ պայմանավորված է նաև հիմնադիր պայմանագրերի կամ դրան կից հավելվածներում ամրագրված դրույթների թերի լինելու հանգամանքով:

Իսկ ինչ վերաբերում է ԵՄ արդարադատության դատարանին, ապա այն եզրակացություններ է տալիս Եվրոպական միության մասնակցությամբ կնքվող միջազգային պայմանագրերի՝ ԵՄ իրավունքին համապատասխանության հարցի վերաբերյալ: Հավելենք, որ անդամ պետությունների ազգային դատարանները նախնական կարգավորման ընթացակարգով իրավասու են նաև հարցում ներկայացնել ԵՄ արդարադատության դատարանին՝ միության իրավունքի նորմի մեկնաբանման կամ ԵՄ մարմինների ընդունած որևէ իրավական ակտի վավերականության վերաբերյալ²:

ԵԱՏՄ դատարանի ստատուտը ամրագրում է, որ դատարանին հանձնված վեճի քննության կամ պարզաբանման համար անդամ պետության անունից Միության դատարան դիմելն իրականացվում է այդ անդամ պետության լիազորված մարմինների կողմից, որոնց ցանկը սահմանվում է ներպետական մակարդակով և դիվանագիտական ուղիներով ուղարկվում է Դատարան: Հետևաբար ստացվում է, որ ԵԱՏՄ օրենսդրությունը անդամ պետությունների կարգավորման տիրույթում է թողել պետության անունից դատարան դիմող մարմինների շրջանակի որոշումը, որոնք, որպես կանոն, կառավարությունները կամ նրան ենթակա պետական իրավասու մարմիններն են: Ստացվում է, որ անդամ պետությունների ներպետական դատական ատյաններին Միության դատարանին ուղղակիորեն դիմելու իրավասություն չի տրվել, նույնիսկ այն պարագայում, երբ ԵԱՏՄ դատարանը իր թիվ P-1/18 խորհրդատվական եզրակացություններից մեկում արձանագրել է, որ Միության հիմնադիր պայմանագրին համապատասխան կայացված Հանձնաժողովի այն որոշում-

¹ St'u Процедура вынесения консультативных заключений Суда ООН. <https://www.un.org/ru/icc/advvisoryprocedure.shtml>, (հասանելի է 09.03.2023).

² St'u ԵՄ արդարադատության համակարգը, ԵՄ ինստիտուցիոնալ համակարգը, ձեռնարկ: http://prwb.am/wpcontent/uploads/2017/03/%D4%B5%D5%84_%D5%AB%D5%B6%D5%BD%D5%BF%D5%AB%D5%BF%D5%B8%D6%82%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6%D5%A1%D5%AC_%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A8_1.pdf (հասանելի է 28.03.2023)

ները, որոնք ոչ միայն նախատեսված են Պայմանագրով, այլ նաև նախատեսված չեն և չեն էլ հակասում Միության հիմնադիր պայմանագրին, ենթակա են անմիջական կիրառման անդամ պետությունների տարածքներում: Ստացվում է, որ Միության իրավունքում ունենք ուղղակիորեն կիրառվող բազմաթիվ նորմեր, բայց ներպետական դատարանին վերապահված չէ իրավական հնարավորություն նորմի մեկնաբանման համար դիմել Միության դատարանին՝ իր համար ոչ ծանոթ նորմի պարզաբանման նպատակով, ինչն էլ ավելի դժվարին է դարձնում Միության դատարանի կարևոր իրավական առաքելություններից մեկի՝ իրավունքի միատեսակ կիրառության ապահովման իրականացումը ինտեգրացիոն միավորման տարածքում:

ԵԱՏՄ դատարանի խորհրդատվական եզրակացության գործնական կարևորությունը հասկանալու համար անհրաժեշտ է նաև անդրադառնալ հենց դատարանի նախկինում կայացրած որոշումներում տեղ գտած դիրքորոշումներին: Այս առումով կարելի է անդրադառնալ *stare decisis* սկզբունքին, ըստ որի՝ դատարանը եզրակացություն կայացնելիս հաշվի է առնում նախկինում իր կայացրած նմանատիպ մեկ այլ մեկնաբանական եզրակացությունը: Հետևաբար, ըստ այս սկզբունքի՝ դատարանը կաշկանդված է նախկինում իր արտահայտած մեկնաբանական դիրքորոշումներով: Իսկ ԵՄ նախադեպային իրավունքը ուսումնասիրող հեղինակները հիմնականում արտահայտել են այն տեսակետը, որ Եվրոպական միության արդարադատության դատարանը կաշկանդված չէ նախկինում կայացրած որոշումներով, բայց պրակտիկայում հազվադեպ է շեղվում դրանցից:

Կ. Վ. Էնտինը գրում է, որ ԵՄ դատարանի դեպքում չի կիրառվում անգլո-սաքսոնական իրավական համակարգին բնորոշ պարտադիր նախադեպի դոկտրինը: Դա նշանակում է, որ ԵՄ արդարադատության դատարանը ձևականորեն կաշկանդված չէ իր նախկին որոշումներով և կարող է շեղվել դրանցից¹: Ավելին, գոյություն ունի նաև այն տեսակետը, որ ԵՄ հիմնադիր պետությունների կողմից հիմնադիր ակտերում պարտադիր նախադեպի կիրառումը ինտեգրացիոն միավորման դատական համակարգում ոչ միայն կառաջացներ սկզբունքային տարբերություն վերապետական դատարանի և ԵՄ մի շարք անդամ պետությունների ներպետական դատական համակարգերի միջև, այլ նաև կտարբերվեր այդ ժամանակ գոյություն ունեցող միջազգային պրակտիկայից²: Այս և այլ հանգամանքները հաշվի առնելով՝ դատարանն ունեցավ հնարավորություն անհրաժեշտության դեպքում փոխելու իր «հնացած» պրակտիկան և չկաշկանդվել նախկինում կայացրած մյուս նմանատիպ որոշումներով:

Այս համատեքստում կարելի համաձայնվել այն կարծիքին, որ ԵՄ դատարանը փաստացիորեն ստեղծել է իր մոտեցումը պարտադիր նախադեպին՝ միաժամանակ պահպանելով մայրցամաքային իրավունքի ոճն ու վերլուծական տրամաբանությունը, որը հազվադեպ է շեղվում նախկինում արտահայտած մեկնաբանական դիրքորոշումներից³:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե ինչ կարևորություն է տալիս ԵԱՏՄ դատարանը նախկինում կայացրած իր խորհրդատվական եզրակացություններին, և ինչպես են դրանք ներազդում դատարանի կողմից նոր հրապարակվող խորհրդատվական դիրքորոշումների վրա: ԵԱՏՄ դատարանը 2018թ. հուլիսի 10-ին հրապարակած խորհրդատվական եզրակացությունում սահմա-

¹ St' u **K. V. Entin**, EU law and practice of the EU Court. M.: Norma, 2015 (58-59).

² St' u **K. Bradley** Vertical Precedent at the Court of Justice of the European Union: When Push Comes to Shove // Of Courts and Constitutions: Liber Amicorum in Honour of Nial Fennelly / ed. by **K. Bradley, N. Travers, A. Whelan**. Oxford; Portland: Hart Publishing, 2014. P. 47–65.

³ St' u **Barceló J. J.** Precedent in European Community Law // Interpreting Precedents: A Comparative Study / ed. by D.N. MacCormick, R.S. Summers. Adelshot : Ashgate & Dartmouth, 1997. P. 407–436, 433.

նել է, որ «միջազգային իրավական նորմերի պարզաբանման ժամանակ Մեծ կոլեգիան, հետևելով *stare decisis* սկզբունքին, հիմք է ընդունում Ղատարանի կողմից նախկինում ձևակերպված իրավական դիրքորոշումները»¹։ Սակայն Միության դատարանը իր եզրակացությունում չի բացահայտել, թե որ ատյանի նախկինում կայացրած ակտերն են հաշվի առնվելու որպես պարտադիր նախադեպ՝ Ղատարանի կոլեգիայի², թե՞ Բողոքարկման պալատի։ Չի նշվում նաև իրավունքի վերաբերյալ այն մեկնաբանությունների պարտադիրության մասին, որոնք շարադրված են Ղատարանի դատավարական ակտերում։

Հատկանշական է այն, որ վերը նշված խորհրդատվական եզրակացության հրապարակումից որոշ ժամանակ անց հենց ԵԱՏՄ դատարանի կողմից նկատվեց շեղում *stare decisis* սկզբունքից։ Մասնավորապես, 2020թ. սկսած՝ Միության դատարանի տարբեր կազմերի միջև նկատվում է շոշափելի տարակարծություններ։ Եթե նախկինում Ղատարանը այն տեսակետի կոմունակիցն էր, որ միջազգային իրավունքի նորմները կազմում են Միության իրավունքի մաս, ապա այժմ Ղատարանի կոլեգիայի կազմերից մեկը գտնում է, որ միջազգային իրավական նորմերը չեն կարող լինել Միության իրավունքի մաս²։ Ստացվում է, որ ԵԱՏՄ դատարանը հրապարակում է իր կողմից նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների պարտադիր նախադեպային նշանակությունը և որոշ ժամանակ անց խախտում է այդ սկզբունքը։

Եզրակացություն

Եվրասիական տնտեսական ինտեգրացիոն մոդելում դեռևս չկա խորհրդարան, և Պայմանագրի վերաբերյալ փոփոխությունները իրականացում է միայն Եվրասիական բարձրագույն տնտեսական խորհուրդը, որն էլ բաղկացած է 5 անդամ պետությունների ղեկավարներից։ Այսինքն՝ Պայմանագրի փոփոխության համար անհրաժեշտ է քաղաքական իշխանությունների կամքը, որն էլ շատ հաճախ կարող է փոփոխությունների ենթարկվել։

Սույն ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ Եվրասիական ինտեգրացիոն համակարգում Միության դատարանի խորհրդատվական եզրակացությանը պարտադիր իրավական ուժ տալը կխթանի Միության իրավունքի զարգացումը ու էլ ավելի կնպաստի դատարանի հիմնական նպատակներից մեկի՝ Միության իրավունքի միատեսակ կիրառության ապահովմանը։ Գաղտնիք չէ, որ դատարանը վեճը լուծելու ընթացքում վեր է հանում Միության իրավունքում առկա խնդիրներն ու բացթողումները, հետևաբար կարծում ենք, որ տնտեսական Միության դատարանին անհրաժեշտ է թույլ տալ դուրս գալ դիմումի հիմքերի և հիմնավորումների շրջանակից՝ հայտնելով իր մեկնաբանական կարծիքը, ինչն էլ ավելի կմոտեցնի արդեն իսկ հաջողված Եվրոպական դատարանի մոդելին։

Չնայած այն հանգամանքին, որ ԵԱՏՄ և ԵՄ անդամ պետությունները զգալիորեն տարբերվում են ինչպես իրավական համակարգերի զարգացվածության աստիճանով, այնպես էլ տնտեսության զարգացման ցուցանիշներով, այնուամենայնիվ Եվրոպական միության և ԵԱՏՄ-ի նպատակները համընկնում են՝ ստեղծել միասնական շուկա անդամ պետությունների տարածքում և ապահովել դրա արդյունավետ զարգացումը։ Այս համատեքստում ԵԱՏՄ և ԵՄ դատարանների, այդ թվում նաև մյուս միջազգային դատարանների վերաբերյալ իրավահամեմատական վերլուծությունները թույլ կտան վեր հանել Ղատարանի կարգավիճակի և գործունեության վերաբերյալ իրավական խնդիրներն ու առաջ քաշել դրանց լուծման համար

¹ Տե՛ս Եվրասիական տնտեսական միության Ղատարանի Մեծ կոլեգիայի 2018թ. հուլիսի 10-ի խորհրդատվական եզրակացություն։

² Տե՛ս Եվրասիական տնտեսական միության Ղատարանի կոլեգիայի 2020թ. մարտի 12-ի որոշում։

հնարավոր տարբերակներ: Ավելին, նման վերլուծությունները կարող են կողմնորոշիչ լինել Միության դատարանի իրավական կարգավիճակի վերանայման ժամանակ:

Անշուշտ, Եվրասիական Միության դատարանը չունի բավականաչափ իրավական գործիքակազմ՝ ապահովելու իրավունքի միատեսակ կիրառություն, ուստի կարծում ենք, որ Դատարանի իրավական կարգավիճակի և լիազորությունների շրջանակը վերանայման անհրաժեշտություն ունի՝ հոգուտ դրանց ընդլայնման:

Համառոտագիր

Եվրասիական տնտեսական միության հիմնադրումից ի վեր այս միության դատարանի գործունեության հետ կապված հարցերը մեծ կարևորություն են ստացել, և առաջացել է դրանց վերաբերյալ վերլուծությունների անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, մեր հայտենական իրավաբանական գրականության մեջ սակավաթիվ են միջազգային դատական այս ատյանին վերաբերող գիտական աշխատանքները:

Սույն հոդվածում խոսվում է ԵԱՏՄ դատարանի իրավակիրառ գործունեության և նրա կայացրած ակտերի՝ Միության իրավունքի աղբյուր չհանդիսանալու մասին՝ համեմատելով Եվրոպական միության դատարանի գործառույթների հետ:

Իրավահամեմատական մեթոդների կիրառմամբ անդրադարձ է կատարվել ԵԱՏՄ դատարանի և ԵՄ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Միջազգային արդարդատության դատարանի խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու որոշ հարցերի:

Այս համատեքստում, ԵԱՏՄ և ԵՄ դատարանների, այդ թվում նաև մյուս միջազգային դատարանների վերաբերյալ իրավահամեմատական վերլուծությունները թույլ կտան վեր հանել ԵԱՏՄ դատարանի կարգավիճակի և գործունեության վերաբերյալ իրավական խնդիրներն ու առաջ քաշել դրանց լուծման հնարավոր տարբերակներ: Ավելին, նման վերլուծությունները կարող են կողմնորոշիչ լինել պայմանադիր կողմերի համար Միության դատարանի իրավական կարգավիճակի վերանայման հարցը քննարկելիս:

Բանալի բառեր – *Եվրասիական տնտեսական միության իրավունք; ԵԱՏՄ դատարան; ԵԱՏՄ դատարանի իրավասություն; Եվրոպական միության դատարան; Միջազգային դատարան; Դատարանի կողմից խորհրդատվական եզրակացության տրամադրում; միջազգային դատական պրակտիկա*

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ДЕЯТЕЛЬНОСТИ СУДА ЕАЭС: СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ

Армен Мегрян

*Преподаватель кафедры Европейского
и международного права ЕГУ*

armenmeghryan@mail.ru

<https://orcid.org/0000-0002-1069-6000>

Абстракт

С момента создания Евразийского экономического союза вопросы, связанные с деятельностью суда этого союза, приобрели большое значение, и возникла необходимость их исследования, несмотря на то, что в нашей отечественной юридической литературе очень мало научных работ, касающихся

этого международного суда.

В данной статье говорится о судебной деятельности Суда ЕАЭС и принятых им решениях, не являющихся источником права Союза, сравнивая их с функциями Суда Европейского Союза. При помощи метода сравнительно-правового анализа в данной статье было сделано рассуждение о некоторых вопросах предоставления консультативных заключений Суд ЕАЭС и Суда ЕС, Европейским судом по правам человека и Международным судом.

В этом контексте сравнительно-правовой анализ судов ЕАЭС и ЕС, в том числе других международных судов, позволит выявить правовые вопросы, касающиеся статуса и деятельности суда ЕАЭС, и предложить возможные варианты их решения. Более того, такой анализ может быть ориентиром для договаривающихся сторон при обсуждении вопроса правового статуса Суда Союза.

Ключевые слова – *право Евразийского экономического союза; Суд ЕАЭС; компетенция Суда ЕАЭС; Суд Европейского Союза; Международный суд; предоставления консультативных заключений Судом; международная судебная практика*

ABOUT SOME ISSUES OF THE ACTIVITY OF THE EAEU COURT: A COMPARATIVE LEGAL ANALYSIS

Armen Meghryan

*Lecturer at the YSU chair of
European and international law
armenmeghryan@mail.ru
<https://orcid.org/0000-0002-1069-6000>*

Abstract

Since the establishment of the Eurasian Economic Union, questions related to the activity of the court of this Union have gained great importance and there has been a need to research them, even though there are very few scientific works related to this international court in our domestic legal literature.

This article talks about the judicial activity of the Court of the EAEU and the decisions made by it, which are not the source of the Union law, comparing them with the functions of the Court of the European Union. With the help of the method of comparative legal analysis, in this article, a discussion was made about some issues of the provision of advisory opinions by the EAEU Court and the EU Court, the European Court of Human Rights, and the International Court of Justice.

In this context, a comparative legal analysis of EAEU and EU courts, including other international courts, will allow to identification of legal issues related to the status and activity of the EAEU court and offer possible options for their solutions. Moreover, such an analysis can be a guide for the contracting parties when discussing the issue of the legal status of the Court of the Union.

Key words – Eurasian Economic Union law; Court of the EAEU; jurisdiction of EAEU; International court; Court of the European Union; provision of advisory opinion by the Court; international judicial practice

**Հարգելի՛ հեղինակներ,
Հանդեսին նյութեր հանձնելիս խնդրում ենք
պահպանել հետևյալ պահանջները.**

Խմբագրական խորհուրդը և խմբագրությունը կքննարկեն միայն այն նյութերը, որոնք կուղարկվեն journals.yysu.am էլեկտրոնային հարթակի միջոցով՝ ընտրելով «Պետություն և իրավունք» ամսագիրը:

Հոդվածները առավելագույնը պետք է ունենան 25.000 տպագիր նիշ՝ ներառյալ տողատակերը:

Նյութերն ընդունվում են համապատասխան բուհերի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության, ինչպես նաև մասնագետի կարծիքի առկայության դեպքում: Նյութին կից անհրաժեշտ է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով ներկայացնել հոդվածի վերնագիրը, համառոտագիրը (առնվազն 1200 նիշ), հեղինակի տվյալները և բանալի բառերը (առնվազն 7 բառ):

Նյութերի ծավալը որոշելիս խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները. տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա՝ 1.5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները՝ ծախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ, Unicode տառատեսակով՝ «Arial Unicode»:

Նորմատիվ ակտեր օգտագործելիս տեքստում պետք է նշել դրա տեսակը (Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիր և այլն), ընդունման ժամանակահատվածը (ընդունման օրը՝ թվերով, ամիսը՝ տառերով, ընդունման տարին՝ քառանիշ թվերով, օրինակ՝ 2021 թվականի դեկտեմբերի 12), չակերտներում նշել լրիվ (առանց կրճատումների) անվանումը (օրինակ՝ ոչ թե ՀՀ, այլ Հայաստանի Հանրապետություն): Այս դեպքում տողատակում բավարար է նշել հրատարակության աղբյուրը:

Տեքստում կարելի է նշել ակտի տեսակը, ամսաթիվը և առանց չակերտների կրճատ անվանումը, որը կտա ճիշտ պատկերացում փաստաթղթի մասին:

Հեղինակներին խստիվ խորհուրդ է տրվում մինչև ուղարկելը մանրամասն ստուգել շարվածքի, ինչպես նաև համապատասխան իրավաբանական հասկացությունների ճշտությունը:

Նյութի առաջին էջում՝ վերնագրից հետո, նշվում են տեղեկություններ հեղինակի մասին, որոնք կարտացոլվեն մեր պարբերականում՝ հեղինակի անուն և ազգանունը ամբողջությամբ, պաշտոնը և աշխատանքի վայրը, առկայության դեպքում՝ գիտական աստիճանը և կոչումը: Օրինակ՝ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու ...:

Վերջին էջում հեղինակը նշում է կոնտակտային տվյալները: